





1114

240-64-

Printed in Turkey

25

ms

ԵՒԵՏԵՐԸՆԸԿԸՆ

ՀԱՆՔ ԳՐԻԿ Գ. Ո  
ԲԵՐՈՉՈՒԹԻՒՆԻ  
ԻՄ ԿՆՔԻՆԻ

1114

Գրքի քանակը 15 է  
ԵՒԵՏԵՐԸՆԸ ԲԵՐՈՉԵՑԻՔ  
ամեն տեղիս ամենքուն : 1  
Իսթ. 47. 15 :

9192-57

Ի ՉՄԻՒՌՆԻՆԻ

Ի ՏԳՐԵՆԻ ԿՈՒՆԸՆԸՆԸՆԸ ԿՐԻՏԻՔԻ

1846

### ՔԱՐՈՋ Գ

#### ՔՐԻՍՏՈՆԵՆԵՅԻՐ

Պորձեցէ՛ք ձեր անձը՝ թէ՛ ան հաւատքին մէջն էք . քննեցէ՛ք անձեր-  
նիդ . չէ՛ք զիտեր ինքզինգնիդ, որ Վրբառոս Ախուս ձեր մէջն է .  
միայն թէ անպիտան որ շքուար : Բ Կորնթ . ԺԳ . 5 : . . . . 37

### ՔԱՐՈՋ Դ

#### ՉԵՐՉԵՐԵՆԻՐ ՔՐԻՍՏՈՍԻ

Իսոյ ան մեր մեղքերուն համար գիրաւորեցաւ, և մեր անօրէնու-  
թիւններուն համար պատժեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր  
զրոյ եղաւ, ու իր զէրբերովը մենք բժշկուեցանք : Եսայ .  
ՅԳ . 5 : . . . . . 53

### ՔԱՐՈՋ Ե

#### ԷԵԷՕԵԿԸ ՓԲԿՈՒԹԵՆՆ ՔԵՐՈՕՒՉ ԵՂԵԾ

Պանն զի անոր շորհրովը փրկուած էք դուք հաւատքով . և աս չէ՛  
թէ ձեզմէ է, այլ Մատուծոյ պարգևն է . չէ՛ թէ՛ գործերէն, որ մեկը  
չպարծի : Եփես . Բ . 8, 9 : . . . . . 73

### ՔԱՐՈՋ Չ

#### ՎԵԵՏԵՅԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՏՄԻԷԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Ես որթ եմ՝ ու դուք ճիւղ . ան որ թմ զրոս հատապուած է  
և ես անոր զրոյ, անիկոյ շատ պատու կը բերէ : ԱղՏ . ԺԷ . 5 : . . . . 93

ՔԱՐՈՁ Է

ՊԵՐՍՏԻՆ ԾՆԵԴԵԵՆ ՊԲԵՅ

Դուն մի զարմանար որ քեզի ըսի. պետք է ձեզի նորէն ծնանիլ : Աղճ. Գ. 7 : . . . . . 113

ՔԱՐՈՁ Ը

ՊԵՏՐԵՍ ԷՔ ԼԵՆԴԵՐՏ ՄԵՌՆԵԼՈՒ

Սահմանուած է միանգամ մեծիլ ու անկէ ետքը դատաստան : Եբբ. Թ. 27 : . . . . . 137

ՔԱՐՈՁ Թ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՉՆՈՐԴՈՒԹԵՆԵԸ ՊԲԵՅ

Մէկ Եստուած մը կայ, և մէկ Սբ. Նորդ մը Եստուծոյ ու մարդոց մէջը : Ախուս Քրիստոս մարդը : ԻՍՏ. Թ. 5 : . . . . . 165

ՔԱՐՈՁ Ժ

ԻՆՉ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՉ ԸԼԼԵԼԸ

Թե՛ որ մեկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է : Աբր. Թ. Է. 17 : . . . . . 221

ՔԱՐՈՁ ՁԵ

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԵՆԵՆԵՅԵՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Սասն զի մեզի ճիշտ ասանկ քահանայապետ մը կը վայելէր : Երբ .  
է . 28 . . . . . 238

ՔԱՐՈՁ ՁԻ

ՍՐՏՈՎ ԵՐԿՐՊԵԿՈՒԹԻՒՆ

Կեղծարարներ՝ ազէկ մարդարեւութիւն ըրաւ ձեր վրայ Եսային ու  
ըսաւ . Ես մողովութիւն միայն պահանջներովը զիս կը պատուէ . և ի-  
րենց արտերը հեռացած զատուած են իզմէ : Սասն . ժէ , 7 , 8 : . . . 265



### ՅԱՆԿ ԵՐԳՈՅ

	Երես
Խաչակալ Փրկիչ Խժ Վրիտառս . . . . .	72
Ովսաննա օրհնեալ է . . . . .	92
Վու սուրբ Խօսքդ Տէր Խժ Փրկիչ . . . . .	111
Եկեղեցիդ ընդհանրական . . . . .	112
Տիեզերաց նորոգող . . . . .	136
Գառն Եստուծոյ անարատ . . . . .	205
Յիսուս Վրիտառս տեսայ քուկին . . . . .	206
Որչափ արիւն որ թափուեցաւ . . . . .	263
Եզէկ հասկըցիր առ խորին խօսքը . . . . .	264
Ես կըմնդրէի բարի Եստուծո՛ւ . . . . .	281
Ինչու անհաւատք վէճեր կը՛սանին . . . . .	282
Տէր դուն քննեցիր շողիւ կառավար . . . . .	283
Ողորմած Եստուած քննի ողորմէ . . . . .	284

ՎՐԻՊԱԿ

Երևու	Տող	Սխալ	Ուղիղ
6 . . .	1 . . .	երջանկութեան	երջանկութեան .
6 . . .	4 . . .	պատրաստուած :	պատրաստուած .
13 . . .	13 . . .	Պերազմանին	Պերեզմանին
14 . . .	3 . . .	երջանիք	երջանիկ
14 . . .	29 . . .	(ձող . է . 2 .)	(ձող . է . 1 .)
38 . . .	15 . . .	ան՝ մարդը՝	ան մարդը՝
38 . . .	21 . . .	Հոսվմ . զ . 7 , 8	Հոսվմ . թ . 6 , 7 , 8 :
41 . . .	20 . . .	Հազցուցէք	Հազցուցէք
48 . . .	16 . . .	Հոսվմ . ը :	Հոսվմ . ը . 15 , 16 , 17 :
48 . . .	32 . . .	14	15
81 . . .	14 . . .	ժրկութիւնը	ժրկութեանը
123 . . .	8 . . .	20	2 :
127 . . .	25 . . .	էջօջ .	ւն էջօջ
128 . . .	15 . . .	Եստուծոյ	Եստուծոյս
155 . . .	9 . . .	Եւս՛հ	Եւս՛ղ
160 . . .	12 . . .	31	1
172 . . .	24 . . .	յօժարակամութիւնը	յօժարակամութիւնը ,
173 . . .	29 . . .	ճամբաները	ճամբաներովը
188 . . .	5 . . .	Եձն	(ը) Եձն
210 . . .	35 . . .	անդամ	անդամ
217 . . .	15 . . .	ճշմարտութիւնը	ճշմարտութիւնը
229 . . .	20 . . .	" Հոգի	" Հոգին
234 . . .	33 . . .	բերուած	բերուած
238 . . .	32 . . .	արիւնու շքափելով	արիւն շքափուելով
254 . . .	10 . . .	անդունը	անդունդը



Ք Ա Ր Ո Ձ Ա

Ք Ե Բ Ե Ռ Ն Ե Ս Ե Բ Ի Ն Ե Ը Ն Ո Ր Հ Ե Ի Ո Ր Ե Լ Ո Ւ :

Եւ ասիկա գիտցէք տանիս համար, որ հիմայ ժամանակ է մեզի քունեն արթննալու. ինչու որ հիմայ մտ է մեզի փրկութիւնը քան թէ անասննը որ հաւատացինք : Հոգի՛մ . ԺԳ . 11 :

ԺԱՍԵՆԵՍԸ մշտահոս գետի նման անդադար կը հոսի, ու մեզ և բոլոր մարդոց որդիքները յաւիտենականութեան անսահման Ավիհանոսին մէջը կը թափէ : Եւ յսօր մենք կանցնիմք ան երեւակայական գիծերուն մէկին՝ որն որ մարդիկ քաշեցին ժամանակը չափելու իրենց գիրութեանը համար. ու նոր տարիին զբանը սեմին վրայ կայնենք ու՛ կը վայլէ մեզի որ մէկ վսեմ մտածութիւն մը ընելու համար քիչ մը կանկ առնեմք, թէպէտ և ժամանակը չկրնար կանկ առնել՝ այլ իր սովորական արագութեամբը առաջ կը վազէ : Այլէք այսօր անցեալ ժամանակին ու ապանիին վրայ քաշի մը պատշաճաւ որ քննութիւններու պարագիմք, ու անանկ խորհրդածութիւններ ընեմք՝ որ մեր տարիէ տարի փոխադրուիլը բնականաբար կազդէ մեր միտքերուն :

Եւ մենէն մեծ ու զխաւոր խորհրդածութիւնը ան է՝ որ մեր բնարանէն կրնամք հանել, և անով այսօր կը շնորհա-

ւորեմք ձեզի աս 'Աոր Տարիս : 'Մսիկայ գիտցէք աստեմիս  
համար, որ հիմայ ժամանակ է մեզի քունէն արթըննալու' :

Հոովմայեցիք՝ որոնց աս թուղթը գրուեցաւ, անտարա-  
կոյս կրկարծուի թէ ճշմարիտ Վրիստոնեաներ էին, որ  
առաքեալը իրաւամբ կրցաւ անոնց ցուցընել թէ իրենց  
փրկութիւնը մօտ ու հասած է : "Հիմայ (կրսէ) մօտ է ձեր  
փրկութիւնը՝ քան թէ ան ատենը որ հաւատացիք" : Աւ-  
սակայն ասանկները ևս կը հրաւիրէ որ քունէն արթըննան :  
Ճշմարիտ քրիստոնեաները ևս շատ անգամ անհոգու-  
թեան ու ապահովութեան մէջ իյնալու են թակայ են, և  
կրօնքին ու հոգևոր բաներուն պարտաւորութեանցը վրայ  
անփոյթ ու ծոյլ և դանդաղկոտ բնաւորութիւն մը կը ստա-  
նան : Ասե իրենց սէրը երբեմն կընուաղի, իրենց նախան-  
ձաւորութիւնը կըցրտանայ, ու իրենց ջերմեռանդութիւն-  
ները թոյլ և արտաքին կը ընան : Մըդ՝ ասանկ անհոգութեան  
ու դանդաղկոտութեան վիճակը շատ անգամ փոխարեւո-  
կան ձևով կրկուցի Վրան . վասն զի ինտոր որ քունը բնա-  
կան գործողութիւնները կատարելու, զմեզ՝ անկարող կընէ  
ու մեր կենդանական զգայութիւնները կըտկարացընէ, ա-  
սանկ ալ աս հոգևոր քունը Մտուածոյ ծառայութեանը ու  
հոգևոր զգացողութիւններու մէջ կըտկարացընէ զհոգին :

Մսկից կըհետեի թէ "քունէն արթըննալ" կընշանակէ  
մարմնաւոր ապահովութենէ ելլալ, հոգևոր ծուլութիւնը  
թօթուել, ու ժրութեամբ և կատարեալ ջանքով հոգևոր  
գործքերու պարապիլ՝ արթուն մարդոց նման :

Աւ որովհետև հոգևոր վարուց սկզբունքով հաստատա-  
ուած քրիստոնեաները ևս շատ անգամ ենթակայ են փոքր  
'ի շատէ հոգևոր քունի մը մէջ իյնալու, մեծապէս հարկա-  
ւոր է զանոնք ևս արթըննալու հրաւիրել : Մնոր համար  
առաքեալը Հոովմայեցի քրիստոնեաները կարթընցունէ,  
ինքզինքն ալ անոնց կարգը դնելով . իբրև թէ ինքն ալ կը  
կարօտի նոյն արթնութեանը : Ու կըսէ՝ Հիմայ ժամանակ  
է մեզի, այսինքն՝ ձեզի՝ ու ինծի, քունէն արթըննալու :

Մտիկայ պարտաւորութիւն մըն է՝ որ ամէն ժամանակի սեպհական է : Դամանակին մէջը մէկ վայրկեան մը չկայ որ ատեն քրիստոնեայ մը կտրենայ իրաւամբ և առանց վրտանգի տպաճով և անփոյթ մնալ : Բայց և այնպէս առաքեալը կը ծանուցանէ թէ կան մասնաւոր ատեններ որ յառկապէս արժնութեան ու ժրութեան կը հրաւիրեն մեզ . ու անանկ ատեններու քնանալը յատկապէս ծանր մեղք է : Լինայ՝ կրօնէ, ժամանակ է մեղի քունէն արթըննալու : Մտիկա քնանալու ատեն չէ մեղի . աս ժամանակը արթըննալու ու ինքզինքնիս ժրացունելու կը հրաւիրէ մեզ . ասիկայ գործելու ժամանակ է . արդէն շատ երկար քնացած եմք մենք . հիմայ արթըննամք ու ելլամք :

Մտքեալը կընշանակէ ևս թէ պէտք է որ ժամանակին վրայ կարևոր խորհրդածութիւն և ուղիղ գիտութիւն ունենամք : «Մտիկայ գիտցէք ատենիս համար, որ հիմայ ժամանակ է մեղի քունէն արթըննալու». այսինքն պէտք է գիտնաք որ ժամանակը կարճ՝ անհաստատ ու փոփոխական է, ու անոր համար հիմայ ատեն է արթըննալու : Բնական քունը իր ատենին պարտի ըլլալ : «Մտնք որ կը քնանան, գիշերը կը քնանան». Կ. [Թ. Ե. Ե. 7 : Բայց մենք ամէնքս լուսոյ որդիք եմք ու ցորեկուան որդիք . խաւարէն երանք աւետարանի փառաւոր լուսին . անանկ է նէ ուրիշներուն պէս քունի մէջ չիյնամք . Կ. [Թ. Ե. Ե. 5, 6 : Մտածեցէք որ ժամանակը առաւօտ եղած է ձեզի, ու հարկաւոր պիտի համարիք թէ ալ հիմայ ժամանակ է քունէն արթըննալու : Մտաւարձ՝ ելլալու ժամը՝ հասաւ . ուստի արթըննամք ու արդարութիւն գործեմք :

Մղու և դորաւոր պատճառով մը առաքեալը կը ստիպէ Լոսովնայեցի քրիստոնեաները որ արթըննան . և իր յառաջ բերած պատճառը ասիկայ է : «Լինայ մօտ է մեղի փրկութիւնը՝ քան թէ ան ատենը որ հաւատացինք» : Փրկութիւնը արագապէս կուգայ մեզի՝ ժամանակին սրաթոխ թևերովը : Մրիստոսի հաւատալնէս հեռէ որչափ տարի-

ներ որ անցան, այնչափ տարիներ մտեցաւ մեղի մեր փրկութիւնը: Կամ՝ ինտոր որ ինքը հետեւեալ համարին մէջը կըբացատրէ, «Պիշերը մէկ դի գնաց, ու ցորեկը մտեցաւ»: Ըս ներկայ վիճակիս տրտմազգեաց և խռովայոյզ գիշերը մօտ է անցնելու, յաւիտենական օրուան առաւօտը պատրաստ է մեր վրայ ծագելու, ու ասանկ ատեն կրնամք քնանալ: Ա՛հ ինչպէս քնանամք երկնից դրանը սեմին վրայ. ինչպէս քնանամք երբոր մեր փրկութիւնը պատրաստ է մեզ գրկելու. ինչպէս քնանամք երբոր երկնային օրը կըլուսանայ մեր վրայ ճառագայթելու: Հնարաւոր է ասանկ ժամանակի քնանալ: Ըսչափ մեղի մօտ եղած յաւիտենական փրկութեան տեսութիւնը՝ ու քիչ մը տանէն երկինքը ըլլալնուս խորհուրդը պիտի չարթընցունեն մեզ, ու մեծափափաք ակնկալութեան և մշտնջննաւոր արթնութեան վիճակի մը մէջ պիտի չհաստատեն մեզ:

Մեր բնարանը կրնշանակէ ևս թէ քրիստոնեայք հանապաջ շնորհքի մէջ պիտի աճին. և որչափ որ իրենց փրկութիւնը մօտ ըլլայ, այնչափ ժիր և նախանձաւոր պիտի ըլլան: Եւ որովհետեւ անցած տարիէն աւելի մօտ է ան՝ աս տարի, պարտին անցած տարիէն աւելի բարեպաշտ ըլլալ անոնք աս տարի: Ա՛րչափ որ մօտենան երկնից, այնչափ երկնային բնաօրութիւն մը պիտի ունենան: Փրկութեան մօտենալը զօրաւոր շարժառիթ մըն է ջերմեռանդութեան, և որչափ որ փրկութիւնը մօտենայ, այնչափ աս շարժառիթը կըզօրանայ:

Հիմայ իմ գլխաւոր դիտաւորութիւնս ան է՝ որ առաքեալին հետը ջանամ գիտցունել ձեզի ատենը, ու առաջնորդեմ ձեզի ժամանակին վրայով անանկ խորհրդածութիւններ ունենալու՝ որ պատշաճաւոր են անոր, ու ամէն մէկերնուս առանձին վիճակին կըյարմարին:

Ըռաջին բանը՝ որուն վրայ կըկամիմ՝ ձեր մտքերը արթընցունել, անձերնիս քննելու հարկաւոր բայց զանցառութեան ձգուած պարտաւորութիւնն է: Պիտի չարսա-

փի՞ մարդ նոր տարի մը մտնալու , առանց գիտնալու թէ  
 անիկայ չվերջացած երկի՞նքը պիտի գտնուի արդեօք՝ եթէ  
 դժոխքը , ու ան մարդը՝ որ տակաւին չգիտեր թէ մեռնի նէ  
 ուր պիտի երթայ , անտարակոյս պարապ տեղը անցուցած  
 է իր բոլոր կեանքին ժամանակը : յամանակը մեզի տրուած  
 է աս շահաւէտ խնդիրը որոշելու : Իւրեմն այսօր հաստա-  
 տուն առաջադրուածեամբ մեր մտքերը հաստատեմք որ աս  
 տարի՛մեր անձերը շնանչնալով չտպրիմք , ու գալու աշ-  
 խարհքը մեր ինչ վիճակի մէջ ըլլալուն վրայով բոլորովին  
 անտեղեակ չմնամք : Այլէք այսօր մեր սրտերուն մէջը աս  
 հարցումները ընենք . « Ի՞նչ եմ ես . արդեօք խոնարհ և  
 երախտագէտ ծառայ մըն եմ Վստուծոյ՝ եթէ անչնաղանդ  
 և անապաշխար մեղաւոր մը : Ղշմարտապէս աշակերտ եմ  
 Վրիստոսի , եթէ միայն իր անունը կրկրեմ՝ ու գատարկ  
 տեղը իր կրօնքը կը դաւանիմ : Արկի՞նքը՝ եթէ դժոխքը  
 երթալու ճամբան եմ : Իմ բնութեամբս որուն աւելի  
 յարմար եմ , կատարեալ սրբութեան սահմաններուն՝ եթէ  
 մեղաց ու պղծութեան սահմաններուն : յամանակ չէ՞ աս  
 հարկաւոր խնդիրը որոշելու : Հիմարութեամբ ուշացը-  
 նեմ աս որոշումը ընելը՝ մինչև որ ծայրագոյն Վատաւորին  
 անդառնալի վճռոյն տակը իյնայ ան , որուն առջևը կարելի  
 է թէ պիտի կայնիմ ես աս տարիս չվերջացած : Վստու .  
 թէ որ ան առենը ան վճիռը ինծի դէմ ըլլայ , իմ գատա-  
 պարտութեանս դեղ և դարման պիտի չըլլայ : Ի՞նչ թէ  
 որ շունչս չհատած իմ վիճակիս թշուառ ըլլալը իմա-  
 նամ , օրնեալ է Վստուած որ անիկայ փոխելու համար ժա-  
 մանակը դեռ անցած չէ : Վստուծոյ շնորհքովը տակաւին  
 կրնամ աղէկ յոյս մը ստանալ , թէ որ իմ ներկայ յոյսս  
 կեղծաւորի յոյս ըլլալ իմացուի՞ :

Թէ որ աս խնդիրները առանձին ամէն մէկերնուդ վրայ  
 առնեմ՝ հաւանականաբար երկու տեսակ անձինք կը գրա-  
 նեմ ձեր մէջը , որոնց յատկապէս պիտի ուղղեմ իմ խօսքս :  
 Մէկը՝ ճշմարիտ կրօնքէ բոլորովին զուրկ և հետևապէս

բոլորովին անպատրաստ յախտենական երջանկութեան բայց և այնպէս նոյն փոսնգաւոր վիճակին մէջը անհոգ և ապահով : Սիւսը՝ ճշմարիտ քրիստոնեայ՝ և հեռեւ պէս իր վերջին վախճանին ունակարար պատրաստուած : բայց կրօնքի գործքերուն ու առ Մատուած և առ մարդիկ ունեցած իր պարտաւորութիւններուն մէջ մեծապէս թոյլ և անփոյթ : Սէկը խորունկ թաղուած մեղաց բունին մէջը, միւսը՝ մրափած ու թմրած յախտենականութեան գիւրագայթ սահմանազլուխը : Հիմայ աս երկու տեսակ անձանց համար ալ ժամանակ է քունէն արթննալու : Ստան որոյ հիմայ կը յառաջանամ արթննալու տախել զանօնք՝ նախ քանի մը ընդհանուր խորհրդածութիւններ ընելով որ երկու տեսակին ալ կը վերաբերին, և ետքը քանի մը մասնաւոր խորհրդածութիւններ ընելով որ առանձին իւրաքանչիւր տեսակին կրպտաշածին :

Ընդհանուր խորհրդածութիւնները ասոնք են :

1. Ստածեցէք թէ ժամանակը որչափ զիւրափոփոխ է ձեզի : Արեւիլ է որ գալ տարի՝ կամ գալ ամիս՝ կամ գալ շաբթու՝ կամ գալու ժամուն՝ կամ գալու բոպէին կեանքերնիդ վերջանայ : Մտ տարիս՝ որ հիմայ նոր սկսեց, կարելի է թէ բնաւ ձերը չըլլայ : Սարդիկ կը կարծեն թէ շատ տարիներ ժամանակ կտրուած է իրենց, և աս խաբերայ կարծիք է որ շատերը կը կործանէ : Վանի քանի անձինք յախտենականութեան մէջ են այսօր՝ որոնք անցած տարուան սկիզբին նոյնչափ քիչ ակնկալութիւն ունէին մեռնելու՝ և նոյնչափ աշխոյժ յոյս ունէին երկար ապրելու, որչափ որ դուք աս նոր տարիս սկիզբին ունիք : Աւ կարելի է որ դուք ալ աս վիճակիս պատահէք : Թէ որ ՚ի ծածուկ վարժուած մտրդարէ մը Մատուածային վճռոյն մատենանը ձեր առջևը բանայ՝ ինչպէս որ Արեւմտա Մասնիային ըրաւ, անտարակոյս ձեզմէ ոմանք պիտի տեսնան որ դուրսած է հոն, «Սոյն տարիս մէջը պիտի մեռնիս դուն» : (Աբդ. 1. իր. 16 :) Մնակնկալ վստայկեան մը աս տարիս մէջը կը վերջա-

ցրնէ աս կեանքիս բոլոր քու աշխատութիւններդ ու վա-  
յելուծութիւններդ, ու անոր վերաբերեալ բոլոր քու պար-  
տաւորութիւններդ ու պատեհութիւններդ :

Աստի թէ որ մեղաւորները կրկամին ապաշխարել ու  
հաւատալ, թէ որ կրկամին Մատուծոյ շնորհքը ու երկնա-  
ւոր վիճակի պատրաստութիւնը ստանալ, հիմայ ժամանակ  
է անոնց քունէն արթննալու : Այլ թէ որ արդարները կը  
կամին կրօնքի մէջ մեծ յառաջագիմութիւններ ունենալ,  
թէ որ կրկամին իրենց կոչումը ու ընտրութիւնը հաստա-  
տուն պահել ( ի Պլ. աս. 10 : ) որ իրենց Վատաւորին առ-  
ջը երկրայութիւններով ու վախերով չմտնան, թէ որ  
կրկամին Մատուծոյ պատուոյն ու աշխարհի վրայ Ֆրկչին  
թագաւորութեանը տիրապետելուն համար բան մը ընել,  
թէ որ կրկամին իրենց ընտանեացը՝ իրենց բարեկամներուն՝  
իրենց հայրենիքին՝ ու ընդհանրապէս բոլոր մարդկութեան  
օգուտ մը ընել, հիմայ ժամանակ է անոնց քունէն արթն-  
նալու՝ ու իրենց խրաքանչիւր գործին ձեռնամուխ ըլլա-  
լու : Հիմայէ ժամանակը, ինչու որ աս է մի միայն ժամա-  
նակը որն որ ստուգապէս իրենց ձեռքը ունին : Մասկանա-  
ցու մեղաւորներ՝ թէ որ աստուածապաշտութեան ամենա-  
հարկաւոր գործը ալ աւելի ուշացունէք, կարելի է թէ աս  
տարիս չվերջացած դժոխքը կրգանուիք : Արդուք՝ բարե-  
պաշտ քրիստոնեաներ, թէ որ ձեռքերնիդ եղած ներկայ  
ժամանակը աղէկ գործածելու անհոգ ըլլաք, կարելի է որ  
պարտաւորիք յաւիտենականութեան անդունդներուն մէջը  
մտնալ՝ ու դէպի անձանօթ եզերքներու ընթանալ, վախե-  
րով ու երկմտութիւններով լեցուն : Արեւի է որ Մատու-  
ծոյ ծառայելու և մարդոց օգուտ ընելու բոլոր պատեհու-  
թիւններէն շատ չանցած զրկուիք, կարելի է որ քրիստո-  
նէական սկզբունքները ձեր զաւկըներուն ու ձեր իշխանու-  
թեանը տակը եղողներուն մտացը մէջ տպաւորելու աշ-  
խատութեանէն քիչ ատենի մէջ կտրուիք, վասն որոյ պէտք է  
որ աս ներկայ ժամանակը պինտ բռնէք : Վանդի յիշեցէք

որ ժամանակը փոփոխական է : Մանկութիւնը՝ առողջութիւնը՝ ուժը՝ հարստութիւնը՝ իշխանութիւնը՝ իմաստութիւնը՝ ու աշխարհիս բոլոր պարունակածը չեն կրնար երաշխաւոր ըլլալ ժամանակին : Աեանքին թեյը միայն Մատուծոյ ձեռքն է, ու որ բոլորէին որ ուղէ կրնայ կտրել զանիկայ՝ առանց իմաց տալու :

Բ. Մտածեցէք թէ ժամանակը որչափ կարճ է ձեզի : Եւ ժամանակը իր բոլոր ընդարձակութիւնովը՝ ստեղծագործութենէ մինչև հիմայ՝ ու ասկից մինչև տիեզերքին հրդեհիլը՝ անցեալը ու ապառնին մէկէն ասնելով , յաիտենականութեան քով բան մը չէ : Կակ ձեր կեանքին ժամանակը չափազանց անկից կարճ է : Չեր բաժնին ինկած քանի մը տարուան ժամանակը ոչ միայն դիւրափոփոխ է , հապանակ տարապայման կարճ է , անստոյգ է թէ երբ պիտի վերջանայ , բայց խիտ ստոյգ է որ շուտով պիտի վերջանայ : Չէր կրնար յուսալ թէ մարդկային կենաց սովորական չափէն անդին պիտի անցնիր , եւ ան ալ միայն եօթանասուն կամ ութսուն տարի է : Մանաւանդ թէ շատ քիչ պատճառ ունիք յուսալու թէ աս տարիքիս պիտի հասնիք : Տասնին մէկը հաղիւ թէ այնչափ ատեն կապրի . անոր համար խիտա՛հաւանական է որ դուք եօթանասուն կամ ութսուն տարի պիտի չանցունէք երկրիս վրայ : Ըսանականաբար անկից կարճ միջոց մը ձեզ երկինքը կամ գոգիքը պիտի տանի : Արեմն ժամանակ չէ՞ ձեզի քունէն արթըննալու : Կործերնիդ մեծ է , ժամանակնիդ կարճ է . վայրկեան մը չունիք պարապ անցունելու , վայրկեան մը չունիք դատարկ տեղը վատնելու , ձեր կատարելու գործին համար հաղիւ թէ բաւական է մնացած ժամանակնիդ :

Գ. Մտածեցէք թէ արդէն որչափ ժամանակ կորսընցուցիք ու վատնեցիք :

Չեզմէ ոմանք՝ որ հիմայ Մատուծոյ հաւատարիմ ծառաներն էք , կրնաք միտքերնիդ բերել թէ որչափ ոչ սկսեցիք իրեն ծառայելու . որչափ ատեն դատարկ կեցոք իր



այգիին մէջը , որ ասան իր գործը ձեր առջևն էր՝ ու իր վարձքը ձեզի կըմատուցանէր : Վանի քանի փնասապարտ օրեր ու տարիներ անցուցիք մեզքին ծառայելով , ու ՂՄ. տուած և ձեր անմահ հոգիները անարժան զանցառութեան ձգելով : Մէկ քանիներնիդ ալ՝ որ արժանավայել զուարճութեամբ կը յիշէք թէ ուրիշներուն նայելով դուք զձեզ կանուխ Մատուծոյ նուիրեցիք , բայց և այնպէս կիմանայք թէ ասիմատուն ընտրութիւնը ընկնէդ առաջ որչափ օրեր ու տարիներ կորսընցուցիք մանկութեան ու պատանեկութեան մեղքերուն ու թեթեամատութիւններուն մէջ : Աւամէնէն աղէկնիդ պատճառ ունիք արտասլու թէ Մատուծոյ ծառայութեանը սրտանց անձնատուր ըլլանէդ՝ ՚ի վեր որչափ անգին ժամանակ վատնեցիք . ձեր անհոգութեամբը որչափ պատեհութիւններ կորսընցուցիք թէ ուրիշներուն բարիք ընելու , և թէ անձամբ բարիք ընդունելու : Որչափ աղօթքի ժամեր զանց ըրիք : Որչափ քիչ ժամանակ Մատուծոյ ծառայութեանը ու ձեր հոգիներուն կըթութեանը նուիրեցիք : Որչափ շատ ժամանակ շնչին բաներու վրայ՝ կամ աս ունայն աշխարհիս մեծափափաք հետամատութիւններովը անցուցիք : Մտնց բոլորը մեկէն առնելով ձեր կորուստը շատ օրերու և մինչև անգամ շատ տարիներու չգումարի՞ր : Աւ իրացունէ մէկ օրը փոքրիկ կորուստ չէ ձեզի , որ այնչափ քիչ օրեր ունիք յաւիտեանակա նութեան պատրաստուելու : Իակ ձեր շատերուն վրայ թշուառաբար յայտնի չէ՞ որ ձեր գլխուն վրայէն անցած օրերուն ու տարիներուն բոլորը կորսընցուցիք : Վուցէ դուք ժամանակը աղէկ կըգործածէք աս ներկայ կեանքիս գործքերուն նայելով . բայց ատիկայ ժամանակին ամենանուատ ու խիստ աննշան գործածութիւնն է : Եամանակը արուած է իրբև միջոց ապաշխարելու ու յաւիտեանականութեան պատրաստուելու . բայց դուք անիկայ աս մասին բոլորովին չկորսընցուցի՞ք : Սանաւանդ թէ ձեր սրտերը աւելի խտացած չեն , ու դուք հիմայ աւելի անպատրաստ

չէ՞ք յաւիտենականութեան՝ քան որչափ էիք անցեալ տարի : Ս'եղաց լեռը որ ըստ օրէ էվելի չրարծրացուցի՞ք, ու դուք զձեզ առաւել քան զառաւել Մտառձմէ Հեռացուցի՞ք : Բայց մտածեցէք թէ ձեր կորուստը անգառնալի է : Բան մը չկայ այնչափ անձար՝ որչափ որ անցեալ ժամանակը ետ դարձունելը : Կ'նաց՝ գ'նաց ան յաւիտեան . ինտոր որ ջրհեղեղէն առջի տարիները շին կրնար դառնալ , անանկ երեկեան օրն ալ չկրնար դառնալ : Օջրութիւնը՝ իմաստութիւնը՝ արցունքը՝ աղաչանքը՝ բոլոր տիեզերքիս արարածներուն միարան ջանքերը բնաւ չեն կրնար ետ դարձունել ան :

Բարէ՛ ինչպէս կորսուեցաւ ձեր այսչափ ժամանակը : Ինչպէս անանկ կորսուեցաւ ան՝ որ զեղ ու դարման չեար չէ ըլլալ անոր : Լ,ւ ալ ժամանակ չէ՞ ձեզի քունէն արթննալու : Ունի՞ք տակաւին ժամանակ կորսընցունելու : Կալու ժամանակն ալ անցածին պէս չարաչար գործածուելով պիտի կորսուի՞ : Այս թէ չպիտի՞ աշխատիք կորսուած ժամանակը ետ առնելու՝ գալու ժամանակին մէջը ձեր աշխատութիւնը կրկնապատկելով : Կ'իշ ատենին մէջ շատ քան պարտի ըլլուիլ հիմայ , որովհետեւ միայն քիչ ժամանակ ունիք մնացած : Իրաւ դուք շատ պատուական տարիներ անցուցիք , բայց՝ ախոս , անդարմանելի կորստեան գացին անոնք : Լ,ւ աս մտածութիւնը չպիտի՞ ձեզ վախցունէ ու ձեր քունէն ձեզ արթնցունէ : Չեր կորսընցուցած տարիներուն տեղը նոյնչափ թագաւորութիւններ կորսընցունելը այնքան մեծ քան պիտի չսեպուեր : Հաւիտենականութեան հետամուտ եղողի մը՝ որուն մըրտնջենաւոր վիճակը ժամանակը լաւ յառաջացունելուն վերայ կրկայանայ , մէկ տարին տարապայման աւելի արժողութիւն ունի քան որչափ թագաւորութիւն մը կրնայ ունենալ մարդոց որդիքներէն մէկու մը :

Կ. . Մտածեցէք որ աս ներկայ կեանքիս մեծամեծ գործքերը միայն ժամանակին մէջը կրնան կատարուիլ . ինչու որ

քանի մը երևելի պարտաորութիւններ կան աս աշխարհիս սեփհական՝ որոնք թէ որ հոս չկատարուին, յախտեան անկատար պիտի մնան . որովհետև յախտեանականութիւնը չէ անոնց ժամանակը :

Արկաքանչիւր աշխարհ սեփհական գործողութիւններ ունին իրենց . ու մէկին սեփհական եղած գործը մէկալին մէջը չկրնար կատարուիլ : Հախտեանականութիւնը ու ժամանակը բոլորովին տարբեր գործերու ատեններ են : Ա՛նկը սերմանելու ատեն է, մէկալը հնձելու . մէկը գործելու ատեն է, մէկալը վարձք առնելու . ու թէ որ Մատուոյ դըբած աս կարգը փոխել ուղեմք՝ ու կեանքին գործը մահէն ետև կատարելու ձգեմք, մենք զմեզ թշուառաբար սխալած պիտի գանամք :

Աստի թէ որ արդարները կրկամին կրօնքի մէջ յառաջանալ՝ ու իրենց ընկերին հոգևոր օգտին համար ծառայութիւն մը ընել, աս ներկայ կեանքս է մի միայն ժամանակը : Արկինքը աւելի պատուական գործ ունին կատարելու : Մտանները հիմայ պարտին ըլլալ, չէ նէ յախտեան անկատար պիտի մնան : Այս աղէ՛ որ բարեպաշտ սիրտ կրնայ մտածել աս աշխարհս ձգելու, քանի որ ասոնք չեն կատարուած : Չէ՞ք փափաքիր որ կատարեալ մանաք երկինքը : Չեր սրտերը չն՞ն բորբոքիր բան մը ընել փրկիչ Մատուոյն համար, որ այնչտի բան ըրաւ ու քաշեց ձեզի համար : Չեր յօժարութիւնները չն՞ն բաղձար որ աշխարհէս անցնելուդ անոր օգուտ մը ընելու գործիք մը ըլլաք : Թէ որ աս փափաքները ունիք, հիմայ է ժամանակը : Ընգամ մը մահը իր ցուրտ ձեռքը ձեր վրայ որ դնէ, ասոնց նման ծառայութիւններ ընելու յախտեան անկարող կըլլաք : Ընտանը աս կեանքիս մէջը կատարուելու օգտակար գործքերուն բոլոր պատեհութեանցը բարեաւ մնա կրտէք : Ընտանը ձեր զաւկրները ու ամենասիրելի բարեկամները կրնան մեզքին մէջը առաջ վազել ու կորսուիլ, երբոր զանոնք յորդորելու համար բառ մը խօսելու անգամ կարող չէք : Աստի աս

նոր տարիս մանալնուդ 'ի բոլոր սրտէ առաջադրեցէք աւելի նախանձաւոր և աշխատասէր ըլլալ սս մասերուն մէջ , քան որչափ մինչև հիմայ էիք :

Գարձեալ՝ թէ որ անշեղջ մեղաւորները որ հիմայ դասագարտութեան վիճակի մէջ են՝ կրկամին փախչիլ անկից , թէ որ անոնք որ հիմայ մեղաց ծառայ են՝ կրկամին անկեղծութեամբ արդարութեան դառնալ , թէ որ սս վախճանիս համար շնորհաց միջոցները քաղօթք ընելը , Սուրբ Գիրք կարդալը , ու քարոզ լսելը և՛ կրկամին 'ի գործ զնել , հիմայ է ժամանակը : Այս գործերուն մէկը դրժոխքին մէջը չկատարուիր : Հարիւսնական աշխարհը մանալնուս պէս մեր վիճակը անփոփոխ ու մշտնջենաւորապէս հաստատուած պիտի ըլլայ : Այս ներկայ կեանքս է մեր փորձուելու մէկ հատիկ ժամանակը , ու թէ որ սս փորձիս մէջ աղէկ չգանուիմք , ամենեին ուրիշ փորձ մը պիտի չըլլայ վրանիս : Ամէն մարդիկ յաւիտենականութեան չփոխուած՝ հասունացած են անոր համար , բարիները երկինքը մտնալու հասունացած են , չարերը դժոխքը իջնալու : Առջինները ողորմութեան ամաններ են՝ փառքի համար պատրաստուած , մեկաները բարկութեան ամաններ են՝ կորսուելու պատրաստուած . և անոր համար իւրաքանչիւրը իրենց առանձին բնակարաններուն մէջը պիտի մնան յաւիտենան : Իրաւ մեղաւորները դժոխքին մէջը կը զոջան , բայց իրենց զոջումը իրենց պատիժ է , ու զօրութիւն չունի ազէկութեան դարձունելու զանոնք կամ փրկելու : Աուլան ու կողբան , բայց իրենց արցունքները իւզ կը լան բոցին սաստկութիւնը աճեցունելու : Աազաղակեն՝ և գուցէ կաղօթեն , բայց լսուելու և բնդունուելու ժամանակը մըշտնջենաւորապէս անցած է : Ե՛նորհաց միջոցները բոլորովին գացած են . Հօգիին սրբացուցիչ զօրութիւնները յաւիտենան մէկ դի քաջուած են : Այս սս պատճառովս պիտի փոխին ու հոսին , ու անօրէնութեան և թշուառութեան դուս և անխառն զանգուածներ պիտի ըլլան : Ազորմելի

մեղաւորներ՝ աղէկ միտքերնից առէք սա խորհուրդը, ու անիկայ անշուշտ ձեզ պիտի արթնցունէ ձեր քունէն : Վրիշ մըն ալ անտրնացէք, ու բաներնից պիտի լամբննայ . քանի մը օրեր ալ վատնեցէք՝ ինտոր որ ձեր անցած ժամանակը վատնեցիք, ու անշուշտ պիտի թաղուիք անյոյս թըշուառութեան սնդունդներուն մէջը : Արիշ տարի մըն ալ եկաւ հասաւ ձեզն ու ձեզ կը հրաւիրէ որ յախտնականութեան պատրաստուելու համար գործածէք անիկայ . և թէ որ անցեալին պէս վատնէք անիկայ, հաւանական է թէ յախտան պիտի կործանիք : Այն որոյ Արդմոնին խորատը բռնեցէք, ու «Վնչ որ ձեր ձեռքը կը զանայ գործելու, ձեր բոլոր կարողութիւնովը գործեցէք . ինչու որ գերազմանին մէջը՝ ուր որ դուք կերթաք, ոչ գործ կայ՝ ոչ խորհուրդ՝ ոչ զիտութիւն և ոչ իմաստութիւն» . (Եր. 10 :

Աս խորհրդածութիւնները կարծեմ թէ զօրութիւն մը պիտի ունենան թէ մրափող Վրիտառնեաները և թէ անղեղ մեղաւորները համոզելու որ քունէն արթննան : Հիմայ կը յառաջանամ մասնաորապէս խրաբանչիւրիին վրայ քանի մը արիշ խորհրդածութիւններ ընելու :

Արափող Վրիտառնեաներուն կրկին կը ջանամ առաջարկել ան առաքելական խորհրդածութիւնը որ մեր բնաբանին մէջն է . «Վրթնցէք, ինչու որ ձեր փրկութիւնը հիմայ մօտ է՝ քան թէ անասննր որ հատատացիք» : Արկինքը կարելի է որ միայն տարիի մը՝ կամ ժամու մը հեռաւորութիւն ունենայ ձեզմէ . բայց անտարակոյս աւելի մօտ է ան այսօր՝ քան թէ առաջ էր : Արչափ օրեր որ անցան, այնչափ պակսեցաւ ձեր սա ներկայ կեանքիս մէջը հեծելու ժամանակը : Մնչ սքանչելիք՝ որ այսչափ քիչ միջոցիս երանելի պիտի ըլլաք ձեր տէր Աստուծոյ գրկին մէջը . որ այսչափ շուտով պիտի ազատիք ան մեղքերէն ու նեղութիւններէն որ ձեզ հիմայ նեղը կը ձգեն . որ փորձութեան հետ պատերազմելու ձեր օրերը այսչափ մօտ են

վերջանալու . որ այսքան շուտով պիտի հասնիք երկնային փառաց ու երանութեան , ու ձեր բնութեանը տանելուն չափ երջանիք պիտի ըլլաք : Երդ՝ աս նախատեսութիւնը ձեզ չպիտի՞ արթնցունէ , ու ձեր սրտերը չպիտի՞ բորբոքէ . չէ՞ որ փրկութեան կրփափաքէիք՝ ու անոր համար կաշխատէիք . և հիմայ որ այսչափ մօտ է ան՝ կրնա՞ք քնանալ : Արնա՞ք քնանալ երբոր կեանքին զիշերը ելլալու վրայ է , ու յափտենական օրուան արշալոյսը ձեր վրայ ծագելու պատրաստ է : Արնա՞ք քնանալ յափտենականութեան սահմանագլուխը , երկնից դրանը սեմին առջևը :

Եւստրեալը աս տեղս խորհրդաբար կրնչանակէ ևս թէ փրկութեան մօտաօրութիւնը հաւատացելոց մեծ պատճառ է ուրախութեան : Ուրախութեան պատճառ է ան , թէպէտ և մահը մէջ կիշնայ՝ ու փրկութիւնը չկրնար հասնիլ մեզի մինչև որ մենք ան արտմագին ձօրէն չանցնիմք : Ասան որոյ՝ հաւատացեալ եղբարք իմ՝ , ուրախութեան աւետիս կուտամ՝ ձեզի , թէ դուք շուտով պիտի մեռնիք : Ես թշուառ աշխարհս մշտնջենաւոր բնակութիւն չպիտի ըլլայ ձեզի : Արկրիս վրայի ու դժոխքին մէջի ձեր ամենաչար թշնամիները չպիտի կարողանան Սաթուսաղայի կեանքին երկարութեանը չափ ձեզ հոս արգիլել , թող թէ յափտեան ձեզ հոս պահել : Ուրախացէք ան խորհուրդին վրայ որչառ չանցած ապականութեան պիտի դառնաք . վասն զի որչափ որ մահը՝ նոյնչափ ալ ձեր փրկութիւնը մօտ է ձեզի : Չեր հողեղէն մարմինները չպաղած ու չպատանուած՝ ձեր աղատեալ հոգիները երկինքը պիտի ըլլան : Աքանչելի օրինակներ պիտի ըլլաք դուք Սողոմոնին խօսած ճշմարտութեան խօսքերուն , թէ՛ «Սարգուն մահուան օրը իր ծննդեան օրէն բարի է» . (յաղ . է . 2) : ձեր մահը պիտի ըլլայ ձեր ծննդեան օրը , որ լաւագոյն աշխարհ մը ձեզ պիտի խօթէ : Մահկանացուները իրենց լեզուովը Մեռեալ պիտի կոչեն ձեզ , բայց հրեշտակները պիտի աղաղակեն ձեր վրայ՝ Եւմահ ծնունդ . մշտնջենաւոր կենաց համար

ծնեալ, երկնաւոր թաղի համար ծնեալ, “անեղծ ու անա-  
րատ և անթառամ ժառանգութեան համար ծնեալ” ( Թ. Գլխոր . Թ. 4 : ) Եւ աս այսչափ մօտ եղած փառաւորեալ  
օրջանս տեսութիւնը չպիտի<sup>2</sup> արթընցունէ ձեզ քունէ :  
Չէ՞ք կրնար ժամ մը կամ տարի մը արթուն մնալ . փրկու-  
թիւնը քնացած տեղերնիդ վրանիդ հասնի :

Ստածեցէք թէ ինտոր որ ձեր պարտաւորութիւնները  
կատարելէն՝ նմանապէս բարեպաշտութեան մէջ յառաջա-  
նալու համար ձեր առաջադրութիւններէն ու ակնկալու-  
թիւններէն ալ որչափ ևս մնացիք : Վլ երջանիկ հոգիներ՝  
որ հիմայ Մտուածոյ շնորհքովը բարի յոյս մը կը վայելէք,  
յիշեցէք ան ժամանակը որ խիստ տարբեր ու առաւել ևս  
տրտմազգեաց վիճակի մէջ էիք . յիշեցէք ան ժամանակը  
երբոր ձեր հոգիները հազարաւոր խոցերով կը վիրաւորէին .  
երբոր Տէրօջը սարսափները ձեզի դէմ կը զինուորէին, ու  
Սինայի ահաւոր որոտմունքները զարհուրեցուցիչ ձայնե-  
րով ձեր ականջներուն կը նշէին . երբոր Մտուածոյ նետերը  
խորունկ կը թափանցէին ձեզի, ու անոնց թոյները ձեր հոգի-  
ները կը կըլէին . երբոր յանցաւորութիւնը ձեր խղճմտանք-  
ներուն վրայ կը ծանրնար, ու ձեզ յուսահատութեան ան-  
դունդին մէջը կը թաղէր . երբոր Մտուածային վրէժխնդ-  
րութեան զարհուրեցուցիչ ակնկալութիւններովը գիշեր  
ցորեկ թափառական կը շրջէիք . երբոր անդին ասդին կը վա-  
զէիք փրկիչ մը փնտռելու ու կաղաղակէիք՝ “Մ՛՛՛՛ ո՛ր էր  
որ փրկիչ մը գտնայի”, բայց ձեր աղաղակը պարպա ըլլալ  
կը թուէր : Մ՛՛՛՛ ինչ ուխտեր ու առաջադրութիւններ ըրիք  
թէ աս ու ան բանը պիտի ընէք թէ որ Մտուած կամենար  
ձեզ ազատելու : Ըիմայ կը հարցունեմ ձեզի . Ստածեցի՞ք  
անատենը թէ ձեր ազատութենէն ետքը ասանկ շուտ մը  
քունի մէջ պիտի լյնաք :

Յիշեցէք ևս ան երջանիկ ժամը՝ երբոր հաշտուած Մտ-  
ուածոյ երեսը ձեր վրայ ժպտեցաւ . երբոր Յիսուս իր  
փրկչական փառաւորութեամբը ձեր մտքերուն երևցաւ .

իրևե ամենարուական փրկիչ՝ ձեր անոյս վիճակին մէջ . երբոր ինքը՝ «անձերնիդ մահուանէ՛ աչքերնիդ արցունքէ՛ ու սաքերնիդ իյնալէն փրկեց՛» . ( Սող . Ճժիլ . 8 : ) երբոր ձեր յուսահատեալ սրտերը յուսով լեցուց , ու իր սիրոյն երկնասոր դեղովը ձեզ կենդանացուց : Դ՞նչ էին անասներ ձեր խորհուրդները ու առաջադրութիւնները : Դ՞նչպէս զորութեամբ յօժարեցաք ձեր երախտագիտութիւնը իրեն մատուցանել . ի՞նչպէս հաստատութեամբ խոստացաք դուք զձեզ յաւիտեան իր ծառայութեանը նուիրել : Բայց ախոս , որչափ շուտով սկըսեցիք քնանալ : Արչափ յետնեալ գտնուեցաք ձեր ուխտերէն ու խոստմունքներէն : Հիշեցէք ևս թէ ի՞նչ ակնկալութիւններ ունեցաք ան բարեյիշատակ տաներ : Արհաւատայի՞ք անասներ թէ այսչափ տարիներուն մէջը ասանկ քիչ պիտի յառաջանայիք ձեր երկնային ճամբուն մէջը՝ ինտոր որ իրօք ըրիք : Աւազոյն բաներու չէ՞իք յուսար : Բայց՝ աւաղ . ի՞նչպէս զրկուած մնացիք յոյսերնուդ . ի՞նչ անպիտան ծառաներ եղաք ասանկ բարի Տէրով : Արնաք տանիլ տակաւին քնանալու խորհուրդը : Ըստարիս ալ առջինին պէս պիտի անցնի : Յոյս ունիմ որ չէք կրնար տանիլ աս խորհուրդը : Աւրեմ քունէն արթընցէք , ելիք ու ձեր Ըստուծոյն համար գործի սկսեցէք :

Վերեցէք ինծի՛ որ իմ ձեզի ուղղած խօսքս աս խրատովս վերջացունեմ : Ակըսեցէք աս նոր տարիս ձեր անձերը նորէն Ըստուծոյ մատուցանելով , ու իր հետը ըրած ձեր ուխտը վսեմութեամբ նորոգելով : Ըստոր դուք ձեզի առանձնացէք . անցած տարվան համար ու բոլոր ձեր անցեալ կեանքին համար հաշիւի նստեցէք . ձեր զանազան պակասութիւնները միաբերնիդ բերէք , անոնց վրայ արտոսացէք , ու Ըստուծոյ շնորհացը զորութիւնովը առաջադրեցէք սակե՛ կեալ անոնց դէմ հսկելու : Ընձերնիդ քննեցէք թէ արդեօք ձեր կրօնքը ճշմարտապէս բնանձ էք , ու անոր մէջը զարգացանձ էք : Ըմեն ասոնք ընելնէդ կեալ՝ դուք զձեզ նու-



րէն Հիսուս Վարիստոսի վրայ ձգեցէք՝ ու աս նոր տարւոյս մէջը ձեր անձերը բոլորովին իրեն նուիրեցէք, առաջադրելով որ առաւել ևս իրեն համար պիտի ապրիք քան օրչափ մինչև հիմայ ապրեցաք. ու իրեն ապաւինեցէք՝ անվատանգ առաջնորդելու ձեզի աս տարւոյս մէջը պատահելու բոլոր բաներուն մէջէն, թէ յաջողութիւն ըլլայ և թէ ձախորդութիւն, թէ կեանք և թէ մահ: Մտիկայ է ճշմարիտ և մի միայն միջոցը որով կրնամք ստանալ ան կրօնականութիւնը՝ որն որ ամէնս ալ պարտիմք փնտոել. ան ուրախութիւնը՝ որ բնաւ չպիտի վերջանայ:

Հիմայ կրկամիմ՝ յառաջանալ քանի մը խորհրդածութիւններ ալ ընելու՝ որ յատկապէս անզեղջ մեղաւորներուն կրպատշաճին:

Սահկանացու մեղաւորներ՝ մտածեցէք թէ աս ներկայ ժամանակը զանցառութեան ձգելովնիդ ինչ վտանգի կը վազէք: Սրչափ որ դուք զձեզ մեղաց մէջ կը հեշտացունէք, այնչափ դժուարին կը ըլլայ անկից գաղտնիք, և ասանկով ան մահառիթ չարին հետը յաւիտենական միաւորութեամբ մը կապուելու վտանգին չէ՞ք մի վազեր: Սրչափ որ շար բնաւորութիւնները կրսնուցանէք, այնչափ մեղաց ունակութիւնները կը զօրանան, և ասանկով անոր յաւիտենական դերինը ըլլալու վտանգին մէջ չէ՞ք մի ըլլար: Սրչափ որ անզղջութեան մէջ կը յարատեւէք, այնչափ ձեր սրտերը կրիստանան: Սրչափ որ ձեր խղճմտանքներուն վրայ կը բռնանաք, այնչափ անոնք անզգայ կը ըլլան: Եւ ասանկով անթափանցելի խտասորտութեան մէջ հաստատուելու՝ ու ամբարիշտ մտքեր ստանալու ուղղակի ծամբանները չէ՞ք մի բռներ: Սրչափ՝ որ Մտուծոյ դէմ կը մեղանչէք՝ ու իր նօզին կը վշտացունէք, այնչափ զինքը կը բարկացունէք իր շնորհքը ձեզմէ ետ պահելու ու արդար դատաստանով ձեզ կրեսէ ձգելու: Եւ ինչպէս կը համարձակիք դէպի ասանկ վտանգի մը վազել: Սրչափ որ ժամանակ կը վատնէք, այնչափ ձեր գործը կը շատցունէք՝ ու անկիս կատարելու

1174  
5192-57

Համար այնչափ ձեր ժամանակը կրկարճըրունէք : Որքան որ ձեր ժամանակը կը վատնէք, այնքան ձեր շնորհաց օրերը կը քիչցունէք : Բարեւ . ձեր այցելութեան օրը շուտով իրիկուն կը ըլլայ, որ ատեն ձեր խաղաղութիւնը մշտնջենաւարապէս պիտի գոցուի ձեր դիմացէն . Գ . 1 . ԺԹ . 42, 44 : Ուրեմն ժամանակ չէ՞ ձեզի քունէն արթըննալու : Լ . 1 . Երկը կրկամիք ասանկ դարհուրելի վտանգի մը վազել՝ քան թէ ձեր անզգայ թմրութենէն արթըննալ : Ս՛ . Ինչ պիտի ըլլայ յասանկ ճամբուն վախճանը :

Ինչ տուէք ինծի որ համարձակ և առանց ակնածութեան վարիմ՝ ձեր հետը աս մասին՝ որ շողքորդութիւն չվերցունէք : Ի՞նչ որ հիմայ չէք արթըննար՝ ու ձեր հոգը հոգիներնուդ օգտին չէք դարձունէք, խիստ հաւանական է որ տակաւին մարմնաւոր ապահովութեան մէջ յառաջ պիտի երթաք, ու վերջապէս յաւիտեան պիտի կորնչիք : ( ) Երեւալ է Մատուած որ ասիկա զեռ որոշուած բան չէ, և անոր համար պատճառ չունիք յուսահատելու . բայց ճշմարտապէս խիստ կարելի բան է, և անոր համար մեծ պատճառ ունիք վախնալու : Մ . սահարկու կարելիութիւնը կարծեմ թէ ձեր մտքերը պիտի համոզէ աս հեռեւեալ սկզբունքներովը որ չէք կրնար ուրանալ զանոնք :

Լ . Ձեզմէ ամէն մէկերնիդ քսան կամ երեսուն կամ քառասուն տարի աս աշխարհիս մէջը ապրեցաք, ու աս բոլոր տարիներուս մէջը Մատուածոյ շնորհացը ան նոյն միջոցները վայելեցիք դուք՝ որոնք որ կը յուսաք ասկից ետքը վայելել :

Բ . Ենչափ շարիք չգործեցիք ձեզ երեսէ ձգելու համար բարկութեան շարժելու զՄատուած . ձեր մեղանշական ունակութիւնները այնչափ զօրացած չեն, ձեր սրտերը մեղքին խաբերայութիւնովը այնչափ կարծրացած չեն . ու ձեր խղճմասնները բազմապատիկ՝ անիրաւութիւններով այնչափ թուլցած չեն՝ որչափ որ ասկից ետքը կրնան ըլլալ :

Ուրեմն որչափ որ աս վիճակին մէջը ապրիք, այնչափ առաւել անյոյս պիտի ըլլայ ան : Քաւ . վրցի որ ես չափ և

սահման դնեմ ինքնիշխան Տերօջը ձրի շնորհքին . բայց  
 աս յայտնի է՝ որ մարդկային տեսութեամբ , ու բանին ե-  
 րևոյթին նայելով , առաւել ևս հաւանական էր ձեր աս-  
 կից առաջ դարձի գալը՝ քան թէ ասկից ետքը : Աեանքին  
 ան մասը՝ որուն մէջ ձեր դարձի գալը կրնար յուսացուիլ ,  
 անցուցիք . ու անատենը ևս ապաշխարութեան շարձար :  
 Ուրեմն որչափ քիչ հաւանական է թէ ասկից ետքը դարձի  
 պիտի գաք :

Վերեցէք որ յայտնապէս ձեզի ըսեմ թէ մեծապէս կը  
 դողամ ևս ձեր մէկ քանիներուն վրայ : Ղշմարտապէս կը  
 վախնամ թէ ձեզմէ ոմանք յաւիտեան պիտի կորնչին . ու  
 իմ վախնալուս պատճառը աս է՝ որ ձեզմէ ոմանք անզեղջ  
 մեղաւորներ են : Չեր բնաւորութիւնը ու վարքը մեծա-  
 բարբառ կը քարոզէ ան . ու բանին բոլոր պարագաները  
 մտածելով ամենեւին հաւանական չերևար թէ բնաւ երբէք  
 զեղջի պիտի գաք : Արովհետև ձեր կեանքին խիստ յու-  
 սացուելու տոնը չզղչացիք , շատ կը վախցուի որ անոր քիչ  
 յուսացուելու տոնը չպիտի զղջաք : Եւ որովհետև մէկ  
 անզեղջ ու անսուրբ մեղաւոր մը ամենեւին չկրնար մտնալ  
 երկնից թագաւորութիւնը , շատ կը վախցուի որ յաւիտեան  
 պիտի կորնչիք դուք . չէ թէ անոր համար որ Աստուծոյ ո-  
 զորմութիւնը ու Վրիստոսի արդիւնքը բաւական չէ ձեզ  
 փրկելու՝ թէ որ անոր համար իրեն զիմք աւետարանին  
 ցուցուցած ճամբովը . չէ թէ անոր համար որ ձեր վիճակը  
 ըստ ինքեան անյոյս է՝ թէ որ քունէն արթըննաք ու ան-  
 կեղծութեամբ Տէրը փնտրուէք , և չէ թէ անոր համար որ  
 բաւական քաջալերութիւն չունիք փութաջան աշխատու-  
 թեան՝ աս մասին . հապա անոր համար որ խիստ կարելի  
 է թէ անհոգ և ապահով պիտի յառաջանաք ասկէց ետքը  
 ինտոր որ մինչև հիմայ ըրիք , ու նոյն ճամբուն մէջը պիտի  
 յարատեւէք մինչև որ ձեր ժամանակը հատնի , և ձեր վի-  
 ճակը անյոյս ըլլայ : Հաւատարմութեամբ կը ճանուցանեմ  
 ձեզի ձեր վտանգը՝ որն որ այնչափ մեծ է որ չճանկուիր :

Աշտակոյն բաւական քաջալերութիւն կուտամ՝ ձեզի անկից փախչելու՝ հաւատարմացունելով զձեզ՝ որ եթէ հիմայ ձեր վիճակը սրտերնուդ մէջը զգայք, ու ձեր զարծի գալուն համար բոլոր պատշաճաւոր միջոցները՝ ի գործ գնէք, շատ մեծ պատճառ ունիք յաջողութեան յուսարու։ Ազնւափ պատճառ ունիք՝ որչափ որ երկնից մէջի սուրբերը ձեր վիճակին մէջը եղած ատեննին ունեին, քանզի ատենոք անոնք ալ ձեր վիճակին մէջն էին։

Ս ասն որոյ հիմայ՝ ով մեղաւորներ, արթննցէք քունէն։ Աս նոր տարիս անառակութեամբ ու շուայլութեամբ մանաւնուդ տեղը, անիկա ձեր փրկութեանը մեծ գործին համար գործածելու նուիրեցէք։ Ով քնացող «աս ի՞նչ է որ կրխորդաս, ելիր կարգալ քու Տէր Աստուծոյդ, որ բլայլ թէ քարեցունէ քեզ՝ ու չկորնչիս»։ (Յովնան, ւ, 6) «Արթնցիր դուն որ կը քնանաս, և կանգնէ մեռելներէն, ու Վրիստոս քեզի լոյս պիտի սայ»։ (Աղէւ, Ե, 14)։

Ոտածեցէք որ կարելի է թէ աս տարիս մահուան հոգը իջնունէ ձեզ, Անցեալ տարուան Արդանդը տեսնողներուն քանի՞ քանիները գերեզմանն են պսօր։ Ասանց մարդարեական հոգւոյ կը համարձակիմ՝ գուշակել՝ (թէ պէտ չեմ կրնար ցուցնել ձեզի ան անձները) թէ աս տարիս չվերջացած մեզմէ ոմանք երկինքը պիտի բլան կամ դժոխքը, գուցէ արևոր ձերունները՝ կամ գուցէ ծաղկահասակ պատանիները, գուցէ դուք՝ կամ գուցէ ես։ Աշտ որովհետեւ մեկերնիս ալ չեմք գիտեր թէ ով պիտի բլայլ գացողը, մեկերնիս ալ պէտք չէ որ ձգեմք անմիջապէս պատարաստուելու հարկաւորութիւնը։ Աշտանի թէ ամենիս ալ անանկ խմատուն բլայլիմք՝ որ մեր վերջին վախճանը մտածելիմք, ու միշտ անոր պատարաստ գանուէրնք շնորհոք Տեառն մերոյ Հիսուսի Վրիստոսի, որում ընդ Հօր և ընդ Հօգւոյն Սրբոյ՝ Վայելէ փառք յաւիտեանս, Ամէն։

Մ Ո Ր Տ ՈՒ Թ Ե Մ Ե Ն Ա Ր Ե Ց

Հայրնամ՝ գայ Հիսուս՝ ի Գառիկէ՝ ի Հարգանան առ Հայրնանն՝ մերտի  
 ի նման : Եւ Հայրնանն արցելու զնա՝ և առ և ինձ պիտոյ է ի բն՝ մերտի  
 և զու առ ին զառ : Գառաբանի եւ Հիսուս և առ զնա . Իմի՛ն առք  
 պիտ՝ զի պիտոյն վայել և մեզ ըսուչ զամենայն արգարութիւն . և ապա  
 իմի՛ն ևս նմա : Մատթ . Գ . 13 ——— 15 :

Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն Հեթանոսս . մերտեցէք  
 զնոսս յանուն Հոր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ : Մատթ . Իբ . 19 :

Մ Ա Ր Ե Ա Ւ Յ Ե Ն փրկութեան ժամանակը լեցուելուն՝ երբոր  
 Ըստուած իր Արդին խրկեց օրէնքին առկը եղողները փրկ-  
 կելու , պէտք եղաւ որ բոլորովին իր եղբայրներուն նման  
 ըլլայ սն : Աբբ . Ի . 17 : Ուստի կուգայ կնիկէ մը կրճնանի ,  
 ու օրէնքին առկը կրճնանայ : Գաղ . Գ . 4 :

Ըստուծոյ նախատահմանս մարկագործութեանը առ մեծ  
 սկզբունքիս համեմատ՝ կրգանամք որ մեր մարկիչք փոքրիկ  
 մանուկի մը պէս առ աշխարհս կրսնանայ , ախտի մը մէջ կը  
 ծնանի ու մտորի մէջ կրպատկի : Ըստպէս իր զԼ իր մարդ-  
 կութեան օրէնքին կրխանարհեցունէ : Մանուկները մար-  
 մինի ու ծարինի հաղորդ են , անոր համար ինքն ալ նմա-  
 նապէս նոյն բաներուն հաղորդ կը ըլլայ : Մեր մարկիչներուն

ամեն անմեղ տկարութիւնները իր վրան կաննէ . անօթութեան ու ծարուածեան՝ հոգնութեան ու մահուան ենթակայ կը ըլլայ :

Աւթը օրը լրանալուն՝ թմբաստութեան օրէնքին տակը կը մանայ : Արեսուն երկու օր ալ անցնելէն ետեւ տաճարը կը բերուի Կաղանդելու ան օրէնքին՝ որ կը հրամայէ ամէն առջինեկ զաւակները ու անասունները Տէրօջը նուիրել : (Վ՝՝ . թ. 22, 23 : « Եւ մանապէս (թէպէտ և անմեղ Արդի Մատուծոյ) նոյն օրէնքին ան մասին տակն ալ կը մանայ որ մարդոց անդրանիկները կտրուած զնով մը ազատելու կը պատուիրէ : (Վ՝՝ . թ. 24, 27, 39) : որն որ Մատուած իր բարեշնորհ սղորմութեամբը թէպէտ և մարդկային արիւն չմտախելու համար հրամայած էր , բայց անտարակոյս նաև իր զիտաւորութիւնը մեղաւոր մարդը անով անպատիւ ընել էր : « Եւ մէն ինչ որ արդանդ կը բանայ՝ (կըսէ Մովսէսի օրէնքը ,) ամէն մարմիններէն՝ որ Տէրօջը կը բերեն , թէ մարդ ըլլայ և թէ անասուն , քեզի պիտի ըլլայ . բայց մարդոց անդրանիկները ու անսուրբ անասուններուն անդրանիկները պիտի փրկես : Եւ կոպին անդրանիկը՝ ու ոչխարին անդրանիկը՝ ու այծին անդրանիկը պիտի չփրկես , ինչու որ սուրբ են » : թ. 15—17 : Մտոր նշանակութիւնը ան է թէ Մատուծոյ սեղանին վրայ պատարագ ըլլալու համար ամենեկին պիղծ բան մը ընդունելի չըլլալուն՝ մեղաւոր մարդուն անդրանիկը՝ ու ըստ օրինի պիղծ սեպուած բոլոր անասուններուն անդրանիկը ստակով կամ ուրիշ կերպով մը պէտք է փրկել . այսինքն՝ անոնց տեղը սուրբ կամ մաքուր անասուն մը պէտք է պատարագ ընել Մատուծոյ . բայց մաքուր անասուններուն անդրանիկը կրնան Մատուծոյ պատարագ մատուցանել : Արդին Մատուծոյ չհրաժարեցաւ իր վրայ կրելէն ան նախատիւքը որ սա օրէնքը կը պարունակէր :

Տասներկու տարու ըլլալուն իր ծնողքը իրեք օր կը կորսընցունեն զինքը և ապա տաճարը կը գտնան , որ գերբնական խմաստութիւն և հանճար կը ցուցնէ , ու իրենց հետը

չիջնայուն համար զինքը յանդիմանեցուն՝ իր Հօրը գործին վրայ ըլլալը խորհրդարար նշանակելով Հովսէփը ու իր մայրը կամեցունէ . (Վ 1-ի . ք . 42—50 ) և սակայն անոնց հետք կիջնայ՝ ու կերթայ Կաղարէթ , ու կը հնազանդի անոնց . (Վ 1-ի . ք . 51 ) և սասնկով որդիական հնազանդութեան օրէնքին տակը կը մանայ՝ որ հինգերորդ պատուիրանին մէջը գրուած է :

Տարակոյս չընար ըլլալ որ Որդին Բնութեանց երկրաւոր իշխաններուն օրէնքին ալ ուրախ սրտով Հնազանդութեան մտաւ , ինտոր որ իր ըսած խօսքէն կիմացուի , թէ՛ . «Վազէք՝ ան որ կայսրին է՝ կայսրին տուէք» : Սաղմ . ի ք . 21 :

Բայց տարիներ անցան՝ ու Հիսուս սկսեց երսուն տարեկան ըլլալ . հասաւ ժամանակը որ ալ ինքը պէտք էր սկսել իր պաշտօնը՝ հրապարակաւ քարոզութիւն ընելու : Եւ ահա նոյն ատենը Հրեաստանի անասպափն մէջ երկուցաւ Բնութեան խրկուած մտրդ մը՝ որուն անունը Հովհաննէս էր , ու կը քարոզէր Կաղարէթին՝ և Տէրօջը դուրստը : Բնութեան կերթային բոլոր Երուսաղէմացիները ու բոլոր Հրեաստան՝ ու Յորդանանի բոլոր կողմերը , ու կը մկրտուէին իրմէն Յորդանան գետին մէջը՝ մեղաւոր ըլլալնին խոտտովանելով : Աստի Հիսուս ալ բոլոր մնացած ժողովուրդին նման՝ Վալիլէայէն Յորդանան կուգայ Հովհաննէսին՝ անկեց մկրտուելու : Բայց Հովհաննէս կարդիլէ անիկայ ըսելով . Ինձի պէտք է քեզմէ մկրտուիլ՝ ո՞վ անմեղ Վրկիչ , ու դո՞ւն ինձի կուգաս : Կուգաս ապաշխարութեան մկրտութիւնը ընդունելու , դո՞ւն որ մեղք չունիս խոտտովանելու և ապաշխարելու : Բայց Հիսուս կըսէ . Ի՞նչ տուր հիմայ , ինչու որ սասնկ կը վայելէ մեզի բոլոր արդարութիւնը լեցունելու : Օրէնքի տակն եմ ես , ու կատարելապէս պիտի Հնազանդիմ անոր : Բնութեանը Հովհաննէս թող կուտայ անոր :

Բնութեան պէս ասէ ետեւ Սասանային փորձութեանը ենթակայ կը ըլլայ Վրկիչը : Սարգկային սեռը աս վիճակիս մէջն

էր, անոր համար ինքն ալ չհրաժարիր անկից : Բայց սա  
 ահաւոր պատերազմիս մէջը յաղթութիւն ստանալով ան  
 առնեն կըսկըսի քարոզել ու ըսել, Ապաշխարեցէք, ին-  
 չու որ երկնից թագաւորութիւնը մօտ է : Աշակերտները  
 կրնարէ . որ ըստ օրէ զանոնք կըվարժէ՝ բայց չսփով և աս-  
 տիճանով, անոնց տկարութեանը տանելուն չափ : Իրեք  
 տարի կըպըտըտի միշտ բարիք ընելով :

Սերջապէս ինքզինքը կըհնազանդեցունէ մարդկային  
 ազգը ծառայութենէ ազատելու համար իր վրտն առած ան  
 մեծ և վերջին գործին : Սեր տեղը կըհնազանդի մահուան,  
 և խաչի մահուան : Բայց մահը չկրնար յաղթել իրեն .  
 իրեք օրէն յարութիւն կառնէ : Աշակերտներուն իշխա-  
 նութիւն կուտայ ամէն տեղ երթալ աւետարանը քարոզել-  
 լով, ու իր անունովը մկրտելով . ու ետքը Աստուծոյ աթո-  
 սին աջ կողմը կըհամբառնայ, ուր որ միշտ կըկենայ իր ժո-  
 ղովորոցը համար բարեխօսութիւն ընելու : Աւ Հայրը՝ որ  
 իրեն հաւնեք է . Սաղմ . ք . 17 : իր միջնորդութիւնովը  
 հաշտուած է հաւատացեալ մեղաւորներուն հետ, անոր  
 հնազանդութիւնը ու շարչարանքը իր արգար օրէնքին բա-  
 ւական հատուցում մը սեպելով : Ինքն է մի միայն Սիջ-  
 նորդը՝ Աստուծոյ և մարդոց մէջը, (Խ . ՏԿԻ . ք . 5) ու սա  
 մեծ Քահանայապետիս միջնորդութիւնովը հանապազ  
 համարձակութեամբ կրնամք մօտենալ Աստուծոյ շնորհաց  
 աթոռին առջևը, ու շնորհք գտնել պէտք եղած ատենը  
 օգնելու : ԱճԻ . ք . 16 :

Արդ՝ Յիսուս Փրկիչն մեր Յովհաննէսին մկրտութեանը  
 զինքը հնազանդեցունելով ու ետքը իրեն հետեօղներուն  
 պատուիրելով որ երթան ու բոլոր աշխարհ աշակերտեն՝  
 մկրտելով զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
 Սրբոյ, արժան կըհամարիմ հիմայ քննել Յովհաննէսին  
 մկրտութեանը ու Քրիստոնէից մկրտութեանը բնութիւնը  
 ու նպատակը :

Աս երկու նիւթերուս վրայ ալ աղէկ տեղեկութիւն



ստանալու համար պարտիմք անմիջապէս սրբազան մատնագիրներուն երթալ : Ստաթէոսի Մետարանին երրորդ գլխուն մէջը կրկարդասմք՝ թէ Հովհաննէս Սկրտիչ եկաքարողելով ու ըսելով , Մպաշխարեցէք , ինչու որ երկնից թագաւորութիւնը մտաւ : Վանդի ափից էր որ պիտի գար Տէրօջը ճամբան պատրաստելու : Ահատէ հիմայ թէ Հովհաննէսին քարոզութեանը նիւթերը ի՞նչ էին : Մպաշխարութիւն՝ ու Տէրօջը գալուստը՝ ու Մետարանական Տեսեսութեան բացուելը , որն որ ինքը կրկոչէր թագաւորութիւն երկնից : Մքարե նորալուր աստութիւններ երևալու էին ասոնք շրէից աղբին՝ որոնք իրենց անձնական արգարութեանը մէջ մեռած էին , ու իրենց օրէնքովը և արարողութիւններովը կը պարծենային : Օլարհուրեցուցիչ էին արգարե աս անապատաւոր Սարգարէիս սպտանալիքները՝ ու ահա որ՝ անոր աղղարարութիւնները , իր ուղտի մտղէ հանգերձովը՝ ու մէջքը կապած կաշիէ գօտիովը : Մպաշխարեցէք (կրտէր՝ անապատին մէջը կանչելով , բայց իր ձայնը երկրին մինչև ծայրերը հասցունելով ,) ապաշխարեցէք՝ ո՛վ կոյր և կորսուելու մեղաւորներ , որ Սոլսէսի ապաւինած էք , ու կը յուսաք օրէնքով փրկուիլ : Մպաշխարեցէք՝ ինչու որ կացինը ծառերուն արմատին քով դրուած է : Սեսիսայն՝ «ձեր փնտրուած Տէրը յանկարծակի իր տաճարը եկած է . և ո՛վ պիտի դիմանայ անոր գալու օրը , ու ո՛վ պիտի կենայ անոր երևալուն , ինչու որ ինքը հալոցի բոցին պէս՝ ու թափիչներուն օձաւին պէս պիտի մրտնայ » : Սու . 7 . 1 , 2 : Մպաշխարեցէք՝ ինչու որ իր հեծանոցը իր ձեռքն է , և իր կալը պիտի մարբէ , ու ցօրենը իր համբարը պիտի ժողվէ . բայց յարդը անմարելի կրակով պիտի այրէ : Սու . 7 . 2 , 12 :

Երողութեամբ անապատին մէջ կանչողին աս դարհուրեցուցիչ ձայնը կը ըսէ՝ ու իր խորունկ քունէն օրթըննալով ամէն կողմերէն միաբան դուրս կելնեն իրեն , ու մեղաւոր

ըլլանին խոստովանելով՝ և անտարակոյս դաւանելով թէ  
 ապաշխարութեան մէջ են՝ իր մկրտութիւնը կրնդունին :

Ե՛հա այսպէս իմացանք որ Հօլմաննէսին մկրտութիւնը  
 էր՝ Եպաշխարութեան Սկրտութիւն ոչ Սկրտութեան  
 Եպաշխարութիւն, ոչ Սկրտութիւն՝ ըստ ինքեան Եպաշ-  
 խարութիւն, այլ Եպաշխարութեան Սկրտութիւն . ինչ-  
 պէս որ Վոկաս կիմացունէ . Վոկ. 4. 3 : Սկրտութիւն  
 իբրև նշան և կնիք ապաշխարութեան մէջ ըլլանին դաւա-  
 նելուն : Վաս յ Եպաշխարութիւն ՚ի գործ գրուած՝ թէ ի-  
 րորք և թէ բանիւ, և ապա Սկրտութիւն մատակարարուած՝  
 իբրև նշան Եպաշխարութեան :

Հօլմաննէսին մկրտութեանը ճիշդ բնութիւնը ասիկայ  
 ըլլալը առաւել յայանապէս կիմացուի՝ թէ որ կրկին նայ-  
 ինք Սատթէոսի պատմութեանը : Արոր Հօլմաննէս Սա-  
 դուկեցիներէն ու Փարիսեցիներէն շատերը իր մկրտու-  
 թեանը եկած տեսաւ, անոնց կեղծաւոր բնութիւնը գիտ-  
 նալով, անոնց սուանց սրտանց ապաշխարելու իբրև լոկ  
 արտաքին արարողութեան մը իր մկրտութեանը եկած ըլ-  
 լանին զիանալով, ու (ինչպէս որ ետքը Տէրն մեր ըսաւ)  
 բաժակին ու սկաւառակին արտաքին կողմը մաքրել սիրել-  
 նին՝ ու ներսուանց բոլոր պղծութիւններով լեցուն ըլլալ-  
 նին զիանալով, աս ահաւոր խօսքերովը անոնց վրայ կը գո-  
 չէր ու կըսէր . «Վի իժի ծնունդներ՝ ո՞վ իմացուց ձեզի  
 դալու բարկութենէն փախչել : Ե՛սկէ ետև ապաշխարու-  
 թեան արժանաւոր պտուղ բերէք, և մի՛ խորհիք դուք ձեր  
 ներսիդին ըսել, թէ՛ Սենք մեզի հայր՝ Երբաճամը ունիմք .  
 ձեզի կըսեմ որ Եստուած կարող է աս քարերէս Երբաճա-  
 մին որդիներ հանել» : Արպէս թէ ըսած ըլլար, Սի կար-  
 ծէք դուք ձեզի թէ արտաքին արարողութիւնները՝ ինչպէս  
 առանց ապաշխարութեան ու հաւատքի մկրտութիւնը,  
 կամ մարդկային առնչութիւնը՝ ինչպէս Երբաճամի Արդի  
 ըլլանիդ՝ կարող են Եստուծոյ օրէնքին դէմ գործած ձեր  
 մեղքերը քաւել . ինչու որ օրէնքը կը պահանջէ ապաշխար-

բուծիւն՝ և հաւատք Մատուծոյ Ղառին վրայ, որ աշխարհի մեղքերը կը վերցունէ : Եւ թէ որ իբրև ապաշխարող մեղաւորներ չէք գար, ձեզի կը սեմ՝ բնաւ մի գաք իմ մկրտութեանս . ինչու որ ասիկայ պէտք է ընդունել իբրև նշան և կնիք ճշմարիտ զղջման, որ ետքը ձեզի բարի պատուհներ առաջ բերել պիտի տայ ձեր կեանքին ու կենցաղաւարութեանը մէջ : Եւ թէ որ ասանկ բարի պատուհներ չէք բերեր, ձեզի խմացունեմ որ աս արտաքին արարողութեանս դուք զձեզ նազանդեցուցիք ալ նէ պիտի կտրուիք ու կըրակը նետուիք :

Եսանկէր ահա Յովհաննէսին մկրտութեանը բնութիւնը ու նպատակը : Եսիկայ Եւետարանական Տնտեսութեան նախապատրաստութիւն մը պէտք է համարել : Յովհաննէս իրաւ Վրիստոնէական Տնտեսութեան մէջ չէր, բայց Հրէականին մէջ ալ չէր : Երկուքին մէջ տեղն էր ինքը . ու աս գաղափարս է որ իբրև բանալի կը բանայ ան խօսքը, թէ «կնիկներուն ճնունդին մէջը Յովհաննէս Սկրտիչէն մեծը ելած չէ . սակայն երկնից թագաւորութեան (այսինքն՝ Եր Տնտեսութեան) մէջի պինտ պղտիկը՝ անկեց մեծ է» : Մարք . ԺԹ . 11 : Յօհաննէս մարգարէ մըն էր, ու բոլոր մարգարէներէն ալ աւելի : Եր ժողովուրդին մէջէն ընտրուեցաւ՝ անոնց տնտեսութենէն դուրս առնուեցաւ, ու յատուկ որպիսութիւն մը և վիճակ մը տրուեցաւ անոր, որով յատկապէս կոչուեցաւ «Մարգարէ Բարձրելոյն», անմիջապէս Տէրօջը երեսին առջեւէն գացող անոր ճամբաները պատրաստելու : Ղ . 1 . Թ . 76 : Ինքը իր աղբին ժողովրդոցը աչքին նոր լոյս բերաւ : Վնացած էին, ու նոր ճշմարտութիւններու ձայնով արթնացուց զանոնք : Հոգևոր վարդապետութիւն մը կը քարոզէր անոնց՝ որոնք ընդհանրապէս ուրիշ բան չէին գիտեր բայց մեռած ձէսեր : Եւ աշխարութեան կը կոչէր զանոնք . սրտով ու մտքով կատարելու դործի մը, և ոչ թէ լոկ արտաքին արարողութեան մը : Երենց ազգային գոռոզութիւնը՝ ու Երբահամի վրայով սնտի

պարծանքը գետինը կրկործանէր, ու կրցուցընէր զՆստուած իբրև մի միայն աղբիւր մարդկային յուսոյ: Արձանուցանէր Մեսիային մօտենալը՝ որ սուրբ ժողովուրդ մը իրեն պիտի ընտրէ, ու մնացածը իր բոցարորբոց բարկութեամբը պիտի մաշեցունէ: Աւերաբողէր թէ ինքը միայն անարժան ծառայ մըն է իր Տէրօջը առջևէն խրկուած, իր մկրտութիւնը միայն ջրով է՝ ու նշանակ ապաշխարութեան, բայց Մեսիային կրմնայ շնորհել իր ընտրածներուն շատ տարբեր ու բարձրագոյն մկրտութիւն մը, այսինքն՝ Հոգւով Արբով ու կրակով մկրտութիւն մը:

Նստեղս պարտիմք յատկապէս միտք դնել խիստ հարկաւոր զանազանութեան մը: Երբոր Հոյճաննէս ըսաւ թէ «Մնիկայ ձեզ պիտի մկրտէ Հոգւով Արբով ու կրակով», չէր խօսէր ան մկրտութեանը վրայ որ ետքը Վրիստոսի աշակերտները պիտի ընէին՝ ու որ մենք հիմայ Վրիստոնէական Մկրտութիւն կրկօշմք: Հոյճաննէս աս խօսքը խօսելուն՝ իր միտքը ղինքը խոնարհեցունել ու իր Տէրը բարձրացուցանել էր՝ ան նոյն կերպովը ինտոր որ վայելչապէս զրուցեց, թէ՛ «Ամա պարտէ աճիլ և ինձ մեղմանալ»: Հօգ. ք. 30: Եւսպէս ինքը կրքարողէր և կրտէր, «Նստեղս ջրով կրմկրտեմ ապաշխարութեան համար, բայց ան զօրաւորը որ իմ ետեւէս կուգայ, և ինքը ինձմէ առաջ էր, անիկայ իր Սուրբ Հոգին հանդերձ կրտկով իր աշակերտներուն վրայ պիտի խրկէ»: Ուստի Արդին Մատուծոյ աս նոյն բանը ըրաւ՝ երբոր Պենակեոստէին օրը Սուրբ Հոգին առաքելոց վրայ իջաւ, ու հրեղէն լեզուներ անոնց վրայ հանգչեցան: Հոյճաննէս աս սքանչելահրաշ դիպուածը մարգարէական ոգւով առաջուց տեսնալով՝ այլաբանօրէն Մկրտութիւն կոչեց: Բայց երբոր մենք Վրիստոնէական Մկրտութեան վրայ կրխօսիմք՝ նկարագրաբար կրխօսիմք ջրով մկրտելու վրայ, յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արբոյ: Մն մկրտութեանը վրայ՝ որ իրաւ Վրիստոս հաստատեց ու պատուիրեց, բայց Վրիստոս ինքը չգործածեց.

քանզի կրկարդամք թէ «Ճէ թէ Հիսուս ինքը կրկարտէր, հապա իր աշակերանները» : Հով. 7 . 2 : Արովհետեւ Սեւիային պաշտօնը ոչ ջրով մկրտակ էր, այլ Հոգւով Արբով ու կրակով :

Հիմայ յառաջանամք քննել երկրորդը, այսինքն՝ Վրբիստոնեական Մկրտութեան բնութիւնը ու նպատակը :

Վարքէն տեսնք թէ Վսկիրներուն և փարիսեցիներուն վարդապետութեանը հետ բաղդատելով, Հովհաննէս անանկ ճշմարտութիւններ քարոզեց որ գերազանցաբար հոգևոր էին. բայց և այնպէս ինքը միայն Տէրօջը ճամբան պատրաստելու յառաջնութաց մըն էր : Վսկից բնականաբար կրկարծուի թէ Վրբիստոսի քարոզութիւնը՝ ու ետքը իր աշակերաններունը Հովհաննէսին քարոզութեանն առաւել ևս հոգևոր պիտի ըլլային. և թէ՛ անոնք ուրիշ և զարմանալի ճշմարտութիւններ պիտի յայտնէին, որոնց վրայ գուցէ ինքը Հովհաննէս ալ տեղեկութիւն չունէր, և ահա սա կերպովս Հովհաննէս բոլոր մարգարէներուն մեծը՝ Վորհնեսութեան մէջն պիտո փոքրիկէն ալ փոքրագոյն պիտի ըլլար :

Առաի երբոր Հիսուս լեռանը վրայ զարմնալի գեղեցկութեամբ լցուած իր քարոզը կրքարողէր, կը լսեմք որ բոլորովին հոգևոր կերպով կը մեկնէր ան օրէնքը՝ որն որ Հրեայք միայն նկարագրաբար կը մեկնէին : Իր քարոզութեանը սկզբնաւորութեանն մինչև անոր վերջը՝ իր վարժութիւններուն բոլորը սա կերպովս էին, և սակայն անոնց բոլորը իր աշակերաններուն վիճակին ու ընդունակութեանը յարմարուած են : Սոքորաբար առականութիւն կը խօսէր, ու հազիւ երբէք կը գտնեմք ան բացայայտ եղանակը գործածած՝ որով կը սորվեցունէր Հրեից Խշխանը, որ զիշերանց եկաւ իր առանձին վարժութիւնը ընդունելու : Արուն կըսէր, «Ղճմարիտ ճշմարիտ կըսեմ՝ քեզի, թէ որ մէկ մարդ մը նորէն չծնի՝ չկրնար Վստուծոյ թագաւորութիւնը տեսնալ» : Հով. 7 . 3 :

Իսկոյն նկատե թէ Մատուածային Հոգւով ներշնչեալ առաքեալը ինչպէս պայծառ կրօնացատրէ իր Տէրոջը սքանչելի խօսքը որ ըսաւ Նիկիոյ խմբին : «Թէ որ մէկը Վրիստոսի մէջ է (կրսէ), անիկայ նոր ստեղծուած մըն է . ինչու որ Հինը անցաւ , ու Հիմայ ամէն բան նոր եղաւ » : Իւրեմլ . Լ . 17 : «Վրաներնուդ մէկ դի Հանեցէք ան առջի ձեր վարմունքին պէս եղած Հին մարդը խաբերայ ցանկութիւնով ապականուածը . և ձեր մտքին Հոգիովը նոր ըլլաք , և նոր մարդը վրանիդ հագնիք , ան որ Մատուծոյ պատկերին պէս ստեղծուած է , արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով » : Իւրեմլ . Գ . 22 , 23 , 24 :

Եւսեցէք ևս թէ ինչպէս կրօնացատրէ Վրիստոսի Տեսան մերոյ ու իր ժողովրդոցը մէջը եղած ան սերտ միաւորութիւնը : «Վրիստոս եկեղեցիին գլուխն է (կրսէ) . մենք անոր մարմինն անդամներն ենք , անոր մարմինէն ու անոր ոսկորներէն » : Իւրեմլ . Լ . 23 , 30 : «Գուք լուսցուեցաք՝ սրբուեցաք՝ արգարացաք մեր Տէր Հիսուս Վրիստոսի անունովը , ու մեր Մատուծոյ Հոգւովը : Եւ Մատուած որ Տէրը յարուց՝ ձեզ ալ պիտի յարուցանէ իր կարողութիւնովը : Զէք դիտեր որ ձեր մարմինները Վրիստոսի անդամներն են : Ու ան որ Տէրոջը կրմօտիկնայ , անոր հետ մէկ Հոգի կը լլայ » . պոսինքն Հոգիով Տէրոջը հետ մէկ կը լլայ : Իւրեմլ . Գ . 11 , 14 , 15 , 17 :

Նկատե ևս թէ իբրև Վրիստոսի ժողովուրդ Մատուծոյ հետ մեր ունեցած առնչութեանը վրայ ինչպէս կրիսոսի : «Ինչու որ (կրսէ) ամէնքնիդ ալ Մատուծոյ որդիք՝ էք՝ Հիսուս Վրիստոսի հաւատքովը » : Գաղ . Գ . 26 : «Եւ թէ որ որդիք , ուրեմն ժառանգներ . Մատուծոյ ժառանգներ ու Վրիստոսի ժառանգակիցներ . թէ որ իր շարչարանացը կցորդ ըլլամք՝ անոր փառացն ալ հաղորդ պիտի ըլլամք » : Գաղ . Գ . 17 :

Ուստի Վրիստոսի ու իր աշակերտներուն գլխաւոր վարդապետութիւնները էին՝ թէ մեր բնութիւնը ապականեալ

է, միայն հաւատքով կարգարանամք, Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը կրկարօտիմք մտքով նորոգուիլ, ասանկ նորոգուելով կամ վերստին ծնանելով Վրիստոսի հետ կը միաւորինք ու Մատուծոյ որդիք կը լլամք, ու իբրև Մատուծոյ զաւկըները երկնից թագաւորութիւնը կը ժառանդենք: Հօլհաննէս ապաշխարութիւն քարոզեց. և ասիկայ խիստ մեծ հոգևոր վարդապետութիւն մըն էր կեղծաւոր ու ինքզինքնին արգարացունող Հրէաներուն: Բայց Վրիստոս ու իր աշակերտները ոչ միայն ապաշխարութիւն քարոզեցին, սլլ առաւել ևս հոգևոր վարդապետութիւններ՝ հաւատքով արգարանալու, Հոգւով նորոգուելու, Վրիստոսի հետ միաւորելու, Մատուծոյ սուրբ գերդաստանին մէջ որդեգրութեան մանալու, ու յաւիտենական փրկութիւն և Վերկէին հետը մշանջնաւոր փառաւորութիւն վայելելու: Եւ ինչպէս որ Հօլհաննէսին մկրտութիւնը կը կոչուէր Մապաշխարութեան Սկրտութիւն, այսպէս Վրիստոսնից Սկրտութիւնն ալ կրնայ կոչուիլ Սկրտութիւն ծննդեան Սկրտութիւն:

Բայց մտք առ աս տեղս՝ որ ինչպէս ամենեւին ասոյդ չէր թէ Հօլհաննէսին մկրտութիւնը ընդունողներուն բոլորն ալ ճշմարտապէս զղջացող էին, նմանապէս ամենեւին ասոյդ չէ թէ Վրիստոսնէական մկրտութիւնը ընդունողներուն բոլորն ալ Հոգւով Սրբով ճշմարտապէս նորոգուած են, կամ Վրիստոսի հետ միաւորուած են, կամ Մատուծոյ սուրբ գերդաստանին մէջ որդեգրութեան մտած են: Հօլհաննէսին մկրտութիւնը ըստ ինքեան ապաշխարութիւն չէր, ու Վրիստոսնէական մկրտութիւնը ըստ ինքեան նորոգութիւն կամ վերստին ծնանիլ չէ: Սկրտութիւնը կնիք մըն է դասնութեան, ու թէ որ հաւատքով եղած է ան դասնութիւնը՝ պատուական է մկրտութիւնը. իսկ եթէ առանց հաւատքի՝ անարդ և անպիտան: Սկրտութիւնը արտօքին նշան է, իսկ հաւատքը Մատուծմէ արուած ներքին շնորհք մըն է՝ որ միայն անխկայ կը զօրէ սիրտը մաքրելու ու աշխար-

Հի յաղթելու : Մկրտութիւնը դուռ մըն է՝ ասկից կրնա-  
նամք Վրիստոսի եկեղեցին երկրիս վրայ, ու թրփատու-  
թեան տեղը տրուած է մեզի, որ էր շրէից եկեղեցին մշա-  
նալու դուռը : Բայց հաղարատը անձինք մտան շրէից ե-  
կեղեցին թրփատութեան դռնէն, որոնք ճշմարիտ Խորայե-  
լացի չէին . ու հաղարտները կրմտնան Վրիստոսի եկեղեցին  
մկրտութեան դռնէն, որոնք Վրիստոսինը չեն՝ ու բնաւ  
սրտանց չեն հաւատար իրեն, բնաւ չեն զղջար մեղքերնուն,  
բնաւ արգարացած՝ նորոգուած՝ որդեգրութեան ընդուն-  
ուած ու սրբացած և փրկուած չեն : «Վրիստոս Հիսուսով  
ոչ թրփատութիւնը բան մըն է՝ (կրտե առաքեալը,) ոչ ալ  
անթրփատութիւնը . հապա նոր ստեղծուած ըլլալն է բա-  
նը» : Գառլ . Է . 15 : «Վմանապէս ոչ մկրտութիւնն է բանը՝  
որ թրփատութեան տեղը ընդունեցինք, այլ նոր ստեղծ-  
ուած ըլլալը՝ շողով Սրբով վերստին ծնանիլը :

Ուրեմն Վրիստոնէական Մկրտութիւնը շողով Սրբ-  
ով վերստին ծնանելու՝ ու փրկին հետը միաւորուելու  
դաւանելուս նշանը ու կնիքն է : Այրբոր շեթանսութեան  
կամ շրէութեան մէջ ծնած ու մեծցած չափահաս անձ մը  
Մատուծոյ շնորհքովը Վրիստոսի հաւատայ, աս խորհուր-  
դովս պարտի Վրիստոսի եկեղեցին մանալ : Մտիկայ է ան  
սահմանուած միջոցը՝ որով ան անձը հրապարակաւ պարտի  
դաւանիլ Հիսուսի վրայ իր սէրը, ու անոր հետ միաւորելու  
յոյսը և փափաքը : Վմանապէս երբոր Տէրը զաւակ մը կը  
շնորհէ Վրիստոնէի մը՝ պարտի հրապարակաւ Մատուծոյ  
ուխտել ան զաւակը մկրտութիւնով, ինտոր որ շրէայք ի-  
րենց զաւկրները Մատուծոյ կուխտէին թրփատութիւնով .  
Ինչու որ խոստմունքը մեղի է ու մեր զաւկրներուն : Գառլ .  
Է . 39 : Շաւտացելոց զաւկրները Մատուծոյ են, ճիշտ  
ինտոր որ իրենք են . ու Մատուած կրկամի որ ան զաւկրները  
աս խորհուրդիս մատակարարութիւնովը հրապարակաւ միա-  
ւորին իր երկրիս վրայի եկեղեցիին հետ :

Սիրելի անկնդիրք՝ որչափ շահաւոր և ցանկալի է աս



մկրտութեան խորհուրդը՝ երբոր ասանկ գաղափարներ ունենամք անոր վրայ : Ենով կըզաւանիմք Եստուծոյ և մարդոց առջևը՝ թէ կըհաւատամք որ Հոգւով Սրբով վերստին ծնած եմք : Ենով կըյայտենեմք մեր ապաւինութիւնը թէ Եստուծոյ որդիք եմք՝ ու Յիսուսի աշակերտները : Ենով կըցուցընեմք մեր յոյսը թէ իր հետը երկնից թագաւորութեան մէջը մշտնջենաւորապէս պիտի փառաւորիմք : Ենով նաև մեր զակրները Եստուծոյ կընուիրեմք՝ անոնց տեղը խոստանալով՝ թէ Եստուծոյ պիտի ծառայեն, ու մեր անձին երաշխաւոր ըլլալով՝ թէ Եստուծոյ ծառայելու կերպը անոնցպիտի սորվեցունեմք, ու պիտի խրատեմք և յորդորեմք զանոնք անոր կամքը ընելու : Եւ վերջապէս անով կընդունիմք Եստուծմէ խոստմունք մը առհաւատչեայ մը մեզի և մեր զակրներուն, թէ ինքը պիտի ըլլայ մեր Եստուածը՝ մեր Հայրը ու մեր Վրկիչը՝ յաւիտեանս յաւիտենից :

Եոլոր աս ըսուածներէն կարելի է մակարերել .

Մաս՝ թէ Վրիստոնէից մկրտութիւնը անանկ կերպով մը պարտի կատարուիլ որ խորհուրդին վսեմութեանը պատշաճաւոր ըլլայ : Մէկ աննշան արարողութիւն մը չէ աս խորհուրդը : Մկրտուելու մանուկին լոկ անուն ալ մը չէ : Լոկ եկեղեցական ուրախութեան տօն մը չէ ուտելու և խմելու, մէկզմէկ շնորհաւորելու, ու կերուխումի ամէն տեսակ ունայնութիւնները՝ ի գործ դնելու : Ե՛լ ընդ հակառակը՝ Վրիստոնէական սուրբ կրօնքին մէկ խիստ վսեմ արարողութիւնն է : Մարդկային էակ մը՝ որ իր աշքերը նոր բացեր է աշխարհիս վրայ, կըներկայանայ ան Եստուծոյն՝ որ զինքը ստեղծեց, կըմատուցուի ան Վրկիչին՝ որ առանց անոր քաւչական արիւնին մերձեցուցմանը լաւագոյն պիտի ըլլար իրեն բնաւ չճանիլը, ու կընուիրուի ան Սուրբ Հոգիին՝ որն որ միայն կընայ սրբացունել անիկայ ու պատրաստել երկինքը մտնալու : Եսիկայ արգարև տեսարան մըն է՝ որ բոլոր բարեսլաշտ սրտերը շարժելու շատ աղէկ կըծառայէ :

Ուրեմն դուք որ ձեր զաւկրները աւաղանին մկրտութեանը կրքերէք կամ կրխրկէք, աղէկ մտածեցէք թէ ինչ կը նշանակէ աս խորհուրդը, ու ինչ պարտաւորութիւններ կը պահանջէ ձեզմէ ու ձեր զաւկրներէն: Միտքերնիդ առէք թէ աս գործը ընելովնիդ կրխոստովանիք հաւատալ թէ ձեր զաւկրները ձեզի նման մեզաց մէջ ծնած են, ու կրկարօտին Մատուծոյ քաւչական ողորմութեանը ու սրբացուցիչ շնորհացը: Աւ Մատուծոյ առջեր կրխոստանաք Տէրօջը խրատովը ու վարժութիւնովը մեծցունել զանոնք, բանականութեան լոյսը անոնց մաքիրուն ծագելուն պէս մեր Մետաբանական սուրբ կրօնքին սկզբունքներովը վարժել զանոնք, ու ձեր կարողութեանը հասածին բոլորը ընել խրատով և օրինակով իշխանութիւնով ու ազօթքով, ճշմարտութեան սրբութեան ու փրկութեան ճամբուն մէջէն առաջնորդելու անոնց:

Այրկրորդ՝ Պատանիները որ իրենց մանկութեանը մկրտութիւնով Մատուծոյ նուիրուեցան, խիստ երեւելի վիճակի մը մէջ մտան, ու ան վիճակին համար Մատուծոյ պատասխան պիտի տան: Աորահաս պատանիները հաղիւ երբէք պէտք եղածին պէս իրենց սրտերուն մէջը կրդնեն աս անհակառակելի ճշմարտութիւնը: Վի մկրտեալ տղաք ու պատանիներ՝ ձեզի կրտեմ, միտքերնիդ առէք որ Մատուծոյ-ուխօին կնիքը ձեր վրայ գրուեցաւ: Թէ որ ուղէք ալ նէ չէք կրնար դուք զձեզ հրաժարեցունել Մատուծոյ պատասխան տալու ձեր պարտաւորութենէն: Արնաք մտնալ անիկայ, կրնաք մէկ դի ձգել անոր վրայ մտածելը, կրնաք բանի տեղ չդնել անիկայ, բայց տակաւին պարտաւորութիւնը վրանիդ կրմնայ: Ուրեմն ամեն մէկերնիդ պարտի ինքզինքնին աս հարկաւոր հարցումը ընել, թէ՛ Մրդեօք շնորհակալ եմ ես Մատուծոյ՝ Վրխատունէի զաւակ ծնանելուս համար, ու երախտադիտութեամբ կրճանչնամ ու կրհաստատեմ իմ գործովս իմ ծնողացս ինձի համար բրած խոստմունքը, և թէ կանարգեմ իմ մկրտութիւնս, ուր անամ իմ Վրկիչս, ու դուրս կիյնամ իր եկեղեցիէն:

Արրորդ՝ Ալ վերջապէս Արկեղեցիին շատ պարտաւորութիւններ ունի իր մկրտեալ զաւկըներուն վրայ, ու առանց զանգաղելու ամենայն հաւատարմութեամբ պարտի կատարել անիկայ:

Ամենքս ալ գիտեմք թէ Աստուծոյ Արկեղեցիին հաստատուելուն մէկ մեծ նպատակը ան էր որ դարէ 'ի դար ժողովորդ մը պահուի Աստուծոյ ծառայելու, ու իրեն համար անհաւատ աշխարհին մէջը հաւատարիմ վիպ ըլլալու: Թէ որ ասիկայ ասանկ է՝ ուրեմն եկեղեցիին անշուշտ կապուած է զգուշութեամբ հակել իր նորահաս անդամներուն վարժութեանը վրայ: Ալ պէտք է յիշել՝ թէ որչափ որ ինքը հաւատարիմ կրմնայ իրեն յանձնուած աս աւանդին, այնչափ կրճաղկի ուղղափառութեամբ ու բարեպաշտութեամբ, և ասոր հակառակ որչափ որ բարձի թողի կրնէ իր զաւկըները, այնչափ կաճի տգիտութեամբ ու մոլորութեամբ:

Ի՞նչ է պատճառը որ այսչափ մկրտեալ տղայք տգիտութեան մէջ կը մեծնան. ինչո՞ւ համար անոնցմէ այսչափ շատերը իրենց բանականութիւնը ստացածնուն պէս՝ ամօթալից անառակութեան ճամբաներու կը հետեւին: Բաւական չէ պատասխան տալը թէ մեր զաւկըները բնութեամբ ապականեալ են, ու մեղաց և անառակութեան հակամիտեալ: Ասիկայ անտարակոյս ճշմարիտ է, բայց բոլոր ճշմարտութիւնը աս չէ: Յանցանքին շատը եկեղեցիին դուռը կիյնայ, ինտոր նաև ասանկ պատանիներուն ծնողացը վրայ: Արկեղեցիին շատ անգամ կրմոնայ թէ Վկրտութիւնը ճշմարտապէս իր զաւանութեանն ալ կնիքն է, ինտոր որ ծնողքներուն ու մկրտութիւնը ընդունող տղոցն ալ: Ալ աս պատճառովս երբոր մկրտութեան արարողութեանը շատ բարձր համարում մը կրնձայուի, անկից ծագած պարտաւորութիւնները խիստ ակոստայի զանցառութեան մէջ կը ձգուին:

Արխոստովանիմք որ Վրիստոնէական վարժութեան ա-

առջին գործադրութիւնները ծնողքներուն կիշնան, ու ար-  
 դարե մայրական գրկէն պարտին սկսուիլ . և սակայն եկե-  
 ղեցին ալ աս մասին պարտաւորութիւն մը ունի կատարելու,  
 որն որ հազիւ կը ըլլայ որ իմանայ: Իրեն կիշնայ ծնողքները  
 քաջալերելը՝ ու աս մեծ և հարկաւոր աշխատութեանս ձեռ-  
 նամուխ ըլլալու անոնց առաջնորդելը: Իրեն կիշնայ նայիլ՝  
 որ իր մկրտեալ զաւակներուն համար պատշաճաւոր դպրոցներ  
 շինուին ու հաստատուին, Ըստուծոյ Տանը՝ ու Վրիստո-  
 նէական վարդապետութեան և ուրիշ հոգևոր գրքեր անոնց  
 ձեռքը արուին: Իրեն կիշնայ սահմանուած ժամանակներու  
 մէկ տեղ հաւաքել զանոնք՝ վարժել ու խրատել զանոնք և  
 ազօթք ընել անոնց համար, և ատեն ատեն անոնց միտքը  
 ձգել իրենց պարտաւորութիւնը՝ որ յատուկ իրենց գործ-  
 քերովը զՎրիստոս դաւանին, ու անոր եկեղեցիին հետ  
 իրենց ունեցած անչուութիւնը ճանչնան: Այս երբոր անոնք  
 մեծամեծ սեղքերու ու յայտնի անառակութեան մէջ իշնան,  
 կամ թէ որ իրենց կրօնքին պարտաւորութիւնները զանց  
 ընելու յարատեւն, իրեն կիշնայ ծնողական սիրով և սա-  
 կայն հաստատութեամբ՝ ի գործ դնել ան հոգևոր իշխանու-  
 թիւնը՝ (որն որ Վրիստոս յայտնապէս շնորհեց անոր՝ իր  
 եկեղեցիին անդամներուն օգտին համար,) իր հաղորդու-  
 թիւնը անոնցմէ կտրելով: Իսկ որ աս ճամբան հաւատար-  
 մութեամբ ըննուէր, մեր զաւկրները՝ որոնք իրենց ման-  
 կութեանը Ըստուծոյ նուիրուեցան, ըստ մեծի մասին երախ-  
 տապարտ՝ բարեկարգ և բարեբարոյ պիտի մեծնային, ու ի-  
 րենց բարի գործքերովը իրենց ծնողացը ուխտը պիտի հաս-  
 տատէին եկեղեցիին շինութեանը համար: Ահ, և շրջ պիտի  
 դայ ան երջանիկ ժամանակը, որ ատեն Ըստուծոյ Ազեղեցին  
 սասանկ հաւատարմութեամբ պիտի վարուի՝ ու սասանկ վախ-  
 ճանով պիտի պսակուի, ՚ի փոստ Վրիստոսի Տեառն մե-  
 զոյ: Արու՛մ ընդ Հօր և ընդ Հոգւոյն Արբոյ փառք պատիւ  
 և իշխանութիւն յաւիտեանս . Ըմն:

ՎՐԻՍՏՈՆԵՆԵՆՆԵՐ ԷՒՐ

Վարձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին մեջն էք . քննեցէք անձերնից .  
 չէք գիտեր ինքզինքնիդ , որ Վրիստոս Հիսուս ձեր մեջն է . միայն թէ ան-  
 պիտան որ շքուայ : Ի Սորնի՞թ . ժգ . 5 :

Աս խօսքերով Առաքեալը կը յորդորէ մեզ որ փոյթ ունե-  
 նամք քննել թէ արդեօք հաւատքի մէջ եմք : Աւտի մեզի  
 օգտակար հարցմունքներուն մէջ ամենէն մեծ և խիստ կա-  
 րևորը ասիկայ է : Ապաքէն ի՞նչ օգուտ է մեզի գիտնալը  
 թէ միայն մէկ Մտուած մը կայ և անոր ստորոգելիքները  
 ճանչնալ , կամ ճիշդ գաղափար ունենալ Հիսուս Վրիս-  
 տոսի վրայով և այլն , թէ որ աս յայտնուած վարդապե-  
 տու թիւնները ամենևին ազդեցութիւն մը չընեն մեզի : Ի՞նչ  
 օգուտ կը լլայ մեզի մեր պարտաւորութիւնները գիտնալէն ,  
 թէ որ զանոնք կատարելու փոյթ չունիմք : Վրիստոնէա-  
 կան հաւատոյ խոստմունքները ևս որ այնքան շքեղ և ե-  
 րևելի են , ի՞նչ արժէք կ'ունենան մեզի համար թէ որ չկա-  
 տարօին մեր մէջը : Արեմն խիստ հարկաւոր և ամենէն ա-  
 լելի օգտակար է մեզի գիտնալու , թէ քրիստոնեանց եմք  
 ճշմարտապէս . երջանիկ պիտի ըլլամք , յաւիտենական

կեանքը պիտի ժառանգեմք, մէկ խօսքով՝ արդեօք Վրիստոսի՞նն եմք: Ը՛հաստիկ ան հարկաւոր հարցումը՝ որ մեր խղճմտանացը առջին կրտսննեմք, և որ հաստատ պատասխան մը կրպահանջէ մեզմէ: Ը՛րդ՝ երկու բան կարևոր է մեզի որ ստոյգ գիտնամք թէ «քրիստոնեայ եմք»: Ը՛ռաջին՝ գիտնալ թէ ի՞նչ է քրիստոնեայն: Երկրորդ՝ զգուշութեամբ փնտրուել թէ ան նշանները որով քրիստոնեայն կը որոշուի, կը գտնուի՞ն արդեօք մեր վրայ: Հաւիտենական Ը՛ստուած, բու լուսաւորութեանդ կարօտ եմք, փարատէ մեր պատրանաց մութը, բնաջինջ ըրէ մեր կանխակալ կարծիքները, օգնէ մեզի որ այժմ խոնարհութեամբ ընդունիմք բու Ը՛ստուածային Լանիդ վարդապետութիւնը, Հիսուս Վրիստոսի անունովը . Ը՛մէն:

## Ա. ԻՆՉ Ե ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆ:

Ա. Վրիստոնեայ չըսուիր ան՝ մարդը՝ որ միայն քրիստոնեայ ծնողաց որդի է: «Մասն զի չէ թէ ամէն Խարայելէն եղողները Խարայելացի են. և չէ թէ Ըրբահամին ցեղը եղողները՝ ամէնքը որդիք են. այլ Խահահակով քեզի ցեղ պիտի ըսուի: Ը՛յսինքն չէ թէ անոնք որ մարմնոյ որդիք են՝ Ը՛ստուծոյ որդիք ալ են. այլ խոստամունքի որդիքը ցեղ կը համարուին»: Լուկ. 7, 8:

Բ. Վրիստոնեայ չէ ան՝ որ միայն զինքը այնպէս կը կարծէ, կամ սա պատուական անունը կը կրէ: Վանգի կան մարդիկ որ հարուստ կանուանեն զիրենք՝ երբ որ ազքատութեան մէջ են. ոմանք առողջ կը համարին իրենց անձը՝ որ հիւանդ է. ուրիշները կը կարծեն թէ իրենց նմանիներէն պատիւ կընդունին, բայց ամենեկին յարգ չունին անոնց քովը:

Գ. Վրիստոնեայ չէ ան՝ որ միայն աւետարանի խորհուրդներուն մասնակից կը լսայ: Ըրդարև «ձեզ ալ . . . մկրտութիւնը պիտի ապրեցունէ, բայց չէ թէ մարմինին

աղաք մէկ դի ընելով, հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ Մատուած՝ Յիսուս Վրիստոսի յարութիւնովը՝  
 Կորնթացւոց մէջ այնպիսի մարդիկներ կային որ թէպէտ  
 եկեղեցին կը հաւարուէին հաղորդութեան մասնակցից ը-  
 լալու, բայց քրիստոնէական հաւատքէն ղուրկ էին: Կորնթ. Ժ. 21: 1-4: Պօղոս առաքեալ կիմացունէ մեզի որ  
 Կորնթացւոց մէջ այնպիսի մարդիկներ կային որ թէպէտ  
 եկեղեցին կը հաւարուէին հաղորդութեան մասնակցից ը-  
 լալու, բայց քրիստոնէական հաւատքէն ղուրկ էին: Կորնթ. Ժ. 20—34:

Գ. Վրիստոնեայ չէ ան՝ որ աւետարանական ճշմարտութիւնները միայն արտաբուստ կը դաւանի: «Ս ասն զի չէ  
 թէ օրէնքը լսողները Մատուածոյ առջևը արդար են, այլ  
 օրէնքը կատարողները պիտի արդարանան»: Կորնթ. Ժ. 13:

Ե. Վրիստոնեայ չէ ան՝ որ քիչ մը յիշողութիւն ունե-  
 նալով քանի մը աղօթք բերնուց կըսէ, կամ հոգեշահ  
 գրքեր կը կարդայ: Ս ասն զի այսպէս կըսէ Փրկիչը. «Ոչ  
 թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէր Տէր կըսէ, պիտի մտնայ եր-  
 կինքի թագաւորութիւնը. հապա ան՝ որ իմ երկնաւոր  
 շօրս կամքը կը կատարէ»: Սաղմ. Է. 21:

Զ. Վրիստոնէական դաստիարակութիւնը և կրօնքի վե-  
 րաբերեալ բաներուն հմտութիւնը անգամ չեն կրնար մեզ  
 քրիստոնեայ ընելու. քանզի կարելի է որ քաջահմուտ ըլ-  
 լայ մէկը սուրբ Վրքին, և սակայն աւետարանէն շատ հե-  
 ոռու մնացած: Վրիստոնէական հաւատքը գլխովին օրիշ  
 բան մըն է. ուսման ընթացքի կամ աստուածաբանական  
 արհեստի ջնմանիր:

Է. Վրիստոնեայ չըսուիր ան մարդը, թէ որ իր միտքը  
 և իր վարմունքը՝ լոկ մարդկային օրէնքներու կամ առաքի-  
 նութեան կանոններու կը յարմարցընէ: Վրիստոնեայն  
 բարեմիտ է միշտ. բայց կրնայ մէկը սահմանաւոր չափով  
 մը ընկերական օրէնքները պահել առանց քրիստոնեայ ը-  
 լալու:

Ը. Վրիստոնեայ չէ ան՝ որ միայն աւետարանին առաջին  
 գաղափարները կընդունի, քիչ Մատուածոյ զոյութիւնը, մար-  
 մնոյ և հոգւոյ զանազանութիւնները, և դատաստանին

ստոյգ ըլլալը : Արդարև ասոնք հաւատոյ առաջին գիտելիքներն են, բայց աւետարանին սեպհական նշանները չեն :

Ի վերջոյ , չկրնար մէկը աս պատուական անունը ունենալ թէ որ բաւական կրտսեպէ իրեն , բուն աւետարանական ճշմարտութիւնները ցրտութեամբ ընդունելու , և ասանկով իբրև գիտութիւն մը համարի զանոնք , և չէ թէ գործադրութեան հետ միացուցած զգացում մը :

Աս զանազան գաղափարները և ուրիշ աս տեսակ շատերն ալ Աւետարանը չեն : Վրիստոնէական հաւասարը գլխովին տարբեր է . աւելի ներքին և աւելի խորին բնութիւն մը ունի ան : Ասոնց ամէնը թէպէտ աւետարանական ճշմարտութեանը կրվերաբերին , բայց ինչպէս որ՝ օրինակի աղագաւ , զգեստը՝ հագնողին կրվերաբերի , կամ կեղևը՝ իր մէջը պարունակած պտուղին : Իրաւ որ չկրնար ըսուիլ թէ աս գաղափարները քրիստոսական կրօնին չեն վերաբերիր . քանի աւետարանը անոր մասն են , իրենց տեղը և իրենց օգտակարութիւնը ունին , բայց նոյն կրօնը հաստատողները չեն : Թէ որ գտնուին ձեր մէջը անանկ մարդիկ , որոնք միայն աս գաղափարները կրնդունին , պէտք է յայտնապէս ըսել անոնց որ ճշմարտութեան մէջը չեն , և Հիսուս Վրիստոսէ իրենց հեռացած ըլլալնին , և լուազոյն սկզբանց դիմելու հարկաւորութիւն ունենալնին ուրիշ ապացոյցի կարօտ չէ :

Ի՞նչ է ուրեմն աւետարանը . ի՞նչ է քրիստոնէայ ըլլալը : Պէտք է որ համառօտ պատասխան մը տամ աս հարցմունքին : Այսպիսի կարևոր խնդիր մը բացատրելու և ամէն մէկուն փափաքը լցունելու համար , հարկաւոր է մեզի անանկ ճամբայ մը բռնել որ դիւրին ըլլայ և ամէն մարդ հասկընայ : Արդ՝ լուազոյն միջոցը աս է որ աչքի առջև դնեմք ան երկու առակները՝ քի Վնառակ որդիին և Մոքսաւորին վրայով , որոնց մէջ խիստ ճշգուրտութեամբ կըտեսնուի աս նիւթը : Այսին որոյ թէպէտև ամէնուն ծանօթ են աս առակները , այսու ամենայնիւ արժան կըհամարիմ



դնել աս տեղա, որպէս զի գիւրին ըլլայ անոց մէկնու-  
թիւնն ալ հետեցընել :

“Սկի մարդ մը երկու որդի ունէր . Կնոնցմէ փոքրը հօրը ըսաւ . Հայր՝  
քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը տուր ինծի . և անիկայ բաժնեց  
անոնց իր սպանքը : Աւ քիչ օրերէն ետքը փոքր տղան բոլոր բաները  
ժողուեց , հետու երկիր մը գնաց , և հոն իր ունեցածը փճացուց . ինչու որ՝  
անուսակութեամբ կեանք կրճարէր : Եւ երբ որ ամէնը հասցուց , ան եր-  
կիրը սաստիկ սով մը եղաւ , ու ինքը սկսեց շքատր ըլլալ : Եւ գնաց ան  
երկրին քաղաքացիներուն մէկուն քովը մտաւ . ան ալ զինքը իր արտը  
խրկեց խոզերը արծելու : Եւ կրփափաքէր խոզերուն կերած եղջիւրէն իր  
փոքր լեցունել , ու մէկը չէր տար անոր : Եւ խելջը վրան գալով ըսաւ .  
Քանի՞ բանտրներ կան իմ հօրս տունը հացով լեցուած , ու ես հոս սովէն  
մեռած կրկորսուիմ : Ելլեմ երթամ իմ հօրս , և բսեմ անոր . Հայր՝ մե-  
ղայ յերկինս և առաջի քո , ու ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու . զիս  
քու բանտրներուդ մէկուն պէս ըրէ : Եւ ելաւ իր հօրը եկաւ . և զեռ որ  
ինքը շատ հետու էր՝ հայրը տեսաւ անիկայ ու խեղճը եկաւ , ելաւ և առջևը  
վառեց . փաթտուեցաւ անոր վիզը ու համբուրեց զանիկայ : Արդին ալ ա-  
նոր ըսաւ . Հայր՝ մեղայ յերկինս և առաջի քո , ու ալ արժանի չեմ քու  
որդիդ ըսուելու : Հայրը ըսաւ իր ծառաներուն : Ելաւ մը հանեցէք ե-  
րևելի հազուստը՝ ու հազուցեր անոր , և մասնի դրէր իր մատը , ու կո-  
շիկներ իր ոտքը . և պարարտ եղբ բերէք մորթեցէք , ուտե՛ք և ուրախ ըլ-  
լանք , ինչու որ աս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ . կորսուած էր ու  
գտնուեցաւ , և սկսան ուրախ ըլլալ” :

“Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու . մէկը Փարիսեցի , և մե-  
կայը Սարսաւոր : Փարիսեցին զատ կայներ էր ու առանձին աս աղօթքը  
կընէր , Բ՛ստուած իմ շնորհակալ եմ՝ քեզմէ , որ ուրիշ մարդոց պէս չեմ  
ես՝ յափշտակող , անիրաւ , շնացող , կամ թէ աս մարտաւորին պէս : Հա-  
պա շարաթը երկու հեղ ծով կըզակեմ , և բոլոր պարանքներուս տասա-  
նորդը կուտամ : Աւ մարտաւոր մէկ կողմը կայներ էր , ու չէր ուզեր աչքը  
երկինքը վերցունել . հապա իր կուրծքը կըծեճէր և կըսէր , Բ՛ստուած՝ նե-  
րէ ինծի մեղաւորիս : Չեղի կըսեմ , Բ՛օրիկայ ան մեկակէն տուելի արդարացած  
իր տունը իջաւ . վասն զի՝ ո՛վ որ ինքզինքը կըբարձրացընէ , անիկայ պիտի  
խանարհի . և ո՛վ որ ինքզինքը կըխոնարհեցունէ , անիկայ պիտի բարձրանայ” :

Երդ՝ հաւատոյ մէջ ըլլալու համար՝ պէտք է որ աս եր-  
կու առակներուն մտքովը ընդունիմք աւետարանը , և այս-  
պէս զգամք զանիկայ : Բ՛սոնց մէջն է ճիշդ և պայծառ գա-  
ղափարը ճշմարիտ քրիստոնէին : Ո՛վ որ ունի ան զգացու մնե-  
րը՝ որ Ուրբ Կրքին աս երկու մասը կըբացայայտեն , ըն-  
դունեն և հմուտ եղեր է ճշմարտութեան . իսկ ո՛վ որ զուրկ  
է անոնցմէ , ամենեւին չէ հասկըցիր Վ՛րիստոսական կրօնին  
ինչ ըլլալը :

Վ՛ննեմք հիմայ աս առակները որ տեսնեմք թէ ինչ կը

պարունակեն, և նախ՝ առաջինը : Անառակ որդին իր հայրենի տունէն հեռացաւ, իր անկարգ բաղձանքներուն հետեւելով և բոլորովին իր խելքին հնազանդելով : Բայց ահա կըլըջայ, սաստիկ կըցաւի, կըձանչնայ իր անառակ վարմունքը ու կըսէ. «Մեղք ինձի. ես մէկ ծնողէ մը զատուեցայ որ այնքան խնամք ունէր իմ վրաս, որուն պարտական էի շատ յարգութիւն տալու : Աս թողուցի անտունը՝ ուր տեղ այնչափ հանգիստ ու բերկրութիւններ վայելեր էի, որ մտացածին բաներու հետեւիմ և իմ մեղապարտ յօժարութիւններուս հնազանդիմ : Մհ, ի՞նչ անառակութիւն է աս, ի՞նչ անմտութիւն» : Ահա ստուգիւ կըզգայ իր մեղքերը ու կըխոստովանի զանոնք. իր ետքի վիճակին բաղդատութիւնը առաջինին հետ՝ ամօթով և խղճի խայթելով կըլեցունէ զինքը : Բայց իր սրտին ցաւը և տագնապը չթաղուցանէր, չվախնար զանոնք յայտնելու. կը վաղէ կերթայ իր հօրը՝ որմէն հեռացեր է. և իր բովանդակ ցաւը և զիջը կը յայտնէ անոր ըսելով : «Մայր, մեղայ յերկինս և առաջի քո, ալ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. դուն իրաւունք ունիս զիս վարնտելու. ըրէ աս բանը՝ քանզի արդարութիւն ըրած կըլլաս. ետ դարձուր զիս, ես ամենեւին չեմ տրտնջար» : Բայց ան նոյն ատենը՝ որ աս ապստամբ որդին կը վախնայ որ պիտի չընդունուի, և կըզարհուրի իր զայրացած հօրը ներկայութենէն, կարեկցութեամբ լցուած արտասուածոր աչքեր դէպի իրեն կը դառնան, գթած թեւերը իրեն փաթտուելու կըբացուին, և աս մեղապարտ որդին թողութիւն կառնէ, և կըհաշտուի : Աս առակը ազգու և կատարեալ պատկեր մըն է որ կըցուցընէ ինչ որ քրիստոնէից մէջ կըպատահի : Ասան զի աս մեղք ձանչնալը, ցաւ զգալը, դարձի գալու հաստատ առաջադրութիւն ընելը, մէկ խօսքով, աս փոփոխութիւնը կենաց, ճշմարիտ քրիստոնէին բուն նշաններն են :

Տեսնեմք հիմայ մաքսաւորին առակը : Անառակ որդին պէս ան ալ սնհնազանդ գտնուեր է, բայց անոր պէս կը

ճաննայ ու կրղզայ իր անհնազանդութիւնը . ու որ ասեն փարիսեցին պարծենալով կրխօսի իր վրան , և իր անմաութեամբը ինքզինքը կարգարացունէ , ինքը ալ ատելի տեղեակ ըլլալով իր բարոյական վիճակին , կըհառաչէ որ ձեռք բերէ ան հաշտութիւնը՝ որուն խիստ կարօտ ըլլալը աղէկ կրղզայ : Բայց ի՞նչպէս համարձակի երևնալ սրբոց Սուրբին առջևը . ի՞նչպէս անոր երկրպագելի անունը իր աղտեղի շրթունքներովը արտասանէ . իր աղօթքը մէկ նոր օրինազանցութիւն մը պիտի չըլլայ : «Մշա մեղաւոր մը , կըսէ ան , որ արժանի չէ և ոչ իսկ բարերարութեան նշան մը ընդունելու . քանզի մեղապարտ է ամենաբարի Տէրօջը՝ ամենագթած հօրը առջին . բայց սաստիկ ցաւով կրղզայ իր յանցանքը : Ե՛նորհք շնորհք կրխնդրէ աս օրինազանց մարդը» : Ասան որոյ կըհեծէ կըհառաչէ , իրմէն ամբաստանութիւն կընէ , կըդատապարտէ զինքը , և թողութեան կրդիմէ որ խիստ հարկաւոր է իր երջանկութեանը : Այլ ի՞նչ կըպատահի արդեօք անատենը : Ա՛յլ անհասանելի սիրոյն . ինչ որ եղաւ անառակ որդիին՝ նոյնը կընորոգի հիմակ մաքսաւորին համար ալ : Հարիտենականը կըլսէ անոր աղօթքը , կըհաճի ընդունիլ անոր հառաչանքը . և քաղցր աչօք կընայի անոր : Աւտի աս մեղաւորը որ կործաններ էր՝ կանգնեցաւ . ամօթալից էր՝ խնդութեամբ լցուեցաւ . յանցաւոր էր ու պատիժէն աղատեցաւ : Ընիկայ արգարացած իր տունը կերթայ : Մշա աս վախճանը ունեցաւ երկրորդ առակն ալ : Մայիսի շնորհքէն անշուշտ սէր կըյառաջանայ : Ընիկայ օրհնութիւն առաւ , ուրեմն կրղզայ թէ որչափ շնորհապարտ է ամենագթած Վրկէի մը . այսուհետեւ հնազանդութիւնը քաղցր և զիւրին պիտի ըլլայ իրեն . Մտուծոյ կամբը՝ որ բարի , հաճելի և կատարեալ է , իր կենացը անփոփոխելի կանոնը պիտի ըլլայ : Մշաասիկ պարզ և ճշմարիտ գաղափար մըն ալ քրիստոնեայ մարդուն , ու անոր զգացումներուն կենդանի նկարագրութիւնը . թէ որ մէկը աս պատրաստութիւնները ունի անի-

կայ քրիստոնէական հաւատոյ մէջ է . թէ չէ՝ զեւ սողոյ չգիտեր թէ ի՞նչ է աւետարանը , և իրաւունք չունի որ զինքը քրիստոնէայ անուանէ :

Սուրբ Վրքին աս երկու սոսկներուն մէջ բացատրած միտքերը համառօտելով , կըտեսնեմք նախ՝ մեղքին զգացողութիւնը . երկրորդ՝ պատժապարտութեան և դատապարտութեան զգացումը . երրորդ՝ անկէ ազատուելու փափաքը և աստուածային ողորձութեանը ապահինութիւն . չորրորդ՝ թողութեան պարգև . հինգերորդ՝ (թէ և յայտնի ըսուած չէ) , խորին երախտագիտութիւն մը ան բարերարութիւններուն փոխարէն որ եղաւ իրենց : Վրիստոնէութեան կանոնը յայտնի է ուրեմն . բայց հիմայ անոր գործածութիւնը նայիմք . արդեօք մեր վարժունքը համեմատ է աս կանոնիս . քրիստոնէայ՞ եմք ճշմարտապէս : Ըհա ասոր վրայօք պիտի խօսիմ քարոզիս երկրորդ մասին մէջ :

#### Բ . ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԷՄՔ :

Պէտք է որ հիմայ քննեմք մեր կեանքը , հետազօտեմք մեր սրտերը , որպէս զի գիտնամք թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիմք Ըստուծոյ առջին : Ով յաւիտենական Ըստուած , քու շնորհացդ կարօտ եմք . քանզի ՚ի բնէ մոլորութեան հակամէտ ըլլալով՝ զիւրաւ կըմոլորիմք . օգնէ մեզի ուրեմն , որ քննեմք մեզ որ մեր վրայօքը ճիշդ գաղափար մը ունենալով միայն ՚ի քեզ ապահինիմք , վասն զի դու միայն կարող ես պարգևել մեզի փրկութիւն և հանդարտութիւն ոգւոյ :

1. Ըստջին մասին՝ այսինքն մեզքը զգալու վրայօք խօսելով , ի՞նչ կըպատահի արդեօք մեր ներքսի դին : Ստագրութիւն ըրէք որ զգացողութեան վրայ է խօսքս չէ թէ լոկ ճանչնալու . քանզի ընդհանրապէս աս ճանաչումը ամէն մարդ ունի , և սովորաբար զգացումէն զրկուած է : Ըրդ՝ սրտերնիդ կըշարժի՞ , կըցաւի՞ք ձեր մեղքերուն վրայ . ցարք և ամօթը ձեր հոգւոյ զգայութիւննն՞րն են արդեօք :

Անշուշտ փորձառու էք դուք . օրինակի աղագաւ ձեր ծընողացը կամ մէկ բարեկամի մը մահուանը համար՝ ի հարկէ սրտերնիդ ցաւեր է ու արտասուք թափած էք , արամու-թեան մէջ մնալով աս ղիպուածիս պատճառաւ : Այդ՝ աս նոյն զգացմունքները ունեցա՞ք ձեր անկազանդութիւնները միտք բերելնուդ . քանզի ասկից պիտի ճանչնամք թէ արդեօք ճշմարտութեան ճամբան մտեր էք թէ ոչ : Այն շատերը որ իրենց մեղքերուն անտարբեր աչքով կընային , որպէս թէ իրենց վերաբերեալ բան մը չեն անոնք : Պէ՞տք է արդեօք ձեզ աս ողբալի մարդկանց կարգը դնել : Չեր մեղքերուն համար Աստուծոյ առջին բրած խոստովանութիւննիդ աս եկեղեցիիս մէջ , որն որ ամէն անգամ մէկ տեղ ժողովուած առեննիս կընորոգեմք , սրտանց ու անկեղծ է : Օգացի՞ք երբէք ան արտմութիւնը և ան զոջումը՝ որ Աստուծոյ ճշմարիտ երկրպագողները կըզգային իրենց մեղացը վրայ , նոյն յօժարութիւնը և նոյն ջանքը պիտի ունենան ամէն անոնք՝ որ մի և նոյն տէրօջը կըծառայեն . կըզգա՞ք ուրեմն որ աս արտմութիւնը և աս խիղճը ձեր սրտերն ալ շարժած ըլլան : Թէ որ ճշմարիտ զոջման նշանները ունիք , քրիստոնէական հաւատոյ մէջ կըզգտնուիք . իսկ թէ որ չունիք՝ դեռ շատ հեռու էք աւետարանէն , ու Վրիստոս ձեր փրկիչը չէ :

2 . Անտակ որդին և մաքսաւորը իրենց մեղքերը զգալով , պատժապարտ ըլլալին կըճանչնան , և կը յայտնեն նաև իրենց կասկածը՝ որ աս զգացումը կընեղործէ անոնց : Այն կասկածը ունի՞ք արդեօք : Ստոյգ գիտե՞ք ձեր մեղապարտ ըլլալը . կըհաւատա՞ք որ Աստուծոյ բարկութեանը ենթակայ եղած էք և թշուառութեան արժանաւոր . սրտերնիդ հանդարտ է . հանգստութիւն ունի՞ք երբ որ ահեղ դատաստանը և յախտենականութիւնը առջևնիդ կը տեսնէք , եթէ մեղքին պատիժներէն կամ Աստուծոյ սպանալիքներէն շփոթած , կեցուցիչ երկիւղ մը կըլեցունէ ձեր սիրտը : Ապց աս տեղս խորին արտմութիւն և սարսափ կը

պաշարէ մեզ, մտածելով թէ այնպիսի զգացում ունեցողները որչափ սակաւաթիւ են: Վանզի մարդիկ առանց դժուարութեան կրխոստովանին թէ Մատուածային օրէնքները պահած չեն, բայց չեն ուղեր ծաննալ որ մեղապարտ են Մատուծոյ առջևը: Սակայն միթէ դատապարտութեան և մեղքին մէջ չկայ ան կապակցութիւնը՝ որ սկիզբը իր վախճանին հետ ունի. պէտքը չէ՞ որ աղէկ գիտնամք մեր դատապարտեալ ըլլալը, որ յախտենական կենաց արժանի ըլլամք: Վննեցէք ձեր սիրտը և ձեր զգացումները. հարցուցէք ձեր խղճմտանքին. թէ որ չէք կարծեր զձեզ մեղապարտ յանցաւոր և կորսուած, շատ հեռու էք քրիստոսական հաւատքէն. ընդ հակառակն թէ որ աս սոյն վիճակիս մէջ կրկարծէք զձեզ՝ աւետարանը հասկըցեր էք և արդէն ընդուներ էք զանիկայ:

3. Արբորդ զգացումը՝ ինչպէս ըսի, աստուածային շքանորհացը բաղձանք մը ունենայն է, և հաշտուելու կարօտութիւնը: Սենի՞ք արդեօք աս փափագը. եռանդուն սրտիկը դիմէք դէպի ազատութեան աղբիւրը. ձեր հաշտուիլը ամենամեծ երջանկութիւն կը համարի՞ք ձեզի. համարձակ ըսէք, փրկութեան աւետիսը կուրախացրնէ՞ ձեզ. թողութիւն առնելը, Մատուծոյ ծառաներուն մէջ ընդունուիլը արդեօք կը սեպէ՞ք որ սրբազան պատուասիրութեան առիթ մը ըլլայ: Հիւանդ եղողը՝ խնդութեամբ մտիկ կընէ երբոր իր ցօւր բժշկելու զօրութիւն ունեցող դեղին վրայօք կը խօսին: Մնօթի մարդը՝ կերակուր ուտելու կը ցանկայ, իր մարմնոյն պիտոյքը լցունելու համար. արևակէզ տունկը՝ քաղցր անձրևի մը կարօտ է որ զովանայ: Մյսպէս ձեր անհանգիստ խիղճերն ալ գարձան արդեօք դէպի երջանկութեան աղբիւրը: Վիտէք թէ ոչինչ աւելի սուբրական է մարդոց, քան որչափ փրկութեան ու հաշտութեան բռնեքը արտասանել, առանց ան զգացումները ունենալու որ աս բռնեքը կընշանակեն: Այց որչափ տարբերութիւն կայ բանի մը վրայօք խօսելու և անոր փորձը ընելու մէջ տեղը:

Ուրեմն երբ որ դուք Մատուժմէ շնորհք կրխնդրէք նէ , ազէկ կրգգաք որ անիկայ շատ հարկաւոր է ձեզի . անոր յարգը կըճաննաք ստուգապէս : Կաւիթ մարգարէին օրինակը աւելի աղէկ կըսորվեցունէ ձեզի թէ ինչ կարծիք ունենալու էք ձեր վրայ . նայեցէք թէ ի՞նչ կըսէ իր անկեղծ հոգիովը . «Ո՛վ Մատուժ քու ողորմութեանդ չափովը ողորմէ ինձի , քու շատ գթութեանդ չափովը արէ իմ անօրէնութիւնս : Իմ անօրէնութենէս բոլորովին լուսզիս , ու իմ մեղքէս սրբէ զիս : Այսն զի ես գիտեմ իմ անօրէնութիւնս , ու իմ մեղքս միշտ իմ առջիս է : Վեղի , մինակ քեզի մեղանչեցի , ու քու աչքերուդ առջևը չարութիւն ըրի . որ արգար ըլլաս խօսքիդ մէջ , ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ : . . . Սշտիկով մարբէ զիս , ու մտքուր ըլլամ . լուս զիս , ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ : Կնձութիւն և ուրախութիւն լսել տուր ինձի , թող ջնձան ան սկզբները որ կտարեցիր : Սողմ , ծն . 1—4 , 7—9 : Ո՛վ Տէր , քու գթութիւններդ ու ողորմութիւններդ յիշէ , ինչու որ հին ժամանակէն են : Սանկութեան մեղքերս ու յանցանքս մի յիշեր՝ ողորմութիւնովդ զիս յիշէ : Սողմ , ին . 6 , 7 : Մտնք են ահա ան զգացումները որ շատ յարմար կուզան մեզի պէս մեղաւորներուն : Մս է արդեօք ձեր սրտին պատկերը . քանզի կամ այսպէս է կամ ոչ : Թէ որ այսպէս , աւետարանը աղէկ ճանչցեր էք . թէ չէ՝ ամենևին մասն չունիք Հիսուս Վրիստոսի հետ , սլլ դուրս մնացեր էք անոր ուխտէն :


4 . Ձեր արամութեանը յաջորդեց երբէք ուրախութիւն , և ձեր սրտնեղութեանը՝ հանդարտութիւն ոգւոյ . ունիք արդեօք Մատուժոյ ծառաներուն կարգը ըլլալու արտօնութիւնը . և ան նոյն ատենը որ Վրիստոսի ատոհմն առջևը խոնարհեցաք իր դատաստանին և իր արգարութեանը երկիւղը մտքերնիդ բերելով , սրտերնուդ մէջ քաղցր հանդարտութիւն մը ծագեցա՞ւ : Մս անճառելի շնորհքը որ գերութիւնը ազատութեան կըղարձունէ , և

սուգը՝ ուրախութեան, ընդունելը էք. ասոր ճաշակը առի՞ք  
 երբէք: Վիտամ որ քրիստոնէական հաւատոյ խիստ վտեմ  
 գաղափարին զույգը կըխօսիմ ձեզի, բայց սակայ է ան  
 խոստմունքը որ Վրիստոս իրեններուն ըրաւ. աս է իր  
 հոգւոյն կնիքը, և յաւիտենական կենաց գրաւը: Սեղաքը  
 իրօք ճանչնալը՝ ամօթ յառաջ կըբերէ, պատիժը՝ երկիւղ,  
 իսկ փրկութիւնը՝ հանգարտութիւն սրտի: «Արանի անոր»  
 որ մեղքերուն թողութիւն եղաւ, — յանցանքները ծած-  
 կուեցան: Արանի ան մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն  
 չսեպեր անոր, ու անոր հոգիին մէջը նենգութիւն չկայ:  
 Սուգ. Լր. 1, 2: Վուք ծառայութեան հոգին չառիք կրկին  
 վախնալու, հապա որդեգիր ըլլալու հոգին առիք. որ ա-  
 նով կըկանչուիք Մարայ՝ շայր: Վոյն ան շոգին վկայու-  
 թիւն կուտայ մեր հոգիին, որ մենք Մատուծոյ որդիքն եմք:  
 Այս թէ որ որդիք, ուրեմն ժառանգներ. Մատուծոյ ժա-  
 ռանգներ՝ ու Վրիստոսի ժառանգակիցներ: Սուգ. Լր.:  
 Ստածեցէք ուրեմն թէ աս արտօնութեանս ծանօթութիւն  
 ունիք. և թէ շոգին Սուրբ սցսպիտի բերկրութիւններով  
 լցուցեր է արդեօք ձեր սիրտը: Արտօսին կըսեմ. աս բա-  
 նին կամ տեղեկութիւն ունիք՝ կամ ոչ. թէ որ ունիք՝  
 ճշմարիտ քրիստոնէութիւնը ազգեր է ձեր սրտին. թէ չէ՝  
 զեւ չէք գիտեր ճշմարտութեան էական մասը:

5. 'Ի վերջոյ պարտիւք խօսիլ կեցուցիչ երախտագի-  
 տութեան նշանին զույգը, որ աւետարանի աշակերտը հար-  
 կաւ պիտի ունենայ: Հետագայ խօսքերուն մէջ կըտեսնուիք  
 թէ ո՞վ որ Հիսուս Վրիստոսինն եմ, կըսէ, պէտք է որ  
 այնպէս վարուի աշխարհիս մէջ՝ ինչպէս նոյն ինքն Հիսուս  
 Վրիստոս վարուեցաւ: «Մտով յայտնի են մէկզմէկէ Մա-  
 տուծոյ որդիքը ու սատանայի որդիքը: Ո՞վ որ արգարու-  
 թիւն չգործեր, անիկայ Մատուծմէ չէ. և ան ալ որ իր եղ-  
 բայրը չիբեր: Ինչ Հօհ. 7. 10: Թէ որ զիս կըսիրէք՝ իմ  
 պատուիրանքներս պահեցէք: Հօհ. Ժ. 14: Ուստի կամ  
 աս նշանը ունի մէկը, կամ զուրկ է անկէ. վասն զի քրիս-



սոնեայն որոշող սա նշանը այնպիսի յատկութիւն մը ունի որ աւետարանի սկզբանցը քիչ մը հմուտ եղողը անգամ կարող ըլլալով զանիկայ ճանչնալ, դժուարին է անոր դուրսէն վրայ սխալիլը : Արդ՝ քրիստոնեայն որոշող սա նշանը ունի՞ք արդեօք . ո՞ր կրդնէք ձեր գանձը, երկրի վրայ թէ երկինքը . ներկայն մեծ կը համարիք թէ ապագայն . ի՞նչ բանով աւելի զբաղած է ձեր միտքը, ձեր մարմինը և ձեր հոգին . երբ որ գործ մը ուղէք գործելու, որո՞ւ հաւանութիւնը կրպնտուէք, մարդո՞ց թէ Աստուծոյ : Աս հարցմունքներուն պատասխանը անշուշտ միջոց մըն է ձեզի որ գիտնաք թէ ինչ վիճակի մէջ կրդանուիք Աստուծոյ առջևը : Ճշմարտութեամբ քննեցէք զձեզ ուրեմն : Վարկացողներ՝ ձեր անհամբերութեան և զայրանալու շարժմունքը զսպե՞ր էք . վրէժխնդիր մարդիկ՝ ատելութիւնը և ոխը մէկ դի ձգեցի՞ք, անգահներ՝ կամչնա՞ք արդեօք ան ձեր ունեցած անարդ կիրքէն . անմարտօր մարդիկ՝ ձեր յանցաւոր ցանկութիւններէն հրաժարեցա՞ք . որ և իցէ մարդիկ՝ դարձի եկա՞ք և սկսա՞ք արդեօք քրիստոնէաբար ապրելու : Ահա վերստին կրսեմ, վերստին կրկրկնեմ . թէ որ Հիսուս Վերստոսի կամացը համաձայն չէք կենցաղավարիք, թէ որ իր սուրբ վարդապետութիւններուն չէք հետեւիր, դուք վրէժկութիւնը չէք ճանչնար, ու քրիստոնեայ չէք :



Ահա կը տեսնէք, եղբարք, որ Վրիստոսինը ըլլալու համար բաւական չէ արտաքին երևոյթ մը, լոկ անուն մը, կրօնքի վերաբերեալ քանի մը գաղափարներ ու բարեպաշտութեան անորոշ յօժարութիւններ ունենալը, և ոչ իսկ մտքով ընդունիլը քրիստոնէական հաւատոյ բոլոր սկզբունքները . այլ պէտք է այնպիսի հաւատք մը ունենալ որ բովանդակ յայտնուած ճշմարտութիւններուն պատշա-

ճաւոր ըլլայ, որ մարդու գոյութեանը ամէն զօրութիւնները իրեն սեպհականէ. բուն ներքին և կատարեալ ըլլայ, հաստատուն՝ ազդու և գործնական քրիստոնէութիւն մը : Ըստ օրինաւոր և մի միայն ճշմարիտ քրիստոնէութիւնը ունի՞ք արդեօք. կըճաւատաք որ դուք մեղաւոր, դատապարտեալ և կորսուած էք Ըստուծոյ առջևը : Կըճաւատա՞ք որ Վրիստոս ձեր փրկիչն է, ու ձեր բոլոր վստահութիւնը անոր վրայ դրած էք. կարծէ՞ք որ աւետարանական աս մեծ ճշմարտութիւնները ձեր սրտին մէջ ունենաք. կարծէ՞ք որ ձեր խորհուրդները և ձեր զգացումները՝ Ըստուծոյ պատուիրանքներուն համեմատ ըլլան : Պէտք է որ աս հարցմունքներուն պատասխան ասք. որն որ ձեր օգուտը և ձեր երջանկութիւնը տիրաբար կըպահանջէ ձեզմէ : Ուրեմն դուք ձեզի նայելով՝ քննեցէք անձերնիդ : Եւ չէ՛ թէ հարեանցի՝ քննութիւն մըն է ան՝ որ բնաբանը կըպահանջէ մեզմէ, այլ զգուշաւոր, անկեղծ և ճշմարիտ քննութիւն մը խղճի մտաց : Վանդի թէ՛ որ ըղձալի է մեզի որ մեր առողջութիւնը ու մեր գործքերը ինչ վիճակի մէջ ըլլալնին գիանամք, քանի՞ առաւել պարտաւոր եմք քննել թէ ինչ վիճակի մէջ կըգտնուիմք Ըստուծոյ առջևը : Երդեօք Ըստուծոյ կըվերաբերիմք, հաւատոյ մէջ եմք : Վուր որոշեցէք աս ինդիրը՝ եղբարք, շուտով որոշեցէք, քանզի խիստ զօրաւոր պատճառներ կան որ յայտնաբարբառ այսպէս կը պահանջեն :

Երդ՝ մինչև հիմայ ըսուածներէն ամէն մարդ կրնայ գիտնալ թէ ուր հասեր է իր առ Ըստուած վերաբերութեանը մէջ. քանզի կամ հաւատոյ մէջ էք դուք, կամ ոչ. կամ թէ տակաւին զուրկ ըլլալով անկէ կըփափագիք զանիկայ ձեռք բերելու :

Ուրեմն դուք որ ճշմարտութիւնը կըճանչնաք, որ Ըստուած՝ հայր է ձեզի, և Վրիստոս՝ Փրկիչ, մեծ է արդարև ձեր երջանկութիւնը երկրի վրայ. քանզի դուք Ըստուծոյ որդիներն էք, և մէկ օր մը անոր տեսութիւնը պիտի վայել-

լէք: Չեր կեանքը՝ թող երախտագէտ ու սուրբ կեանք մը լայն ահա բաց է ձեր առջին սիրոյ և նազանդութեան սպարէզը . քալեցէք ուրեմն անոր մէջը եռանդով, հաւատարմութեամբ և յարատևութեամբ :

Գուք որ կը փափագիք զՄատուած ճանչնալու՝ քաջալերութիւն ունեցէք, մօտիկցէք Մատուծոյ . անիկայ պիտի տայ ձեզի ինչ որ դուք չունիք . Ճշմարիտ փափկութիւններուն ազդիւրէն պիտի խմցունէ ձեզի: Ճշմարտութիւն ստանալու համար ձեր ունեցած բաղձանքը՝ Մատուած տուաւ ձեզի, ինքն է որ խմացուց թէ հարկաւոր է որ իր ծառայութեանը նուիրէք զձեզ . ուրեմն յոյսերնիդ անոր վրայ դրէք, ինչու որ պիտի կատարէ ձեզի համար ըրած մեծամեծ խոստմունքները: «Այլէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ կը հանգչեցընեմ»: «Սաղմ. Ժ. 28: Ս'վ որ ինծի կուգայ՝ դուրս չեմ հաներ»:

Իսկ դուք՝ որ հեռու էք շնորհաց ուխտին պարզէններէն, ի՞նչ ըսեմ: Չեր ապագայն տխուր է, ձեր վիճակը ողբալի է . երկրի վրայ ճշմարիտ բերկրութիւններէն զրկուած՝ գերեզմանէն անդի՞ն ալ տառապանք և խղճի խայթ պիտի ունենաք . ի՞նչ պիտի ընէք ուրեմն: Բայց կ'իմացունեմ ձեզի թէ՛ Մատուծոյ համբերութեան ժամանակը՝ դեռ լրացած չէ, պէտք է որ ջանաք փրկութիւնը գրկելու: «Ինչրեցէք ուրեմն զՄատուած քանի որ կը գտնուի, կանչեցէք զանիկայ, քանի որ պատրաստ է»: Մ. Ե. 1, ամենակալ Մատուած, թող մեղաւորները մէկ տեղ գան քու գաւազանիդ տակը, բեր զանոնք ամէն կողմէն, ու երկրի բոլոր ծայրերը քեզի նային փրկութեան հասնելու համար:

Փանօք շօր և Սրբուոյ և սրբոյ շօրուոյն:



## Ք Ա Ր Ա Ջ Գ

---

### Չ Ա Ր Չ Ա Ր Ա Ն Ք Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի

---

Բայց ան մեր մեղքերուն համար վերաորեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար պատեցաւ. մեր խաղաղութեան պատիւը անոր վրայ եղաւ, ու իր վերքերովը մենք բժշկուեցանք: Երայ. ծի. 5:

Չ Ա Ր Ա Ջ Ե որ ժամանակ կորսընցունեմ ձեզ համոզելու, թէ աս գլխուն մէջ մարգարէին զրուցած անձը Վրիստոսն է: Ես բանը անանկ յայտնի է՝ ու մարգարէական նկարագրութիւնը այնչափ ճիշդ համեմատ կուզայ Վրիստոսի պատահած բաներուն, որ իրացունէ առաւել կրնմանի Վրիստոսէն ետքը գրուած պատմութեան մը, քան թէ եօթը հարիւր տարի առաջ զուրցուած մարգարէութեան, որն որ ճշմարտապէս սասնկ էր:

Եւ ջի գլխուն 13—15 համարները, մարգարէն կրնրկայացընէ Մեօիան անշուք դէմքով ու կերպարանքով, խորին խոնարհութեան ու չարչարանաց մէջ, անանկ որ շատերը կը զարմանան իր վրայ: Մեօիային տգեղ ու խոնարհ դէմքին աս ստորագրութիւնը՝ ծիբերորդ գլխուն մէջն ալ կը շարունակուի. ուր տեղ կը ըցուցուի անիկայ շատերուն գայթակղութեան առարկայ մը, չոր հողէն ելած տգեղ ու

անձե արմատ մը : Ասիկայ՝ մարդոց զինքը անարգել ու մերժել կուտայ , իբրև անանկ մէկը որ բուն իր անձին յանցանքներուն համար , Աստուծմէ հարեալ ու շարչարուած է : Սարգարէն բնաբանին մէջի խօսքերովը աս անտեղի կարծիքը կրնափանէ ըսելով՝ Վայց ան Մե՛հ մեղքերուն համար վիրաւորեցաւ , Մե՛հ անօրէնութիւններուն համար պատժեցաւ , Մե՛հ խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ , (այսինքն ան պատիժը՝ որով մեր խաղաղութիւնը յաջողուեցաւ) ու անոր վէրքերովը մենք բժշկուեցանք : Ահա ասիկայ բանին բոլոր կերպարանքը կրփոխէ . քանզի հիմա յայտնի կերևնայ որ Սեփայլին կրած աս խորին նուաստութիւնը ու սաստիկ նեղութիւնը , չէ թէ իրեն համար էր , հապա մեզի համար . չէ թէ իր մեղքերուն համար , հապա մեր մեղքերուն համար :

Արդ՝ աս նիւթին բացատրութեանը սկսելէն առաջ , կուզեմ քանի մը հարկաւոր ծանօթութիւններ ևս տալ :

Կարեկցութիւնը մարդկային բնութեանը մէջ զօրաւոր յատկութիւն մըն է : Ան անձը՝ որուն զգայութիւնները անողորմ ունակութիւններով խտտացած չէ , անշուշտ 'ի գութ կը շարժի՝ որ և իցէ տանջանաց տեսարան մը տեսնելով : Վայց մեր կարեկցութեան աստիճանը աւելի կամ պակաս կը լլայ աչքին առջևը երևցած տանջանքին հանդամանքներուն համեմատ , և մանաւանդ առաւել զօրաւոր կը լլայ երբոր անմեղ մարդու մը անիրաւ շարչարանքը տեսնելու ըլլամք : Ասոր համար Վրիստոսի շարչարանքները կատարեալ պատեհութիւն կուտայ ատենաբաններուն մարդոց զգայութիւնները շարժելու , ինչպէս որ շատ անգամ եղած է : Վանզի յաճախ կը պատահի որ քարոզիչը Վրիստոսի շարչարանքները նկարագրելով , իր զգացումները ու իր ունկնդիրներունը ևս անանկ կարթըննան , որ կը պատրաստուին մինչև անգամ բազմութեամբ երթալու , ու իրենց մեծ բարկութիւնը ան արիւնահեղ Հրէից դէմ թափելու , որոնք որ Վրիստոսը սպաննեցին : Ասանկ

ալ հազարաւոր անգամ ասոր նման զգացումներ շարժուած են թատրոնի մէջ՝ միայն կեղծեօք շինուած ողբերգական առասպելով: Վրիստոսի խաչը աս կերպով քարողելը շատ քիչ պտուղ առաջ կը բերէ: Թէ որ մէկ մարդ մը խաչեալ Վրիստոսին առջևը լռի կարեկցութեամբ լալու ըլլայ՝ ինչպէս որ թատրոնի մէջ կուլայ սուտ մեռնող մարդու մը համար, թէ և անոր աչքերէն ջուրերու առուններ իջնան, սակայն արգեամբ հոգեշահ ու իրօք գործնական աղբեցութիւն մը չյուսացուիր անկէջ: Սուրբ Վիլքերը խաչեալ Փրկչին վրայով աս տեսակ քարողութիւն ընելը մէկ տեղ մը չեն հրամայեր: Մտաբեալները ամենեին աս կերպովս չքարողեցին: Եւ Հիսուս պատուիրեց ան կնիկներուն որ իրեն ետեւէն երթալով կուլային իր շարշարանքներուն համար. «Ինձի համար մի լաք, հապա ձեզի ու ձեր զաւկըներուն համար լացէք»:

Ի այց իմ սասնկ ըսելէս թող մէկը չմտաբերէ թէ պարտիմք ան խաչեալ Մտուծոյ Արդւոյն վրայ անհոգութեամբ նայիլ: Ա՛հ, իմ բարեկամներս, թէ որ անոր սիրոյն խորունկութիւնը ու մեր անօրէնութեան մեծութիւնը բաւական իմանալու ըլլայինք, անշուշտ խաչին ոտքը իյնալով դառնարցունք պիտի լայինք: Վրանդի ահա բոլոր աշխարհիս մէջ մեղաւորին լալու և սգալու մի միայն տեղը ասիկայ է. մանաւանդ թէ մէկը չկրնար ինքզինքը Մտուծոյ ճշմարիտ զաւակը համարիլ, թէ որ ամենեին խաչին ոտքը գացած չէ, հոն՝ իր մեղացը վրայ սգալու: Արեմն ո՛վ մեղսակից եղբարք՝ կաղաչեմ՝ ձեզի, եկէք ինձի հետ ելլանք Վողգոթեմ լեռը, Վրիստոսի խաչին քովը կայինք ու հոն միաձայն ողբանք ու լանք. չէ թէ խաչուած Փրկչին համար՝ հապա բուն մեզի համար, որ մեր պատճառաւ ինքք անարգաբար սպանուեցաւ. չէ թէ անոր շարշարանքներուն համար՝ հապա բուն մեր մեղքերուն համար, որոնց պատճառաւ ան շարշարանքները իր վրայ եկան:

Եւ որովհետեւ սասնկ երեւելի նիւթին բոլոր հանգա-

մանքները հոս տեղ ստորագրելը անկարելի բան է, վասն որոյ արժան համարեցայ վրկչին մերոյ չարչարանացը միայն քանի մը պարագաներուն վրայ պարապիլ, և ցուցընել թէ ինչ կերպով կրտարբերին անոնք մարդոց կրած հասարակ չարչարանքներէն :

Ը. Վրիստոս Ե. Ն. Ս. Ե. Ղ. ՈՒԹԻ ԵՆ ԵՍԻ Չարչարեցաւ :

Մտով ըսել չեմ ուղեր որ անիկայ միայն ան ատենը իրենն դէմ ամբաստանուած մասնաւոր յանցանքներէն անմեղ էր, այլ ամէն տեսակ յանցանքներէն բոլորովին անմեղ էր : Շատ մարդիկ անիրաւ նեղութիւն կրած են, հալածուած ու սպանուած են սուտ ամբաստանութեամբ : Սակայն Մտուծոյ առջին ուղ կը համարձակի ըսել թէ ինքը իր բոլոր կեանքին մէջ քաշածներէն աւելի չարչարանաց արժանի չէ իր մեղքերուն համար : Վրանզի թէ և ան մասնաւոր մեղքերը ըրած չէ, որոնց համար իր ընկերներուն ձեռքովը կը չարչարի, բայց ինքը միշտ մեղաւոր ըլլալով պարտի խոստովանիլ թէ ինչ չարչարանքներ որ ինքը կրեց, Մտուծոյ արդար իրաւունքովը եղաւ :

Ինդհակառակն՝ Վրիստոս ամէն աղտեղութիւններէ անարատ էր : Իր սրտին բոլոր խորհուրդները սուրբ էին, և իր շրթունքներուն մէջը երբէք չարութիւն մը չգտնուեցաւ : Իրեն դէմ շատ ամբաստանութիւններ եղան, սակայն անոնք ամէնն ալ նենդութեան պտուղներ էին, ու ընդհանրապէս անանկ անտեղի էին, որ իրենց ստութիւնը յայտ յանդիման կերևնար : Իր վարքը ամէն կերպով սաստիկ քննուեցաւ, չարագործ մարդիկ իրենց բոլոր ճարտարութիւնովը ու խորամանկութիւնովը զանիկայ փորձեցին, և սատանայական կատաղութեամբ իրենց լարած որոգայթը կուղէին ձգել զանիկայ : Մէն կողմանէ աչքերնին անոր վրայ դարձուցած կը քննէին զինքը, և ամէն տեղ ծածուկ կը ըլլտեսէին, որ ըլլայ թէ իր խօսքերուն մէջ ճշշ-



մարտութենէ քիչ մը մուրրութիւն, ու իր վարքին մէջ աւարիտութենէ քիչ մը պակասութիւն գտնան: Սակայն թէ իր գործին և թէ իր խօսքին մէջ պինտ թեթեւ չարութեան նշոյլ մը անգամ չգտնուեցաւ: «Եւ աշխարհիս իշխանը եկաւ, բայց իր վրայ բան մը չգտաւ»:

Ի՞նչ որ ինքը մէկ շարագործ մը եղած ըլլար, քահանայապետները՝ զպիղծները ու փարիսեցիները վաղվադակի զանկեայ պիտի բռնէին, ու բոլոր աշխարհի առջին համարձակ իր յանցանքը ցուցնէին, որ անոր անունը արելով ինքզինքնին արդարացունեն: Սակայն բոլոր իրենց խորամանկութեամբը ու բոլոր իրենց ջանքերովը անոր դէմ բան մը չէին կրնար գտնել, թէպէտ ինքը կրտսիպէր զանոնք ըսելով՝ «Չեղմէն ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեզքի համար»: Եւ երբոր զրգարտութեամբ զանիկայ քահանայապետին ատենը հանեցին, հարկաւոր եղաւ որ սուտ վիշտներ բերեն, բայց անոնց վկայութիւնները անգամ այնպէս անհամաձայն էին մեկզմէկու որ ամենեւին բան մը չկրցան հաստատել:

Ս երջապէս ատենելով որ իրենց բոլոր ճիգը դուր կելլէ, և ուրիշ միջոց մը չմնար, կը դառնայ քահանայապետը և կրտէ Զիսուսին. «Կենդանի Մատուծով քեզ կերդմնցունեմ որ մեզի ըսես, թէ դ՞ու՞ն ես Քրիստոսը Սրդին Մատուծոյ»: Եւ երբոր Քրիստոս իր պատասխանը կուտայ, իսկոյն հայհոյութեան ամբաստանութիւնը անոր վրայ կը դրուի, ու բոլոր ժողովը ազնուակեցելով կը վճռէ թէ անիկայ մահապարտ է:

Կարձեալ Պիղատոսի ատենին առջևը իր թշնամիներուն ջանքը նոյնպէս պարտալ ելաւ: Պիղատոս միշտ կը հարցունէր շրէից, որոնք անոր մահուանը համար բարձրաձայն կաղաղակէին. «Ե՛նչ չար գործ ըրաւ», ու շարունակ կրտէր, «Ես աս մարդուն վրայ ամենեւին յանցանք չեմ գրտներ»: Եւ յուր ամենայնիւ ինքը համոզուելով զիջաւ զանիկայ շերտիկսին խրկելու, մէկ կողմանէ ժողովորդը

Հաճեցունելու համար, ու միւս կողմանէ ալ մէկ արդար մարդ մը դատապարտելու պարտականութենէն ինքզինքը ազատելու համար: Եւ այց շերովդէս ետ խրկեց Վրիստոս՝ անոր վրայ ամենեին մեղք մը չգտնուելով: Եսկէց ետքը Պիղատոս քահանայապետներուն ու իշխաններուն ըսաւ. «Ես մարդը բերիք առջևս հանեցիք ժողովուրդը մոլորեցունողի մը պէս, և ահա ձեր դիմացը դատաստանը տեսայ, ու յանցանք մը չգտայ տա մարդուն վրայ՝ առ ձեր ատոր համար ըրած չարախօսութիւններէն: Այլ ալ շերովդէսը ինչու որ ափկայ անոր տանել տուի, ուստի ափկայ մեռնելու արժանի բան մը ըրած չէ»: Պատմ. իգ. 14, 15:

Պիղատոս հիմա զանիկայ պիտի ազատէր, հաստատ իմանալով որ Վրիստոս անմեղ էր, ու քահանայապետները նախանձութեամբ մատնեցին զանիկայ. սակայն ժողովուրդին խռովութենէն վախնալով որ հետզհետէ կը սաստկանար, «ջուր սուա՛ ժողովուրդին առջևը իր ձեռքերը լուաց» և ըսաւ. «Ես առ արդարին արիւնէն անպարտ եմ»: Պատմ. իգ. 21:

Եսկէց առաջ երբոր ատեանը նստեր էր, «Եր կնիկը մարդ խրկեց իրեն ու ըսաւ. «Են արդարին հետը դուն բան մը չունիս. ինչու որ՝ այսօր երազիս մէջ շատ դիպուածներ անցան իմ վրայէս ատոր համար»:

Վրիստոսի անմեղութեանը բոլոր տա վկայութեանցը վրայ, պարտիւք աւելցունել նաև Հուդային ան խօսքը, քահանայապետներուն ու ծերերուն զրուցած, թէ «Սեղայ, որ անմեղ արիւն մատնեցի»: Հուդան՝ Վրիստոս մտերմարար ճանչնալու ամէն պատահութիւնը ունենալով, աղէկ գիտէր որ Վրիստոս մահուան արժանի բան մը ըրած չէր:

Նմանապէս քահանայապետներն ալ կըխոստովանին ասիկայ, Հուդային տուած իրենց պատասխանին մէջը. «Սեր հոգը չէ դուն գիտես»: Արիշ վկայութիւն մըն ալ խաչին վրայի աւաղակին խօսքն է որ ըսաւ. «Ես մարդը

ամենեւին յանցանք մը գործած չէ՞. որն որ Վրիստոսի վրայով Հասարակութեանը զգացմանը մէկ յատուկ ապացոյց մըն էր, այսինքն՝ թէ ինքը առանց յանցանքի մահուան մատնուեցաւ : Վանզի ան երկու աւաղակներուն յանցանքը ամէն մարդ դիտէր : սակայն Վրիստոսի ինչ յանցանքի տէր ըլլալը՝ մէկը չիմացաւ, այլ ընդհակառակը ամէն մարդ անմեղ գիտէին զանիկայ :

Հռովմայեցի Հարիւրապետը ևս բռնադատուած էր աղաղակելու. «Կրաւցունէ ստիկայ մէկ արդար մարդ մըն էր» :

Իւրեմն բոլոր աս վկայութիւններէն յայտնի կըտեսնեմք որ Վրիստոս անմեղ էր ան ամէն զոպարտութիւններէն որ իր թշնամիները կարող եղան իր վրայ դնելու. և ահա այսպէս իր կրած շարչարանքները՝ մարդոց կրածներէն կըտարբերի : Վանզի ուրիշ ո՛ր և իցէ մարդ թէ որ անոր պէս սաստիկ քննուի, անոր վախճանը սրչափ տարբեր պիտի ըլլայ : Թո՛ղ մեզմէ մէկը ասանկ չար թշնամիներու շարունակ հետազոտութեանը հանդիպի, որոնք հանապաղ մեր առջևը մեղքի առիթներ ձգեն, անզոյչ ու փնասակար խօսքեր ընելու ամէն կերպով փորձեն մեղի, ու մեր ամէն մէկ խօսքին ու գործքին անխոնջ արթնութեամբ մտադիր ըլլան որ մեզի դէմ գանգատ ընելու առիթ մը գտնեն, ան ատենը մեզմէ ո՛վ արդար դատապարտութենէ կրնար ազատուիլ, ո՛վ կրնար ան փորձէն կատարեալ պարզ երես ելլել : Վանզի թէ և ո՛չ քաղաքական և ոչ եկեղեցական օրէնքով մեր վրայ յայտնի յանցանք մը գտնուի, և ոչ պատժոյ արժանի մէկ բան մը, բայց անտարակոյս որչափ ծածուկ մեղքեր կրնան արդարապէս մեզի ընծայուիլ :

Ի. Վրիստոսի շարչարանքը ԿԵՄԵՒՈՐ էր :

Սնորդիկ սովորաբար դժկամակութեամբ կըշարչարուին, մանաւանդ թէ որ կեանքերնին կորսընցունելու տանջանք մը ըլլայ :

Երբ ըսած եմք՝ թէ մէկը իրեն պատահէ ինքը աղէկ գիտնալով և իր միտքը հանդարտ պահելով ինքզինքը յայտնի ու անխորշելի մահուան յօժարութեամբ տայ : Արդիկ երբեմն իրենց բարեկամներուն համար ինքզինքնին մահուան վտանգին ենթակայ կրնեն, սակայն միշտ աս բանը ետքէն ազատուելու յոյսով կրնեն : Այլ թէ որ մեր ըսածին հակառակ մէկ զիպուած մը պատահած ալ է նէ, բնաւ մեզմէ մէկը տեսած չէ, և անտարակոյս ասանկ օրինակներ շատ քիչ կան :

Արեմն աս մասին ալ Վրիտանոսի շարձարանքները ու մահը կը տարբերին ուրիշ մարդոց քաշածներէն : Անիկայ ճիշդ աս զիտաւորութեամբ աշխարհ կկաւ որ իր կեանքը մեղաւորներուն համար փրկանք մը ընէ : Այս և վկայեց ինքը, թէ՛ «Մէկը չհաներ անիկայ իղմէն, հապա ես կը դնեմ անիկայ ինքիրմէս, իշխանութիւն ունիմ՝ զանիկայ դնելու և իշխանութիւն ունիմ՝ զանիկայ նորէն առնելու» : Իրեք տարի ինքզինքը քահանաներուն ու իշխաններուն ձեռքէն պաշտպանեց, երբոր անոնք կուղէին զինքը սպաննելու, և տակաւին նոյն բանը կրնար ընել : Բայց իր ազատ կամքովը Արուսաղէմ գնաց, և իր աշակերտներուն իմացուց՝ թէ ինքը յատկապէս խաչուելու կերթայ : Ինքը աղէկ գիտէր թէ իր ատենը երբ կը լրանար : Ինքը գիտէր որ Հուդան զօրքերով պիտի գար Վեթսեմանի պարտեզը՝ զինքը բռնելու, և սակայն ուղղակի հոն գնաց, ու կամաւ ինքզինքը անոնց յանձնեց : Այլ թէպէտ կրնար նոյն ատենը հրեշտակներու գունդեր կանչել իրեն օգնելու, բայց գիտնալով որ այսպէս ընելովը իր աշխարհ գալու մարդասէր զիտաւորութիւնը պիտի ջնջուէր, անոր համար չհաճեցաւ : Այլ երջապէս յայտնի տեսանք որ Վրիտանոս բոլոր ուրիշ մարդոցմէ տարբերելով՝ բուն իր կամքովը շարձարանցաւ :

Աստի առաջ երթանք Վրիտանոսի շարձարանաց երրորդ յատկութիւնը նկատելու :

Վ. Քրիստոսի շարժարանքը ՏԵՐՕՐԻՆԵԱ և ՍՈՍԻՏԵՆԻ էր :

Սէկը չկրնար անոր վերջին սագնագներուն ու մահուանը պատմութիւնը կարդալ առանց զգալու , թէ անոր շարժարանացը բնութեանը մէջ խիստ երեւելի և անխմանալի բան մը կայ :

Վայեցէք Վեթսեմանի պարտէղին՝ ուր տեղ «Վնքը սկսեց խորին արտմութիւն ու հոգ ունենալ» : Ընտանեք ըսաւ իր աշակերտներուն . «Իմ անձս մեռնելու չափ տրտում է» . ու երեսին վրայ գետինը ինկաւ և աղօթք ըրաւ , որ եթէ կարելի է նէ ան ժամը իրմէն տնցնի : Եւ աղօթք ըրած ժամանակը , քրտինքը արեան կաթիլներու պէս իրմէն կը վազէր , ու կլոր կլոր գետինը կը թափէր : Ընչա՞ տարօրինակ ու սոսկալի շարժարանք մը մարդուս մտքէն դուրս ու մարդուս համբերութենէն գերազայն :

Ճիշեցէք որ ստիկայ ան նոյն անձն է որ քիչ մը առաջ իր աշակերտներուն ըսեր էր , «Սի վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն ու անկէ ետեւ աւելի բան մը չունին ընելու» : Ուստի մարմնաւոր տանջանաց երկիւղը չէր որ ասանկ սագնագ իր վրայ կը բերէր : Պօղոս առաքեալ տեսնելով իր մտտալուստ և վշտալից մահը , մեծ զուարթութեամբ ըսաւ . «Եւ պատրաստ եմ զոհուելու» . և ինքը շատ աղէկ գիտնալով իրեն գալու վիշտերը կը սէր աս խօսքը , ինչու որ յառաջմանէ շատ անգամ ձեծուելով ու քարկոծուելով մահուան աստիճանին հասեր էր : Վասն հարիւրաւոր և հազարաւոր անգամ՝ մարտիրոսներն ալ կատարեալ հանդարտութեամբ և ցնծալից սրտի խաչուելէն աւելի շարժար մահուան սպասեցին , և անոր բոլոր տագնապները ուրախութեամբ քաշեցին :

Ուստի խաչին վրայի մարմնաւոր շարժարանաց երկիւղը չէր որ Քրիստոսի վրայ բերաւ ան խորին արտմութիւնը : Ըստիկայ յայտնի բան է , քանզի Քրիստոս՝ Պօղոսէն և ու-

քիչ մարտիրոսներէն պակաս քաջասրտութիւն պիտի ունենար: Արգարե թէ որ Աստուծոյ շնորհքովը մեղաւոր մարդիկ կրկարողանան մահուան երկիւղը բոլորովին յաղթել, որչափ առաւել անմեղ Որդին Աստուծոյ:

Ուրեմն ի՞նչ էր վրիչին մերոյ ան տարօրինակ և սոսկալի շարչարանքը: Կաշին վրայ ինքը ի՞նչ կըսէ. իր մարմնաւոր շարչարանացը վերաբերեալ բան մը կըզրուցէ՞, Իր սրբազան ձեռքին ու ոտքին գամուած բևեռներէն կրած սարսափելի ցաւերուն համար խօսք մը բերնէն կըհանէ՞. ոչ: Բայց ո՞չ, իր հոգւոյն տաղնապին ճշմարիտ պատճառը կըցուցնէ աղաղակելով. «Աստուած իմ, Աստուած իմ, իս ինչո՞ւ թողուցիր»: Ահա Վրիստոսի սաստիկ շարչարանքը: Առաքեալները ու մարտիրոսները խաչերուն ու ցիցերուն վրայ քաջասրտութեամբ մեռան, ինչու որ Աստուած՝ իր զօրացուցանող շնորհքովը իրենց հետն էր: Հազարաւոր մարդիկ Աստուծոյ երեսին լոյսը իրենց վրայ ծագած ունենալով՝ նեղութեան մէջ զինքը փառաւորեցին, ու մահուան խիստ ահարկու տեսութեանը մէջ ցնծացին: Սակայն Աստուծոյ մեռնող Որդիէն՝ Հայրը իր երեսը դարձուցեր էր: Ան՝ որ ՚ի սկզբանէ անտի սիրելի էր իր Հօրը, հիմայ անոր դէմքին ծածկուելովը կըհառաչէր և կըհեծէր: Ահա աս բանին երկիւղն էր, որ պարտեղին մէջը ան խորին տրամութիւնը բերաւ իր հոգւոյն վրայ: Ասիկայ էր որ խաչը՝ անանկ երկիւղալի բան մը երևցուց իր աչքին: Աստուծոյ իրմէն երես դարձուցած բոպէին էր, որ ան բարձր ու ուժգին աղաղակը հանեց: Ա՛հ, ինչ վշտալի ժամ էր ան: Արկինքը տխուր մթութիւն մը պատած էր, քանզի Աստուած իր երեսին լոյսը իր Որդիէն դարձուցեր էր, և վայելուչ էր որ արևն ալ խաւար դառնայ: Ան տեսնը Յիսուս բարձր ձայնով մը կրկին աղաղակեց, «ու Հոգին աւանդեց»: «Եւ ահա տաճարին վարագուրը վերէն ՚ի վար երկուք ճեղքուեցաւ, ու երկիրը շարժեցաւ, և քարերը պատուեցան, և գերեզմանները բացուեցան, և Հատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին»:

Նիքիտի Վրիստոսի արտմութեանը նման արտմութիւն  
երբէք չեղաւ : Նիքիտի սոսկ մարդ մը ամենեւին անոր պէս  
չարչարուեցաւ :

Վ. Վրիստոսի չարչարանացը չորրորդ յատկութիւնը կը  
կայանայ իր ԱՆԻՄԱՆԱՆՆԵՐԻ Հանդամանքներուն վրայ :

Փրկիչն մեր Նիսուս՝ Միստիսի բոլոր օրդիւններէն տար-  
բեր հանդամանաց տէր էր : Մեր համար պարտիմք շատ  
երկիւղածութեամբ մտածել ասանկ անիմանալի անձին վը-  
րայով , զգոյշ կենալով՝ որ ջրայ թէ մեր տկար մտքերուն  
չափերովը զանիկայ ուրիշներուն հետ բաղդատեմք :

Աս վսեմ նիւթիս վրայով Սուրբ Վիրքերը մեր մի միայն  
առաջնորդը ընելով՝ անոնց հետեւելու եմք , ուր որ մեզի  
կրտանին , թէև անոնց մէջ աս նիւթիս վրայ յայտնուած  
ամէն բանը մեր տկար մտացը այնչափ պայծառ չեն երևնար :  
Իսկ Սուրբ Վրոց մէջը երկու տեսակ վկայութիւն կայ  
Վրիստոսի վրայոք : Սէկին մէջը Մատուոյ յատկացած  
զանազան անունները և ստորոգելիքը իրեն կըտրուին .  
նաև կըստորագրուի թէ ինքը Մատուոյ յատուկ գործքե-  
րը կըկատարէ և անոր հետ հաւասար երկրպագութեան  
արժանի է : Արկրորդին մէջը ինքը կատարեալ մարդ մը կը  
ստորագրուի՝ մարդու կերպարանք , շարժմունք , մարմին ,  
ու հոգի ունեցող : Արբեմն աս երկու տեսակ վկայութիւն-  
ները մի և նոյն համարի մէջ կըպարունակուին . ինչպէս որ  
Պօղոս կըսէ , թէ ինքը «Մատուոյ կերպարանքը ունենա-  
լով , յափշտակելու բան մը չսեպեց Մատուոյ հաւասար  
ըլլալը . հապա իր անձը ունայնացուց ծառայի կերպարանք  
առնելով՝ մարդոց նման ըլլալով . ու կերպարանքովը մար-  
դու պէս գտնուելով» : Փիլիպ . թ . 6 , 7 :

Արեմն Վրիստոս տարօրինակ էակ մըն էր , որուն նման  
աշխարհիս մէջ մէկը չտեսնուեցաւ ոչ իրմէն առաջ և ոչ  
իրմէն ետքը : Ահա աս երեւելի սնձն էր միաւորեալ սահմա-

նաւոր և անսահման բնութեամբ , որ պարտեղին մէջը ու  
խաչին վրայ այսպէս ցուեր քաշեց : Եւնչ սքանչելի տե-  
սարան : Տես խաչին վրայ բոլոր մարդկային ու Մտուա-  
ծային զօրութիւնները ու կատարելութիւնները Վրիստոս  
Գիսուս մարդոյն վրայ միաւորած : Եւջխարհս բնաւ երբէք  
չտեսաւ այնպէս սրբազնասուրբ անձ մը . աշխարհս բնաւ  
երբէք չտեսաւ անոր հաւասար չարչարանք կրող մը :  
Սարգոց մէջ չտեսնուեցաւ բնաւ մէկը՝ որ այնքան իրա-  
ւունք ունէր անոնց սէրը , պատիւը ու երախտագիտութիւ-  
նը պահանջելու . բնաւ չտեսնուեցաւ մէկը որ այնչափ  
սաստիկ անարգեցաւ , անիրաւութեամբ հալածուեցաւ ,  
անողորմաբար սպանուեցաւ : Մտիկայ յառաջ կըբերէ Վը-  
րիստոսի չարչարանացը հինգերորդ յատկութիւնը , թէ՛

Ե . Վրիստոս ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ԼԵՄԵՐ չարչար-  
ուեցաւ , և Ո՛Չ ԻՐԵՆՆ ԼԵՄԵՐ :

Եւ ճշմարտութիւնը պարզապէս յայտնի է բնաբանին  
մէջ , ու նաև համառօտաբար նշանակուած է աս քարոզին  
սկզբնաւորութեանը : Սարգոցմէ ոմանք նեղութիւն կրած  
են իրենց ընտանեացը ու բարեկամներուն համար , կամ  
մինչև անգամ կեանքերնին զոհ ըրած են իրենց ազգին  
համար : Սակայն ո՛ր և իցէ աստիճան եղած ըլլար իրենց  
նեղութիւնը , անոնք զանիկայ կրելու Մտուծմէ արժա-  
նի էին , մանաւանդ թէ առաւել ևս տանջանաց արժա-  
նաւոր էին իրենց մեղացը համար : Բայց օրհնեալ Մտ-  
տուածորդին մեղք չէր զիտէր , և անշուշտ չարչարանաց  
արժանի չէր : Սեղքը իր անարատ հոգին խիստ թեթեւ  
աստիճանով մը անգամ ապականած չէր , վասն որոյ ինքը  
բնաւ մեռնելու չէր իր ըրածներուն համար : Եւյսու ամե-  
նայնիւ իր վիճակը աս աշխարհիս մէջ տանջանք և ցաւ  
կրել էր : Երբեմն գլուխ դնելու տեղ չունէր , երբեմն  
թշնամիներէն կըհալածուէր . ուրիշ ատեն սուտ բարե-



կամներէն կը վըշտանար : Այրբեմն ալ իր խտասիրտ ազգին անհաւատութեանը վրայ կը պարտաւորէր ըլլալ : Այլ վերջապէս իր կենացը վերջին տեսարաններուն համեմունք կը տեսնեմք զինքը որ պարտեղին մէջ իր հոգւոյն ուժգին տրամութենէն զեանին երեսը կը տարածուի, և խաչին վըրայ շօրը երեսը իրմէն ծածկուելէն զգացած իր անհամեմատ տառապանքը կը յայտնէ սրտառուչ ազաղակներով :

Երգ՝ աս բոլոր շարձարանաց և ոչ մէկ մասը անդամ իրեն համար էր : «Բայց ան մեր մեղքերուն համար վիւտորեցաւ . մեր անօրէնութիւններուն համար պատժեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ . ու իր հաբուածներովը մենք բժշկուեցանք» : Աստուածաշունչին մէջ շատ վկայութիւն ունիմք աս բանին վրայով : Քրիստոս ինքը կը ըսէ . «Աս իմ կեանքս ոչխարներուն համար կը դնեմ» . նաև Տէրունական ընթրիքին սահմանադրութեանը ժամանակը կը ըսէ իր աշակերտներուն . «Աս իմ մարմինս է որ ՉԻՕԻ ՇԵՄԵՐ կը ըստ խնդրուի : Ինչ . 28 : Առաքեալը մեզի կը զրուցէ թէ «Աստուած բուն իր Որդւոյն շինայեց , բայց մեր ամենուս համար մատնեց անիկայ» (Շառլ . ր . 32 .) թէ «մեր մեղքերուն համար մատնուեցաւ . (Շառլ . ր . 25) . թէ երբ մենք մեղաւոր էինք , Քրիստոս մեզի համար մեռաւ» . (Շառլ . ր . 9) որ «Ան իր անձը տուաւ մեր մեղքին համար (Գաղ . Իմ . 4) , «արդարեւ անարդարներուն վրայ մեռաւ . (Իմ Պի . ր . 18) : Երգարև Սուրբ Գրոց մէջը Քրիստոսի շարձարանացը վրայով ուրիշ կերպ վկայութիւն մը չկայ :

Օրէնքին անէճքը մեղանշող մարդուն վրայ էր . բայց մարդասէր Հիսուան ան անէճքը վերցունելու համար , ինքը անէճք եղաւ . «Դնչու որ գրուած է , Ենիճեալ է ան ամէնը որ փայտէն կը կախուի» : Սեր մեղքերուն համար մենք յաւիտենական պատիժ կրելու դատապարտուած է-

ինք, ինքը յանձնառու եղաւ կրելու ան պատիժը մեր տեղը :  
 Մենք ամենազօր Մատուծոյ սաստիկ տանջանաց տակը  
 արդարապէս կրճնչուէինք, ինքը կամաւ ինքզինքը նուիրեց  
 ընդունել ան հարուածները՝ որոնք մեզի համար սահմանուած էին . և որոնց իրօք արժանի էինք :

Մշտ հոս տեղ է ան խորհրդաւոր սէրը՝ որուն բարձրութիւնը ու խորութիւնը, երկայնութիւնը ու լայնութիւնը մեր գիտութենէն չտիպողանց վեր է : Մեր տկար զօրութիւններովը կրնամք միայն խաչին մօտ նստիլ, ու ան տեղ մեզի համար եղած բանին վրայ զարմացմամբ հիանալ :  
 Եւ թէպէտ Տէրօջը փրկուածները ասոր վրայօք վերջը առաւել պիտի սորվին, բայց սակայն յաւիտենականութիւնն ալ բաւական պիտի չըլլայ զանիկայ բոլորովին հասկըցընելու անոնց, կամ զանոնք ան գաղտնիքին ծայրը հասցընելու :

Արևելջացունեմ իմ քարոզչ քանի մը խորհրդածութիւններ ընելով :

1. Քրիստոսի խաչը կրցուցրնէ մեզի մեղքին վաւթարութիւնը :

Երբոր կրտսնանմբ վարպետ բժիշկ մը, որ հիւանդի մը խիստ զօրաւոր գեղեր կուտայ, կիսմնամբ որ ան անձին հիւանդութիւնը շատ վտանգաւոր է : Մտք համեմատ ինչ պիտի խորհիմք մեր ամէնուս մէջ տարածուած ան հիւանդութեանը վրայ, որն որ կրկարութի ան զօրաւոր գեղին որ Աւետարանին մէջ կրկարդամք : Ինչ ահարկու մեղքեր եղած պիտի ըլլան անոնք, որ հարկաւոր ըլին Մատուծոյ Արդւոյն սաստիկ վիրաւորիլը : Ինչ անօրէնութիւններ էին անոնք, որ անոր տանջուիլը կը պահանջէին : Ինչ մահկանացու հիւանդութիւն էր ան որ միայն համօրէն տիկզերբին մէջ ամենէն անմեղ, սիրելի և փառաւոր էակին վրայ դրուած հարուածներովը կը բժշկուէր :

Շատերը մեղքը ծաղը կընեն : Մահ . շին գիտեր թէ

ինչ կրնեն : Ենոնք մեր վրկիչը լացունող ու իր արիւնը  
 թափել տուող բանին վրայ կրկնդան : Են բանը ծաղը  
 կրնեն որ իրեն հառաչանացը և մահուանը պատճառ եղաւ :  
 Օւարմանալի է որ մարդիկ ընդհանրապէս մեղքին վրայ  
 շատ թեթեւ նկատում ունին : Ենոնք չնչին վնաս մը և  
 մանաւանդ խաղալիք կրսեպեն զանիկայ : Ենոնք ինք-  
 զինքնին բոլորովին անոր զօրութեանը կը յանձնեն . և զը-  
 խովին անզգայ կերեւնան անոր ապականիչ զօրութեանը՝  
 Ետուծոյ առջևը անոր գարշելի վատթարութեանը՝ և ի-  
 րենց հոգիներուն վրայ անոր ներգործած անխորշելի կո-  
 րրստեանը :

Իմ սիրելիներս , դուք ալ չնչին բան մը սեպած էք  
 մեղքը . վերցուցէք ձեր աշուրները դէպի խաչը , ու տեսէք  
 թէ ինչ է մեղքին գործը : Ենիկայ փառաց Տէրը սպաննեց :  
 Ըն՝ Փրկչին մերոյ արեամբը գրուած կրտսննմք , ինչ  
 համարում որ Ետուած ունեցեր է մեղքին վրայ : Ահ ,  
 ունկնդիրք՝ Ետուած ձեզմէ ու իզմէ աղէկ գիտէ մեղքին  
 ճիշդ բնութիւնը ու ընթացքը , ու թէ որ իր սիրելի Ար-  
 դւոյն արիւնէն ուրիշ բան մը բաւական ըլլար մեղքը քա-  
 ւելու համար , անշուշտ ինքը զո՛հ չէր ընէր իր որդին :  
 Կեղը զօրաւոր է , ինչու որ հիւանդութիւնը սատտիկ է :  
 Եւ ան հիւանդութիւնը ձեր վրայ ունենալովնիդ պատճառ  
 ունիք շատ վախնալու : Աւաի թէ որ Ետուծոյ պատրաս-  
 տած դեղը չընդունէք դուք , ձեր մի միայն յոյսը կը կոր-  
 սընցունէք . ուրիշ դեղ մը չգտնուիր որ ձեր հիւանդու-  
 թիւնը առողջացունէ : Ենչեցէք նաև որ ձեր հոգևոր հիւան-  
 դութիւնը կընմանի ուժդին և մահաբեր տենդի մը՝ որուն  
 վրայով որչափ անհոգ ըլլաք , այնչափ կաւելնայ անոր  
 զօրութիւնը , և այնչափ կընուազի զանիկայ բժշկելու  
 յոյսը :

Սիրելի հաւատացեալ բարեկամներս , դուք Ետուծոյ  
 շնորհքովը Եիսուսի նայած էք ձեր մեղքերուն թողու-  
 թեանը համար : Եղե՛ք կըրցանկա՛ք մեղքին դէշութիւնը

առաւել իմանալու . գացէք ու նստեցէք խաչին քովը : Տեսէք ան սիրելի Վրկիչը որ իր վերքերը ցուցնելով կըսէ . «Վոլոր ստոնք ձեր մեղքերուն համար բացուեցան . և դուք կրկին յիմարութեան պիտի դառնա՞ք : Բնաւ երբէք կրկին պիտի սնուցանէ՞ք ձեր մէջը ան բանը , որ իմ դառն շարձարանացս պատճառ եղաւ : Կուզէ՞ք որ ասանկ զիս նորէն խաչը հանէք : Ըն գարշելի բանը մի՛ ընէք որ ես կատեմ” : Եւ որչափ կըլիբաւորի Վրկիչին փափուկ սիրտը իր ժողովուրդին մեղքերովը :

Ե՛ղբարք իմ , ալ մէյ մըն ալ անիկայ աս կերպով չվշտացունեմք : Ըննապազ երթանք խաչին քովը . որ հոն մեղքին վատթարութեանը վրայով նոր գաղափարներ ստանամք , և որ ան սքանչելի տեսարանը մեր խիղճերը առաւել զիւրազգած ընէ , մեր Տէրը սպաննել տուող մեղքին դէմ :

2. Վրիստոսի խաչը յոյս կընծայէ ամենաշար մեղաւորներուն որ կապաշխարեն և կըհաւատան : Վանդի իր արժանաւորութիւնը սահման չունի : Թէ որ մէկը ըսէ . Ես այնպէս թշուառ մեղաւոր մըն եմ , որ ինծի ամենեկին յոյս չկայ . ես անոր կըհարցունեմ , «Թէ որ քու մեղքերդ հիմակուընէ քիչ ըլլային , անոր համար յոյս պիտի ունենայիր փրկուելու : Երեմն դուն ըստ մասին քու բուն արժանաւորութիւնովդ պիտի փրկուիս , որ աւետարանին նայելով բոլորովին աննար է . չե՞ս զիտեր որ աշխարհիս մէջ քիչ մեղք ունեցող մարդ չկայ : Վոլորը մեծ մեղաւոր են . և գուցէ շատերը որ բուն իրենց արդարութեան հանգերծովը ծածկուած՝ մարդոց հաճելի ու գեղեցիկ կերեւանն ու հպարտութեամբ լեցուած են , յայտնի շարագործներէն աւելի գարշելի են Եստուծոյ առջևը : Եւ որ , ամէն մարդիկ մեծ մեղաւոր են . բայց Տէր Հիսուս աս աշխարհս եկաւ մեծ մեղաւորները փրկելու : “Ինքը կարող է փրկելու բոլոր անոնք որ իրմով Եստուծոյ կուգան” : Եւր. է. 25 : Թէ որ աս աշխարհիս մէջը արդար

մարդիկ գտնուելու ըլլան, Վրիստոս անոնց հետ բան մը չունի. ինչու որ «Կնքը արդարները կանչելու չեկա. հապա մեղաւորները ապաշխարութեան» : Ըն «կորսուածները փնտրուելու ու փրկելու համար եկա» : Գուն ինքզինքդ կորուսեալ մեղաւոր մը կըսեպես . ինքը յատուկ քեզ գտնալու ու փրկելու համար եկա : Կը յուսահատի՞ս ասանկ մէկ մեծ մեղաւոր մը ըլլալուդ . մանաւանդ աւելի յուսահատութեան պատճառ պիտի ունենայիր թէ որ դուն բուն քու արգարութեանդ որ և իցէ աստիճանով յուսացած ըլլայիր : Գուն քու անձիդ մէջ յուսահատելու ամէն պատճառը ունիս, սակայն Վրիստոսի վրայ յոյս ունենալու ամէն իրաւունքը ունիս : Հիշեցէք մաքսաւորը, «հ, թէ որ դուք ալ ձեր ճշմարիտ թշուառութիւնը և անյուսութիւնը զգալով կարող ըլլայիք ան կարճ աղօթքը ըսել . «Մտուած ներէ ինձի մեղաւորիս», շուտով ձեր մեղաց բեռը պիտի իյնար ձեր կոնակէն : Կայեցէք աւազակին, որ Հիսուսի քովը խաչին վրայ կախուած էր . և որ մեղքի ու նախատանաց կեանք մը անցունելէն ետե, իր վերջին վայրկեաններուն՝ իր սիրտը հաւատքով Վրիստոսի վրայ հաստատեց, ու ընդունուեցաւ : Ընդ, ան թշուառ մարդը՝ ընկերութենէ դուրս ձգուած անձ մը՝ որ ամօթալից մահուան արգարապէս դատապարտուած էր, իր պինտ վերջին շունչով՝ ճշմարիտ հաւատքով միայն մէկ աղօթք մը մատուց Վրիստոսի, և քանի մը ժամէն ետքը արքայութեան մէջը անոր հետը եղաւ :

Վրիստոսի խաչը, սիրելիներս, հաւատացող մեղաւորին կատարեալ յոյս կուտայ, թէ և անիկայ բոլոր մեղաւորներուն մեծը ըլլայ : Սակայն ան՝ որ իր մեղքին բեռը չզգար, այլ իր անձը արդար կըսեպէ ոչինչ մխիթարութիւն կընծայէ անոր : Հոյս կայ հոգւով աղքատներուն՝ բայց ոչ հարուսաններուն . յոյս կայ արգարութեան համար անօթիին՝ բայց ոչ կուշտին . յոյս կայ խոնարհին՝ բայց ոչ հպարտին . յոյս կայ սուգ ընողներուն, բայց ոչ հոգ

չընողներուն ու անխորհուրդներուն . յոյս կայ անոնց համար որ բան մը չունին , բայց ոչ անոնց համար որ արդէն ինքզինքնին ամէն բան ունեցած կրսեպեն :

3. Վրիստոսի խաչը մեզ մեծապէս կը քաջալերէ Մատուծոյ նախախնամութեանը ապաւինիլ :

“Ան որ իր Արդւոյն չինայեց , հապա մեր ամէնուս համար մատնեց անիկայ . ալ ինչպէս անոր հետը ամէն բաները մեզի չպարզեւեր” : Թէ որ Մատուած մեծագոյնը բրաւ , անչուշտ փոքրագոյնն ալ պիտի ընէ . Թէ որ այնպէս հոգ տարաւ մեր վրայ , որ բուն իր Արդին աշխարհք խորկեց մեր փրկութեանը համար , մեզի նաև բաւական հոգ պիտի չտանի՞ հաց ու ջուր տալու : Մտաբար ինքը մեր զակըններուն ու բոլոր մեր երկրաւոր պիտոյքներուն հոգ պիտի չտանի՞ : Ինքը փորձութեան ու թշուառութեան ժամանակ մեզ պիտի չհոգայ՞ . մէկ խօսքով՝ ինչ բան կայ մեր աղէկութեանը համար , որ ինքը մեզի պիտի չընէ : Մեր ունեցած բաներուն ո՞րը կարող չենք իր ձեռքը ձգելու ապահով և համարձակ սրտով : “Մի վախնար ոչխարներու պղտիկ հօտ . ինչու որ ձեր հայրը ուզեց՝ որ ձեզի թագաւորութիւնը տայ” : Իր նախախնամութեանը վրայ չերկրայիմք . հապա կեանք , առողջութիւն , հանգստութիւն , բարեկամներ , ու ամէն բան իր ձեռքը յանձնենք իր իմաստութեանը՝ իր սիրոյն՝ ու իր հաւատարմութեանը բոլոր վստահութեամբ :

4. Վրիստոսի խաչը կատարեալ հանգարտութիւն մտաց կրմատուցանէ Վրիստոնեային :

Ինչո՞ւ համար այնչափ տկար քրիստոնեաներ միշտ տարակուսութեան մէջ են . անոր համար որ անոնք իրենց յոյսը ուրիշ հիմերու վրայ կը դնեն և ոչ միայն Վրիստոսի խաչին վրայ : Ո՛հ , Վրիստոնեային կենացը մէջը օրէնեալ վայրկեան մըն է ան երբոր ինքը ամէն բան կը ձգէ Վրիստոսի համար : Վրանցի ուրիշ ինչ բանի որ վստահի , շուտով իր յոյսը տրամութեան պիտի դառնայ , և իր լոյսը

խաւարի, բայց Վրիստոսի վստահելով իր միտքը կատարելապէս հանդարտ պիտի ըլլայ : Այսին զինքն Մատուած է որ կարդարացունէ հաւատացեալ մեղաւորները, ուրեմն ան ո՞վ է որ Վրիստոս Յիսուսով եղողները կը դատապարտէ : Ընոնց դատապարտութիւն չկայ, անոնց որ մարմինին պէս չեն քաշեր, հապա հոգիին պէս, և օրինակներն մէջը մէկ զօրութիւն մը չկայ որ անոնք Վրիստոսի սերէն ըաժեն : Ընոնց փրկութիւնը՝ իբր թէ արդէն երկնային աշխարհին մէջը եղածի պէս հաստատ է : Իսկ նայեցէք, անոնք՝ որոնց վրայօք ևս կը խօսուիմ, «մարմինին պէս չեն քաշեր, հապա հոգիին պէս» : Թէ որ մէկ մարդ մը Վրիստոսի կապաւինի, ու տակաւին մեղքը կը սիրէ ու կը գործածէ, ան յայտնի կը դուրսնէ որ ինքը Յիսուս Վրիստոսով եղող մէկը չէ. ու անոր համար դատապարտութենէ ազատ չէ : Իսկ թէ որ ընդհակառակը, իր մեղքերը հանապազ իրեն բեռ եղած են, թէ և լեռներու պէս մեծ ու ծանր ըլլան, հաւատքով կրնայ զանոնք բոլորը Վրիստոսի վրայ ձգել, և այսպէս լեցուիլ անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով : Այլ հիանալի խաչ Վրիստոսի, որուն առջևը կը սորվիմք մեր սաստիկ հիւանդութիւնը և մեր զօրաւոր դեղը, որուն առջևը կը տեսնենք մեր մեղացը գարշելի վատթարութիւնը, և մեզի թողութիւն տալու կատարեալ պատրաստութիւնը :

Տէրը շնորհէ, որ ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՅ ներգործութիւնը ամէն մէկերնիս իմանամք երջանիկ փորձառութեամբ . Տէրը շնորհէ, որ երբ մահուան խաւարը գոցէ մեր աչքերը, և անոր լուսութիւնը մեր շրթունքները, անասներ մեր ցնծալից հոգիները յաղթող հանդիսանան յաւիտենական կենաց կատարեալ յուսով խաչեալ Արդւոյն Ըստուծոյ անհուն արժանաւորութիւնովը : Ար Ընոր և շօրը և շօգւոյն Արբոյ վայելէ փառք յաւիտեանս . Ըմէն :

## Յ Ո Յ Ս Մ Ե Ր

## Ի Ի Ե Չ Ե Ե Լ Ն Ի Ր Ի Ս Տ Ո Ս

Խաչեալ Փրկիչ իմ Վրիստոս  
 Որ սիրող ես իմ հոգւոյս ,  
 Եւ քեզ միայն պաղատիմ  
 Ողորմէ ինձ եղկելոյս .  
 Թող ան ջուրն ու արիւնն  
 Որ սուրբ կողէդ հոսած է ,  
 Լուա հոգւոյս մեղքերը  
 Եւ մաքրէ զիս ու փրկէ :

Լէքէս վազած արցունքներ  
 Թէ և ըլլայ առուի պէս ,  
 Եւ իմ սրտիս նախանձը  
 Թէ և վառի սաստկապէս .  
 Իհ չեն կրնար սրբել զիս  
 Իմ մեղքերէս և մաքրել ,  
 Եւ յղ դուն , Փրկիչ , դուն միայն  
 Կրնաս քաւել և սրբել :

Երբ սպառի իմ շունչըս  
 Երբ իմ աչքերըս գոցուի ,  
 Ու ան երկիրը մտնեմ  
 Որ անձանօթ է ինձի .  
 Խաչեալ Փրկիչ իմ Վրիստոս  
 Երբոր ես գամ առջևդ ,  
 Եւ որչէ ինձի կաղաչեմ  
 Եւ պաստանիլ քու գիրկըդ :



## ՔԱՐՈՁ Ե

### ԱՒԱԶԱԿԸ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՁԻՉ ԵՂԱԾ

Սասն զի անոր շնորհքովք փրկուած էք դուք հաւատարով . և աս չէ թէ  
ձեզմէ է, այլ Մատուծոյ պարգևն է . չէ թէ գործքերէն որ մէկը շարժի :  
Իգիես . ք . 8 , 9 :

ՄՍՏՈՒԾՈՅ շնորհացը քարոզիչներուն մէջ այնպիսի մէկը  
կայ , որ թէպէտ խիստ շատ կըխոնարհեցընէ զիս , բայց  
միանգամայն կըբարձրացընէ , ու անպատմելի միսիթարու-  
թեամբ կը լցունէ իմ սիրտս : Օջարմանալին ան է որ՝ ես  
չեմ տեսներ աս անձին վրայ մէկ կատարելութիւն մը որ  
զիս իրեն ձգէ . ասիկայ ոչ գիտութիւն ունի և ոչ պերճա-  
խօսութիւն , ոչ մեծութիւն և ոչ համբաւ , որ զիս հրա-  
պուրէ կամ սիրտս գրաւէ : Մյլ ընդ հակառակը՝ գարշելի  
վիճակի մը մէջ կըզգանուի . իր խօսելու ոճը սովորական է ,  
և իր անունը արդարութեամբ վստահամբաւ . մանաւանդ  
թէ ան նոյն տեղը՝ ուսկից որ իմ հետս կըխօսի , աշխարհիս  
մէջի ամենէն անարգ տեղն է : Իայց ի՞նչ զգացումներ և  
ի՞նչ խօսքեր են անոնք որ աս նշաւակութեան ծոցէն դուրս  
կեղեն , ու անիրաւութեան և զարհուրանաց տեսարանը՝  
սրտաշարժ պարագայի մը կըփոխեն ինծի : Եւրեմն , սի-

բեղին ունկնդիրք մտիկ ըրէք ինձի, և կըտեսնաք թէ ինչպէս ձեր սիրտն ալ ան խօսքերը լսելուն՝ իմ սրտիս պէս պիտի շարժի:

Ըն բլուրներէն մէկուն զագաթը՝ ուր որ օրինաց սուրը սովոր է օրինազանցները պատժելու, երեք կախաղան կանգներ էին, որոնց վրայ երեք մերկանդամ մարդիկ քանի մը բռնեռներով գամեցին, որ այնպէս կախուած մնան, մինչև որ մահը գայ ու իրենց դառն և երկարատև հոգեվարութիւնը վերջացընէ: Բայց սա երեք խաչնալներուն մէկը՝ ԵՄՄԱՆՈՒԷԼՆ էր. այո՛՝ ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ կոչուածը. ասիկայ էր Հօր Ըստուծոյ միածին Արդին, Օրհնեալ Հիսուսը: Իսկ մէկալները՝ երկու աւազակներ էին:

Եւ ահա սա աւազակներէն մէկը՝ իր բոլոր ոճրագործութիւնները միտք բերելով, և անոնց ծանրութիւնը ազէկ մը զգալով, դէպի Հիսուս դարձուց իր հայեցուածը որ արդէն խիստ տկարացեր էր տանջանքէն, և իր մտօքը խոկալով սա Պատարագին վրայ, որուն գլուխը արինաշաղախ փուշերով պսակուեր էր, ըսաւ անոր նուազեալ ձայնիւ. «Տէ՛ր, զիս միտքդ բեր, երբոր քու թագաւորութեամբդ կուգաս»: Ըս է ահա ան խօսքը որ իմ սիրտս սաստիկ կը շարժէ, ասիկայ է ան ազգու քարոզը որ զիս կը շփոթէ և միանգամայն կը մխիթարէ, որ իմ հոգիս գետինը կը զարնէ և վեր կը վերցունէ, մէկ կողմէն ցուցընելով անոր՝ յանցանքին և թշուառութեան չափազանցութիւնը, և միւս կողմէն՝ գթութեան և երջանկութեան չափազանցութիւնը: Ըրգարև ասիկայ է ան քարոզիչը, ան շնորհաց պատգամաբերը, որ ուրիշ շատերէն աւելի փրկութեան ճամբան կը ցուցընէ ինձի: Արովհետև ասիկայ աւազակ մըն է, ուրեմն մարդկային առաքինութիւններուն վրայօք պիտի չխօսի ինձի հետ: Բայց սակայն նաև խոնարհ մեղաւոր մըն է զզջացեալ, որ իր մեղքերուն վրայ արցունք կը թափէ. ուրեմն զզջումի վրայօք պիտի խօսի ինձի հետ, մա-

Նաւանդ թէ անանկ մեղաւոր մըն է ան որ հաւատոյ մէջ կը գտնուի . ուրեմն շնորհքը պիտի քարոզէ . և ըստ որում կը լսեմ որ Վրբիստոս կը պատասխանէ անոր՝ թէ «Վստօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս» . բաւական է իմ հոգիս , որովհետեւ աս քարոզովը՝ իմ մեղաւոր ըլլալս աղէկ կը հասկընամ , դէպի շնորհքը կը դառնամ , ու հիմայ ալ անոր խոստումը կը լսեմ :

Վստ ուրեմն աս չարագործիս բերնէն՝ (որ իր մեղքերուն համար մեռնելու վրայ է , բայց հաւատոյ մէջ կը մեռնի՝ իր թողութիւնը առած ,) կուզեմ լսել Պօղոս առաքեալին աս խօսքերուն մեկնութիւնը . «Վ ասն զի անոր շնորհքովը փրկուած էք դուք հաւատքով , և աս չէ թէ ձեզմէ է , այլ Մատուծոյ պարգևն է . չէ թէ գործքերէն որ մէկը չպարծի» : Մտ ինքը՝ ան քրիստոնեայ եղած աւազակը հիմա պիտի ըսէ ինձի , թէ ինչ է մեղքը և ինչ է անոր վարձքը . բայց պիտի ըսէ նաև թէ ինչ է շնորհքը , և ինչ է անոր փառքը :

Վ . «Վ ասն զի անոր շնորհքովը փրկուած էք դուք» : Խաղաղութեան և յուսոյ խօսք մըն է աս , որով իմ սիրտս առ Մատուած կը դառնայ : Բայց ի՞նչ կընչանակէ արդեօք աս «վասն զի» բառը՝ որ խօսքին սկիզբը դրուեր է : Ի՞նչ կընչանակէ աս բառը՝ որ կարծես թէ սյսպիսի միսթաբութիւն տուող յայտարարութիւն մը հաստատելու , մանաւանդ թէ պաշտպանելու պաշտօն մը ունի : Վրդարեւ , որչափ որ աս յայտարարութիւնը ըստ ինքեան բարերար և սիրելի է , այնչափ ալ պէտս ունի որ ջատագովութիւն և պաշտպանութիւն ըլլայ իրեն , ան նոյն մեղաւորներուն հակառակութեանը դէմ , որոնց որ աւետարանը աս խօսքը կուղղէ : Վ ասն զի միայն անոնց սրտերուն հետ պատե-  
րազմելով և Մատուծոյ կարողութեամբը յաղթելով , կը հասնի անոնց աս խօսքը ու ընդունելի կը ըլլայ . վասն զի ոչինչ առաւել անհնարին՝ առաւել ատելի է մարդկանց :

քան որչափ շնորհքով փրկուիլը . և ճիշդ ասիկայ է ապստամբութիւնը և կործանումը մարդկային սերունդին, և իր սաստիկներհակութիւնը՝ Մարտին և անոր սիրոյն դէմ:

Լազարը՝ որուն մենք ականջ կը դնեմք, ինքը պիտի սորվեցընէ մեզի աս բանս, որովհետեւ պէտք է իրեն որ աս ճշմարտութեանը համար ալ մարտնչի, որուն հակառակ կեցողը իր առջին կըտեսնէ: Եւ ասիկայ է զարմանալին, որ միւս չարագործն է աս հակառակորդը: Եւ յո՞ գատապարտեալ մեղաւոր մըն է, որ իր տանջանքին և իր յուսահատութեանը մէջ, իր վերջին ուժը վրան կը ժողուէ Լստուծոյ Որդին նախատելու, և հայհոյելու ան անմեղ Ղառը՝ որ իր պատուական արիւնը թափեց երկրի վրայ. «Գուն Քրիստոսը չե՞ս, ըսաւ անոր կշտամբելով, ազատէ քու անձդ և մեզ ալ»: Գ. 1. իբ. 39: Սոսկալի՛ խնդիր. գարշելի՛ ապստամբութիւն որ լսողին սիրտը կը ճմլէ, և կըցուցընէ թէ ինչ չափազանց խստութեան կը հասնի մարդս, երբ որ Լստուած կը հեռանայ իրմէ: «Գուն Լստուծմէ չե՞ս վախնար», կը պոռայ անոր երեսին իր ընկերը բարկութեամբ լցուած, և չե՞ս տեսներ թէ ՎՎ է ան որ այդպէս չարութեամբ կը նախատես: Որպէս թէ ըսել կուզէր անոր. «Շե՞ս խոնարհ իր գուն Լստուծոյ բազուկին տակը որ մեր մեղքերուն համար կը զարնէ մեզի, և յաւիտենականութեան եզերքը հասած ատենդ ալ չես կրնար զղջումի գալ ու նայիլ դէպի ան թողութեանը, որ Հաւիտենականին գթութիւնը կը շնորհէ մեզի իր Որդուովը, աս օրհնեալ Սեփային ձեռքը, որ ահա աչքիդ առջին կըտեսնես»:

Ո՛հ, ի՞նչ զարմանալի վէճ է աս, ի՞նչ փաստաբանութիւն և որպիսի՞ փաստաբան գուն քեզի կը նարես, Տէ՛ր, ու ի՞նչ վայրկեանի մէջ կուգաս քու շնորհացդ գատը վճռելու:

Բայց ոչ միայն աս ցաւագին ժամուս ստիպուեցաւ ընել աս բանը, այլ ամէն ժամանակ և ամէն տեղ կընէ:

երեկ, այսօր, վաղը և միշտ պէտք է որ իր արարածներուն հպարտութեանը և անհաւատարմութեանը դէմ կենայ ու վիճարանի անոնց հետ: Մէջս աս սոյն վայրկեանիս մէջ՝ աս տեղս ձեր սրտին մէջն ալ, ո՛վ որդիք մարդկան, խեղճ և ողորմելի մեղաւորներ, նոյն բանը կընէ, և մեր բնաբանին առջի խօսքերը ըսելով կըձանուցանէ ձեզի, “որ դուք ալ բուն բարկութեան որդիք էիք, ինչպէս ուրիշները, ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ մեռած”, և թէ պարտիք իր ըրած պատարագին ապաւինիլ. “մասն զի շնորհքով” փրկուած է մարդը: Մ.րդ՝ կըհաւատա՞ք իրեն, ինչպէս որ խոնարհ աւաղակը հաւատաց. թէ ապստամբ աւաղակին պէս մէկ զի կըձգէք դուք աս շնորհքը, և ձեր սիրտը Մատուծոյ սիրոյն դէմ խտտացնելով կըհակառակիք իր շնորհացը:

Վանդի, վերջապէս դուք ալ անշուշտ մէկին կամ մէկային վիճակը կըգտնուիք: Մհաւասիկ Հիսուս մեր աչքին առջևը բւեռեալ է խաչին վրայ ու իբրև զոհ կըմեռնի. իսկ դուք՝ կամ աս զգջացող մարդուն կընմանիք, որ կըսէ անոր. “Ֆրկէ զիս քու շնորհքովդ”, կամ մէկային պէս կանարգէք՝ թէ փրկիչը և թէ իր սէրը: Արևմն թող ամէն մէկերնիդ մտածէ ու իրեն համար ընտրութիւն մը ընէ ինչպէս որ կըկամի:

Իայց սակայն դուցէ կաղաղակէք ըսելով, միթէ աս աւաղակներուն կընմանի՞ք որ հարկ ըլլայ մեզի անոնց մէկուն հետեիլ կամ մէկային վիճակէն երկնշիլ: Մ.դէկ, թէ որ այսպէս կըսէք նէ թող ինքը ան զգջացող աւաղակը պատասխանէ ձեզի: Մտիկ ըրէք թէ ինչ կըզրուցէ:

Վասն “Մտ երևութիւն մի՛ դատէք, կըսէ, այլ ինչպէս որ ճշմարտութիւնը կըպահանջէ: Ա՛սան որոյ քննեցէք ձեր սիրտը, տեսէք թէ ան նոյն գործքերը՝ որոնց չափազանցութեանը համար դուք զիս կըզատապարտէք նէ, ձեր սրտին մէջն ալ չն՞ գտնուիք: Իրաւ ես մեղքերով բեռնաւորած եմ. քանզի անիրաւ մարդ մըն էի, յափշտակող

և մարդասպան , ու նաև աս մեղքերը յայտնապէս գործեցի մարդկանց առջևը : Սակայն չէ որ Մատուած մարդու սիրտը կրտսնէ . և ըստ որում ինքը կըսէ , որ ամէն չար ցանկութիւն , ամէն ծածուկ անհաւատարմութիւն , նախանձ , վրէժխնդրութիւն և ատելութիւն՝ գողութեան և մարդասպանութեան հաւասար են իր առջևը . ի՞նչ պիտի խորհիք դուք ձեր գործքերուն վրայօք , և որ մեղքէն ազատ պիտի համարիք զձեզ , որովհետև կըսէ Մատուած , թէ ամէն չար բաները և ամէն մեղքերը մարդուն սրտէն կելլեն” :

Նաև , աս ալ կըսէ ձեզի աս քարոզիչը . “Թէ որ զիս իբրև աւազակ դատեցին մարդիկ , թէ որ անոնց օրինօքը աս կախազանը ելայ , աւազ , իբրև մեղաւոր Մատուծոյ առջին դատապարտեցայ , և թէ օրէնքները և մարդկային ատեանները զիս դատեւէն շատ առաջ , այսպէս մեղաւոր էի : Մ.յո իբրև մեղաւոր կորսուած էի Մատուծոյ առջևը , երբ որ աշխարհ դեռ ազէկ մարդ կանուանէր զիս , և գուցէ իմ առաքինութիւններուս վրայօք ալ կըխօսէր : Մնատներ արդար մարդ մը կըկարծէիք զիս , բայց ես չարագործ էի և մեղաւոր : Օնանազանութիւն մը ըրէք ուրեմն , իմ յանցանքներուս մէջ որ զիս աս կախազանը հանեցին , և իմ մեղքերուս մէջ որ կորսնցուցեր էին զիս Մատուծոյ առջևը , երբ որ մարդիկ բնաւ չէին իմացեր զանոնք . ու ձեր մեղքերը մտքերնիդ բերելով՝ քան թէ իմ յանցանքներս , մտածեցէք նաև թէ ինչպէս կըդատէ Մատուած զանոնք . մասն որոյ զոջացէք ձեր մեղքերուն վրայ , ինչպէս որ ես իմ մեղքերուս վրայ կընեմ , և դուք ալ դիմեցէք ան շունորհքին՝ որ ողորմելի մեղաւորները կըգանեն աս Տէր Հիսուսին վրայ , որ իմ քովս խաչուած կրտսնէք” :

Մնչուշտ այսպէս պիտի խօսէր ձեզի աս խոնարհեալ աւազակը . միթէ ճշմարտութեամբ և խոհեմութեամբ ըսած չէ՞ր ըլլար : Վանդի , որովհետև ճշմարիտ է , կըսէ սուրբ Վիլբըլ՝ թէ “ով որ մեղք կըգործէ , անիկայ օրէնքի դէմ ալ կընէ” . թէ “մէկ բանով մը ծոողը , բոլոր օրէնք-

ներուն գէտ գործող կը լայ”։ Թէ “անիծեալ բայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրուածներուն ամէնուն մէջը չկենար բոլորը կատարելու”։ և թէ մինչև անգամ գէշ խօսք մը ըսողները Մատուցող արքայութիւնը չեն ժառանգեր . ( ԹՊՆՅԷ , Պ . 4 : ԹՊՆՅԷ . Պ . 10 : ՄտՊՆՅԷ . Պ . 23 : ՎտՊՆՅԷ . Պ . 10 : ԽԷՊՆՅԷ . ԺՊՆՅԷ . 14 : ԹՊՆՅԷ . Պ . 9 , 10 : ԹՊՆՅԷ . Պ . 17 : ԹՊՆՅԷ . ՊՆՅԷ . 27 ) : նմանապէս ճշմարիտ է որ ամէն մեղաւորին , այսինքն՝ իւրաքանչիւր մահկանացուն , մահը ու անէծքն է իր մեղքին վարձքը , որովհետև Մատուցող դատաստանը՝ մարդիկներէն բնաւ աչտուծութիւն չունի :

Ըստ մի փախչիչ ուրեմն ան դատապարտութիւնէն որ Մատուցող կողմանէ խաչուած աւաղակին վրայ կը ծանրանայ , որպէս թէ անիկայ ձեզի չպատշաճիր : Ա՞յլ մարդիկ , որ աշխարհի առջև արդար ու բարի վարք ունեցող սեպուած էք , մարդկային օրէնքին վրէժխնդրութիւնը ու տանջանքին վատաճամբուութիւնն է որ ձեզի չպատշաճիր : Ի՞սպիսակ կը կրտսիք , և զեննագործութեան համար չէ խօսքը , այլ Մատուցող առջև գործուած մեղքին համար . և ըստ որում ինքզինքնիդ սաստիկ խաբել մըն է , կը սեպուած ընդհանրապէս , ( ԹՊՆՅԷ . ԹՊՆՅԷ . 8 . ) և ճշմարտութիւնը եղծանել թէ որ ըսէք թէ մեղք մը չունիք , յայտնի կը տեսնուի սուրբ Վրքէն ու ձեր խղճմանքէն ալ , որ դուք կորսուած էք . չէ թէ՛ վերստին կը սեպու , չարագործներու պէս , այլ անշուշտ մեղաւորներու պէս :

Ըրդ ո՞չ կրնայ ձեզմէ ըսել , թէ մեղքը ու եղենագործութիւնը մի և նոյն վախճան չունենան : Ի՞նչ որ անիրաւութիւնը կը դատապարտէ Մատուած՝ ո՞չ կրնայ ըսել որ աս դատապարտութիւնը պիտի չկատարուի , վասն զի ան նոյն անիրաւութիւնը իր շափաղանցութեանը չէ հասեր : Ի՞նչ որ ըսուեցաւ թէ անիծեալ է մեղքին բուն աղբիւրը , և թէ աս մահուան մէկ կաթիլ անգամ երբէք կենաց բռնակարանը պիտի չմտնէ , սրտերնիդ կը հանդարտի , կրնա՞ք ըսել թէ վախճանու բան մը չունիք , վասն զի աս զազե

ովհիանոսին մէջ ընկղմած չէք: Ի՞նչ յիմարութիւն կը լլար արդեօք այնպիսի մասձութիւնը: Արպէս թէ տղեկը՝ որ վտակի մը մէջ իյնալով կը կորնչի՝ կիսով չափ խղճուած համարուէր, քանզի վտակը ինկեր է և ոչ թէ գետի մէջ. կամ թէ պարտքը՝ որ սնանկացեալ մարդը բանտը դնել կուտայ, իր կործանմանը պատճառ եղած չըլլայ, քանզի կրնար անիկայ աւելի մեծ գումարներ պարտք ընելու. և թէ ան որ թունաւոր ըմպելիք մը խմեր է, պիտի չմեռնի, քանզի բոլոր բաժակը չէ դատարկեր:

Եւ պա ուրեմն մէկ դի ձգեցէք ատ իմաստակութիւնները, և հաւատացէք ինչ որ Մտուած կըսէ ձեզի, ո՞վ պարկեշտ և բարեբարոյ մարդիկ աշխարհի, որ ժամանակիս յարգը և պատիւը շրջապատեր է ձեզ: Իրաւ մարդիկներուն առջին աւազակէ մը տարբեր էք դուք, և անոր յանցանքները չունիք, բայց Մտուծոյ առջևը ասանկ չէ. քանզի ձեր սիրտը ամենեկին տարբերութիւն մը չունի անոր սրտէն. և որովհետև անիկայ իր մեղքերուն համար պիտի դատապարտուէր: Տաւիտնականին օրինացը առջևը, չէ թէ մինակ իր եղեռնագործութիւններուն համար, ասանկալ հաւատացէք որ ձեր մեղքերը՝ (թէ և ոճրագործութիւններ չըլլան) պիտի դատապարտեն զձեզ. վասն որոյ դուք ալ անոր պէս փրկուելու կարօտութիւն ունիք:

Ի. Եւ այց աս տեղս՝ մարդկային սրտէն մէկ նոր և աւելի սաստիկ բողոք մը կելլէ Մտուծոյ դէմ: Թէ որ մարդս շատ դժուարութիւն կը ցուցնէ մեղաւոր համարելու զինքը և դատապարտեալ տեսնելու, որքան աւելի կամակորութիւն կընէ, ու բարկութեամբ և սրտմտութեամբ լցուած կուրանայ թէ իրմով չկրնար փրկուիլ աս դատապարտութենէն, վասն որոյ երեսի վրայ անօգնական մնացեր է:

Եւ անօգնական եմ, կըսէ. ինչո՞ւ համար: Թէ որ Մտուած պիտի թուէ ու պատժէ իմ բնութենէս անբաժանելի եղած քանի մը տկարութիւնները, և ան պակասու-



Թիւնները՝ որոնցմէ հրաժարիլը իմ ձեռքս չէ, քանի մը մոլորութիւններ կամ սխալմունքներ որոնք ես մտացեր եմ, կամ 'ի վերջոյ իր օրէնքին գէժ իմ ըրած յատուկ ան-  
 նազանդութիւններս, գոնէ իր արդարութիւնը՝ թէ որ բարութիւնը չէ նէ, բանի տեղ պիտի չդնէ՞ իմ ուղղու-  
 թիւնս, իմ առաքինութիւններս ու իմ բարի գործքերս .  
 և թէ որ Մատուածային կշռոյն մէկ թաթին մէջ հարկ է որ իմ պակասութիւններս և օրինազանցութիւններս գնէ, արդեօք միւս թաթին մէջն ալ իմ հնազանդութիւններս պիտի չդնէ՞. միթէ բարին արժէք մը չունի՞ այսպիսի դատարի մը առջևը :

Մտիկայ է ահա ան բողոքը և պատասխանը, որ աշխարհիս սկիզբէն 'ի վեր ամէն մարդու սրտէն կելլէ, Մտուծոյ տուած փրկութիւնը՝ իր շնորհացը ուխտին՝ և ան փրկչին գէժ որ մեղաւոր մարդուն խոստացաւ չճախտենականը երբ որ ըսաւ անոր . «Անօրը զաւակը օձին գլուխը պիտի ջախջախէ» : Մն նոյն տառնէն աս պատասխանը ելլելով ամէն բերնէն, ամէն գարու մէջ՝ Մտուած իր Մետարանին Մանր լսելի ընելէն ետքն ալ, կրկնուեցաւ : Լու գեռ նոյն բողոքը ու նոյն տրտունջը՝ հիմայ ալ ամէն կողմէն կըլսուի և ամէնուն բերնէն կելլէ, երբ որ Մետարանին քարոզչները կըխօսին Մտուծոյ անսահման սիրոյն և ձրի թողութեանը վրայօք որ էջիսուս Վրիստոսով կուտայ մեզի :

Ոչ, ձրի չէ, կազազակեն ամէն մարդիկ մեծ եռանդով, թէ սորվըցնողները և թէ սորվողները : Չէ, մեր թողութիւնը շնորհք մը պիտի չըլլայ : Ոչ, գթութեան պարգևի մը կարօտ պիտի չըլլամք, մեր ձեռքն է աս թողութիւնը շահիլ, և մեր բարի գործքերուն կրկերաբերի անոր արժանի ըլլալը :

Եսայ կազալեմ ըսէք ինծի, ո՞վ մեղաւորներ . աս երկուքին ո՞րը պիտի յաղթանակէ, Մտուած՝ որ բացարձակապէս փրկութիւն տալ կրկամի, թէ մարդը՝ որ բացարձակապէս փրկութեան արժանի ըլլալ կուզէ : Վանզի աս

երկու բանը՝ ինչպէս Մաքեալը կրսէ, մեկզմեկու արգելք են. վասն զի՝ «Թէ որ շնորհքով՝ անանկ է նէ ալ գործքերէն չէ. հասպա թէ չէ՝ շնորհքը ալ շնորհք չըլար»։ Առաջին . ժա . 6 : Մտոնցմէ ո՞րը , վերստին կը հարցունեմ , արդեօք զօրաւոր պիտի ըլլայ : Մտուած՝ որ շնորհք կուտայ , եթէ դուն՝ ո՞վ պարկեշտ և առաքինի մարդ , որ քու թողութեանդ արժանի ըլլալ կուզես :

Թող ասիկայ ալ խաչին վրայի աւազակը վճռէ : Ուրեմն նորէն ականջ դնեմք անոր և տեսնեմք թէ ինչ կրսէ : «Ո՞ր են իմ առաքինութիւններս , և իմ բարի գործքերս , ո՞ր է իմ արժանաւորութիւնս կրսէ ան : Ի՞նչ եմ ես . ո՞չ ապաքէն Մտուծոյ և մարդիկներուն առջին գարշելի մեղաւոր մը : Միթէ բոլոր պակասութիւնները՝ բոլոր օրիւղանցութիւնները և անիրաւութիւնները իմ հոգիիս վրան հաւաքուած չե՞ն . չէ՞ որ արդարապէս է , որ ես բովանդակ օրէնքին դեմ մեղանչելով՝ արդար վրէժխնդրութեան մը առարկայ եղայ : Բայց սակայն որչափ որ անարժանութիւն , որչափ որ յանցանք ունէի նէ իմ վրաս , ու եղևոնագործութեան ալիքները ընկզմեր էին զիս , միթէ Մտուծոյ թողութիւնը ինծի չհասան : Ես չեմ արդեօք ան մեծ յանցաւորը և գարշելի ոճիրներուն անօթը , որ աս թողութեան պարզեցումը հարստացայ , որ ժառանգեցի զանիկայ , և կը պարծիմ անով : Ո՞հ , ո՞վ պիտի ըսէ հիմա որ այսպիսի թողութիւնը շնորհք մը չէ : Ո՞ր թեթևամիտ մարդը՝ կամ ո՞ր խստասիրտ և Մտուծոյ առջին ամբարտաւանը , պիտի ըսէ թէ փրկութիւնը որ է՝ ի՞նչ Գառն Մտուծոյ բոլորովին իրը չէ , այլ մեղաւոր և զազիր մարդը կարող է ինք իրմէն ճարել զանիկայ , կամ թէ անոր արժանաւորութիւն մը ունենալ» :

Մհաւասիկ աս շնորհաց քարոզիչին ձեզի ըսելիքը . ի՞նչ պիտի պատասխանեք անոր : Արնա՞ք ըսել իրեն թէ արժանաւորութիւն մը ունէր , և ո՞րն է անիկայ . մարդիկներուն առջևը արդեօք : Միթէ վարժուած միտք մը ունէր

ան, իմաստուն էր, կամ գոնէ անուանի մարդ մը : Աստուծոյ առջևը ի՞նչ արժանաւորութիւն ունէր. կարծէ՞ք արդեօք որ դադանի յօժարութիւն մը ունեցաւ, սրտի շարժում կամ դիտարութիւն մը որ Աստուծոյ աչքին առջևը բարի գործքի տեղ բռնէ, և հետեւաբար՝ անոր առած շնորհքը ամբողջ շնորհք մը չէր, այլ կերպով մը իր թողութեանը արժանաւոր եղաւ :

Աղէկ. բայց թէ որ աս ապաստանարանը կրդիմէք, և “աս խորագիտութիւններուն, գիտնաք որ գրուած է, թէ Աստուած անոնց մէջն ալ կրբռնէ ձեզ”, և հուսկ ուրեմն կը ստիպուիք կամ յայտնապէս ուրանալ Յիսուս Վրիստոսի Աւետարանը, կամ ձեր հպարտութիւնը նուաճել և հաւանութիւն տալ Տէրոջը սիրովը միայն փրկուելու :

Աս ըսածիս ուրիշ ապացոյց հարկաւոր չէ ինձի, բայց միայն քարոզիս բնաբանէն առաջ գրուած խօսքերը և իմ բնաբանս :

“Այլ դուք որ ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ մեռած էիք, ու բուն բարկութեան որդիք էիք ինչպէս ուրիշները. բայց Աստուած որ մեծ է ողորմութեամբ՝ իր առատ սիրոյն համար՝ որով մեզ սիրեց, կենդանացուց մեզ Վրիստոսով, որ գալու դարերուն մէջ ցուցնէ իր շնորհքին անբաւ մեծութիւնը՝ մեր վրայ ըրած անուշութեամբը Վրիստոս Յիսուսով : Այսն զի անոր շնորհքովը փրկուած էք դուք հաւատարով. և աս չէ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգևն է. չէ թէ գործքերէն, որ մէկը չպարծի” :

Արհարցունեմ ձեզի, ասիկայ բաւական չէ՞ արդեօք աս դատը վերջացնելու, առանց հաղարէն աւելի ուրիշ վեկայութիւններ բերելու սուրբ Վրքէն որ աս սոյն բանը կը հաստատեն : Միթէ բացայայտ չէ՞ ըստ բաւականին, ինչ որ Աստուծոյ շողին կըսէ ձեզի հոս, թէ նախ՝ “բուն բարկութեան որդիք էիք”, և թէ՝ “ձեր մեղքերովը մեռաք”, այսինքն հոգևորապէս մեռաք : Արդեօք աս խօսքերը իրենց ըսածը չե՞ն նշանակեր. կամ թէ կա՞ն ուրիշ բառեր նոյն բանը բացատրելու : Արդեօք ուրիշ կերպ ըսել պէ՞տք է, երբ որ կուզէ մէկը ծանուցանել թէ մէկ մարդ մը բնակա-

Տիմա պիտի սորվեցընէ մեզի : Մարդուս բովանդակ կործանումը և փրկութիւնը շնորհք մը ըլլալը մեզի ցուցընելէն ետեւ , ծանուցանելու է նաև՝ թէ ինչպէս մէկ հոգի մը աս երջանկութեանս կը հասնի : Ինչպէս որ և իցէ մեղաւոր կրնայ իրեն համար ալ աս խոստումը ընդունիլ . « Իրաւ կըսեմ , դուն դրախտին մէջը պիտի ըլլաս » : Արեմն մտիկ ընեմք անոր երրորդ անգամ . մանաւանդ թէ մտիկ ընեմք անկից օրինակ առնելու համար :

« Տէր , ըսաւ դէպի խաչեալ Վրկչին դառնալով , զիս միտքդ բեր , երբ որ քու թագաւորութեամբդ կուգաս » : Այլ ահա աս մէկ երկու խօսքը ըսելով՝ բոլոր աշխարհի իմացուց թէ ինչպէս մէկ հոգի մը թէև ամենէն մեղաւորը ըլլայ , իր ամէն մեղքերուն թողութիւնը կառնէ , և միանգամայն երկնային փառքին և երջանկութեանը վրայով ապահով կը ըլլայ :

Արանի՛ թէ աս ծանուցումը հաւատացուեր , և ամէն մարդ միտ դներ ու հնազանդեր անոր : Արանի՛ թէ իւրաքանչիւր ոք ձեզմէ աս խօսքին զօրութիւնը հասկընար , և ան նոյն սրտովը՝ որ կախաղանի վրայ զղջումի եկող մեղաւոր մը ըսաւ , դուք ալ կրկնէիք :

« Տէր , ըսաւ աւազակը , ուշադրութեամբ նայելով « Արդւոյն մարդոյ , ցաւոց մարդոյն » : « Տէր » , կըսէ ան՝ խաչուածի մը , որ ատեանի մը մէջ դատուեր էր , որ դահիճներուն ձեռքը ինկեր էր , և հիմայ տանջանքներուն մէջ մեռնելու վրայ է : Ասկի՛ց գիտէ թէ Տէրն է անիկայ , որ կը պատարագի , որ զենուած Վառն է : Ա՛յլ ըսաւ անոր . ինք իրմէ՛ն հասկըցաւ արդեօք աս բանը . իր յատուկ զգացումը իմացուց անոր թէ ո՛վ է աս : Յիսուս՝ Ազովրեցին , որ իր վճռոյն գիրը՝ « Թագաւոր հրէից » կանուանէ : Ա՛յ , ո՛չ . ասիկայ մարդու գործ չէ . « մարմինը և արիւնը աս բաները չեն յայտներ : Ասիկայ է սիրոյ մեծ խորհուրդը » . ( Մատթ . իղ . 17 : ) մշտնջենաւոր Հայրը իրեն պահած է ասոր յայտնելը , և իր կարող զօրութեանը յաջողութեամբը հաւատացեալին կը յայտնէ՛ : Ա. Գե . ան . 17 , 20 :

Հիմն պիտի սորվըցընէ մեզի : Մարդուս բովանդակ կործանումը և փրկութիւնը շնորհք մը ըլլալը մեզի ցուցնելէն ետև , ծանուցանելու է նաև՝ թէ ինչպէս մէկ հոգի մը աս երջանկութեանս կը հասնի : Ի՞նչպէս որ և իցէ մեղաւոր՝ կրնայ իրեն համար ալ աս խոստումը ընդունիլ . « Իրաւ կրսեմ , դուն դրախտին մէջ պիտի ըլլաս » : Իւրեմն մտիկ ընեմք անոր երրորդ անգամ . մանաւանդ թէ մտիկ ընեմք անկից օրինակ առնելու համար :

« Տէր , ըսաւ դէպի խաչեալ Փրկչին դառնալով , զիս միտքդ բեր , երբ որ քու թագաւորութեամբդ կուգաս » : Այս ահա աս մէկ երկու խօսքը ըսելով՝ բոլոր աշխարհի իմացուց թէ ինչպէս մէկ հոգի մը թէև ամենէն մեղաւորը ըլլայ , իր ամէն մեղքերուն թողութիւնը կ'առնէ , և միանգամայն երկնային փառքին և երջանկութեանը վրայով ապահով կը ըլլայ :

Արանի՛ թէ աս ծանուցումը հաւատացուեր , և ամէն մարդ միտ դնելու հնազանդեր անոր : Արանի՛ թէ իւրաքանչիւր ոք ձեզմէ աս խօսքին զօրութիւնը հասկընար . և ան նոյն սրտովը՝ որ կ'ախաղանի վրայ զղջումի եկող մեղաւոր մը ըսաւ , դուք ալ կրկնէիք :

« Տէր , ըսաւ՝ աւազակը , ուշադրութեամբ նայելով « Վրդւոյն մարդոյ , ցաւոց մարդոյն » : « Տէր » , կըսէ ան՝ խաչուածի մը , որ ատեանի մը մէջ դատուեր էր , որ դահիճներուն ձեռքը ինկեր էր , և հիմայ տանջանքներուն մէջ մեռնելու վրայ է : Ասկի՛ց գիտէ թէ Տէրն է անիկայ , որ կը պատարագի , որ զենուած Գառն է : Ա՞յլ ըսաւ անոր . ինք իրմէ՞ն հասկըցաւ արդեօք աս բանը . իր յատուկ զգացումը իմացուց անոր թէ ո՞վ է աս Հիսուս՝ Ասղովբեցին , որ իր վճռոյն գիրը՝ « թագաւոր հրէից » կանուանէ : Ա՛չ , ո՛չ . ասիկայ մարդու գործ չէ . « մարմինը և արիւնը աս բաները չեն յայտներ : Ա՛սիկայ է սիրոյ մեծ խորհուրդը » . (Սաալ . իղ . 17 :) մշտնջենաւոր Հայրը իրեն պահած է ասոր յայտնելը . և իր կարող զօրութեանը յաջողութեամբը հաւատացեալին կը յայտնէ » : Ա՛յլ . ան . 17 , 20 :

Սիրեմքն «Մատուցմէ ծնած» է, «Հողուով ծնած» է ան, որ ուշադրութեամբ նայելով Հիսուսի՝ կրկնատուանի որ անիկայ է Տէրը, և երկրպագութիւն կրնէ անոր: Ի՞նչ, միթէ Մատուցմէ ծնած է աս աւաղակը: Մ.Յո՛, մի՛ նեղանար ով հպարտ աշխարհ, որ կանարգես ու կատես զանիկայ. այո՛ աս անուանի մեղաւորը, աս շարագործը, վերստին ծներ է, դարձի եկեր ու արդարացեր է: «Օգուակ Մատուցոյ՛» է ան. ու ինքը կրսէ՛ . . . ո՛չ՝ ամբողջ սուրբ Վիրքը կրսէ քեզի աս բանը, իմացունելով թէ Մատուցմէ ծնած է ան՝ որ Հօրմէն սորված, առ փրկիչը կուգայ. թէ ամէն ով որ կը հատայ թէ Հիսուսը Վրիստոսն է, Մատուցմէ ծնած է. թէ մէկն ալ Հիսուսը Տէր չկոչեր, և չխոստովանիր որ մարմնով եկեր է, միայն թէ Հողուով Սրբով. և թէ աս է ան հաւատքը որ կը յաղթէ քեզի, ով Մշխարհ: Թ. Գ. 1, 4, 5: Թ. Գ. 3:

Սուտի աս հաւատացեալը՝ ցուցնելու համար թէ ինչ է իր հաւատքը և իր բովանդակ յոյսը, «Տէ՛ր, ըսաւ, զիս միտքդ բեր, երբ որ քու թագաւորութեամբդ կուգաս»: Սր ըսել է. «Վուն ես Տէրը. դուն ես Հօր Մատուցը. քու կդ են մահուան և կենաց միջոցները, Տէր Հիսուս: Թէ որ հիմա նուաստացեր ես. թէ որ սաստիկ վէրքերով բոլոր մարմինդ վիրաւորեալ է. թէ որ Մատուց քեզ թողուցեր է, և հարկ է որ քու ժողովուրդիդ համար մահ ճաշակես և գերեզմանը իջնաս, քանզի դուն աս հրամանը Հօրմէդ առիր. սակայն կարող ես նորէն ձեռք բերելու աս կեանքը՝ որ ահա կը թողուս. վասն զի անհնար է, ով Իշխան կենաց, որ մահուան կապերը կարենան քեզ արգիլելու: Թէ պէտ գերեզմանը պիտի իջնաս՝ բայց յաղթելու և անոր դռները խորտակելու համար: Վու Մատուցդ՝ որ աջ կողմդ է, պիտի չթողու քեզի որ սասանիս ու գերեզմանին ապականութիւնը տեսնես: Մ.Յո՛՝ յաւիտենական Հողին, որով դուն քեզ պատարագ կը մատուցանես, և որ քու զօրութիւնդ է, պիտի յարուցանէ քեզ մեռելնե-

րուն մէջէն, ո՛վ մեծ Հովիւ ոչխարաց, յաւիտենական ուխտին արինովը . և պիտի փառաւորիս քու Հօրդ քով ան փառքովը որ աշխարհիս ստեղծուելէն առաջ ալ ունէիր : Ո՛վ Մատուծոյ Վրիստոսը, ո՛վ յաւիտենական արգարութիւն մեր, քու անհուն սիրովդ խոնարհեցոր քու մէկ նայուածքդ մինչև խղճալի մեղաւորիս վրայ որ քեզ կը կանչէ . և որովհետև քեզի հաւատացողը կեանք կունենայ, դարձուր, աղէ, դարձուր քու աչուրներդ իմ անօրէնութեանս վրայէն . թողութիւն տուր ինձի քու անունովդ . լուս իմ հոգիս և մաքրէ աս անգին արինովը որ դուն կըրթափես երկրի վրայ : 'Վ վերջոյ յիշէ զիս, Տէր, երբ որ Հօր Մատուծոյ աջ կողմը նստիս քու յաւիտենական թագաւորութեանդ մէջ' :

Մայսպէս խօսեցաւ աս մեղաւորը որ Շնորհք ընդուններ էր . այսպէս խոստովանեցաւ աս անփոփոխելի վարդապետութիւնը, թէ “հաւատքով կարգարանայ մարդ . և ասիկայ իրմէն և իր գործքերէն չէ, այլ Մատուծոյ պարգևն է” : Սիայն մէկ զգացում մը ունէր իր սրտին մէջ, և անիկայ միայն ցըցուց, Մատուծոյ ողորմութեանը դիմելով, անոր ուխտին խոստումը խնդրելով . “Վրկէ զիս քու շնորհքովդ, աղաղակեց աս Մատուծ . քու ձրիապէս պարգևելդ իմ վրաս հաստատէ . և քու գթութիւնդ ալ՝ ամենամեծ ողորմութեան յիշատակարան մը թող կանգնէ զիս, որ ամենէն մեծ մեղաւոր մըն եմ” :

Մազակին աղաղակը լսեց Հիսուս . ու դժոխքին որսը յափշտակուեցաւ : Ո՛վ եկեղեցի Մատուծոյ, ռոպիսի մըրցանակ առաւ Շնորհքին աս ըրած յաղթութիւնը՝ կախաղաններու մէջ ալ : Ի՞նչ սոսկալի պատերազմ լեղաւ կենաց և մահուան մէջ, երկինքի ու մեղքին մէջ, Հաւատենականին և սատանային մէջ . ի՞նչպէս կորագլուխ եղաւ Մատուծոյ թշնամին :

Մհաւասիկ աս “կնոջը զաւակը” որ յաւիտենական Հոգւոյն ջորութեամբը օձին գլուխը ջախջախելու եկաւ : Մհա

Մատուցոյ Հակառակորդը՝ աս խաւարին հրեշտակը՝ անոր առջին կայներ է մարանչելու համար . որ իրաւ անոր գարշապարը պիտի խայթէ , կարծելով թէ յաղթեր է անոր , քանզի քիչ մը տանն մահուան մէջ պիտի իջնայ : Բայց հոն է նաև Վրիստոսի արիւնին զօրութիւնը որ դժոխքէն աւելի հզօր է . և ան նոյն ժաման՝ երբ որ մննչող առիւծը Վատին արիւնովը իր կատաղութիւնը կը յաղեցընէ , աս արիւնը՝ որ Մելի արիւնէն աւելի ազէկ կը խօսի , իր զօրութիւնը աւաղակի մը կազգէ՝ որուն հօգին կը լուացուի կաղատի , ու անով բոլորովին կը յաղթէ սատանային :

Նիկայ փրկուած է ուրեմն , վասն զի հաւատք ունի . արդարացած է , վասն զի հաւատաց Արդւոյն Մատուցոյ արիւնին . մահէն կեանքի փոխուեցաւ և գատապարտութիւն պիտի չտեսնէ , քանզի Տէր Հիսուսին կընայի և կը հաւատայ անիկայ մեզի Խրկողին : Մէլուիա , ով եկեղեցի փրկչին . ուրախացիր երկնից մէջ և գովէ քու վեհափառ թագաւորդ : Մէլուիա . երկնային ոգիք քերովքէք և սերովքէք որ քառութեան սեղանին առջևը կը խոնարհիք , ու երկրպագութիւն կընէք , որ սուրբերուն և բոլոր արարածներուն հետ մէկ տեղ աթոռը նստողը և զենուած Վառը միաձայն կը գովէք և կ'օրնէք : Մէն , ալէլուիա , ալէլուիա երկնից բնակարաններուն մէջ . Մատուցոյ հրեշտակները թող ուրախանան հոն , վասն զի մեղաւոր մը դարձի եկաւ . մեղաւոր մը շնորհքի հաւատաց . կորսուած որդի մը դըռնուեցաւ , մշտնջենաւորապէս փրկուեցաւ , և աս բանիս փառքը՝ միայն Մատուցոյ կը վայելէ :

Վ. Վուրք ալ , ձեր հօգին անոր նուիրեցէք , ով մարգոց որդիք , որ ամենքդ ալ մեղաւոր ըլլալով ամենքդ ալ փրկուելու կարօտ էք : Ի՞նչ կը շահիք որ այսպէս չընէք ու ձեր սրտին մէջ անհաւատ աւազակին պէս չար և յանգուպն զգացումներ արժարձէք . մանաւանդ թէ որչափ մեծ կորուստ կընէք , որչափ մինչև հիմա ըրիք ու պիտի ընէք



ալ հետզհետե ձեր կեանքին մէջ, և գուցէ միշտ՝ յաւիտենականութեան մէջ, ով յիմար և խղճալի կուսանք, թէ որ գոռողարար յարատեւք Մտուծոյ շնորհքին դէմ մաքառելու, հաստատելով ձեր բարեգործութիւնները ան կատարեալ փրկութեանը դէմ որ Հիսուսի վրայ է:

Վառն և անտանելի կեանք մըն է աս, ինչպէս կրկնայէք դուք մեղաւորքդ ալ, որ ձեր գործքերովք փրկուիլ կուզէք: Մանր և ամօթալից գերութիւն մը՝ որուն մէջ Մտուծոյ շնորհքը մերժող հոգին անանկ խորտուրորտ և դժուարին ծամբայէ մը կերթայ, ուր ոչ հանգիստ, ոչ ախորժելի յիշատակ, ոչ մխիթարութիւն տուող յոյս, ոչ շօրք հայեցուածքը և ոչ իր շողոյն խնդութիւնը երբէք չեն երևնար: Ա՛հ, ձրպիտի կեանք է Մենամեծն Մտուծոյ թշնամիին կեանքը, ան անհաւատ հոգիինը, որ Վրիտտոսի խաչին արիւնը կարհամարհէ, իր սէրը կանարգէ և իր շնորհքը չընդունիր: Եւ թէ որ միայն աս աշխարհիս մէջ ըլլար և աս երկրի վրայ զաղարէր իր յանցանքը և իր պատիժը, որչափ որ մեղապարտ ըլլար աս հոգին, և որչափ թշուառութեան մէջ, վերջապէս վախճան մը պիտի ունենար: Բայց յաւիտենականութեան մէջ պիտի տանջուի ան, Մտուծոյ լոյսը, իր սէրը, և իր ներկայութիւնը անկից հեռացած: Այո՛, յաւիտենականութեան մէջ՝ Մտուծոյ բարկութեանը և սրտմտութեանը տակը. անվախճան պատիժներով. անդարմանելի դատապարտութեամբ:

Աւրեմն նուիրեցէք զձեզ Հաւիտենականին շնորհացը: Ի Սուրբ. Շ. 8: Վուրք որ ձեր հոգիները փրկել կուզէք, և թողէք զձեզ անով փրկուելու, քանզի անիկայ է միայն փրկիչ, և չկայ ամենեկին ուրիշ մէկը:

Ա՛հ, երբ որ Մտուած Հիսուսը պարգևեց աշխարհի. երբ որ շինայեց անոր՝ այլ մեռնելու տուաւ, անասունը կը տեսնէր ան, թէ ինչո՞ւ և որո՞ւ համար է աս անբաւ մարդասիրութիւնը, գիտէր որ մեղաւորներուն համար է, ամ-

բարիչաներուն և բարկութեան որդիներուն համար՝ որոնք մեներ և կորսուեր էին իրենց մեղքերուն մէջը : Վիտէր որ ասիկայ Փրկիչ է և ոչ լոկ օգնական մը որ Նկեղեցիին կուտար . որ Նկեղեցիին համար աս Փրկիչը պիտի անարգուէր . որ անոր համար իր հոգին պատարագ պիտի նուիրէր . և այսպէս իրեններուն մեղացը համար մեռնելէն ետե , պիտի յարութիւն առնէր զանոնք արդարացունելու համար , իր պատարագովը անոնց յաւիտենական փրկութիւնը կատարելով : Ըստ մէնը գիտէր Մատուած . և կամեցաւ որ այսչափ սիրէ “Եր բոլոր սրտովը և բոլոր հոգիովը” : Նւինքը ձեզի կրկնայէ աս բանը և երդումով ալ կրհաստատէ : Ըրդ՝ ո՞վ մեղաւորներ , ողորմելի մեղաւորներ , ինչո՞ւ չէք ընդունիր աս բանը . ու երբ որ իր մարդասիրութեամբը ձեզի կրծանուցանէ . “Թէ փրկութիւնը Մատուածմէ է և մորթուած Վառէն . թէ ասիկայ մէկ շնորհք մըն է . թէ գործքերէն չէ , որ մէկը չպարծի” . ըսէք ինձի , ի՞նչ պատճառով և ի՞նչ շահի համար աս բանը չէք ընդունիր , աս սէրը կրմերժէք և շնորհաց շողին կրբարկացընէք :

Ըւա՞ղ . թէ որ դուք կորնչիք , ու չուզելով նաղանդիլ Մատուծոյ արդարութեանը՝ որ հաւատքով է չէ թէ գործքերէն , և ձեր խղճմտանքին մէջը ընդունիք Հիսուս Վրբիստոսի արիւնին զորութիւնը , թէ որ ձանձրացընէք Տէրոջը երկայնամիտ համբերութիւնը . թէ որ ձեր մահկանացու ընթացքը այսպէս կատարելով՝ այսինքն ձեր առաքինութիւնները և ձեր իմաստութիւնը Որդւոյն Մատուծոյ պատարագին տեղը դնելով , դուք ալ կրհանդիպիք ան թշուառութեանը՝ որուն անհաւատը կրսպասէ . թէ որ ասանկ ըլլայ ձեր աս աշխարհէն ելելը և ձեր յաւիտենականութիւնը , անատենը աս կորստեանս համար պիտի չգանգատիք Մատուծմէ որ շատ անգամ ըսած է ձեզի , թէ ոչ առաքինութիւնով և ոչ բարի գործքերով ծախու կառնուի իր փրկութիւնը . այլ ձրի պարգև մըն է անիկայ և բացարձակ շնորհք մը . թէ միայն մէկ Հիսուս մը կայ որ

ձերն է, թէ որ աս փրկչին հաւատաք: Այլ, աս պատու-  
 հասին համար պիտի չգանգատիք աս սիրոյ Մտուծմէն.  
 Հապա, աղէկ գիտնաք ո՞վ մարդոց որդիներ, դուք ձեզմէ  
 միայն գանգատելու էք, որ աս թշուառութեան կամուր  
 և յարատեող պատճառը եղաք. և թէ որ՝ Մտուած մի  
 արասցէ, աս չարիքը ձեր գլխուն գայ. թէ որ ձեր գոռո-  
 զութեանը մէջ յամառեալ մնաք և աս սոսկալի դատա-  
 պարտութեանը արժանաւորիք, անատներ պիտի հասկընաք  
 և պիտի խոստովանիք ալ թէ դուք էք որ կորսուելու յո-  
 ժարութիւն ունեցաք, և փրկութենէն դուրս մնացիք,  
 վասն զի ձեր սիրտերուն հպարտութիւնովք չուզեցիք  
 ձրիապէս փրկուիլ:



## Յ Ի Ս Ո Ւ Ս Մ Ե Ը Գ Ե Ը Լ Է Լ Է Ի Թ Ե Գ Ե Ը Ը Ը

Ովսաննա, օրհնեալ է  
 Եւս փրկին բարերար,  
 Ար կ'իջնայ 'ի Հօրէ  
 Դեպ առ մեզ հեղաբար:  
 Օրհնեալ Տէր մարդասէր  
 Ար կուգայ 'ի բարևանց,  
 Փրկութիւն բերելու  
 Մեղաւոր հոգաննաց:

Ովսաննա, օրհնեալ է  
 Եւս կենաց Իշխանը,  
 Բնող ցնծայ մեր հոգին  
 Ընոր Սուրբ անուամբը:  
 Դոր երգով թող երգէ  
 Դա այսօր բարձրանայն,  
 Բնող որդիքն Ըստուծոյ  
 Կան առջևն ու խայտան:

Ովսաննա, օրհնեալ է  
 Բարեկամն մեր գթած,  
 Չեւնտուն սիրաբար  
 Մեղաւից շար մարդկանց:  
 Ար խնարհ է աղքատ  
 Երեցաւ աշխարհի,  
 Մարդկութեամբն ծածկելով  
 Իր մեծ փառքն արարի:

Ովսաննա, օրհնեալ է  
 Եւրդարութիւնն մեր Վրիստոս,  
 Ար կամաւ կ'ընդունի  
 Օրհն ըմբալ 'ի խալի:  
 Տէր հոգի է կարող  
 Եւրբայից մեծ Եւրբայն,  
 Մեղքերնիս քաւելու  
 Ընարգ մահ յանեն աւնու:

Ք Ա Ր Ո Ջ Զ

Հ Ա Ի Ա Տ Ա Ց Ե Լ Ո Ց  
Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ի Հ Ե Տ Մ Ի Ա Խ Ո Ր Ո Թ Ի Ի Ն Ը

Եւ որ թե՛ եմ՝ ու դուք ծիւղ . ան որ իմ վրաս հաստատուած է և ես անոր վրայ, անիկայ շատ պտուղ կը բերէ : Առջ. ԺԵ . 5 :

ԿԵՆԱՐԱՐ Տեառն մերոյ Հիսուս Վրիստոսի աս խօսքը յայտնապէս կը բացուի՝ թէ խոնարհ հաւատացեալները իր հետը միաւորուած են : Արդին Լստուծոյ աս խօսքը իր աշակերտներուն ըսաւ, ու անոնց ձեռքովը բոլոր յաջորդական դարերուն մէջ իրեն հաւատարիմ հետեւողներուն : Բոլոր ճշմարիտ Վրիստոնեաները անբակտելի կապակցութեամբ իր հետը միաւորուած են . և աս միաւորութենէս կը քաղեն իրենց հոգևորական կեանքը՝ իրենց շնորհքի մէջ աճիլը՝ իրենց Վրիստոնէական կենցաղաւարութիւնը՝ ու Կոր Ուխտին բոլոր բարութիւններուն վրայ իրենց ունեցած իրաւունքը : Աստի աս քարոզին նպատակը պիտի ըլլայ՝ Հ Ա Ի Ա Տ Ա Ց Ե Լ Ո Ց Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ի Հ Ե Տ Մ Ի Ա Խ Ո Ր Ո Թ Ի Ի Ն Ը բացատրել :

Ըրդ՝ աս շահաւէտ նիւթիս վրայ մեր ունեցած խորհուրդները սխալ չիմացուելու համար պէտք է որ նշանակեմք հոս՝

Թէ աս միաւորութիւնը ոչ էական միաւորութիւն է, և ոչ անձնական :

Եւսկան միաւորութիւն չէ : Այսն զի՝

Եւսկան միաւորութեամբ միաւորեալ են Բստուածութեան երեք անձերը : Սուրբ Գիրքը կըսորվեցընէ մեզի՝ Թէ «Իրեք են որ երկինքի մէջ կըվկայեն. Հայր՝ Բանը՝ ու Հոգին Սուրբ. և աս իրեքը Մէկ են» : Ինչո՞ւ . Ե. 7 : Հայրը՝ Արդին՝ ու Սուրբ Հոգին անձամբ իրեք են, բայց աս իրեքը մէկ Բստուած են, մի և նոյն էութեամբ՝ Հաւասար զօրութեամբ և փառօք : Բննասուրբ Երրորդութեան վրայով աս վարդապետութիւնը շատ խորին ու շատ անխմանալի է, բայց պարտաւոր եմք՝ ի բոլոր սրտէ ընդունիլ և Հաւատալ անոր, որովհետև Սուրբ Գիրքերը յայտնապէս ասանկ կըսորվեցընեն մեզի :

Բսանկ միաւորութիւն չկրնար ըլլալ Վրիստոսի միաւորութիւնը Հաւատացեալներուն հետ : Թէ որ ասանկ ըլլար՝ Վրիստոնեաները անհուն վրկչին հետը Հաւասարութեան բարձրացած ու Բստուածութեան ստորագելքներով զարդարուած պիտի ըլլային. որ մէկ վայրկեան մտքէ անցունելը անգամ չափազանց անտեղութիւն և սարսափելի հայհոյութիւն է :

Բնձնական միաւորութիւն ալ չէ : Այսն զի՝

Բնձնական միաւորութեամբ միաւորեալ են Հիսուս Վրիստոսի անձին՝ Բստուածային ու մարդկային բնութիւնները : Վրիստոս Տէրն մեր Բստուած է՝ Բստուածային բնութիւն ունենալով, նոյն բնութեան բոլոր գերազոյն և անհաղորդելի ստորագելքներովը : Սորդ է՝ մարդկային մարմին ու հոգի ունենալով : Բստուած և մարդ է ինքը յաւիտեան՝ իր մէկ անձին միաւորեալ երկու բնութեամբ :

Հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը աս կերպն ալ չէ : Թէ որ ասանկ ըլլալ Հաստատէ մէկը, իր վարդապետութեանը անտեղութիւնը և անվայելութիւնը

մէկէն 'ի մէկ յայտնի կրտսնուի : Սերեմն հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը ոչ էական և ոչ անձնական միաւորութիւն է :

Ասալ իմացումը արդիւելու համար աս ծանօթութիւնները ընենէս ետև՝ հիմայ յառաջանամք Մատուածաշունչ Վրոց պարզիմաց եղանակովը բացայայտել աս միաւորութեան իսկական բնութիւնը :

Եւ 'Ասա' մեր բնաբանին ու անոր հետ եղած խօսքերուն մէջը հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը կը նմանի ճիւղերուն որթին հետ միաւորութեանը : "Աս եմ որթ՝ ու դուք ծիւղ" . կըսէ Տէրն մեր . "ան որ իմ վրաս հաստատուած է՝ և ես անոր վրայ, անիկայ շատ պտուղ կը բերէ . ինչու որ առանց ինձի բան մը չէք կրնար ընել" : "Եւ մէջս կեցեք՝ ու ես ձեր մէջը . ինտոր որ ծիւղը ինքիրմէն չկրնար պտուղ բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ . ասոր պէս դուք ալ թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք" : "Թէ որ մէկը իմ վրաս հաստատուած չէ՝ անիկայ ծիւղի մը պէս դուրս ինկաւ ու ցամքեցաւ . և կը ժողունն անիկայ՝ ու կրակը կրնետնն և կերի" : § 14. 35. 4—7 : Ինչպէս որ ծիւղը որթին հետ միաւորուած է՝ ու ան միաւորութեան պատճառովն է որ բուսական կեանք ու սնունդ կրնդունի, նմանապէս Վրիստոնեաներն ալ Տէսոն մերոյ § խուս Վրիստոսի հետ միաւորուած են անանկ կերպով մը՝ որ հոգեորական կեանք ու երկնային սնունդ կրնդունին իրմէն : Ինքն է որթը՝ այսինքն ակը՝ աղբիւրը՝ ուրկից անոնք Մատուածային շնորհաց սրբացուցիչ զօրութիւնները կ'առնեն : Եւ զօրութիւններովը կրկարողանան անոնք սրբութեան պտուղներ բերել իրենց կեանքին ու կենցաղավարութեանը մէջ : Արբութեան պտուղ բերելու համար պարտին Վրիստոսի վրայ հաստատուիլ, պարտին իրեն հաղորդ ըլլալ, մշտնջենաւորապէս իրմէն կախեալ ըլլալնին զգալ . իր արժանաւորութեանցը ապաւինիլ, ու հանապազօր ջերմեռանդ սրտով իր հոգին օգ-

նութիւնը և ներգործութիւնը խնդրել : Արթէն բաժնուած ճիւղերէն պտուղի սպասելու կրնանի՝ երբոր Վրիստոնեայք Վրիստոսէ բաժնուած ըլլալով՝ յուսան թէ իրենց սրտերուն մէջը շնորհքը աճի : Թէ որ անոր վրայ հաստատուած չեն, կրնանին շորցած ճիւղերու որ չեն կրնար պրտուղ բերել . և ուրիշ բանի մը պիտանի չեն՝ բայց եթէ ժողովուելու ու կրակը նետուելու : Բայց թէ որ Վրիստոսի վրայ հաստատ են՝ դալար ու առողջ ճիւղերու կրնանին, ու պիտի կարենան՝ շատ պտուղ բերել : (Յովն. Ժն, 8 :

Արկրորդ՝ Սուրբ Վրոց մէջը հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը կրնանի մէկ շինուածքի մը իր հիմանը հետ միաւորութեանը :

Ասայի մարգարէին ձեռքը Մտուած կըսէ, «Մհաւսիկ ես Աիօնին մէջը հիմն ըլլալու վե՛մ՝ մը կըղնեմ՝ ընտիր անկիւնի զլուխ՝ պատուական հիմն» : Ասայ . ի՞նչ . 16 : Ար Պետրոս ասիկայ հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութեանը վկայութիւն բերելով կըսէ՝ «Վուրք ալ կենդանի քարերու պէս շինուած էք հոգևոր տաճար մը» : ԹՊ՝ Գ . ք . 5 : Վրմանապէս Պօղոս առաքեալ Ասիեսացի հաւատացեալներուն կըզրէ, թէ «առաքեալներուն ու մարգարէներուն հիմն վրայ շինուած էք, որ անոր անկիւնին զլուխը Հիսուս Վրիստոսն է . որով բոլոր շինուածքը մէկ տեղ կազմած ու յարմարուած՝ կաճի սուրբ տաճար մը կըլլայ Տէրով . որ անով դուք ալ մէկ տեղ կըշինուիք Մտուածոյ բնակարան ըլլալու Հոգևով Արբով» : Ավ՛ե . ք . 20—22 : Ինտոր որ շինուածքի մը զանազան մասերը մէկըզմէկու հետ կապուած են՝ ու բոլորը հիմն վրայ հաստատուած են ամուր և հաստատ մնալու համար, այսպէս ալ Արկիզնցիին զանազան անդամները մէկըզմէկու հետ կապուած են, ու բոլորը Վրիստոսի վրայ հաստատուած են հոգևորական հաստատութեան համար : Ար անոր վրայ հաստատուելով՝ իրրև իրենց անասանելի հիմանը, կըկազմուին հոգևոր տաճար մը՝ Մտուածոյ բնակութիւն մը՝ իր Սուրբ



Հօգիտվը : “Ս՛էկը ալ ուրիշ հիմն չկրնար գնել դրուածէն ի զատ , որ է Հիսուս Վրիստոս” : Թ Կրնիլ . 7 . 11 :

Երրորդ՝ Հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը կրնմանի մարդկային մարմնոյն իր գլխոյն հետ միաւորութեանը :

“Ինտոր որ մարմինը մէկ է” կրսէ աւաքեալը՝ “ու շատ անդամներ ունի , և ամէն ան մարմինին շատ անդամները մէկ մարմին են , անանկ ալ Վրիստոսը” : Թ Կրնիլ . 7 . 12 : որ է “ամէն բաներուն վրայ եկեղեցիին գլուխ , որ ան՝ անոր մարմինն է” : Երկու . Թ . 22 : “Եւր Վրիստոսի մարմինն էք , ու անոր անդամներէն անդամներ” : Թ Կրնիլ . 7 . 27 : “Եւր մի գիտեր որ ձեր մարմինները Վրիստոսի անդամներն են” : Թ Կրնիլ . 7 . 15 : “Ենոր մարմինին անդամներն եմք՝ անոր մարմինէն ու անոր սկզբներէն” : Երկու . Թ . 30 : Եւր Սուրբ Եւրքին խօսքերն են : Ինտոր որ մարդկային մարմնոյն զանազան անդամները գլխուն հետ միաւորուած են՝ անոր զօրութեանը տակն են՝ ու անով կրսնանին , նմանապէս ճշմարիտ հաւատացեալներն ալ Վրիստոսի հետ իբրև իրենց գլխոյն հետ միաւորուած են . իր Հօգիին զօրութեանը տակն են , իր շնորհացը առատ մատակարարութիւններովը կրսնանին , ու իր խորհրդական մարմնոյն անդամներն են :

Չորրորդ՝ Եւ միաւորութիւնը կրնմանի ամուսնական օւխտով այր և կնոջ մէջ հաստատուած միաւորութեանը :

“Եւրիկ մարդը կնկանը գլուխն է , ինչպէս որ Վրիստոս Եկեղեցիին՝ Եւրիին է . ու ինքը մարմինին Վրիստոսն է : Եւր ինչպէս որ եկեղեցին Հազանդ կրսայ Վրիստոսին , անանկ ալ կնիկները ամէն բանի մէջ իրենց էրկանը : Եւրիկ մարդիկ՝ սիրեցէք ձեր կնիկները , ինչպէս որ Վրիստոս սիրեց եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր համար . որ անիկայ սուրբ ընէ աւազանին մաքրութեամբը՝ խօսքով . որ ինքը իր գիմացը փառաւոր կեցունէ եկեղեցին՝ որ մէկ առատ մը կամ աղտոտութիւն կամ ուրիշ ասոր պէս բաներ

չունենայ, հապա որ սուրբ ու անարատ ըլլայ: Ընանկ ալ պէտք է որ էրիկ մարդիկ իրենց կնիկները սիրեն՝ իրենց մարմիններուն պէս. ան որ իր կնիկը կը սիրէ՝ իր անձը կը սիրէ. . . .: Ըսոր համար էրիկ մարդը իր հայրը ու մայրը պիտի ձգէ, և իր կնկանը հետ պիտի երթայ, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Ըս խորհուրդը մեծ է. բայց ես կը զրուցեմ Վրբիստոսի ու Լակեղեցիին վրայ: Լակե . Ն . 23—32: Ինտոր որ կինը ամուսնական ուխտով իր էրկանը հետ միաւորուած է, ինտոր որ «անոնք երկուք չեն հապա մէկ մարմին», ինտոր որ անոնք մէկզմէկու սիրոյն մէկզմէկու ստացուածքին մէկզմէկու համբաւին հաղորդ կը ըլլան, նմանապէս ճշմարիտ հաւատացեալները շնորհաց ուխտով միաւորուած են Վրբիստոսի հետ՝ Լակեղեցիին հոգևոր փեսային հետ: Լա սս միաւորութիւնովը անոր սիրոյն՝ անոր փառացը՝ ու անոր թագաւորութեանը բոլոր բարութիւններուն հաղորդ կը ըլլան:

Հինգերորդ՝ Հաւատացեալները Վրբիստոսի հետ կը միաւորին մի և նոյն յօժարութիւնները ունենալով:

Վրբիստոնեաները ան «նոյն միտքը կունենան որ Վրբիստոս ճիսուս ունէր»: Փիլիպ. ք. 5: «Բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով՝ նոյն պատկերին կը նորոգուին փառքէն՝ ի փառք, ինչպէս Տէրոջը Հոգիէն»: ք Կորնթ. ք. 18: Պօղոս Հոգիմայեցիներուն ըսաւ. «Երբ մարմինով չէք, հապա հոգիով, թէ որ Ըստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է»: Լա դարձեալ՝ «Ի՞նչ որ մէկը՝ Վրբիստոսի հոգին չունի նէ՝ անիկայ անորը չէ»: Հուս. ք. 9: Ըրդ՝ թէ որ նոյն միտքը պարտի ըլլալ մեր մէջը՝ որն որ Վրբիստոս ճիսուս ունէր, թէ որ ճշմարիտ Վրբիստոնեայ ըլլալու համար Տէրոջը փառքը պարտինք տեսնել՝ ու իր պատկերին նմանութեանը դառնալ փառքէն՝ ի փառք՝ իր Սուրբ Հոգիին սրբացուցիչ զօրութիւններովը, թէ որ Վրբիստոսի Հոգին պարտի մեր մէջը բնակիլ՝ ու մենք պարտինք նոյն սէրը ունենալ Ըստուծոյ վրայ ու նոյն բարեբա-

րութիւնը առ մարդիկ՝ որոնք որ ինքը ունէր՝ չէ նէ իրենը պիտի չըլլանք, ուրեմն անտարակոյս ճշմարիտ Վրիստոնեաները Վրիստոսի հետ միաւորուած են նոյն յօժարութիւններով :

Վրիստոսի ամէն գործոց սկզբունքը Սրբութիւնն էր. ասանկ է նաև Վրիստոնեից մէջ : Ըստիկայ կապացուցուի սրբութեան պատուական պատուըներովը որ իրենց խօսքին ու կենցաղավարութեանը մէջ կրտեսնուի : Սեղքին սէրը ու գործադրութիւնը ատելը, անտարանական զղջումը-նելը, Տէր Հիսուս Վրիստոսի հաւատալը, ու Ըստուծոյ պատուիրանքներուն անկեղծութեամբև յարատևութեամբ նազանդութիւն մատուցանելը յայտնապէս սրբութեան արդիւնքներ են : Վանդի «մարմնաւոր խորհուրդը Ըստուծոյ դէմ թշնամութիւն է. որ Ըստուծոյ օրէնքին նազանդիր, մանաւանդ չկրնար ալ» : Հոգ. շ. 7 : «Սարմնաւոր շունչ ունեցող մարդը Ըստուծոյ Հոգիին բաները չընդունիր. ինչու որ ան իրեն յիմարութիւն մըն է. ու չկրնար ալ գիտնալ՝ որ հոգևոր կերպով պիտի քննուի» : Իս. 14 : Սեղաւորները մեղաց համար ճշմարիտ զղջում՝ Վրիստոսի վրայ կենդանի հաւատք՝ ու Ըստուծոյ պատուիրանքներուն սրտանց նազանդութիւն չեն կրնար ունենալ առանց իրենց սրտերուն մէջը սրբութիւն ունենալու : Իրենց սրտերը պարտին նորոգուիլ ու սրբանալ, չէ նէ՝ անպաշխար՝ անհաւատ ու աննազանդ պիտի մնան : Ըստը համար էր որ Վրիստոս Տէրն մեր ըսաւ՝ Նիկողիմոսին, «Թէ որ մէկ մարդ մը նորէն չծնի՝ չկրնար Ըստուծոյ թագաւորութիւն տեսնալ» : Հոգ. շ. 3 : Եւ Պօղոս Լքրոսյեցոց գրած իր թղթին մէջը կըստրվեցունէ, թէ «առանց սրբութեան մէկը չկրնար տեսնալ Տէրը» : Լքր. ժք. 14 : Ուրեմն ճշմարիտ Վրիստոնեաները վերստին ծնած են : Հոգւոյն Սրբոյ ամենազօր ներգործութիւններովը նորէն ծնած են անոնք : Սրտով ու վարքով սրբացած են անոնք : Իրենց սրբութիւնը Վրիստոսի սրբութեանը հետ կատա-

րելագէս նոյն է բնութեամբ, թէպէտ և տարագոյցման ստորին է անկից աստիճանով: Վրիստոսի բարոյական պատկերին կերպարանակից ըլլալով չափով մը սուրբ ըլլալով ինտոր որ ան սուրբ է ու անոր Հոգին իրենց մէջը բնակած ունենալով՝ մի և նոյն սկզբունքներէ կը շարժին, ու հետևապէս իրենց սրտերուն յօժարութեամբը միաւորուած են անոր հետ:

Սեցերորդ՝ Հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը Լազարյանական միաւորութիւն մըն է: Վրիստոնեաները Վրիստոսի հետ միաւորուած են՝ Հօր Եւսուծոյ իրենց որդեգիր ըլլալովը:

Եւսուած իր ձրի ու գերագոյն շնորհքով՝ բոլոր զըզջացող ու հաւատացող մեղաւորները իր ընտանիքին մէջը ընդունած է: «Ինչու որ անոնք որ Եւսուծոյ Հոգիովը կառայնորդուին՝ Եւսուծոյ որդիքն են անոնք: Արովհետեւ դուք ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու, հապա որդեգիր ըլլալու հոգին առիք՝ որ անով կրկանչեմք Եւսոյ՝ Հայր: Եւ նոյն ան Հոգին վկայութիւն կուտայ մեր հոգիին, որ մենք Եւսուծոյ որդիքն ենք, և թէ որ որդիք, ուրեմն ժառանգներ. Եւսուծոյ ժառանգներ՝ ու Վրիստոսի ժառանգակիցներ. թէ որ իր շարժարանացը կցորդ ըլլանք՝ անոր փառացն ալ հաշորդ պիտի ըլլամք»: Հով. 1, 14—18: «Երբոր ժամանակը լեցուեցաւ, խրկեց Եւսուած իր Որդին՝ որ կնիկէ մը եղաւ, ու օրէնքին տակը մըտաւ. որ անոնք որ օրէնքին տակն էին նէ՛ ինքը ծախու առնէ, որ մենք որդեգրութիւնը ընդունինք: Եւ որովհետեւ դուք որդիք էք, Եւսուած իր Որդիին Հոգին ձեր սիրտը խրկեց»: Գաղ. ք. 4—7: «Տեսէք՝ Հայրը ինտոր սէր շնորհեց մեզի, որ մենք Եւսուծոյ որդիք ըսուինք»: Եփ. 1, 1: «Ինոնք որ զինքը (Վրիստոս) ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Եւսուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անունին. որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինին կամքէն՝ ոչ ալ մարդու կամքէն, հապա Եւսուծմէ

ծնած են՝ : Յօ՛ւ . ւ . 12, 13 : Լստուածաշունչ Վրոց ստ  
խօսքերովը յայտնապէս կըսորվիմք՝ թէ Վրիստոնեաները  
Լստուծոյ որդեգիրներն են : Լստուած անոնց շայրն է ու  
Վրիստոս անոնց եղբայրը : Եւ իրենց որդեգիր ըլլալուն  
համար Վրիստոս եղբայր կրկոչէ զանոնք՝ ըսելով , «Վնա  
իմ եղբայրներուս , և ըսէ անոնց . Ես կեղեմ իմ շօրս  
քովը ու ձեր շօրը քովը , և իմ Լստուծոյս քովը ու ձեր  
Լստուծոյն քովը՝ : Յօ՛ւ . Ի . 17 : «Ի՛վ որ իմ երկնաւոր  
շօրըս կամքը կրկատարէ , անիկայ է իմ եղբայրս ու քոյրս  
և մայրս՝ : Սաղ . Ժ . 50 : Վրիստոս ու բոլոր ճշմարիտ  
հաւատացեալները մէկ ընտանիք մը կըբաղկացունեն : Եւ-  
հօլա իրենց հասարակաց Լստուածն ու շայրն է : Լստո-  
ղեգրութեամբը բոլոր ճշմարիտ Վրիստոնեաները Վրիս-  
տոսի հետ միաւորուելով , իր հետը բաժանորդ պիտի ըլ-  
լան ան փառաւորեալ ժառանգութեանը՝ որն որ Լստուած  
երկնից մէջ անոնց համար պատրաստեց , «անեղծ ու ան-  
արատ և անթաւամ ժառանգութիւն մը՝ : ւ ՊԼ . ւ . 4 :

Եւթմներորդ՝ շաւատացելոց Վրիստոսի հետ միաւորու-  
թիւնը շահախնդրութեան միաւորութիւն է :

Վրիստոսի ու հաւատացեալներուն նպատակը մի և նոյն  
է : Վրանգի Լստուծոյ Որդւոյն երկինքէն յերկիր խոնար-  
հելուն՝ ու մարդկային բնութեան հետ միաւորելուն մեծ  
ու գլխաւոր առարկաները ի՞նչ էին , բայց եթէ Լստուծոյ  
փառքին յայտնուիլը , ու կորսուած մեղաւորներուն փրկ-  
կութիւնը : Լստնք էին ան առարկաները որ ինքը երկ-  
րիս վրայ բնական ատենը կրփնտռէր : Լստնք են նաև  
իր փնտրած գլխաւոր առարկաները հիմա՛ որ փառաց մէջ  
թագաւորելով իր ժողովրդոցը համար փաստաբանութեան  
ու Սիջնորդութեան պաշտօն կրվարէ : Եւ սա նոյն ա-  
ռարկաներն են որ գերագոյն խնամով կրփնտրուեն Վր-  
րիստոսի բոլոր խոնարհ ու հաւատարիմ աշակերտները :  
Լստնք որ Լստուծոյ փառացը վրայ գերագոյն խնամք մը  
չունին , ու մեղաւորներուն փրկութեանը և Վրիստոսի

Հոգևոր թագաւորութեան ընդարձակութիւնը յատկապէս մեծ ու պատուական բան մը շէն սեպեր, շէն կրնար ճշմարիտ Վրիստոնեաները ըլլալ: Հիշուիսա շքեղ առարկաները բոլոր ճշմարիտ Վրիստոնէից առջևը անշափ պատուականութիւն ունին: Չէրմեռանդ նախանձաւորութեամբ ու սուրբ և աճեցուն փափաքով կըջանան վրկշին թագաւորութիւնը ընդարձակել, յանցաւոր ու կորսուելու մարդոց փրկութեանը աշխատիլ, ու Աէհօփային փառքը ընդհանրապէս ծաւալել: Արսիբն գովել փառաւորել ու բարձրացուցանել իրենց Տէր Աստուածը, ու “անոր ոտքերուն պատուանդանին վրայ երկիրպագութիւն ընել”: Սաղ. 147. 5: Ինտոր որ երկինքը հրեշտակաց մէջ ու “արդարներուն հոգիներուն մէջ որ կատարուեր են”, (Եբ. 1. 7.) անանկ ալ երկրիս վրայ բարեպաշտ Վրիստոնէից մէջ ուրախութիւն կըլլայ մէկ մեղաւորի մը վրայ որ կապաշխարէ՝ ու Աստուծոյ կըղանայ, ու “պաշխարութեան արժանաւոր գործքեր կըգործէ”: Վարժ. ին. 20: “Անպատմելի ու փառաւոր խնդութիւնով” (ԽՊԷ. Խ. 8.) կուրախանան Սիօնին յաջողակութեանը վրայ: Իրենց զգացած ուրախութիւնը՝ Վրիստոսի ուրախութեանը հետ մէկ է: Իրենց ամենալաւ բարեկամները Վրիստոսի բարեկամներն են: Այն թշնամիները ունին դէմ՝ դնելու՝ որոնց Վրիստոս յաջողակութեամբ կը յաղթէ: Ինոր ու իրենց շահախնդրութիւնները բոլորովին նոյն են. ու աս շահախնդրութիւններովը ինքը ու անոնք անբաժանելի կերպով յաւիտեան միաւորուած պիտի մնան:

Իթերորդ՝ Հաւատացելոց Վրիստոսի հետ միաւորութիւնը փոխադարձ և երևելի խոստումներով հաստատուած է:

Վրիստոս Տէրն մեր աւետարանին պատուական հրաւերքներովը մեղաւորներուն կառաջարկէ թէ՛ “Այէք ինձի բոլոր հոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ կըջանդեցունեմ”: Իմ լուծս ձեր վրայ առէք, ու ինձմէ սորվեցէք

որ՝ հեղեմ ու սրտով խոնարհ, ու ձեր անձերուն հանգրստութիւն պիտի գտնաք. ինչու որ իմ լուծա քաղցր է, ու իմ բեռս թեթեւ՝ : Մարտ. ԺԿ . 28 : «Վճարելչտը իր ճամբան թող ձգէ, ու անօրէն մարդը իր խորհուրդները, ու Տէրօջը թող դառնայ և ողորմութիւն գտնայ, ու մեր Մատուցոյն դառնայ ինչու որ առատապէս պիտի ներէ» : Առայ. ԺԵ . 7 : «Վնծի դարձէք ու ապրեցէք դուք որ երկրի ծայրերէն եկած էք. ես եմ Մատուած, և ուրիշ մէկը չկայ» : Առայ. խԵ . 22 : «Օգուարակներս ու գէր կենդանիներս մորթուած են, և ամէն բան պատրաստ է. եկէք հարսնիքս» : Մարտ. իք . 4 : «Վն որ կուզէ կենաց ջուրը ձրի առնել՝ թող գայ» : Հայր. իք . 17 : «Հաւատա՛ Տէր Հիսուս Վրիստոսի, ու պիտի փրկուիս» : Վարձ. ԺԿ . 31 : Մտ հրաւերքներովը աներկբայ կիմանամք թէ մեր փրկութեան դինը վճարուած է. թէ Մատուածային արդարութիւնը բաւականացած է, ու ողորմութեան դուռ մը բացուած է ամէն զղջացող ու հաւատացող մեղաւորներուն : Մտ տեղս Վրիստոս՝ ինքզինքը ու երկնից բոլոր բարութիւնները քաղցրութեամբ ու բարեբարութեամբ ընծայ կրմատուցանէ ամէն տեսակ մեղաւորներուն որ կապաշխարեն : Արխոստանայ թէ ան ամէնը որ իրենց մեղքերէն կը դառնան՝ ու հաւատքի և սիրոյ թեւերովը զինքը կը գրկեն՝ ու օրէնքին և աւետարանին սրբազան նազանդութիւն մը կրմատուցանեն, պիտի ընդունին թողութիւն՝ ու սրբութիւն՝ ու կեանք յաւիտենական :

Արբոր մեղաւորները սրտանց կը նազանդին փրկութեան աս ճամբուն՝ երբոր իրենց ամբարշտութիւնները կը ձգեն՝ ու «առ Մատուած ապաշխարութիւն՝ և մեր Տէր Հիսուս Վրիստոսի վրայ հաւատք» (Վարձ. ի . 21.) կը գործածեն, անատենը կընդունին Վրիստոսի ան առաջարկութիւնները ու իրենք ալ անոնց փոխադարձ խոստմունքներ կընեն : Մտանկով Վրիստոսի ու հաւատացելոց մէջ ուխտ մը կը հաստատուի. որով Վրիստոսի հետը կը միաւորին, իր ար-

դիւնքներուն օգուանները կընդունին , ու իր Միջնորդութեանը բոլոր բարութիւններուն վրայ իրաւունք կըստանան :

Հաւատացելոց Վրիստոսի Հեա սս միաւորութիւնն է որ փրկութեան բարիքները անոնց կընծայէ : Ընտանց Ըստուծոյ քով ընդունելի ըլլալուն հիմը Վրիստոսի արդիւնքներն են : Լսւ անոր արդիւնքներուն վրայ իրաւունք կըստանան ան «Հաւատքովը որ սիրով կը յաջողի», (Պ. աւ. Ե. 6.) ու «աշխարհի կը յաղթէ». (աւ. Ե. Կ.) ան հաւատքովը որով իր խոստմունքները կընդունին : Ուստի բոլոր ճշմարիտ հաւատացեալները շնորհաց ուխտով Վրիստոսի Հեա միաւորուած են , ու աւետարանին «մեծամեծ ու պատուական խոստմունքներուն» (բ. Պ. աւ. Կ.) յաժանորդ են : Ըստանկով Ըստուած կընայ «արդար ըլլալ , ու արդարացունել ան՝ որ Հիսուսի հաւատքէն է» : Հ. աւ. Կ. 26 :

Ըրդ՝ մինչև հիմա խօսուածներէն կերևայ թէ հաւատացելոց Վրիստոսի Հեա միաւորութիւնը քանի մը կերպերով կընմանի՝ ճիւղերուն որթին հեա միաւորութեանը , շինուածքի մը իր հիմանը հեա միաւորութեանը , մարդկային մարմնոյն իր գլխուն հեա միաւորութեանը , ամուսնական ուխտով այր և կնոջ մէջ հաստատուած միաւորութեանը , և թէ՛ բոլոր ճշմարիտ Վրիստոսեանները անբաժանելի կապակցութեամբ միաւորեալ են Վրիստոսի Հեա՝ իրենց սրտերուն սուրբ յօժարութիւններովը , որդեգրութեան հօգիտովը , մի և նոյն շահասխնդրութիւններով , ու փոխադարձ ուխտադրութեան խոստմունքներով :

Ըս խորհրդածութիւնները մեզի կառաջնորդեն մտածելու՝

Ը. Թէ որչափ մեծ է Ըստուծոյ բարեբարութիւնը ու խնամարհութիւնը , որ կըցուցընէ իր ձրի շնորհացը մէջ Հիսուս Վրիստոսի ձեռքը :

Թէպէտ և յանցաւոր ու գժոխքի արժանաւոր եմք՝ ինքը մեզի կառաջարկէ մեր մեղքերուն թողութիւն տալ , ու մեր հօգիներուն փրկութիւն : Ինքը մեզի կառաջարկէ



չնորհաց ուխտ մը՝ որով բոլոր զղջացող ու հաւատացող մեղաւորները ամենափափաքելի և խիստ պատուաւոր ազգակցութեան մը կրմանան Վրիստոսի հետ, ու անոր միջնորդութիւնովը յաւիտենական Աէհօվային հետ :

Թէ որ վատահամբաւ ու աղքատիկ տղեկ մը հարուստ և մեծահամբաւ գերդաստանի մը մէջ որդեգրութեան առնուի, ու ճշմարիտ ժառանգի մը արժանաւոր խանդաղատութեամբը անոր հետ վարվուի, բոլոր մարդիկ պիտի գովաբանեն անոր բարերարին անշահասէր խոնարհութիւնը : Այս սակայն ասիկայ ամենատկար նմանութիւն մըն է Աէհօվային խոնարհութեանը՝ որով ինքը կը հաճի մեղաւոր մարդը իր Արդոյն միաւորութեանը ընդունիլ ու անոր ժառանգակից ընել : Այս մեր յառաջ բերած օրինակին մէջ կերևայ թէ արարածը արարածի մը կը խոնարհի. բայց Աստուծոյ մեղաւորներուն ըրած բարեչնորհութեանը մէջ Անհուն Արարիչը յանցաւոր արարածին կը խոնարհի : Չրի ու գերագոյն շնորհքով մը կը խոնարհի իր գերդաստանին մէջը ընդունելու զանոնք, իր զաւկրները կոչելու զանոնք, ու իր աթոռին և թագաւորութեանը ժառանգներու պէս վարուիլ անոնց հետ : Իր Արդիին հետ՝ փառաց թագաւորին՝ Խորայէլի Վրկչին հետ միաւորութեան կը բարձրացունէ զանոնք : Ինչ մեծ բարերարութիւն, ինչ անձառելի խոնարհութիւն է սա :

Ի. Այս նիւթէս օգնութիւն կը գտնեմք ան ամենահարկաւոր խնդիրը մեր վրայ լուծելու, թէ՛ Արդեօք մենք ճշմարիտ Վրիստոսեայ և՞մք :

Վրիստոսեայ չեմք մենք՝ թէ որ վերոյիշեալ եղանակներովը իբրև անբախտելի կապով միաւորուած չեմք Տեառն մերոյ Հիսուս Վրիստոսի հետ : Այս թէ որ ճշմարտապէս Վրիստոսի հետ միացած եմք՝ ան նոյն յօժարութիւնները կունենամք սրտերնուս մէջը՝ որոնք որ ինքը ցուցուց երբոր մարդկան մէջ՝ կրբնակէր. որդեգրութեան հոգին կունենամք, ան նոյն շահախնդրութիւններուն ետեւ կը լլամք՝

որոնք որ ինքը կը փնտրուէր . մեղաց սէրը ու գործադրութիւնը կատեմք . Ըստուածային օրինաց դատապարտիչ վճիռէն փախչելով իրրեւ սպաստանարանի մը կը դիմեմք ան յոյսին որ աւետարանով մեզի կառաջադրուի . շնորհաց ուխտը կընդունիմք . ու վստահութեամբ և անկեղծութեամբ մեր անձերը Վրիստոսի կը մատուցանեմք իրրեւ մշտնջենաւոր յաղթանակ իր փրկական սիրոյն : Թէ որ ճշմարտապէս Վրիստոսի հետ միացած եմք՝ իր վրայ անանկ կենդանի հաւատք մը կունենամք ու կը բանեցունեմք որ չէ թէ առանց կենդանի զգացման միայն մեր մտքերը իրեն կը հաւատան , հապա նաև իր միջնորդութիւնը ջերմեռանդութեամբ ու սրտանց կընդունիմք , ու Ըստուծոյ քով ընդունելի ըլլալու համար բոլորովին իր արդեանցը կապաւնիմք : Թէ որ անբաժանելի միաւորութեամբ Վրիստոսի հետ միաւորված եմք՝ փոքր ՚ի շատէ մեր վրայ կունենամք ան Ըստուծոյ Վառին երկնաւոր յօժարութիւնը՝ որն որ ինքը գերազանցաբար կը բոցընէր աս արտասուաց հովտիս մէջ եղած ատենը . կը ջանամք հանապազօր իր օրը փառքին համար իր ունեցած նախանձաւորութիւնը ունենալ , մարդոց վրայ իր ունեցած բարեգթութիւնը ու կարեկցութիւնը ունենալ , իր խոնարհութիւնը ու հեղութիւնը՝ իր համբերութիւնը ու Ըստուածային կամաց իր հպատակութիւնը ունենալ : Այս ան մեծամեծ ու պատուական առարկաները՝ որոնք որ ինքը այնչափ նախանձաւորութեամբ կը փնտրուէր երկրիս վրայ , և որոնց որ տակաւին անձնատուր եղած է երկնից բարձրութեան մէջը , հանապազ պիտի արթնցունեն մեր խիստ աշխոյժ ու յարատեւող ջանացողութիւնները : Աւրեմն՝ ո՞վ սիրելի եղբարք , զգուշութեամբ քննեցէք ձեր սրտերը , ու ամենեւին մէկ վայրկեան մը մի հանգստանաք , մինչև որ բացայայտ ու որոշեալ վկայութիւն մը ունենաք թէ դուք Վրիստոսի հետ միաւորուած էք մշտնջենաւոր ուխտով :

Վ . Ինչպէս ամենահարկաւոր բան մըն է թէ Վրիս-

տոննայք Վրիստոսի հետ իրենց ունեցած վերաբերու-  
թեանը արժանաւոր ընթացք մը ունենան :

Աղէկ գիտեմք թէ մեր երկրաւոր ազգականներուն ու  
մերձաւորներուն վարքը մեծապէս կրօնը գործեն մեր համ-  
բաւոյն : Թէ որ աղէկ ըլլայ վարքերնին՝ իրենց վայլած  
պատուոյն մենք ալ բաժանորդ կը լլամք , բայց թէ որ մոռ-  
կան ու անառակ կեանք մը վարեն՝ իրենց վրայ բերած ան-  
պատուութիւնը մենք ալ կը կրեմք : Այս որչափ որ մօտ ըլլայ  
մեզի իրենց ազգակցութիւնը , այնչափ սաստկութեամբ կը  
վիրաւորէ մեզ իրենց անպատուութիւնը :

Ասոր նման երբոր մենք իբրև ճշմարիտ Վրիստոննայք  
Աստուծոյ մօտ ու խոնարհ ընթացք մը ունենամք , երբոր  
մեր դաւանած կրօնքը հաւատարմութեամբ և ունակու-  
թեամբ բռնեմք , երբոր մեր ամէն օրուան վարքին ու կեն-  
ցազավարութեանը մէջ ան առաքինութիւնները ցուցու-  
նեմք՝ որոնք որ մեր ամենաբարձրեալ վերկշին կեանքը  
այնչափ շքեղութեամբ նշանաւոր ըրին , անատենը Վրիս-  
տոսի ու իր կրօնքին վրայ պատիւ մը կը ձգեմք , աւետարա-  
նի վարդապետութիւնները կը փառազարդեմք , ու Վրիս-  
տոնէական կրօնքին գերագոյն պատուականութեանը կեն-  
դանի վկայութիւն մը առաջ կը բերեմք : Այս երբոր պիղծ  
գործքերով մեր դաւանութեան հակառակը գործեմք , եր-  
բոր բարեպաշտութեան պարտաւորութիւնները կատարե-  
լու գաղջ ու անհոգ և անփոյթ ըլլամք , երբոր հակամի-  
տիմք “ազահութեան” որ կուսապաշտութիւն է” , (Առլ . ք .  
5 .) ու յայտնապէս աւելի բաղձամք՝ աս աշխարհիս հարըս-  
տութիւնները հեշտութիւնները ու պատիւները վայելել  
քան թէ փառաւորեալ սուրբերուն ու հրեշտակներուն  
մէջ ժառանգութիւն մը ստանալու ջանալ , երբոր մեր  
վարքերը պիղծ ու անպատկառ և անաղօթասէր ու անհա-  
մեմատ ըլլան , ան ատենը Վրիստոս խորին “կը վիրաւորի  
իր սիրելիներուն տանը մէջ” , (Օտր . Ժ ք . 6 :) իր օրէնքը  
կեղծանի , իր սուրբ կրօնքը անպատիւ կը ըլլայ , ու մեղաւոր-

ները կրիստանան ու խորագոյն ևս կրնկըղմին անզղջութեան ու անհաւատութեան մէջ :

Եւրոպայի որովհետեւ Վրիստոսի ու իր կրօնքին զգալի փառաւորութիւնը այսչափ իր բարեկամներուն վարքէն կատեսալ է, և որովհետեւ մենք իր հետը ասանկ մտերիմ ու պատուաւոր միաւորութեան մը ընդունուած եմք, անշուշտ մեր վարուցը ու կենցաղավարութեանը մէջ սրբութեան պտուղներ պարտիմք ցուցնել : Պարտիմք յիշել թէ սերտ միաբանութեան մը մտած եմք անանկ Նազի մը հետ, որուն պատիւը անհուն սրբութիւն ունի, պարտիմք յիշել թէ անանկ ամենահարկաւոր գործ մը վրանիս առած եմք՝ որուն նմանը ոչ մարդիկ և ոչ հրեշտակները առաջուց իրենց վրայ առած էին : Արեւմե որչափ որ մեր պատուական հոգիներուն՝ ու մեր ընկերներուն անգին հոգիներուն համար, նոյնչափ ալ մեր Արկնաւոր Արդարապետին պատուոյն համար ամէն Վրիստոնէական պարտաւորութիւնները յարատեւութեամբ ու հաւատարմութեամբ պարտիմք ՚ի գործ զնել : Արկնային փառաց երթալու մեր ճամբուն մէջի բոլոր խոչընդոտները հաստատուն առաջադրութեամբ պարտիմք յաղթել : «Սեր առջևը եղած ասպարէզը համբերութեամբ պարտիմք վազել» : Եւր. ԺԻ. 1 : «Սեր կոչումը ու ընտրութիւնը հաստատ պահելու պարտիմք աւելի ջանք ընել» : Ի ՊԵՊ. ան. 10 : «Ատեի եղածները մոռնարով ու առջևի եղածներուն ետեւէն երթալով՝ սուրբ և աճեցուն եռանդով պարտիմք «վազել զէպի Մատուծոյ կոչման կէտին հասնելու Վրիստոս Հիստուով» : ՓԵՊ. Գ. 13, 14 :

Վ. Ա. Երջուպէս՝ մէկը թող չմոռնայ թէ Հիսուս Վրիստոսի հետ միաւորութիւն ունենալը անպատմելի կերպով հարկաւոր է ամէն մարդու :


Փրկութեան համար բացարձակապէս հարկաւոր բան մըն է ան : Ընտք որ Վրիստոսի հետ միաւորուած չեն, իր բրած քաութեանը հաղորդ չեն : Ըսանկները տակաւին

( )րէնքին դատապարտիչ վճռոյն տակն են : Հոգևոր մտօք մը “Եսեղճ” ու թշուառական՝ ու աղքատ՝ ու մերկ և կոյր են” : Հայտ. ք. 17 : “Եւանց Վրիստոսի են, Եսայէլի ընկերութենէն օտարացած են, խոսամոնէնքին ուխտէն դուրս ձգուած են, յոյս չունին, ու աշխարհի մէջ անաստուած են”, (Եփե. ք. 12 :) իրենց “մեղքերուն ու յանցանքներուն մէջ մեռած են” : Եփե. ք. 1 : Եւ իւրաքանչիւր մարդուն ուղորմելի վիճակը ասիկայ է՝ թէ որ ինքը Վրիստոսի հետ միաւորուած չէ : Ուրեմն ներում շնորհեցէք ինձի որ խանդակաթ սիրով բայց հաւատարմութեամբ ծանուցանեմ ձեզի ձեր վտանգը : Վանի որ ձեր սէրը ձեր յօժարութիւնները մեղքին ընծայած բերկրութիւններուն՝ աշխարհիս հարստութիւններուն՝ կամ մարդոցմէ եկած պատուոյն վրայ կը կայանայ, և քանի որ Վրիստոսի հետ միաւորութեան պատիւը ու երջանկութիւնը թեթեւ բան մը կը բնագուի, դուք զձեզ Հաւիտեանին բարկութեան տակը կը ձգէք : Վրիստոս Տէրն մեր հիմա ձեզի թողութիւն ու արդարութիւն՝ ու յաւիտենական կեանք կը մատուցանէ : Եստուծոյ հետ հաշտութիւն ստանալու պայմանները առջևնիդ կը բանայ : Իր անպատում ողորմութիւնովը ձեզի կը սպասէ որ ան պայմանները ընդունիք, ու իր առատապարգև շնորհքը չմերժէք : Իր բազմաչարչար մահուամբը ձեր մեղքերուն քառութիւն ըրաւ : Երազափայտին վրայ քաշած իր դառնակսկիծ հոգևարութեանը համար՝ մեռելներէն իր յարութիւն առնելուն համար՝ երկնային փառաց համբառնալու համար՝ դժոխքին բոլոր սարսափներուն ու երկնից բոլոր փառաւորութիւններուն համար՝ հիմա ինքը ձեզի կազաչէ որ իր ուխտը ընդունիք, ու Եստուծոյ հետ հաշտուիք : (Թէ որ իր մատուցած շնորհքը ընդունիք՝ ու ձեր կեանքը հաւատարմութեամբ իր ծառայութեանը մատուցանէք՝ ձեզ երկինքը պիտի ընդունի, որ “ինքը ուր է նէ՝ դուք ալ հոն ըլլաք” : Հոգ. ժք. 26 : “Վառքով ու պատիւով” (Սող. ը. 6 :) ձեզի պիտի պսակէ, ու պիտի բը-

նակիք հոն՝ ուր որ ուրախութեան կատարելութիւնն է : Իայց թէ որ մերժէք զՔրիստոս՝ ու իրեն փրկութիւնը, հարկաւ պիտի պատժուիք “յաւիտենական սատակումով Տէրոջը երեսէն ու անոր զօրութեան փառքէն” : ի ԹԻՄ . Կ . 9 : Վանդի Մատուած մարդ չէ որ սուտ խօսի : Եւ անդէ՛ ստ ալ յիշեցէք որ ամենասուրբ Երրորդութեան այսչափ բարեշնորհ միջոցները ասանկ մերժութիւն նէ , յաւիտեան ձեր կործանումը պիտի ծանրացունեն անոնք , ու պիտի ըլլան “մահուան հոտ դէպի մահ” : ի ԿՊԵՆՒ . ի . 16 :

Ուրեմն կազաչեմ ձեզի՛ համոզուեցէք մեծաջան խնամով դիտել ձեր մեղքը ու վտանգը : Սէկ դի ձգեցէք “ամբարիշտներուն կորստական ճամբան” (ԼՄՈՒՂ . ԺԳ . 15) : առանց մէկ վայրկեան մը ուշանալու : “Լ՛հա՛ ընդունելի ժամանակ , ահա՛ փրկութեան օր” : ի ԿՊԵՆՒ . Կ . 2 : “Լ՛յսօր թէ որ իր ձայնին կը լսէք , ձեր սիրտերը մի ամուրցունէք” : ՍՊՂ . ԴԳ . 8 : ԵԹԵՐ . Գ . 8 , 15 : Լ՛յսօր մեղքը ու խաւարին զօրութիւնները ատեցէք . Լ՛ստուծոյ առջևը դուք զձեզ խոնարհեցուցէք , ու աւետարանական հաւատքին կենդանի զօրութիւնովը՝ ի բոլոր սրտէ ընդունեցէք զՔրիստոս իբրև ձեր Սարգարէն՝ Վահանան ու Թազաւորը . ու ասանկով ձեր սրտերուն մէջը արմատացուցէք ան յաւիտենական ուխտը՝ որն որ ինքը իր արիւնովը կնքեց : Լ՛յսպէս պիտի ըլլաք միշտ ծաղկող ու միշտ պտղաբեր ճիւղերը ան “Կենաց ծառին՝ որ Լ՛ստուծոյ դրախտին մէջն է” :

(ՃՊԿԹ . ի . 7) Լ՛մէն :



## ԿԵՆԱՐԱՐ ԲԱՆՆ ԲԲԻՍՏՈՍԻ

## 1

Քու սուրբ խօսքը՝ Տէր իմ՝ Փրկիչ ,  
 Իմ վշտակիր սրտիս ազգէ .  
 'Աս առաջնորդ և սիրովիչ ,  
 Ընայ ինձ միշտ՝ ու ինձ օգնէ :

## 2

Խաբօշ Հաճոյք՝ իմին Հոգիս ,  
 Երկար ատեն մտորցուցին .  
 Սուս բարեքներ առ աշխարհիս ,  
 Ըս քեզ զիմ սէր խափանեցին :

## 3

Ընայ ձայնդ Տէր Հաւատարիմ ,  
 Խորունկ քունէս զիս արթնցուց .  
 Ըս քեզ դարձուց զանսանձ սիրտ իմ ,  
 Եւ իմ աչքէս արցունք վազցուց :

## 4

Մշտարհատէրք անդուշ կրսնն ,  
 Ո՛վ պիտի տայ մեզ բարութիւն .  
 Տէր դէմքըդ ջոյց աստուածեղէն ,  
 Տուր ինձ Արդւոյդ խաղաղութիւն :

## ՄԱՂԹԱՆ Ք

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱՐ

## 1

Եկեղեցիդ ընդհանրական ,  
 Որ քու սիրոյդ է առարկայ ,  
 Տէր իմ՝ շքնորհրդո հայրական ,  
 Յուցուր այսօր անոր վերայ :  
 Քու աշակերտքդ կաղօթեն ,  
 Սեճ հաւատքով ամեն տեղեր ,  
 Իրենց յոյսէն դատարկ չլլեն ,  
 Իսկ ո՞վ Յիսուս կայ՝ ի մէջ մեր :

## 2

Տէր քու բանիդ խոստումն յի՛նչ ,  
 Եւ հաճեցիր զայն կատարել .  
 Սուրբ Հոգիդ մեզ մխիթարէ ,  
 Սորվեցրնէ զքեզ օրհնել :  
 Բացցին աչք մեր առ լոյս Ֆրկէնդ ,  
 Ու սրտերնիս դարձաւ ուղղէ .  
 Եւ աղօթօղ եկեղեցիդ ,  
 Երջանկութեան դար վայելէ :

## 3

Թո՛ղ տարածի Ընկտարան ,  
 Ըրեւելքէն արեւմուտքին .  
 Եւ ամեն տեղ թող լսուի ձայն ,  
 'Այն օրհնութեան՝ ն. նոյն երգին :  
 Եւ ժողովուրդք խիստ վայրենի ,  
 Խաչին առջև դան ժողովին ,  
 Ու պատիւ տան անյաղթելի .  
 Թաղաւորաց Թաղաւորին :



## Ք Ա Ր Ո Ջ Է

### Վ Ե Ր Մ Տ Ի Ն Ծ Ն Ն Դ Ե Ը Ն Վ Բ Ա Յ

Դուք մի զարմանար որ քեզի ըսի . Գլխոք է նեզի նորէն ծնանիլ :  
Յովհ. Գ. 7 :

Ան վարդապետութիւնները որ մեծ զարմանք եղած են աշխարհիս մէջ , շատ անգամ ըստ ինքեան անտեղի բաներ չեն , ոչ ալ օտար կը թուին բարեկիրթ մտաց : Տգէտը միշտ պատրաստ է ապշելով նայելու ան նոյն բանին՝ որուն վրայ գիտունը խելքէ դուրս կամ հիացման արժանի բան մը չնշմարեր : Ասոր ճշմարիտ ըլլալը հաստատելու համար շատ օրինակներ կրնան տրուիլ . բայց իմ հիմնական գիտաւորութիւնս անոնցմէ միայն մէկը յառաջ բերել է , ան մէկը՝ որ 1800 տարի առաջ Աիկոզեմոսին զարմանքը շարժեց , և դեռ զարմանալի կերևնայ մանաւանդ թէ ծաղր կը լլայ աշխարհիս յիմարներէն , ըսել կուզեմ՝ Աորէն Օնանեելու կամ Զոգուվ Սրբով վերստին ծնանելու վարդապետութիւնը :

Աիկոզեմոս Վրիստոսի կուգայ , անոր նշանաւոր հանգամանքներէն հաստատ ղգացած ըլլալով՝ թէ անիկայ Աս-

տուժմէ խրկուած մէկ վարդապետ մըն է , որ ժողովրդոց մէջ ամէն օր զօրաւոր հրաշքներ ընելով իր Մատուժմէ խրկուած ըլլալը կը յայտնէ : Մայրիս Մատուժային վարդապետէ մը երևելի խրատներ կը յուսայ . և ինքը շրէական գիտութեանց մէջ անուանի ըլլալով անտարակոյս ինքզինքը կը համոզէ թէ կարող պիտի ըլլայ բոլոր իր լսածներուն խելք հասցնելու . բայց փոխանակ անոր փափաքը ընցնելու նորանոր և շտուած բաներ ըսելով Սեսիայի թագաւորութեանը վրայով , մէկ երկրաւոր իշխանի մը կամ զօրաւոր աշխարհակալի մը պէս ցուցնելով զանիկայ , ինչպէս որ Արկողեմոս ինքը և իր քաղաքացիները կը յուսային , կամ փոխանակ Սարգիսի մը պէս շրէից օրէնքին վրայով վիճաբանելու , երբոր աս խօսքերուն տեղը Հիսուս կը սկսի վսեմ և հաստատուն եղանակով մը պատասխան տալ և ծանուցանել անոր Արքային Օնունդ ըստած բանի մը հարկաւորութիւնը , ինչպէս կը զարմանայ Արկողեմոս : Մնահար է իրեն ասիկայ հասկընալ . տարօրինակ բան մը կը թուի ան , մէկ նոր վարդապետութիւն մը . և վաղվաղակի կը սկսի հակառակիլ , անհնարին և անհիմն համարելով զանիկայ . « Մնչպէս կրնայ մէկ մարդ մը ծընանիլ , ան որ ծեր է , նարաւոր բան է որ նորէն իր մօրը փորը մտնայ և ծնի » : Արնամք ըսել թէ աս հակառակութիւնը որ բոլորովին անվայել էր , և վարդապետութեան իմաստը մեծապէս սխալ իմանալէն ծագած , մէկ օրինակն է բոլոր ան հակառակութիւններուն որ ամէն ատեն աս վարդապետութեանս դէմ եղած են . անշուշտ անոնց ամէնն ալ տղիտութեան և յայտնի ճշմարտութեան վրայ սխալ գաղափարներ ունենալէն յառաջ եկած են , և աս է պատճառը որ մարդիկ աս խարայէլացի վարդապետին պէս կարծեցին թէ շատ զօրաւոր և իրաւացի փատտեր բերած են անոր դէմ , որ ատեն իրենց ըսածները իրօք անտեղի էին և նիւթին անյարմար , և մինչև անգամ բանին էութիւնը չէին հասկըցեր :

Հեղարարոյ Տէրն մեր Հիսուս մեծ աշխատութիւն կրեց որ աս վարդապետութեանս ճշմարիտ նշանակութիւնը Աիկողեմոսին իմացընէ : Աւստի քանի մը տարբեր օրինակներով կրբացաարէ զանիկայ . կըսէ անոր թէ ինքը ան խօսքովը ըսել չէր ուզեր բնականաբար նորէն ծնանիլը , այլ ջուրէն և Հոգիէն ծնանիլը . մէկ ծնունդ մը որ մարդս հոգեւոր կրկազմէ , և հետեւաբար արժանի կընէ ան հոգեւոր թագաւորութեանը որուն հաստատութեանը համար ինքը աշխարհ եկած էր . և որ Սուրբ Հոգին աս նորածնութեան հեղինակը՝ իր գերագոյն և ձրի շնորհքը կրխրկէ հովի պէս՝ որ ուզած տեղը կրփչէ : Աիկողեմոս զեռ ապշած կընայի անոր , և կըզարմանայ թէ ինչ ըսել կուզէ : 'Ի վերջոյ կը խոռովի , և կըհարցունէ . "Վս ի՞նչպէս կընայ ըլլալ" : Հիսուս կըսէ իրեն , թէ զարմանալին վարդապետութիւնը չէ՝ այլ իր տգիտութիւնը , որ ինքը օրինաց վարդապետ մը ըլլալով չէր իմանար զանիկայ . "Գուն Խորայէլացւոց վարդապետ մըն ես , և ասիկայ չե՞ս գիտեր" :

Բնարանիս կարգը այսպէս յառաջ կուգայ . "Վարմինէն ծնածը մարմին է . ու Հոգիէն ծնածը հոգի . վասն որոյ մի զարմանար որ ըսի քեզի . Պէտք է ձեզի նորէն ծնանիլ" : Ըսել կուզէ . Մն վարդապետութիւնը՝ որուն վրայ դուն այնչափ կըզարմանաս , ամենևին անտեղի բան մը չէ որ իմ բերնէս ըսելուդ համար զարմանաս : Գիտես որ բոլոր մարդիկ մարմինէն ծնած են , այսինքն՝ անանկ սերունդ մը ունին որ ապականեալ բնութիւն կըհազորդէ անոնց . և անոր համար մարմին են , այսինքն ապականեալ և մահկանացու . աս պատճառով բոլորովին անյարմար են իմ թագաւորութեանս մէջ մտնելու որ սուրբ է և հոգեւոր : Իայց հոգիէն ծնածը հոգի է , այսինքն՝ հոգեւոր և սուրբ է . վասն որոյ յարմար է ան հոգեւոր և սուրբ թագաւորութեանը , որն որ ես պիտի հաստատեմ : Աւստի , անշուշտ պէտք չէ որ զարմանաս աս վարդապետութեանս վրայ . զարմանալի՞ կերևնայ քեզի երբոր կըսեմ , թէ պիղծ և

ամբարիշտ արարածները պարտին փոխուիլ այսպիսի սուրբ ժողովի մը անդամ ըլլալու համար . չէ , աւելի իրաւունք ունիս ասոր հակառակը ըսուածին վրայ զարմանալու :

Ըրդ աս քարոզիս մէջ կուզեմ հաստատել թէ՛ Վորէն Օ՛նանելու վարդապետութիւնը ըստ ինքեան այլանդակ , անաղի կամ անհնար բան մը չէ որ արժանի ըլլայ զարմացման և արհամարհանաց , մանաւանդ թէ իրաւացի՝ հարկաւոր՝ և առ հասարակ ընդունելութեան արժանի է : Ուստի ինձի յարմար կերևնայ քննել , թէ՛

Ի՞նչ է նորէն ծնանիլը , և

Ո՞վ է անոր հեղինակը , և

Ի՞նչ հանրապէս ի՞նչ եղանակաւ կրնե՞րք որժէ զանիկայ :

Ո՞վ ունկնդիրք , փարատեցէք ձեր մտաց նախապաշարմունքը աս վարդապետութեանս դէմ . և քիչ մը տտեն դադարեցէք անոր վրայ զարմանալէն և զանիկայ ծաղը ընելէն , մինչև աս նիւթերը բացայայտուին , որ չըլլայ թէ չգիտցած բաներնուդ վրայ դէշ խօսողներ ըլլաք :

Ե . Ի՞նչ է Վորէն Օ՛նանիլը :

Ես “Վորէն ծնանիլ խօսքը՝ Սուրբ Վրոց մէջ եղած ուրիշ շատ խօսքերուն պէս այլարանական է . մեզի ընտել եղած բնական բաները օրինակ կրքերուին որ անոնցմով մեր միտքերը գերբնական բաներուն վերահասու ըլլայ , եթէ ոչ՝ մեր իմացականութենէն վեր եղած կը լլան : Ե՛մէնքս ալ գիտեմք “ծնանիլ” ըսուած բանին ինչ ըլլալը , և ասիկայ գիտնալով կիմանամք նորէն ծնանելուն ինչ նշանակիլը , զորօրինակ՝

1. Ինչպէս որ մեր առաջին ծնունդով մարդ կը լլամք , կամ մարդկային բնութեանը հաղորդ , անանկ ալ մեր երկրորդ ծնունդով Վրիստոնեսայ կը լլամք , և Եստուածային ու հոգևոր բնութիւն մը կունենամք :

2. Ինչպէս որ մեր առաջին ծնունդը աշխարհ կը մտցունէ

զմեզ և մարդկային ընկերութեանը մէջ, նոյնպէս մեր երկրորդ ծնունդը՝ Վրիստոսի եկեղեցիին մէջ կը մտցունէ զմեզ, և ան սուրբ ընկերութեանը ճշմարիտ անդամներ կընէ:

3. Ինչպէս որ մեր առաջին ծնանելովը մեր ծնողացը կը նմանիմք, գոնէ անոնց բնութեանը գլխաւոր հանգամանքներովը, նմանապէս մեր վերստին ծնանելովը Մատուածային բնութեանը հաղորդ կը լլամք, (ը Պէւր. ն. 4) այսինքն՝ Մատուծոյ սրբութեանը կը նմանիմք կամ Պօղոսի ըսածին պէս, իր պատկերին պէս կը նորոգիմք գիտութեամբ, արդարութեամբ և ճշմարիտ սրբութեամբ: (Եփէս. ք. 24: 1Կղ. ք. 10: Մարդիւնքը իր պատճառին պէս է, զաւակը իր հօրը կը նմանի: Մն որ մարմինէն կը ծնի մարմին է, և ան որ շոգիէն կը ծնի հոգի է:

4. Մեր առաջին ծնունդովը մանկական և որդիական սիրոյ բնաւորութիւն կունենամք մեր ծնողացը վրայ, և երբոր Մատուծմէ կը ծնանիմք, մանկական և որդիական սիրոյ բնաւորութիւն մը կունենամք անոր վրայ՝ որ մեր երկնաւոր շայրն է:

5. Ինչպէս ծննդեան ժամանակը անկատար եմք, բայց զարգացող վիճակի մը մէջ: Մարդկային բնութեան ամէն կարողութիւնները ունիմք, թէ և ամէնն ալ անկատար. բայց նոյն ատենէն անոնք կաճին և կը զարգանան, մինչև վերջապէս կատարելութեան կը հասնին: Մտոր պէս ալ մեր երկրորդ ծննդեան ժամանակը ամէն շնորհաց և առաքինութեան սկզբունքները մեր ներսի դին կը հաստատուին. բայց անոնց աճումը և զարգացումը՝ Վրիստոնէական կենցաղավարութեան կը կարօտի. և ան նոյն ատենէն անոնք առ սակաւ սակաւ կը սկսին աճիլ՝ թէ և բազմապատիկ միջահատութիւններով, մինչև որ մահուան ատենը կատարելութեան հասնին:

6. Մեր բնական ծնունդը մեծ փոփոխութիւն կը պատճառէ մեզի: Մն մանուկն որ յղացած է խաւարին մէջ, անշունչ և գրեթէ անզգայ, և բուսական կեանքէն քիչ մը

աւելի տարբերութիւն ունենալով , կը մտնէ նոր վիճակի մը մէջ , նոր զգացողութիւններ կունենայ , նոր տեսակ սնունդ կուզէ և նոր զօրութիւն կստանայ : Ըսոր համեմատ վերստին ծնունդը մէկ մեծ փոփոխութիւն մը կը պատճառէ մեղաւորին . Ըստուածային իրաց վրայ իր ունեցած գաղափարները կը փոխուին , իր զգայութիւնը՝ կենցաղաւարութիւնը և վիճակը կը փոխուին . անանկ մեծ փոփոխութիւն կունենայ որ արդարապէս արժանի է 'Աոր Սարգ կամ 'Աոր Ըրարած կոչուելու : Ըրգ իմ առեւտարանութիւնս շատ շերկարելու համար , կուզեմ միայն հարեանցի կերպով մը անցնիլ աս մեր յիշած սլաքանութեանը առաջարկած իւրաքանչիւր պարագային վրայէն , բացի վերջինէն որ խիստ հարկաւոր է և գիտութեան արժանի . այսինքն ան խօսքը թէ՛

Վերստին ծնունդը մեղաւորին գաղափարներուն՝ զգայութեանը՝ կենցաղաւարութեանը և վիճակին փոփոխութիւնը կը նշանակէ . և աս գլխոյն ներքեւը ուրիշ շատ մասնաւոր պարագաներ կը նամք հաւաքել :

Վերստին ծնունդ կոչուած բանին ինչ ըլլալը ցուցնելու համար Սուրբ Վիրքը տարբեր եղանակներով կը խօսի , բայց ամէնքն ալ կը ցուցնեն մեզի թէ անիկայ կը նշանակէ մեծ փոփոխութիւն մը : Արնկարագրուի իբրև մէկ յարութիւն մը , կամ 'ի մահուանէ դէպի կեանքը անցնիլ մը : "Այս դուք՝ կըսէ Պօղոս , որ ձեր մեղքերուն մէջ մեռած էիք , ինքը ձեզ կենդանացուց" : Լքվեա . ի . 1 : Արնկարագրուի մեզի իբրև նոր արարած մը ըլլալ . "Ինչ որ մէկը Վրիտանոսի մէջն է , կըսէ ան նոյն սրբազան մատենագիրը , անիկայ նոր արարած մըն է . ինչու որ հինը անցաւ , և հիմա ամէն բան նոր կ'ըլլա" : ի Արնվ . ն . 17 : "Աոր մարդը , կըսէ , վրանիդ հագէք , ան որ Ըստուծոյ պատկերին պէս ստեղծուած է , արդարութիւնով և ճշմարիտ սրբութիւնով" : Լքվեա . ի . 24 : Ըստնք և ասոնց պէս խօսքերը Սուրբ Վիրք մէջ կը նշանակեն մեծագոյն փոփոխու-

Թիւն մը : Հօգուոյն Սրբոյ շնորհքը կիջնայ մարդու վրայ  
 և կրնորոգէ զանիկայ , որ անասներ անհոգ , ազէտ , խրս-  
 տասիրտ և ապստամբ մեղաւորը կրփոխուի կըլայ խոհեմ ,  
 բարեմիտ , գորովագութ . և Նազանդ ծառայ Մատուծոյ :  
 Մէն շնորհաց և առաքինութեան սերմերը արմատ կը  
 բռնեն ան սրտին մէջ որ առաջ բոլորովին զուրկ էր ա-  
 նոնցմէ և մեղքով լցուած : Սեղաւորը որ երբէք յօժար  
 կամօք յարգութիւն մատուցած չէ մեծին Մատուծոյ , հիմա  
 կըպատուէ , կըհիանայ և կըսիրէ զանիկայ , հիմա զգա-  
 ցած է որ անիկայ իր ամենամեծ և ամենաբարի Մարիչն  
 է , զՄատուած իր գերագոյն երջանկութիւնը համարելով  
 կուրախանայ , և զուարթամիտ կընազանդի անոր իրբև  
 իր թագաւորին : Մաաջ իր բնութիւնը և վարքը աւելի  
 յարմար կուգար անաստուածի մը անհաւատութեանը քան  
 թէ Վրիստոնեայի մը հաւատքին . բայց հիմա անանկ կը  
 մտածէ , կըխօսի և կըգործէ որ յայտնի կիմացուի թէ անի-  
 կայ ճշմարտիւ կըհաւատայ մէկ Մատուած մը ըլլալը . Մա-  
 տուած մը՝ որ կըդիտէ իր բոլոր շաւիղները , և հաշիւ պիտի  
 խնդրէ իրմէն : Մն անձը որ միշտ Մատուածային օրինացը  
 սրբութենէն կըծանծրանար , և անոր կանոններուն խրս-  
 տութեանը դէմ կըբարոնջար , այժմ կըսիրէ զանիկայ ան  
 նոյն իրաւամբը՝ որով կատէր առաջ , այսինքն՝ անոր սուրբ  
 ըլլալուն համար : Մսիկայ էր Սաղմոսերգուին յօժարու-  
 թիւնը . “Վու խօսքդ շատ մարբուր է . անոր համար քու  
 ծառագ կըսիրէ զանիկայ” : Սող. ՃԺԺ . 140 : Եւ ասիկայ  
 էր Պօղոս առաքեալին յօժարութիւնը . “( )րէնքը սուրբ  
 է և պատօիրանքը սուրբ” , և ապա ինչ կըհետեւցունէ ,  
 “Երբսի մարդովը , կըսէ , Մատուծոյ օրէնքին կըհանիմ ,  
 և օրէնքին համար կըվկայեմ որ ան բարի է” : Հող. Է .  
 12 , 16 , 22 : Մն գոռոզ , կամակոր , խաբեբայ սիրտը հիմա  
 փոքր մանկան սրտի մը պէս դիւրանսաց , պարզ և ուղիղ է :  
 Վրիստոս կըսէ , “Թէ որ դարձի չգար , և փոքրիկ տղոց  
 պէս չըլլար , երկնից թագաւորութեան մէջը պիտի չմրտ-

նաք : Աստի ուլ որ իր անձը աս տղին պէս կըխոնարհեցընէ , անիկայ է մեծ երկնից թագաւորութեանը մէջը : Ստորէ . ԺԴ . 3 , 4 : Աս էր դարձեալ Վաւթի յօժարութիւնը . « Վճէր , իմ սիրտս չգոռողացաւ . . . յիրաւի իմ անձս իր մօրը կաթէն կտրած տղայի պէս հանդարտեցուցի . իմ անձս կաթէն կտրած տղայի պէս է » : Ստոր . ԺԿ . 1 , 2 : Ան սիրտը որ Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալէն ամենեկին բերկրութիւն մը չէր զգացեր , այլ իրբն առանց Աստուծոյ կապէր աշխարհիս մէջ , հիմա որդիական փափաք մը զգալով անոր կրօնտենայ , և խոնարհ համարձակութեամբ ու տղայական աղատութեամբ անոր կըդիմէ : « Արուհեանէ դուք որդիք էք , կըսէ Սուրբն Պօղոս , Աստուած իր Արդիին շոգին ձեր սիրտը խրկեց , որ կաղաղակէ Մարտի շայր » : Վաւթ . Դ . 6 : Ասել է , մենք որդի ըլլալովնիս կըկոչեմք Աստուծոյ , շայր շայր . այսպիսի սիրելի աշուն մը կրկնելը կաթողին սիրոյ և խանդակաթ համարձակութեան նշան է : Ան անձը որ իսկապէս սրտեռանդն խորհուրդ չէր ունեցեր հանդերձեալ վիճակին վրայօք , այժմ լաւ կըզգայ ան վարդապետութեան զօրութիւնը , և կընայի երկնից ու դժօխոց իրբն ամենհարկաւոր ճմարտութիւններու . ատեն մը երկրաւոր էր և մարմնաւոր , երկրաւոր բաներուն հետ սիրով կապուած , բայց այժմ միայն երկնից կըփափաքի . զիտէ որ իր գանձը երկնիքն է և պէտք է որ ինքն ալ հոն ըլլայ : Իր խորհուրդները որ առաջ հաղարումէկ տեսակ սնտոի բաներով զրաղեալ էին , հիմա շատ անգամ կամփոփուին միայն հաւատոյ իրաց վրայօք խոկալու : Վաւթ այժմ տարբեր գաղափարունի Հիսուսի վրայ . քանզի առաջ բաւական կըսեպէր միայն Վրիստոնէսայ կոչուիլ , Վրիստոսի կրօնքը դաւանիլ , անոր աշխարհի վրկիւն ըլլալը հաւատալ , ատեն ատեն իր աղօթքին մէջ անոր անունը յիշել , և միայն արտաքին արարողութիւններով անոր պաշտօն մատուցանել . բայց ո՛հ , այժմ կերեւսյ իրեն վրկիւն նոր երևոյթով :



Այժմ մեղաւորը խորին զգացողութեամբ համոզուած է թէ անիկայ է մի միայն ճշմարիտ փրկիչը . և խանդակաթ սիրով վառեալ յամենայն զօրութենէ անոր կրփարի , և բոլոր՝ իր յաւիտենականութիւնը անոր ձեռքը կը յանձնէ : Այժմ Վրիստոս իր ամենասիրելին է և ամենափառաւորը , և իր սիրտը հանապաղ յափշտակուած է անոր գեղեցկութիւնովը : Հիմա կաղօթէ անոր , կը ցանկայ և իր անձը անոր կրփափագի , կը զգայ թէ անիկայ է իր « ամէնը ամէն բանի մէջ » : Մէջ , հիմա առանց Վրիստոսի մնալու խորհուրդն անգամ իր անձը կը տոչորէ : Այսպէս Աստուած որ հրամանն ըրաւ խաւարէն լոյս ծագել , ծագեց իր սրտին մէջ , Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը , Հիսուս Վրիստոսի դէմքովը . ( Թ Կորնէ . Գ . 6 ) որ անոր զիմացը վրայ ամենապայծառ շառաւիղներով կը ծագէ ան լոյսը : Հիմա ան մարդը տարբեր խորհուրդ ունի նաև իր վրայ . կը տեսնէ զինքը յանցաւոր՝ կործանեալ՝ չար արարած մը , գլխովին մեղաց մէջ ընկղմած և զուրկ՝ ամէն բարութիւններէն , բացի ան բարութենէն՝ որ Աստուծոյ շնորհքը իր սրտին մէջ կը ներգործի . ո՛րչափ տարբեր է աս գաղափարը ան առջի ունեցած անձնարդարութեան կարծիքէն : Կնդաց վրայ ալ իր գաղափարները փոխուած են , առաջ անանկ կը կարծէր որ մեղքը թեթև պատժոյ արժանի մէկ գեշութիւն մըն է , միայն թէ պարտի զգոյշ կենալ մեծ եղևնագործութիւն մը ընելէն . բայց հիմա կը տեսնէ որ մեղքը ինչ աստիճան որ ըլլայ թէ մեծ և թէ փոքր ամէն ատեն խիստ անարգ է և անհուն պատժոյ արժանի : Վեշ խորհուրդ մը , չար կամեցողութիւն մը և առ Աստուած քիչ մը ցրտութիւն զգալը անգամ անանկ մեծ մեղք կը թուի իրեն , որ ոչ ուրիշ բան մը այլ միայն Աստուծոյ անսահման ողորմութիւնը կընայ թողութիւն տալ , և ան ողորմութիւնն ալ ոչ ուրիշ բանի մը համար՝ բայց միայն Հիսուս Վրիստոսի արդարութեանը համար : Կը տեսնէ զինքը յաւիտենական տանջանայ արժանի , և շատ անգամ կը զարմանայ որ աւետարանը իրեն պէս

Թշուառ յանցաւորի մը յուսոյ դուռն կը բանայ : Իր սիրտը կը ցաւի մտածելով որ երկար ժամանակ այնպիսի վատթար բանի մը տուած էր իր անձը և երբէք կատարեալ խաղաղութիւն չունենար քանի որ կը դգայ թէ մեղքը դեռ իր վրայ կը տիրէ : Իր ապաշխարութիւնն ալ չիմա ուրիշ կերպ է . առաջ անձնասիրութեան կը ծառայէր , և թէ որ երբեմն իր մեղացը վրայ մտածելով կը դողար , բայց ան զգայութիւնը՝ միայն ծառայական ահի սկզբունքէն կը ծագէր . պատժոյ երկիւղէն , և չէ թէ մեղքը ատելէն : Սակայն չիմա իր հոգին գերիի պէս չէ՝ այլ ազատ է . պատժոյ համար խորհուրդ մը չունեցած ատենն ալ կը սգայ մեղաց վրայ , իբրև անարգ և Վստուծոյ ատելի չարութիւն մը իր լալուն համար . կը սգայ և կը տրտմի մեղաց վրայ՝ Վստուծոյ դէմ գործած ըլլալուն համար . և ոչ միայն իբրև մեղաց վրէժխնդրին դէմ՝ այլ մեղաքարիչ Վստուծոյ դէմ գործած ըլլալուն համար : Իմա վեհանձն տրտմութեամբ կը տրտմի և կը ցաւի քաւեցեալ մեղաց Վրայ . և Վստուծոյ ողորմութիւնը՝ որ իր մեղքը կը ներէ , չէ թէ կը թեթեւցնէ մեղքը իր աչքին առջևը , այլ աւելի կը ծանրացնէ զանիկայ և է իր սիրտը կը խանգաղատէ : Վա՛ղ , չար և վատթար սրտով կը մեղանչէր ինքը ան Վստուծոյն դէմ որ իր անհուն ողորմութիւնովը ներեց ան ամէնը . աս խորհուրդը իր սիրտը կը բեկանէ . և Վստուծոյ ներող ըլլալուն համար ինքը բնաւ չներէր իր անձին : Սիրտը նոր տեսակ յօժարութիւններունի նաև կը ծնական պարտաւորութեանց մէջ . այլ ևս չկրնար առջի պէս ցրտութիւն կամ գաղջութիւն ունենալ , բայց իր կարողութիւնները վերջին աստիճան 'ի գործ կը դնէ . և երբ որ կը ծնական պաշտամանց մէջ ծուլութիւն մը զգայ , անհանգիստ կը լլայ , և կը ջանայ վերստին իր առջի եռանդը ձեռք առնելու : Փորձառութեամբ սորված է թէ աղէկ է իրեն Վստուծոյ մօտենալը , և աւետարանին արօնութիւնները ձանձրացուցիչ արարողութիւններ չեն , ինչպէս որ առաջ այնպէս էին , այլ կենաց և սիրտանաց մի-

ջոցներ . և երջանիկ կըհամարի ան ժամերը որ Մտուածային պաշտամանց մէջ կանցունէ : Հիմա աւետարանը ձանձրութիւն տուող հին և անպիտան պատմութիւն մը չէ , ինչպէս որ առաջ անանկ կերևնար , այլ երկնառաք և ուրախացուցիչ աւետիաներ պարունակող մատեան մը : 'Կորոգուած անձը' նոր ծնած երախայի պէս բանական և անխարեբայ կաթին կրփափաքի , որ անով մեծնայ . ( ԹՊԷ . ք . 2 ) և անիկայ իր սովորական կերակուրէն աւելի յարգի է իրեն : Հիմա անիկայ անհոգ և յանձնապաստան անձն մը չէ որ զգոյշ կենայ արժանէն աւելի կրօնական պարտաւորութիւն չկատարելու , և ինքզինքը շողորթութէ այնքան ջերմեռանդ ըլլալ հարկաւորութիւն չունենալու . այլ իրօք արթնցած է , և ջերմեռանդութեամբ կըջանայ նեղ դռնէն ներս մտնելու , ամէն կերպ դժուարութեանց յաղթելով : Մտած զգացած է որ կրօնքը որ ըստ օրէ յապաղելու նիւթ մը չէ , այլ հարկաւոր գործ մը և պէտք է որ անոր դէմ եղած ամէն հակառակութիւններուն յաղթէ : Համոզուած է թէ ինչ ըլլայ նէ ըլլայ , պէտք է որ իր անձը փրկէ , և զգացած է որ ասիկայ դիւրին բան մը չէ : Արջապէս Հոգևով Արբով նորոգուած անձը ամէն կերպով փոխուած է : Մտել չեմ ուզեր թէ փոփոխութիւնը ո՛ր և իցէ մասին մէջ կատարեալ է իր ներսի դին . աւա՛ղ . այնպէս չէ , մեղքը դեռ կենդանի է և երբեմն սաստիկ յուլմունք կը յարուցանէ , թէ և խաչեալ է . հին մարդը դժուար կը մեռնի : Մայց ես ըսել կուզեմ թէ փոփոխութիւնը իրօք ամէն կողմը տարածեալ է : Մնձը այլ ևս իր առջի եղածին պէս չէ . նոր գաղափարներ ունի հիմա , նոր զգայութիւններ , նոր ուրախութիւն , նոր արտմութիւն , նոր յօժարութիւն և ատելութիւն , նոր յոյս և երկիր , մէկ խօսքով՝ ինչպէս որ Մաքեալը կըսէ , ամէն բան նոր եղած է . ( ԹՊԷ . Լ . 17 . ) և անոր սրբազան աղօթքին համեմատ , բոլոր մարդը , հոգին և մարմինը ու անձը սրբացած է : ԹՊԷ . Ե . 23 :

Հաստեղ Սուրբ Գրոց վկայութեամբը կուզեմ նշանակել նորոգուած անձին քանի մը հանգամանքները : «Մէն ով որ կըսիրէ , Մատուծմէ ծնած է» . կըսէ Սուրբն Հովհաննէս : Թ՛սել է , ամէն ով որ նորէն ծնած է ամէն մարդոց վրայ յորդառատ սէր կունենայ , և աս սէրը կը պարտաւորէ զանիկայ բոլոր օրէնքը պահել մարդոց հետ իր կենցաղավարութեանը մէջ , (քանզի «Սէրը բոլոր օրէնքը կատարողն է») և թող չտար անոր մարդոց չար քան մը ընել . (քանզի «Սէրը չար չգործեր իր ընկերին») : Թ՛սել է , 10 : Մ՛ս սէրը ոչ միայն անոր բարեկամներուն կը տարածի , այլ նաև օտարներուն և մինչև անգամ թշնամիներուն : Մ՛նդ հանուր մարդկային բնութեան հետ կը բարեկամանայ , համօրէն երկրի վրայ կը տարածի , և բովանդակ մարդկային ազգը կը համբուրէ : Մայց քանզի արդարները երկրիս պատուականներն են , նորէն ծնած մարդուն սէրը աւելի է անոնց վրայ . և պատճառը յայտնի է . անոնք մասնաւոր կերպով մը իրեն եղբայրներն են , մի և նոյն երկնաւոր Հօրը զուկրները . որոնք անոր նմանութիւնը կը կրնն . ուստի թէ որ ան Մնագիրը կըսիրէ , պէտք է որ ( ) իննական ալ սիրէ . ինչպէս կըսէ Սուրբն Հովհաննէս . «Մէն ով որ ծնողը կըսիրէ , անկէց ծնածն ալ կըսիրէ» : Թ՛սել է . 1 :

Գարձեալ՝ աս նոյն Մարքեալը կընկարագրէ վերստին ծննդեան ուրիշ մէկ հանգամանքը , (Թ՛սել է . Թ՛ս . 4 , 5 .) և ասիկայ հաւատքով աշխարհին յաղթելն է . «Մն ամէնը որ Մատուծմէ ծնած է աշխարհի կը յաղթէ . և ասիկայ է յաղթութիւնը՝ որ աշխարհին կը յաղթէ , քի մեր հաւատքը» : Թ՛սել է թէ աշխարհիս հարստութիւնները՝ պատիւները կամ հեշտութիւնները և կամ մարդկային սեռին ընկերութիւնները ինչ փորձութիւններ որ բերելու ըլլան , Մատուծմէն ծնած մարդը անանկ զօրաւոր հաւատք ունի յաւիտենական բաներուն վրայ որ կը պարտաւորէ զինքը անոնց դէմ մարտելու և զանոնք յաղթելու : Մն անպէս անանկ

վատասիրտ չէ որ հալածումէն վախնայ : Մտուծոյ շնորհօքը կարող է փտանգները արհամարհել և նեղութեանց դէմ գնել այնպիսի լաւ փաստի մը համար : (Մ՛հ, ինչ մեծ փոփոխութիւն է իր կենացը ընթացքին մէջ :

Ս երստին ծննդեան մէկ երեւելի հանգամանքն ալ աս է . միշտ սուրբ վարք մը ունենալ , ամէն պարտաւորութիւն համեստութեամբ կատարել , և ամէն մեղաց դէմ կենալ մեծ նախանձով և պարկեշտութեամբ : Մէկ պարտաւորութիւն մը որչափ անսովոր՝ զգուելի և վտանգաւոր ըլլայ , ճշմարտապէս նորոգուած անձը կըջանայ պարկեշտութեամբ կատարել զանիկայ , և մէկ մեղք մը որչափ սովորական , ամէնուն հաճելի և շահաւէտ ըլլայ , անիկայ կաշխատի անոր դէմ կենալ և անկէջ հեռանալ : Մտիկայ անշուշտ ասանկ ըլլալ պէտք է . քանզի երբոր գործողութեան սկզբունքները փոխուին մարդու սրտին մէջ , գործողութեան ընթացքն ալ կըփոխուի . երբոր սիրաբ սուրբ է , անշուշտ յառաջ կըբերէ սրբութիւն վարուց . բարի ծառը բարի պտուղ կըբերէ : Հոյհաննէս առաքեալ զօրաւոր զանակաւ , և զանազան ձևերով կըցուցընէ ասոր հաստատութիւնը : «Վիտեմք , կըսէ , թէ ամէն ով որ արգարութիւն կըգործէ , անկէջ (Մտուծմէ) ծնած է» : Ինչո՞ք . Թ . 29 : «Վիտեմք որ ան ամէնը որ Մտուծմէ ծնած է մեղք չգործեր» . այսինքն՝ միշտ իր անձը սուրբ պահել կըջանայ , և մեղանշելը իրեն ունակութիւն մը ըրած չէ որ յայտնի մեղաւոր մը համարուի . «բայց ան որ Մտուծմէ ծնած է ինքզինքը կըպահէ» . այսինքն՝ ինքզինքը մեղաց ախտէն կըպահէ , «ու ան չարք իրեն չմտենար» : Ինչո՞ք . Թ . 18 : «Որդեակք՝ կըսէ , մէկը ձեզ չխարէ , ան որ արդար է , արգարութիւն կըգործէ , և ան որ մեղք կըգործէ սատանայէն է . ամէն ով որ Մտուծմէ ծնած է մեղք չգործեր» . այսինքն՝ ( ինչպէս որ վերը ըսի ) անիկայ սովորութիւն ըրած չէ իր վարքին մէջ միշտ մեղք գործել , որպէս զի մեղքը իր զլխաւոր հանգամանքը ըրած ըլլայ ,

“բանդի անոր սերմը իր մէջը կը մնայ” . այսինքն՝ վերըստին ծննդեամբ իր մէջը հաստատուած շնորհաց սկզբունքները միշտ կենդանի են, և բնաւ պիտի չձգեն զանիկայ նորէն մեղանշելու, ինչպէս որ առաջ կընէր . “և չկրնար մեղանշել, պատճառն որ Մտուածմէ ծնած է” . իր Մտուածմէ ծնած ըլլալը բնաւ չթողուր որ անիկայ՝ նորէն մեղք գործելու դառնայ : “Մով յայանի են մէկզմէկէ Մտուածոյ որդիքը, ու Սատանայի որդիքը” . այսինքն՝ Մսիկայ է անոնց մէջ եղած ան մեծ և երևելի որոշմունքը . “ամէն ով որ արդարութիւն չգործեր անիկայ Մտուածմէ չէ” : ԹՄՆ . Կ . 7—10 : Ուրեմն կըտեսնէք որ սուրբ վարք մը ունենալը վերստին՝ ծննդեան ամենաստոյգ նշաններէն մէկն է . ուստի պարապ տեղը կըկարծեն անոնք թէ նորէն ծնած են, կամ կըպարծենան թէ կրօնքին վերաբերեալ ամէն բան կըկատարեն և գիտեն, թէ որ սուրբ չեն իրենց բոլոր վարքին մէջ, և արդարութեամբ, զգաստութեամբ ու Մտուածպաշտութեամբ չեն ապրիր աշխարհիս մէջ :

Ըրդ՝ ո՛վ եղբարք իմ, յուսամ թէ հիմա հասկըցած էք վերստին ծննդեան ինչ նշանակելը : Բայց աս նիւթս դարձեալ քննելով կան բանի մը հարկաւոր բաներ, որոնք ձեր ուշադրութեանը կը յանձնեմ :

Վասն կըխնդրեմ ձեզմէ որ ուշադրութիւն ընէք աս բանին, թէ Սուրբ Վրոց մտքին նայելով Վերտութիւնը և Վերըստին Օնունդը, մի և նոյն բան են մի : Ես ասանկ կըդաւանիմ որ մկրտութիւնը խորհրդական նշան մըն է նորէն ծնանելուն, ճիշտ ինտոր որ Տերունական Միթրիքը Վտորհրդական նշան մըն է Քրիստոսի մարմնոյ և արեանը : Բայց երբոր մարդիկ անանկ կիմանան թէ վերստին ծնունդը՝ որ Սուրբ Վրոց մէջ իբրև մէկ անհրաժեշտ հարկաւորութիւն մը կըպահանջուի մեր փրկութեանը համար, ուրիշ բան ըսել չէ բայց միայն մկրտութիւն . ասիկայ խիստ վտանգաւոր սխալ մըն է և պէտք չէ լուութեամբ անցնիլ աս բանիս վրայէն : Ուստի հիմա ձեզի մէկ խորհուրդ մը

կառաջարկեմ, և բանը ձեզի կըթողում, որ դուք կարող  
 ըլլաք դիւրին կերպով դատել աս վէճը : (Թէ որ Սուրբ  
 Վրոց իմաստին նայելով մկրտութիւնն է վերստին ծնունդ  
 դը, ուրեմն Սուրբ Վրոց մէջ ինչ որ կրտուի նորոգուած,  
 նորէն ծնած կամ նոր արարած եղած անձանց վրայ, պէտք  
 է որ ան նոյն խօսքերը ճշմարիտ ըլլան նաև մկրտեալ ան-  
 ձանց վրայ : Ըստիկայ այնպէս պարզ սկզբունք մըն է որ  
 դժուար է աւելի պարզել զանիկայ) : Քանզի եթէ ըսեմք՝  
 թէ մկրտութիւն և վերստին ծնունդ նոյն բան են, անստեղծ  
 ինչ որ ըսուած է վերստին ծննդեան համար՝ նոյնը պէտք է  
 մկրտութեան համար ալ ըսուիլ : Ըս դիւրիմաց սկզբունքը  
 ձեռք առնելով, քանի մը օրինակներով քննութիւն ը-  
 նեմք, և նայիմք թէ ինչպէս է բանը : Սուրբ Վրոց իմաս-  
 տին համեմատ նորոգուած կամ Ըստուծմէ ծնած անձը  
 ունակարար մեղք գործող վարք մը չունի : Տե՛ս, Թէ (Յճ. Ե.  
 18 : Հիմա դարձուր խօսքը՝ մկրտեալին վրայ և տե՛ս թէ  
 ինչպէս կըկարգացուի : «Ըն ամէնը որ մկրտուած է մեղք  
 չգործեր, բայց ան որ մկրտուած է ինքզինքը կըպահէ, ու  
 չարը անոր չճտեմնար» : Ճշմարտութեան երևոյթ մը կայ  
 աս խօսքին մէջ : դուք ամէնքդ ալ շատ աղէկ չէք գիտեր  
 մկրտեալ մարդոց շատերուն ինչ վարք ունենալը, որ իմա-  
 նաք թէ աս վերի խօսքը սխալ է : Վանզի երկրիս վրայ  
 շատ մկրտեալ անձինք կան որ եղևոնագործ մեղաւորներ  
 են : Վարձեալ Սուրբ Վրոց իմաստին համեմատ, «Ըն ա-  
 մէնը որ Ըստուծմէ ծնած է, աշխարհին կըյաղթէ» : (Թէ (Յճ.  
 Ե. 4 : ) բայց կրնամք ըսել թէ «Ըն ամէնը որ մկրտուած  
 է աշխարհի կը յաղթէ» : Ըմանապէս «Թէ որ մէկը Վր-  
 րիստոսի մէջ է, կրտ Սուրբ Վրոցը, անիկայ նոր ստեղ-  
 ծուած մըն է, հինը անցած է, և ամէն բան նոր եղած է» :  
 Ը Վրոն՝ Ե. 17 : Բայց ինչպէս այլանդակ պիտի երևնայ եր-  
 բոր ըսուի . «Թէ որ մէկը մկրտուած է, անիկայ նոր ստեղ-  
 ծուած մըն է, հինը անցած է, և ամէն բան նոր եղած է» :  
 Ըս ո՞վ կրնայ ըսել թէ մկրտութիւնը այնպիսի փոփոխու-

Թիւն մըն է մկրտուած անձին վրայ, որ նոր ստեղծուած կոչուի ան: Ըրդ յայտնի չէ՞ որ նորոգութիւնը կամ վերստին ծնունդը մկրտութենէն աւելի ներքին՝ և աւելի մարդու բոլոր բնութիւնը այլափոխող բան մըն է. և թէ լոկ ջրով մկրտեալ անձը ստացած չէ ան նորոգութիւնը որ հարկաւոր է երկնից թագաւորութեան մէջը ընդունուելուն համար:

Հոս տեղ յառաջ կրբերեմ նաև մէկ պարզ, դիւրինաց և ճշմարիտ փաստ մը աս նոյն նիւթիս վրայով: Պօղոս առաքեալ Կորնթացոց գրած թուղթին մէջ կըսէ. «Վոհուցութիւն իմ Ըստուծոյս, որ ձեզմէ մէկը չմկրտեցի, միայն Կրիստոսը ու Վայիտը»: Ինչ Կորնթ. ւ. 14: Իսկ եթէ մկրտութիւնը նորէն ծնանիլ ըլլար, պէտք էր որ աս խօսքին նշանակութիւնն ըլլար նաև այսպէս. Վոհուցութիւն իմ Ըստուծոյս, որ ձեզմէ մէկը նորէն չծնայ: Իսկից զոհութիւն մատուցանելու պատճառ մըն է. կրնա՞յ զոհութիւն մատուցանել Ըստուծոյ՝ անոնցմէ մէկը նորէն ծնած չըլլալուն համար: Առաքեալը կըսէ, թէ «Վրիստոս զիս մկրտելու չխրկեց»: Ինչ Կորնթ. ւ. 17: Սիթէ կրնա՞մք ըսել, թէ Վրիստոս աս երևելի առաքեալը չխրկեց վերստին ծննդեան գործը տարածելու: Արի՛շ տեղ մը նոյն Առաքեալը ինքզինքը անոնց հայր կըկոչէ. «Ինչու որ, կըսէ, Վրիստոս ճիստսով ես ձեզ ծնայ աւետարանովը»: Ինչ Կորնթ. 7. 15: Աւստի եթէ մկրտութիւնն ըլլար վերստին ծնունդը, կարող չէր անոնց հայրը կոչուելու, կամ անոնց նորոգութեանը պատճառ ըլլալու մինչև որ չմկրտէր զանոնք: Ըսկեց յայտնի է որ Պօղոս մեծ տարբերութիւն մը կրնէր մկրտութեան և վերստին ծննդեան մէջ:

Վպա ուրեմն թող մէկը ձեզ շխարհ սնտախ խօսքերով: Սկրտութիւնը Տեառն մերոյ ճիստա Վրիստոսի հաստատած խորհուրդն է, և պէտք է մեծ համարում ունենալ անոր վրայ. բայց չէ թէ թիւրեւ պէտք է զանիկայ, ուրիշ բանի մը՝ տեղ դնելով: Հաւատացէք որ մկրտութիւնը



Հողուով Սրբով վերստին ծնանիլ չէ, որն որ հարկուոր է ամենուն՝ երկնից թագաւորութիւնը մանելու համար:

Սրիշ մէկ բանն ալ որ ձեր ուշադրութեանը կը թողում՝ աս է, թէ վերստին ծնունդը կամ նորոգութիւնը բանաւոր և վսեմ չէ՞ մի: Այս արդեօք ասանկ մէկ մեծ փոփոխութիւն մը որ կը լլայ մարդուս բնութեանը և վարքին մէջ անշուշտ արժանի չէ՞ նոր ծնունդ կոչուելու: Արբոր մէկը Հողուով Սրբով վերստին ծնանի, իր ապականեալ բնութիւնը կը նորոգի, և իր սրտին մէջ կը հաստատուին ամէն Աստուածային շնորհքները և առաքինութիւնները: Այս սիրտը վսեմ զգայութիւններ կունենայ, իր խմցականութիւնը խիստ շահաւէտ և երեւի բաներուն վրայ պատշաճաւոր խորհուրդներ կունենայ, և արդար վարք ու գործք կունենայ առ Աստուած և առ մարդիկ, պարզապէս ըսելով՝ ան նուաստ՝ ապականեալ՝ երկրածին արարածը, Պետրոսի ըսածին պէս՝ «Աստուածային բնութեանը հաղորդ կը լլայ: ք Պէր. Թ. 4: 15» փառաւոր և զարմանալի փոփոխութիւն: Թէ որ ձեր ոտիցը կոխած երկրին մէկ մասը բարձրանար, և արեգակնափայլ շողշողար, յիրաւի այնքան փառաւոր փոփոխութիւն մը պիտի չերևնար: Այս փոփոխութիւնը երկնային բնութիւն կուտայ մարդուն, և կը պատրաստէ զանիկայ սրբազան գաւառին գործերուն և վայելչութեանցը:

Այսն որոյ դուք մի զարմանաք, որ ըսի ձեզի թէ պարտիք նորէն ծնանիլ: Սի հիանաք և ապշած նայիք ինձի, այլանդակ նոր և անտեղի բան մը սեպելով իմ ըսածս, երբոր կիմացունեմ թէ՛ դուք պարտիք Հողուով Սրբով վերստին ծնանիլ աս իմ բացայայտած կերպովս, թէ որ կուզէք երկնից թագաւորութեան մէջը մտնել: Հարցուցէք բուն ձեր անձերուն և փորձառութեանցը, և անոնք պիտի ըսեն ձեզի, թէ երկինքը կատարելապէս սրբութեան բնակարան է, և որովհետեւ դուք անտարակոյս կործանեալ և մեղապարտ արարածներ էք, վասն որոյ պարտիք անանկ փոխ-

ուիլ որ սուրբ ըլլաք, կամ այլաբանօրէն ըսելով, դուք պարտիք վերստին ծնանիլ ան սրբութեան բնականը մտնելէն առաջ. կամ հարցուցէք Մատուածաշնչին՝ (որուն համար կամ պէտք է ըսէք որ Ճշմարտապէս Մատուծոյ Այսօրքն է, կամ պէտք է խոստովանիք որ մեծապէս կեղծաորներ էք Վրիստոնէական հաւատոյ դաւանութեանը մէջ.) հարցուցէք կրեմ ձեր Մատուածաշնչին, և հոն զօրաւոր խօսքերով հաստատուած պիտի գտնէք նորէն ծնանելու հարկաւորութիւնը: Զոս տեղ նորէն յիշեցնեն՞մ ձեզի բնաբանիս խօսքերը որ վսեմ եղանակաւ Վրիստոս կը հաստատէ. «Ղճմարիտ ճշմարիտ կրեմ քեզի, թէ որ մէկ մարդ մը նորէն ծնանի, չկրնար Մատուծոյ թագաւորութիւնը տեսնել»: Ին նոյն օրնեալ շրթունքներն էին նաև որ աս հաստատ վկայութիւնը ըրին. «Թէ որ դարձի չգաք, և տղայոց պէս չըլլաք, երկնից թագաւորութեան մէջը պիտի չմտնէք»: Ստա. Ժ. 3: Վմանապէս Պօղոս կըսէ. Թէ որ մէկը Վրիստոսի մէջ է, (ինչպէս որ մենք ամենքս ալ պարտիք այնպէս ըլլալ որ կարող ըլլամք իրմով փրկուիլ) անիկայ նոր ստեղծուած մըն է, և այլն: «Մոր ստեղծուածն եմք, Վրիստոս Հիսուսով հաստատուած բարի գործքերու համար»: Եր. 10: «Վրիստոս Հիսուսով ոչ թրիատութիւնը բան մըն է ոչ անթրիատութիւնը, հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը». որ ըսել է՝ թէ արտաքին կրօնական բոլոր արարողութիւնները թէ շրէական և թէ Վրիստոնէական անօգուտ բաներ են առանց աս նոր ստեղծուած ըլլալու: Գալ. 5. 15:

Մտիկայ աւելի բացայայտ նշանակուած է շին Ատակաբանին խոստմամբը: Եր. 25, 26: «Եր սիրտ մը պիտի տամ ձեզի, և նոր հոգի մը պիտի դնեմ ձեր մէջը» Եր. 12: Եւ աս բաղմնապատիկ վկայութիւնները բաւական չեն աս մեծ փոփոխութեանս հարկաւորութիւնը ձեզի իմացընելու. այլ ևս զարմանալու էք, երբոր ըսուի ձեզի թէ՛ Պարտիք վերստին ծնանիլ. ոչ, միայն զարմանալու էք ա-

սոր հակառակը լսելով . արդարև պէտք է զարմանաք երբոր ըսեն ձեզի, թէ պիղծ մեղաւոր մը, առանց փոխուելու նոր մարդ ըլլալու, յարմար է ամենասուրբը Մատուծոյ առջին երկելու, յարմար է երկնից սուրբ վայելչութեանց ճաշակը առնելու, և կարող է երջանիկ ըլլալ այն նոյն բանին մէջ որ բոլորովին հակառակ է իր բնութեանը : Մշուշտ ասիկայ տարօրինակ և անտեղի վարդապետութիւն է, և երբոր ասանկ խօսք մը լսէք, իրաւունք ունիք անոր վրայ զարմանալու, և բոլոր ասանկ անտեղի և յիմար խօսքերը անարգելու :

Ըրգ տեսանք որ ճշմարիտ է ան խօսքը թէ մինչև մարգ վերստին չծնի, չկրնար երկնից թագաւորութիւնը մաննելու . ուրեմն ասկէց կերևնայ թէ աս ժողովուրդիս մէջ որչափ անձինք որ վերստին ծնած են, նոյնչափ Մատուծոյ առջևը հաճելի վիճակի մը մէջ են, և պատրաստ երկնից երջանկութեանը . և զարձեալ՝ որչափ անձինք որ նորոգուած չեն, նոյնչափ մեղաց մէջ մեռեալ կրմնան, Մատուծոյ բարկութեան ներքևը և յախտենական թշուառութեան ենթակայ : Արեւմտի իւրաքանչիւր ոք թող ըսէ իր անձին . թէ որ ես նորէն ծնած չեմ՝ ամենեկին պատճառ մը չունիմ երջանկութեան յուսալու մինչև որ իմ հիմակուան վիճակէս չաղատուիմ ու չնորոգուիմ :

Շոս տեղ ուրիշ մէկ խիստ հարկաւոր խնդիր մըն ալ կայ . թէ դուք արդեօք փորձով զգացած էք վերստին ծնաննելու օրհնեալ փոփոխութիւնը : Ըս իմ ստորագրած կերպովս փոխուած են մի ձեր գաղափարները՝ ձեր բնութիւնը՝ և ձեր վարքը . և կարող էք իրաւամբ ձեզի սեպհականնել նորոգութեան բոլոր հանգամանքները : Աեցէք բիշ մը առնն, զգուշութեամբ մտածեցէք . յիշեցէք ձեր անցեալ փորձառութիւնները, քննեցէք ձեր սիրտերը, ձեր ընթացքը նկատեցէք, և աս ամենէն ջանացէք ուղիղ պատասխան մը տալ աս հարցմունքին . «Վրդեօք ես նորէն ծնած եմ» :

Թէ որ կրնայք պատասխանել «Մ. յո, կը յուսամ թէ նորէն ծնած եմ», անատենը Պետրոս առաքեալ պիտի ըսէ ձեզի ասոր երջանիկ հետեւութիւնը, այսպէս. «()ընեալ է Մատուած՝ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսին շայրը. որ իր առատ ողորմութիւնովը մեզ նորէն ծնաւ ան կենդանի յոյսին համար . . . անեղծ ու անարատ և անթաւամ ժառանգութեանը համար, որ երկինքը ձեզի պահուած է. որ Մատուծոյ զորութիւնովը պահուած էք հաւատքով ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած է ետքի ժամանակները յայտնուելու. որ անով ուրախ պիտի ըլլաք, որ հիմա քիչ մը (ինչպէս բանը կը բերէ) տրամած էք զանազան փորձութիւններով» : Ին Պէր. Ին, 3—6 :

Սակայն ընդհակառակն թէ որ կը րեանէք որ նորէն ծնած չէք, ի՞նչ ընելու էք. կուղէ՞ք տակաւին ան վիճակին մէջ մնալ, կամ պիտի ջանաք անկէց դուրս ելլելու : Աս անոր համար ձեր վիճակը կը ցուցնեն ձեզի, որ փախչիք անկէց և երջանիք ըլլաք. և թէ որ դուք ալ աս իմ նպատակիս կը համաձայնիք, յուսամ որ Մատուծոյ շնորհքը մեր փափաքը յաջող վախճան մը պիտի ունենայ : Մտիկայ յառաջ կը բերէ երկրորդ հարցմունքը, թէ՛

Բ. Ո՞վ է վերստին ծննդեան շեղինակը :

Նորոգութիւնը այնպիսի մեծ, այնպիսի վսեմ և սքանչելի է որ միայն ասկէց կրնամք մակաբերել թէ անիկայ մի միայն Մատուածային կարողութեամբ կրնայ կատարուիլ : Աւ մարդկային բնութիւնը իր եղած վիճակին մէջ այնպէս ապականեալ և տկար է որ ոչ յօժարութիւն ունի և ոչ ալ կարող է ըստ ինքեան գործելու զանիկայ : Մատուածաշնչին մէջն ալ միայն Մատուծոյ ընծայուած է ան գործը. կրկին և կրկին անգամ ըսուած է թէ նորոգուած անձը Մատուծմէ ծնած է, «ոչ արիւնէն, և ոչ մարմինին կամքէն՝ ոչ ալ մարդու կամքէն, այլ Մատուծմէ ծնած» : Հ. ղ. Ին, 13 :

Ըմէն բան նոր եղաւ, կրսէ Պօղոս, և ամէն բան (այսինքն՝ ամէն աս նոր եղած բանը) Ըստուծմէ է: ի Կորնթ. Ե. 17, 18: Ըմէն բարի տուրք, ու ամէն կատարեալ պարզեաները, կրսէ Տակօրոս, վերէն են՝ լուսոյ Զօրմէն կիջնան. որ իր կամքովը մեզ ծնաւ Ճշմարտութեան խօսքովը: Տճ. 17, 18: Տօհաննու երրորդ գլխոյն մէջ, ուրկէջ իմ բնաբանս առած եմ, շատ անգամ յիշուած է թէ Զօգին է վերստին ծննդեան Զեղինակը:

Զիմա՝ ուրեմն կրտեսնէք, սիվ մեղաւորք, որմէն յուսալու էք աս օրհնութիւնս, վերստին ծնունդը: Ինչպէս որ առաջ կարող չէիք ձեր անձերը ծնանիլ, անանկ ալ Զիմա կարող չէք ձեր անձերը նորէն ծնանիլ: Պէտք է որ շատ խորին զգայութիւն ունենաք աս բանիս: Բայց ան որ ստեղծեց զձեզ, կարող է նորէն ծնանիլ զձեզ և իր ստեղծուածը նորոգել, որն որ դուք կործանեցիք: Աւ անիկայ արդէն շատերուն սիրտերը իրօք փոխած է աս աշխարհիս մէջ: Բուստի յարմար է յառաջ բերել երրորդ խնդիրը, թէ՛

Գ. Զօգին Սուրբ, աս փոփոխութեան Զեղինակը՝ Ի՞նչ եղանակաւ յառաջ կրբերէ զանիկայ:

Սամանակս բաւական չէ անոր գործածած զանազան եղանակները մի ըստ միօրէ ստորագրել: Բայց որովհետև գործին էութիւնը միօրինակ է ամէն չափահաս անձանց վրայ, վասն որոյ ընդհանրապէս աս հետևեալ կերպովս կըսկսի մարդուս նորոգութիւնը: Ասխառաջին Զօգին Սուրբ կըզգացունէ մեղաւորին այսպիսի նորոգութեան մը կարօտ ըլլալը, յայտնի ընելով անոր՝ իր յանցանքը և վճատանգը, և մանաւանդ իր բնութեանը կատարեալ կործանումը: Սեղաւորը յանկարծ կարթննայ իր անղգայ մնացած անհոգութեան վիճակէն, կիմանայ Ըստուծոյ սրբութիւնը, օրէնքին մաքրութիւնը, անոր պատժոյն զարհուրանքը, մեղաց վատթարութիւնը, և մեղաց պատճառով Ըստուծոյ

սրտմտութեանը իր ենթակայ ըլլալը : Ըստը վրայ կըսկսի տրտմիլ և մտածել, իր միտքը անհանգիստ է և հոգ կըտանի իր վիճակին վրայով : Կը ջանայ նոր վարք մը ունենալ, և ջերմեռանդութեամբ գործկած է այն շնորհաց միջոցները՝ որոնք առաջ անձանօթ էին իրեն : Ըտեն մը աս ընթացքովս յառաջանալով՝ գուցէ կըսկըսի իր անձը շողօքորթել, թէ հիմա անվտանգ է : Բայց աւա՛ղ, դեռ չգիտէր իր անձին վատթարութիւնը : Ուստի Սուրբ Հոգին անոր աշուրները կըբանայ որ իր բովանդակ անձին մէջ եղած ընդհանուր ապականութիւնը տեսնէ, և զգայ որ իր վարուցը արտաքին ուղղութիւնը կարող չէ այս վաղեմի հիւանդութեանը դարման ըլլալու : Ըպա լուսաւորեալ մեղաւորը անձնատուր կըլլայ շնորհաց միջոցները գործածելու կրկնապատիկ ժրութեամբ և ջերմեռանդութեամբ, և կըփութայ իր սիրտը եղած գործողութեան սկզբունքները փոխելու . բայց ափսո՛ս . կըտեսնէ որ իր սիրտը յամառեալ է և գլխովին անհնազանդ . և շատ ատեն ընդունայն ջանքեր ընելէն ետև, ճշմարտապէս կըզգայ իր անկարող ըլլալը, և իր բարեխաւութեանը համար բացարձակապէս Ըստուծոյ կարողութեանը կարօտ ըլլալը : Այսն որոյ շնորհաց աթոռին առջևը իյնալով կըխոստովանի որ ինքը ողորմելի՛ տառապեալ՝ անօգնական մեղաւոր մըն է, բոլորովին շնորհաց կարօտ, և անկարող ինքն իրեն դարման մատուցանելու : Ըատ ատեն պէտք է որ ստորագրեմ ձեզի այն աղօթքները, վշտալից երկիւղները, սրտաբեկութիւնները, աղաղակները և արտասուքը, որ շատ անգամ աս վիճակիս մէջ եղող անձանց կըպատահին : Բայց մէկ խօսքով՝ մեղաւորը աս անյուսութեան մէջ ինկած ատենը Ըստուած կըհաճի ցուցնել անոր իր ողորմութիւնը : Ըրդ՝ ատենը հասած է որ հին մարդը խաչուի, որ Ըստուածային և անմահ սկզբունքները մեղսալից սրտին մէջ արմատ բռնեն, և որ ան մեռեալ մեղաւորը սկըսի սուրբ և Ըստուածահաճոյ կեանք մը վարել : Ըմենամեծն Ըստուած յան-

կործապէս կրփոխէ բոլոր հոգին, և ան թշուառ մեղաւորին երկնային հոգի մը կուտայ : Ա՛րջապէս հիմա եղած է ան հարկաւոր փոփոխութիւնը, որն որ կրկոչուի Հոգւով Արքով վերստին ծնունդ, որով մարդս նոր ստեղծուած կը լլայ :

Աստի կըսեմ ձեզի, քննեցէք ձեր անձերը և տեսէք թէ վերստին ծներ էք . զգացեր էք ան բաները որ վերը ստորագրեցի, եթէ ոչ հետևեալ քանի մը խրատները ըսելով կրվերջացունեմ իմ քարոզս :

1. Ա՛նձ փութով ջանացէք ձեր բնութեանը ապականեալ ըլլալը զգալու . ասիկայ յայտնի կընէ վերստին ծննդեան հարկաւորութիւնը :

2. Հաստատ զգացէք որ աս փոփոխութիւնս անհրաժեշտ հարկաւոր է ձեր փրկութեանը :

3. Հեռու կեցէք և մէկզի ձգեցէք ամէն բան որ խոչընդոտ կը լլայ վերստին ծննդեան . զորօրինակ՝ աշխարհային չափազանց հոգերը, չար ընկերները, և մէկ խօսքով բոլոր մեղքը :

4. Արտի մտօք 'ի գործ դրէք շնորհաց բոլոր միջոցները զորօրինակ . ջերմեռանդ աղօթք, ուշադրութեամբ Մտուծոյ Ռանին ունկնդրութիւն, ընթերցումն, մտածութիւն ևն :

Աս համառօտ կանոնները բաւական կը լլան ձեզի ուղղիչ ըլլալու, թէ որ կրփափագիք ուղղուելու : Աստի կը հարցունեմ ձեզի . ի՞նչ պիտի ընէք : Ա՛նք ուզեր համոզուիլ աս հարկաւոր փոփոխութեանս հետամուտ ըլլալու, ուրկէց կախեալ է ձեր բոլոր յաւիտենականութիւնը : Ա՛հ, եկէք կատարելապէս հաստատ ըլլամք այսօր աս բանիս վրայ, թէ մենք այսուհետև պիտի խնդրեմք Մտուծոյ կարողութիւնը և շնորհքը մեր մէջը մաքուր սիրտ ստեղծելու, և հոգի ուղիղ մեր մէջը նորոգելու :

## ԲԱՂԹԱՆՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ԶՈԳՒՆ:

Տեղերաց նորոգող  
 Անդամաբար համայնից,  
 Վեզ դաւանիմք Սուրբ Հօգի  
 Հօր և Որդւոյ փառակից:

Դու առաջնորդ անսրխալ  
 Մարբեղոց բընաւին,  
 Մեզաց խաւարն հալածող  
 Լոյս անստուեր երկնային:

Դու գորավիզ 'ի բարձանց  
 Նշմարտակէր մարբրուն,  
 Վեզմով միայն կրփոխուի  
 Մեղապարտ սիրտն ամենուն: ]

Օքեղ աղաւելք միարան  
 Ով մարդակէր Սուրբ Հօգի,  
 Վու շնորհացդ երկնառաք  
 Եւս՝ զմեզ արժանի:

Տուր մեզ Քանչնալ մեղքերնիս  
 Մեխթարիչ բարեկնամ,  
 Եւ 'ի սրտէ զգջանալ  
 Ենանց վրայ յարածամ: ]

Չրիտուր պարզեօր  
 Դուն՝ սրտերնիս դարգարէ,  
 Որ մենք դառնանք առ Վրիտոս  
 Միշտ հեռացած մեղքերէ:



Ք Ա Ր Ո Ջ Ը

Պ Ա Տ Ր Ա Մ Ս Է Ք Հ Ա Ն Դ Ա Ր Տ Մ Ե Ռ Ն Ե Ի Ռ Ի

Սահմանուած է միանգամ մեռնիլ ու անկէ ետքը դատաստան :  
Երբ . թ . 27 :

“Ս Ա Հ Մ Ա Ն Ո Ւ Ա Ճ է ամէն մարդոց միանգամ մեռնիլ” :  
Ըրդ ամէնքդ ալ պիտի մեռնիք . բայց չէք զիտեր թէ ե՞րբ  
պիտի մեռնիք . գուցէ քանի մը տարիէն , գուցէ քանի մը  
օրէն , գուցէ վաղը , գուցէ այսօր :

“Ս՝ եռնելէն ետե՛ դատաստան կայ” : Այբ որ մեռնիք՝  
ինքնիշխան դատաւորին ատեանը ելելու էք այնպիսի վճիռ  
մը ընդունելու , որուն հետեանքը՝ յաւիտենական է :

Սիրելի եղբարք դուք անհաւատ չէք , ամբարիշտ մարդիկ-  
ներ չէք . դատաստան , վճիռ և յաւիտենականութիւն , ձեր  
աչքին ընդունայն բառեր չեն , այլ խիստ սոսկալի ճշմար-  
տութիւններ : Ս՝ ասն որոյ ոհա ես աս հարցմունքը կրնեմ  
ձեզի . Պատրաստ էք հանդարտ մեռնիլ . ըսել կուզեմ որ եթէ  
մեռնէիք այսօր՝ աս սոյն վայրկեանիս՝ և ինչ միծակի մէջ որ  
կրգանուիք՝ այնպէս ան ոհա որ ատեանը ելլէիք նէ , ա-  
պահով էք որ փրկուելու էք հոն , չէ թէ դատապարտուելու :

Ըրդ՝ աշխարհիս մէջ անանկ կարծիք մը կը դռնուի որուն նայելով աս մեր խնդիրը զրեթէ անօգուտ բան մըն է : Կան այնպիսիներ որ կը յուսան թէ բնաւ մէկը պիտի չդատապարտուի դատաստանին օրը : Բայց թէ որ աս յոյսը հաստատուն ըլլար , ասկից կը հետևեր որ դուք ամէնքդ ալ կրնայիք հանդարտ սրտով մեռնիլ : Օչարմանալի կարծիք , որ մարդիկ իրենց ապահովութիւն տալու համար որ չվախնան դատաստանէն , բոլոր աշխարհ մէկէն ազատ կը կացուցանեն անկից : Բայց ես կը հարցընեմ անոնց որ կը հաստատուն թէ մէկը պիտի չդատապարտուի , ի՞նչպէս գիտեն աս բանը , մանաւանդ թէ ի՞նչպէս գիտեն ան ստուգութիւնով որ հարկաւոր է հանդարտ մեռնելու համար :

Հիմա կըլսեմ որ պատասխան կուտան ինծի թէ բարերար է Մտուած , և ոչ ոք կը դատապարտէ յաւիտենական թշուառութեան : Բայց ասանկ ըսողները կը մոռնան որ չէ թէ միայն Մտուածոյ բարերարութիւնը մտածել պէտք է հոս , այլև անոր արդարութիւնն ալ . վասն զի բարերարութիւնը արդարութենէն բաժնուած , բարերարութիւնը որ մեղքը անպատիժ կը թողու , ուրիշ բան չէ բայց եթէ տկարութիւն անարժան լոկ մարդկային դատաւորի մը , քանի՞ առաւել անարժան է “անոր որ բոլոր աշխարհը կը դատէ” : Արմոռնան նաև որ՝ գիտնալու համար թէ Մտուած՝ կատարեալ բարի և միանգամայն կատարեալ արդար , ի՞նչ պիտի ընէ մեղաւորին , յիմարութիւն է բուն մարդկային կարծեացը գիմել որ չկրնար ըլլալ ոչ անշահասնդիր դատաւոր իր գործոյն և ոչ իսկ իմաստուն դատաւոր Մտուածոյ վերաբերեալ գործոյն մէջ , և որ վերջապէս բողոքել կը հարկաւորի գերագոյն և միանգամայն աւելի սուրբ հեղինակութեան մը . և ո՞ր պիտի գտնամք արդեօք այնպիսի հեղինակութիւն մը , եթէ ոչ ան Մտուածաշունչ գրքին մէջ որ Մտուածոյ վերայով կը խօսի մեզի՝ բուն Մտուածոյ լեզուովը , քրիստոնեայ բանաստեղծի մը գեղեցիկ խօսքին համեմատ որ կըսէ . “Վ՛ր պիտի սորվըցնէ ինծի զՄտուած , եթէ ոչ նոյն ինքն

Մատուած՝: Մտր՝ աս Ստրբ Վիրբբ ոչ միայն չընծայեր Մատուծոյ այնպիսի բարերարութիւն մը որ արգելք ըլլայ անոր իր արարածները չգատապարտելու, այլ ընդհակառակն կիմացընէ մեզի մի և նոյն մարգարէին բերանով՝ թէ «անոր ողորմութիւնները բոլոր իր գործքերուն վրայ է՝ և «բոլոր ամբարիշտները կը կորսնցունէ»: Սաղ. ԺԹԵ. 9, 20: զԻ. 7, 8:

Բայց առաջ կուգան ահա ուրիշ վարդապետներ, որոնք առջիններէն աւելի յանդուգն ըլլալով, բաւական չեն համարիր այնպիսի վճիռ մը հրատարակել որ բոլոր մարդոց նպաստաւոր է, այլ աս վախճանին հասնելու կանոններն ալ կառաջարկեն. և ինչպէս կը յուսացուի՝ մէկը մէկ կերպ կանոն կուտայ, միւսը՝ ուրիշ կերպ: Սմանք կը հատան թէ մարդս մեռնելէն ետեւ ալ կարող է դատաստանին պատրաստուիլ. բայց մեռելներուն վիճակին վրայով ի՞նչ կըրնայ հաստատել մէկ մարդ մը՝ Մատուծոյ Բանին սորվեցուցածէն՝ ի զատ: Մտր՝ աս Բանը երբէք բան մը չբեր՝ ոչ մեռելներու դարձին, ոչ մեռելներու համար աղօթք ընելուն, և ոչ խկասոնց նման բանի մը համար. բայց ասոր հակառակ ամէն տեղ ներկայ կեանքը կըցուցընէ իբրև ժամանակ փորձառութեան, և մահը իբրև վախճան անոր: Վմանապէս կընկարագրէ զմահը՝ «մարդուն հասնող, մեղքի մէջ եղած ատենը» (Սաղ. ԼԳ. 6 և Է). և կիմացընէ թէ ան մարդը որ «իր մեղքերուն մէջ կը մեռնի», երբէք չկրնար երթալ ուր որ գնաց Հիսուս Քրիստոս (ՀԵ. Զ. 21). Ի՞նչ յաւիտենական երանութեան մէջ: Նոյն կերպով ան Բանը մեր բնարանին մէջ և ուրիշ տեղումք ալ սերտիւ կը կապէ դատաստանը մահուան հետ, առանց բանի մը տեղ դնելու ան միջոցը որ զանոնք կը բաժնէ. «Սահմանուած է բոլոր մարդիկներուն համար որ մեռնին և անկէ ետքը դատաստան ըլլայ»: Վարձեալ շատ տեղ կը կրկնէ, «Եւ թէ անոնք որ դժօրքին մէջն են կը խոստովանին քեզ, և ոչ մեռելները կ'օրէնեն քեզ. և քու ողորմութեանդ չեն յուսար անոնք

որ գուրը կիջնեն . այլ կենդանիները կօրհնեն քեզ , քու արդարութիւնդ կը պատմեն , ով տէր վրկիչ իմ : Ասոյ . Լք . 18, 19 : Ասոյ . ի . 6 : ' Ի վերջոյ յայտնաբարբառ կըսէ մէկ տեղ մը , որն որ ուղղակի աս մեր նիւթին կը վերաբերի . թէ՛ " Լճէն մէկը իր մարմնովը ինչ որ առաջուց (սյսիւքն աս ներկայ կեանքիս մէջ ) գործեց նէ " , ( ի Կորնթ . Է . 10 ) անոր համեմատ պիտի դատուի Վրիտտոսի ատեանին առջևը :

Սլասն որոյ մէկ դի ձգելով աս սուտ կարծիքները , և Մատուածաշնչին սորվեցուցածին համեմատ ընդունելով որ դատաստան մը պիտի ըլլայ անշուշտ , ուր տեղ ոմանք պիտի արգարանան և ոմանք պիտի դատապարտին , և հետեաբար թէ չեն կրնար ամէն մարդիկ հանդարտ սրտով մեռնիլ , բայց միայն անոնք՝ որ հիմնաւոր ապահովութիւն մը ունին թէ ազատ պիտի մնան դատապարտութենէ , կը հարցունեմ ձեզի թէ արդեօք դուք ալ ասոնց կ'արգն էք . դուք՝ որ և իցէ մարդիկ որ ինծի ականջ կը դնէք հիմա : Ասկալի է աս հարցմունքը . վասն որոյ պարտիմք քննել զանիկայ , զգոյշ կենալով որ մեր զգայութիւնները չխաբեն մեզ , ու երեւակայութիւննիս շմոլորեցընէ մեզ :

Թիէ որ ձեզմէ իւրաքանչիւր ոք ելլեր ու մէկդմէկու ետևէ պատասխան տալու ըլլար իմ հարցմանս , չեմ կարծեր որ ձեր մեծագոյն մասը համարձակի պատասխանելու այնպիսի աներկիւղ եղանակաւ մը որ հաստատուն վստահութեան նշանն է : Վանջի շատերուն մտքէն անցածները ուրիշ բան չեն , բայց նթէ տարտամ յոյս , անխորհուրդ վստահութիւն և սնտի պատճառներ : Լսու առնայնիւ անոնց վերերևոյթ անդորրութեանը նայելով , և ապահովութեանը՝ որով կապրին , անշուշտ համոզուեր են թէ կրնան հանդարտութեամբ մեռնիլ . ու թէ որ մէկը հարցընելու ըլլայ անոնց թէ ինչպէս պիտի կարենան , զրեթէ աս պատասխանը կուտան որն որ հանապաղ կը լսեմք անոնցմէ : Ա՛յլ կը կըսէ թէ " Լս համեստ մարդ մըն եմ , մէկու մը անիրա-

ուժիւն չեմ ընել: Իմ պարտաւորութիւնս կատարելու եմ իրրե ծնող, ամուսին և քաղաքացի, ուրեմն ի՞նչ մեղք գործելու եմ ես, որ յախտնական դատապարտութեան արժանի ըլլամ: Ա՛յն ուրիշ մը՝ թէ «Աս ամբարիշտ մարդ մը չեմ, աստուածային պաշտամանց ամէն կիրակի ներկայ կը գտնուիմ, և ամէն յարմար տունները Հաղորդութիւն կառնուիմ»: Արորորդ մըն ալ՝ թէ «Այի՛ թէ Աստուած ողորմած չէ՞ անոնց որ իր շնորհացը արժանաւոր կը լինան. ի՞նչ պակասութիւն կայ իմ վարքիս մէջ»: Աս տարբեր խօսքերը ճշմարտապէս միայն մէկ պատասխան մըն են, ու ամէնուն ալ դիտաւորութիւնը ան է որ՝ այսպէս ըսելով կը կարծեն թէ անանկ վարմունք մը ունին որ չեն զարհուրիր արդար և բարի Արարչին դատաստանէն: Աւտի աս կարծիքն է որ կուզիմ քննել, և ուղղելով իմ խօսքս ամէն անոնց որ իրենց վարմունքին կապաւինին ու կը համոզեն զիրենք որ աս կերպովս հանդարտ սրտով կրնան մեռնիլ, պիտի քննեմ անոնց հետ որ տեսնեմք թէ հաստատուն է աս պատճառը, և իրենց հանդարտութիւնը հիմնաւոր է արդեօք:

Արդկային ատեանը ելող ամբաստանեալի մը ի՞նչ կարևոր է արդեօք որ ապահով ըլլայ թէ իր վրայ եղած դատաստանէն ամենեկին վախնալու բան մը չունի: Անշուշտ պէտք է որ բազդատած ըլլայ իր գնացքը ան օրէնքին հետ որով պիտի դատուի, ու գիտնայ թէ ինքն ալ անոր համեմատ կենցաղավարելու է: Արդ ասանկ ապահովութիւն մը ունենալու համար ան ժամանակը որ դէպի Աստուծոյ ատեանը կերթաք, պէտք է որ նմանապէս բազդատած ըլլաք ձեր գնացքը որուն որ կը վստահիք, ան օրէնքին հետ՝ որով դատաստանը պիտի վճարուի, և որ առաջինը երկրորդին համեմատ գտած ըլլաք: Ասանկ ըրի՞ք երբէք, և գտա՞ք աս համեմատութիւնը: Տեսնեմք որ չըլլայ թէ խարուած ըլլաք:

Օրէնքը՝ որով պիտի դատուիք Աստուծոյ ատեանին առջևը, Աստուծոյ օրէնքն է: Գուք կը ճանչնաք զանիկայ,

նախ՝ խղճմտանքով, ուր որ Մատուած գրեց ՚ի սկզբան զանիկայ. բայց աս առաջին լոյսը՝ քիչ կամ շատ նսեմացած ըլլալով մեղօք, մէկ ուրիշ օրէնք մը տուաւ մեզի Մատուած, որ է Սուրբ Վիլքը: Ուրեմն սուրբ Վիլքով կրնաք դուք սորվիլ օրինաց ճանաչումը. որովհետեւ հոն կըդանաք դուք աս օրէնքը, երբեմն քանի մը իմաստալից սկզբունքներով համարօտեալ. «Վ.ու. Տէր Մատուածդ պիտի սիրես քու բոլոր՝ սրտէդ. քու բոլոր անձէդ, և քու բոլոր մտքէդ. և քու ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս» (Սուրբ. իբ. 37, 39.) կամ թէ. «Մ.բ. թէ ուտէք, թէ խմէք, թէ ինչ գործ ալ որ ընէք, ամէն բան Մատուծոյ փառքին համար բռէք» (Ի Վ.բ. 7. 31.) երբեմն աս դին ան դին ցրուած մանրամասն պատուիրանքներով, որոնք են սէր, խոնարհութիւն, բարեխառնութիւն ևն. որոնց ամէն մէկը կրկին զանազան բաներու կը ռաժնուին. օրինակի աղագաւ, սէրը՝ աղագականներու սիրոյն որ է առանին սէր. զէպի մեր հայրենակիցներուն սիրոյն որ է աղգասիրութիւն. ամէն մարդոց սիրոյն որ է մարգասիրութիւն: Մ.ւասիկ աս է օրէնքը:

Մ.ս օրէնքը կատարել էք. կրնա՞ք արդեօք դուք ալ ոտքի վրայ ելել և ըսել, ինչ որ կարծեց թէ կրնայ ըսել ան երիտասարդը, որ այսպէս պատասխան տուաւ հիսուս Վրիստոսի, երբ որ պատուիրանքները անոր միտքը ձրգեց. «Մտոնք ամէնը տղայութենէս հետե պահեր եմ (Սուրբ. Ժ. 25:) Եթէ կըսէք թէ մենք ալ կրնամք, մտիկ բռէք ուրեմն պարզ պատմութիւն մը խօսակցութեան, որ մէկ օր մը բրի ես մէկու մը հետ, որ ան ալ ատ կարծիքը ունէր իր վրայով: Այս հարցուցի անոր քարոզիս նիւթը, թէ «Պատրա՞ստ ես հանդարտութեամբ մեռնիլ»: Մնիկայ պատասխան տուաւ առանց տարակուսելու, թէ այո՛, պատրաստ եմ. ու երբ որ ստիպեցի որ ըսէ ինձի իր հանդարտութեան պատճառը, պատասխան տուաւ ձեզի պէս, թէ յախտնական կեանքը խոստացեալ է անոնց որ Մատուծոյ պատուիրանքներուն կը նաղանդին, ինչպէս որ ինքն ալ

Կնազանդեր էր բոլոր կենացը մէջ : Լ'ն ատենը՝ գրեթէ ըստ  
 դիպաց ըսի իրեն տասնաբանեայ պատուիրանքներէն մէկը,  
 որ կարծեմ թէ հինգերորդն էր . «Պատուէ քու հայրդ և  
 քու մայրդ» : և առաջարկեցի անոր քանի մը աս կերպ  
 հարցմունքներ . «Պատահած չէ՞ քեզի երբեմն այնպիսի  
 բան մը ընել որ քու ծնողքդ արգիլած էին . կամ թէ ա-  
 ւանց հարկաւորութեան անոնց պակտութիւններուն վը-  
 ըստով չե՞ս խօսեր երբէք . կամ զանոնք պատուելու , յար-  
 գելու և սիրելու համար ունեցած պարտաւորութեանդ դէմ  
 բան մը ըրած չե՞ս . և կամ այնպիսի վարմունք մը շունե-  
 ցար բնաւ անոնց հետ , որ դուն չէիր ուզեր որ քու որդիքդ  
 քեզի ընէին» : Պարտաւորեցի զինքը որ ճանչնայ թէ շատ  
 կերպով մեղանշեր է աս պատուիրանքին դէմ . ու աս ալ  
 ըսի իրեն . «Ինչուք թէ միայն մէկ մեղք մը գործեր ես , և  
 միաները բոլորն ալ անստղիւտ եղանակաւ կատարած ես ,  
 կրնաս արդեօք օրինապահ համարիլ ինքզինքդ» : Պարտաւո-  
 րեցաւ պատասխան տալ թէ՛ «Ի՛չ» , ճակոբոս առաքեալին  
 խորիմաստ և միանպամայն պարզ խօսքին համեմատ . «Ի՛վ  
 որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանով մը ծրարի , անիկայ  
 բոլոր օրէնքներուն դէմ գործօղ կը լլայ : Եւ ասն զի ան որ  
 ըսաւ Ե՛րի սպանաներ , ըսաւ որ Շ՛նութիւն ալ մի ըներ .  
 ուստի թէ որ սպաննութիւն չընես՝ բայց շնութիւն ընես ,  
 օրէնքին դէմ գործօղ եղար» : Հօմ. ք. 10, 11 : Ի՛այց դի-  
 րաւ խելամուտ ըրի զինքը , թէ միայն աս պատուիրանքը չէ  
 որու դէմ մեղանշեր է , այլ մէկ երկրորդ պատուիրանք մը  
 առաջարկեցի անոր , որուն վըստով ալ քանի մը հարցմունք  
 ընելէս ետեւ , թողուցի որ ինքնին քննէ իր վարմունքը . ետ-  
 քը երրորդ մըն ալ ապա մէկ ուրիշ մը . որոնք միշտ մի և  
 նոյն վախճանը ունեցան յայտնապէս . անանկ որ մեծ զար-  
 մանքի մէջ մնալով սկսաւ ամը շնալ : Ի՛ վերջոյ յորդորեցի  
 որ ինքը յառաջ բերէ մէկ պատուիրանք մը՝ որուն երբէք  
 անկնազանդութիւն ըրած չէ : Լ'ն ատենը ընտրեց երկրորդ  
 պատուիրանքը . «Ի՛կեզի փորուած պատկերք պիտի չըի-

նես, ու անոր տողին՝ Երկրպագութիւն պիտի չընես՝ : Ըստ անգամ՝ ամենեւին Երկրպայութիւն չունէր իր անմեղութեանը վրայ . անշուշտ պատկերներու առջին երբէք Երկրպագութիւն ըրած չէր : Իսկ իրեն թէ մէկ կուսպաշտութիւն մը կայ որ հոգևորական է . որով կըմեղանէ մարդ ամէն անգամ երբ որ Ըրարչին յատուկ եղած պատիւը և մեծարանքը՝ արարածոց կըմատուցանէ . ուստի ազահ մարդը կուսպաշտ է, վասն զի ոսկին իբրև աստուած կըպաշտէ . որկրամոլը կուսպաշտ է, որուն աստուածը իր փորն է, ինչպէս որ կըսէ Պօղոս առաքեալ : Առ. 17. 5 : Առ. 17. 5 : Փիլ. 1. 7. 19 : Սիթի իբրէք պատահած չէր իրեն որ նախամեծար համարի քան զԸստուած և անոր կամքը, հարստութիւնը, զգայական հեշտութիւնները՝, արարածի մը սէրը, և կամ աշխարհիս փառքը : Ըստ հարցմունքներէն իմացութե չկայ պատուիրանք մը որ ինքը պահած ըլլայ . և ան պատուիրանքը ևս, որուն կարծեր թէ երբէք անձազանդ չէ գտնուեր, շատ անգամ անոր դէմ ալ մեղք գործած էր : Ի վերջոյ ըսի իրեն, թէ որ «իբ սիրտը կըդատու պարտէ նէ զինքը՝ Ըստուած ալ աւելի անաչառութեամբ կըդատու պարտէ զնա . Ըստուած՝ որ «մեր սրտէն ալ մեծ է, և ամէն բան գիտէ», (առ. 3. 20.) Ըստուած՝ որ կը տեսնէ մեր ներսի դէն եղած բոլոր ախտը՝ որ մեր մտքէն կելլէ, և որ կը յիշէ ինքը ինչ որ մենք կըմոռնամք . աս ալ ըսի, թէ ան նոյն ատենը ևս որ զինքը յանցաւոր չկարծեր, «չէ թէ ասով կարդարանայ, վասն զի մեզ քննողը Տէրն է (առ. 1. 17. 4.), և Տէրը յայտնապէս կըսէ «Վե՛նքը մեղք գործեցին, և Ըստուծոյ փառքէն պակսեցան . արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը . մէկը չկայ որ բարի բան ընէ . և բնաւ մէկ հատ մըն ալ չկայ : Առ. 10, 12, 23 :

Ըստ մարդը՝ որու համար կըխօսիմ, անկեղծ բնութիւն մը ունէր, պարզմտութեամբ և սիրտը եղած խոստովանեցաւ ինծի թէ շատ խաբուեր է . թէ իր վարմունքը ոչ միայն Ըստուծոյ պատուիրանքներուն համեմատ եղած չէ, այլև



գլխովին անոնց հակառակն է . և թէ անշուշտ դատապարտութեան արժանի ըլլալուն համար՝ չէր կրնար հանդարտ սրտով մեռնիլ : Վրդ ինչպէս որ գիտեմ՝ աս մարդուն պատմութիւնը , ասանկ ալ աս ժողովիս մէջ գտնուող ձեր ամէն մէկունը՝ աշուրներուս անջևը ունիմ . ու ինչ որ ըսի ես անոր՝ կրնամ ձեզի ալ ըսել : Այսն որոյ աս խօսակցութիւնը կրնայ անոր տեղը բռնել , որ կուզէի ձեր ամէն մէկուն հետ առանձին ընել , թէ որ նար էր . այո՛ , մանրամասն պարագաները գուցէ քիչ մը տարբեր պիտի ըլլային , բայց ոչ բուն նիւթը . ու թէ որ դուք ալ անոր պէս անկեղծութիւն ցուցնէիք աս բանիս վրայով , հարկաւ ան նոյն վախճանին կը հասնէիք : Աւտի թէ որ ձեր հանդարտութեանը ուրիշ պատճառ չունիք , բայց միայն ձեր վարմունքին անհիմն միաբանութիւնը Մտուծոյ օրինացը հետ , մտրութեան մէջ էք . քանզի չունիք աս միաբանութիւնը՝ ասիկայ խաբէական պատճառ մըն է . և հետեւաբար չէք կրնար հանդարտութեամբ մեռնիլ :

Արեմն՝ կարծեմ թէ կրնամք կենալ հոս , և ստանց աւելի առաջ երթալու հետեցնել թէ պարտիք հրաժարիլ ան ակնկալութիւններէն որ մինչև հիմա ունեցած էք , և փնտրուել ուրիշ ակնկալութիւն մը որ աւելի հաստատուն ըլլայ . քանզի՛ վերջապէս թէ որ ձեր ընթացքը համեմատ չէ ան գերագոյն տեսանին օրինացը , աննար է որ դուք դատապարտութենէ ազատիք :

Ասկայն թէ որ ես չեմ սխալիր , կան շատերը՝ որ դեռ կը յուսան թէ պիտի ազատին անկից : ( ) Գնեմք ուրեմն անոնց որ ճանչնան իրենց ունեցած յոյսը , որն որ գուցէ իրենք ալ դժուարութիւն պիտի կրեն բացատրելու . այնքան անհիմն և անստոյգ է ան : Վրանզի այնպէս կը կարծեն որ շատ խստութեամբ պիտի չբանեցուի օրէնքը այլ քիչ մը մեղմելով . և թէ անկատար նազանդութեամբ ալ կըրնայ գոհ ըլլալ դատաւորը : «Մտուած պիտի չպահանջէ , կըսեն , իր տկար արարածէն որ անթերի իր օրէնքը կա-

տարէ . այլ տեննելով մարդկային բնութեան տկարութիւնը , և իր յատուկ սրբութիւնը , արդարապէս կշռելէն ետև ասոնց երկուքն ալ , չափաւորեալ օրէնք մը պիտի հաստատէ որ տկարութեան մէջ գտնուող մարդուն կըրցածէն աւելի բան չպահանջէ . և սա կերպով՝ անոնք որ թէպէտև կատարեալ Նազանդութիւն մը չըրին օրինաց , բայց գոնէ մեծ մեղքերէն ետ կեցեր ու կենաց պարտաւորութիւնները պատուով կատարեր են նէ , երբէք պիտի չդատապարտին : Ըստիկ ձեր ունեցած յոյսը . այսինքն է՝ օրէնքը պիտի չափաւորուի : Բայց ասիկայ ուսկի՞ց ձեր միտքը եկած է :

Վիտեմ պատասխան տալու էք ինծի թէ բոլորովին պարզ ապացոյց մըն է , որ սա բանը ձեր միտքը ձգեց : “Շէ թէ մինակ մենք եմք , կըսէք , չէ թէ մինակ աս կամ ան մարդն է որ քու ըսածիդ պէս օրէնքը չկատարեր . այլ բոլոր մարդիկ , առանց մէկը միայն դուրս ձգելու : Ըսկից կերենայ որ մարդկային բնութեանը մէջ բան մը կայ որ սա օրէնքին դործադրութիւնը կարգիլէ : Թե որ այսպէս է , Ըստուած՝ որ անՆար է թէ պատժէ մեզ մեր չկրցածը շնննուս համար , սա օրինօքը ճշդիւ պիտի չդատէ մեզ . իր արդարութիւնը կըպահանջէ որ մեղմէ զանիկայ , որպէս զի մեր տկար բնութեանը յարմարի” : Ըս ապացոյցը առաջին տեսութեանք ճշմարիտ կըթուի . բայց անոր բովանդակ ստուտիւնը ճանչնալու համար՝ հարկ չէ որ շատ մտածեմք : Ըրդ՝ չէք տեսներ թէ ուր կառաջնորդէ ձեզ առ ձեր խօսքը : “Վի որ աւելի շատ կըհաստատէ , բան մը չհաստատեր” , կըսէ ճշմարիտ առակ մը : Ուրեմն ի՞նչպէս չէք վարկնար անկէ որ ձեր առաջարկութիւնը կըցուցընէ : Ինչո՞ւ համար կանկ կառնէք ճամբուն կէսը հասած : Ըսաջ գացէք լրմնցուցէք առ ապացոյցը որ հաստատուն կըթուի ձեզի : Ըն որ ապահովութիւն կուտայ մարդուն Ըստուծոյ օրինացը թեթեւութիւններուն վրայով , ինչպէս որ դուք կըսէք , այս է , թէ կարող չէ ան իր ներկայ վիճակին մէջ սա օրէնքը անվրէպ

գործադրելու . կամ թէ ուրիշ կերպով ըսեմք . մեղքը իրեն  
 երկրորդ բնութիւն եղած ըլլալով՝ իր կամքը նուաճեր է :  
 Աս սկզբունքին նայելով զմարդը ապահովելու համար , որ  
 օրէնքին մէջ ալ աւելի մեղմութիւններ կան , միայն պէտք է  
 այնպէս համարիլ որ անիկայ բոլորովին ծառայ եղեր է  
 մեղաց . և հետզհետէ մեղմելով օրէնքը՝ վերջապէս կա-  
 տարեալ թոյլտուութիւն ունենալու իրաւունքը ձեռք կը  
 բերուի , քի բոլոր դատողութենէ ազատութիւնը՝ ճիշդ երբ  
 որ կատարեալ պատժապարտ եղած է . և թէ որ մեղաւոր  
 մարդը կրնայ վստահիլ Աստուծոյ ներողութեանը , սատա-  
 նան ալ՝ աւելի շնորհք վայելած ըլլալուն , կրնայ վստա-  
 հութիւն ունենալ պատիժներէ ազատ մնալու համար :  
 Աւստի մէկ ապացոյց մը որ այսպիսի ծուռ հետեութիւններ  
 ունի , անշուշտ իմաստակութիւն կը պարունակէ , որն որ  
 դիւրութեամբ պիտի տեսնէք հիմա :

Կրկին շիտթութիւն մը կայ հոս . նախ՝ աղէկ չէք հաս-  
 կընար ինչ որ կը հաստատէք : Ղուք կը պնդէք թէ մարդս՝  
 Աստուծոյ օրէնքին չկրնար հնազանդիլ . ասիկայ ճշմարիտ  
 է . բայց կը մոռնաք նշանակելու թէ յորում կը կայանայ  
 աս տկարութիւնը : Վանզի չէ թէ մարդկային բնութիւնը  
 զուրկ է հնազանդելու հարկաւոր եղած զօրութենէն , որն  
 որ մէկը չկրնար հաստատել . բայց նազանդելու կամք չու-  
 նի . ( Հոգի . ք . 7 . բաղդատէ Աստուծոյ . է . 18 համարին , և  
 մանաւանդ՝ Հոգի . է . 7 համարին հետ . ) ուստի մարդուն  
 տկարութիւնը՝ բարոյական տկարութիւն մըն է , որ զինքը  
 չարդարացընելէն՝ ի վատ , ճիշդ անով մեղաւոր կը ըլլայ և  
 պարտաւոր Աստուծոյ ատեանին առջևը : Վայց ետքը՝ ( և  
 ասոր համար յատկապէս կաղաչեմ ձեզի որ ուշադրու-  
 թիւն ընէք , ) հետեութիւնը որ կը հանէք անկից , ամենեին  
 օրինաւոր չէ որջամիտ դատողութիւն ունեցողի մը առջևը :  
 Վանզի կը հետեցնէք թէ որովհետեւ մարդս չկրնար հնա-  
 զանդիլ , վասն որոյ Աստուած ալ նազանդութիւն չպահան-  
 ջեր անկից : Ասկայն չէք տեսներ որ օրինաւոր չէ ատ հե-

տևութիւնը որ կրնէք միայն թէ Մտուած ան տկարութեանը հեղինակն ըլլար . քի թէ հետևութիւն ըլլալէն կըզադրի թէ որ տկարութիւնը մարդէն յառաջ եկեր է : Մ. յո , թէ որ Մտուած ստեղծեր է զմարդը անկարող իր օրինացը հնազանդելու , թէ որ Մտուած մեղաւոր ստեղծեր է զանիկայ , թէ որ Մտուած հեղինակ է մեղաց , ուրեմն իրաւունք ունիք հետևեցնելու թէ չկրնար օրինապահութիւն պահանջել մարդէն : Բայց ի՞նչպէս կրնամք հաստատել աս բանը առանց յիմարութեան և առանց հայհոյութեան : Այլ թէ որ մարդը իր կամքովը մեղաց անձնատուր՝ քղեր է , ինչպէս որ Մտուածաշունչը յայտնապէս կիմացընէ մեզի , ու բանականութիւնը և խղճմտանքն ալ այսպէս կըհաստատեն . առաջինը՝ ըստ որում կիմանայ որ՝ «Մտուած չար բաներով չփորձուիր , ոչ ալ ինքը մէկը կըփորձէ . (Հ)ձ . ան . 13 .) երկրորդը՝ ըստ որում կըյանդիմանէ մեզ մեր անհնազանդութիւններուն համար՝ ի ներքուստ կըշտամբելով . թէ որ ճշմարիտ է՝ որ «Մտուած մարդը ուղիղ ստեղծեց , և թէ մարդը փնտուեց չարութեան խորհուրդները» , որ «ինքնին մոլորեցաւ ունայն խորհուրդներով» և յօժարակամ մերժելով ան շնորհքները որ Մտուած տուեր էր իրեն» «ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռնեց . անանկ որ բնաւ ալ պատասխան մը չգտնար տալու» ինչպէս որ Պօղոս առաքեալ պարզապէս կըզրէ Հռովմայեցւոց թղթին առջի գլուխը . (Վ. ու . Է . 29 : Հ)ձ . ան . 22 : Հռովմ . ան . 18 , 20 .) թէ որ այսպէս է , մարդուն տկարութիւնը՝ հնազանդելու համար , բնաւ չբմեղութիւն մը չըլլալէն՝ ի զատ անոր , ալ աւելի կըծանրացընէ իր դատապարտութիւնը . ըստ որում կըցուցընէ թէ ինչպէս գլխովին անձնատուր եղած է մեղքին : Այնք ուրեմն , որչափ որ կուզէք , թէ չէք գիտեր ինչպէս մեղքը յաշխարհ մտեր է . բայց արդարութեան և բարեպաշտութեան համար՝ ընդունեցէք թէ անիկայ երբէք չկրնար Մտուածմէ յառաջ գալ , այլ միայն մարդէն յառաջ կուգայ , և հետևաբար չկրնար հնազանդութենէն ա-

զատկացուցանել զմարդն . և թէ ան ամէն խօսքերը՝ որոնցմով կըջանան մարդիկ որ համոզուին թէ Մատուած խրատութեամբ պիտի չբանեցընէ իր օրէնքը , չէ թէ առողջ մտքէ յառաջ կուգան , այլ ապականեալ սրտէ , և միայն անոր համար կրմովորեցունեն մարդուն դատաստանը , քանզի մեղքով կուրացեալ է մարդը , և դիւրաւ կըխարուի :

Աստի ողջամիտ դատողութեամբ չկրնալով արդարացընել ձեր յոյսը , որով կարծէք թէ մեղմացեալ օրէնքով պիտի դատուիք , կըջանա՞ք արդեօք Մատուածաշնչով արդարացնել զանիկայ : Ո՛հ , ինչպէս պիտի ընէք աս բանը : Բայց մտիկ ըրէք ինծի . թէ որ բանայի Մատուածաշունչը՝ որ առջիս է , ու այսպէս կարդայի՝ «Թէ որ դուք չէք կրնար բովանդակ օրէնքը կատարելու , կըցածնուդ շափ կատարեցէք , մնացածին համար Մատուած կրնեքէ ձեզի . թէ որ չէք կրնար բոլոր մեղքէն ետ կենալ , գոնէ մեծ ոճիրնեքէն զգոյշ կեցիք . քիչ մը սէր , քիչ մը համբերութիւն և սրբութիւն ունեցէք . այսպէս ըրէք , և վստահ եղիք որ պիտի չդատապարտուիք » . կրնգունէի՞ք աս ոճով Մատուածաշունչը , չէիք աղաղակեր ըսելով . «Աեցի՞ր , օրինազանց պաշտօնեայ , դուն չես կարդար Սուրբ Վիրքը , չէ , շինծու խօսքեր են ատոնք » : Բայց ահա հիմա շիտակը կը կարդամ , չէ թէ շինծու խօսքեր կըզրուցեմ . Վաղատացոց թղթին մէջ՝ գլուխ երրորդ , համար տասներորդ . «Վն ամէնը որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ են . որովհետեւ գրուած է թէ՝ «Վնիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրուածներուն ամէնուն մէջ չկենար բոլորը կատարելու » . նաև Հակոբու թղթին մէջ՝ գլուխ երկրորդ , համար տասներորդ՝ «Վ՛վ որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանով մը ծըռի , անիկայ բոլոր օրէնքներուն դէմ գործող կը ըլլայ » . նմանապէս Վաղատ . գլուխ հինգերորդ , համար երրորդ , «Վ՛մէն մարդու կրմկայեմ , թէ որ թրիատուելու ըլլայ՝ (իր գործքերովը արդարանալ ուզելով) պարտական է բոլոր օրէնքը կատարելու » : Վ.Լ ի՞նչ պիտի

ըսեմ . «Իսիտ վախնալու բան է , կենդանի Մատուծոյ ձեռքը իյնալը» (ԼԷԳ . Ժ . 31) «Սեր Մատուածը մաշող կրակ է» . (ԼԷԳ . ԺԻ . 29 .) «Սուրբ է իր աչքերը , չարութիւններու չկրնար նսյիլ» . (ԼԷԳ . ԿԻ . 13 .) «Պարտաւորը անպարտ չընէր» . (ԼԷԳ . ԸԳ . 7 .) և ուրիշ հազարումէկ այսպիսի տեղումք : Ի՞նչ կըսէք . կարծէ՞ք որ ասանկ խօսքեր ըսող Մատուածը կամք ունենայ իր օրէնքը մեղմելու , մեղաւոր մարդուն տկարութեանը յարմարցընելու համար . ուստի ձեր մեղմացեալ օրէնքը որ չկրցաւ հաստատուն ըլլալ արդարախօհ մտքի մը առջին , նմանապէս կընուածի Մատուածաշնչին առջև :

Հուսկ ուրեմն , պիտի փնտռէ՞ք արդեօք ձեր կարծեացը վերջին ապաստանարան մը , Հիսուս Վրիստոսի խաչին շուքին տակը . պիտի ըսէ՞ք , թէ «Ղշմարիտ է որ օրէնքը նախ ճշդիւ 'ի գործ դրուելու էր բայց Մատուած' իր Արդւոյն պատարագին համար հաճեցաւ մեղմել զանիկայ . և Հիսուս Վրիստոսի փրկագործութիւնը աս շնորհացը արժանի ըրաւ զմեզ՝ որ Մատուած ալ չպահանջեր մեզմէ կատարեալ սրբութիւն մը , և կըհաճի թէ որ աս փրկագործութեանը վրայ չափաւոր հնազանդութիւն մըն ալ աւելցընեմք» : Ըհա աս տեղս՝ եղբարք , ալ ես չեմ կրնար զըսպել ան կիրքը որ կըղգամ : Օգարհուրելի խորհուրդ . ի՞նչ պիտի ընէինք արդեօք , թէ որ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ՝ Վրիստոսի արեամբը եղած մեղքին քառութեանը սուրբ և օրհնեալ վարդապետութեանը տեղ , նախայիշեալ խօսքերուն մէջը պարունակուած վարդապետութիւնը փոխանակէինք . ես իմ գլխէս չհանեցի զանոնք , ինչպէս որ գիտէք , այլ դուք ալ ինծի պէս շատ անգամ ըսեր էք ան խօսքերը և գուցէ դուք ալ ըսած էք : Ըսիկոյ մէկ վարդապետութիւն մըն է , որ Հիսուս Վրիստոսով փրկութեան վարդապետութիւնը՝ հեռու է անկից , որչափ երկինքը հեռու է երկրէս կամ դժոխքէն . վարդապետութիւն մը՝ որ Մատուածաշնչին քանի մը բառերը ուրիշ մտօք

չառնէր, բայց եթէ անոր սորվըցուցած գլխաւոր բաներուն իր խանդարումը ալ աւելի թաքուցանելու համար, վարդապետութիւն մը՝ որ բաւական չհամարիր մեղաց հետ հաշտեցընել զՄատուած, այլ աս օրինազանցութեանը մասնակից կրնէ նաև Հիսուս Վրիստոս մեր Տէրը, վերջապէս այնպիսի վարդապետութիւն մը՝ որ անոր համար աշխարհ եկաւ, կըսէ, Որդին Մատուծոյ որ ինկած հրեշտակաց առջին յայտնէ թէ Ըօր Մատուծոյ արդարութիւնը ամենեկին հաստատութիւն մը չունի, և որ անարատ արիւնը Որդւոյն Մատուծոյ հեղուլ կուտայ, չէ թէ արարածոց մեղքերը ջնջելու համար՝ ո՛չ, այլ Մարտին սրբութիւնը: Մ՛հ, ալ աղէկ է ըսել որ՝ եթէ մինչև անատենը կը յուսայիք որ օրէնքը պիտի մեղմուի, պէտք էր Հիսուս Վրիստոսի խաչին առջևը մէկ դի ձգել ատ յոյսը. վասն զի Մատուած՝ բնաւ մէկ ուրիշ տեղ մը այնքան յայտնի և սքանչելի եղանակաւ չհրատարակեց երբէք օրէնքը չմեղմելու համար ունեցած իր կամքը, քան որչափ աս խաչին վրայ, Մպաքէն ի՞նչ կը յայտնէ աս ցաւալի տեսարանը, որն որ մարդոց և հրեշտակաց կըցուցընէ Մատուած խաչին վրայ, եթէ ոչ ան՝ թէ ինքն Մատուած, ընտրութիւն մը ընելու վրայ, կամ իր օրէնքը մեղմելու և կամ՝ ի մահ մատնելու իր մէկ հատիկ սիրելի Որդին, ընտրեց որ ՚ի մահ մատնէ իր մէկ հատիկ սիրելի Որդին: Մ՛հ ասպքան անհնար է իրեն որ թեթևցընէ իր օրէնքին սրբազան ճշդութիւնները: Ուստի ան թեթևցած օրէնքը՝ որ դուք հնարեր էք դատաստանի երկիւղներէն ազատ մնալու համար, նախ՝ ողջամիտ դատողութենէն դատապարտուած՝ ապա Մատուածաշնչէն հերքուած, վերջապէս Հիսուս Վրիստոսի խաչէն շանթաճար կը կորսուի:

Երբ՝ հետզհետէ կործանելէն ետև բոլոր նեցուկները որ դուք կը ջանաք ատ ձեր կարծիքին տալու, կամի՞ք որ ես իմ կողմանէս բացատրեմ ձեզի, թէ ուսկի՞ց ձեր միտքը եկեր է ատ սնտախ յոյսը: Մտիկայ դժուարին բան մը չէ ինծի:

ու երբ որ տեսնէք թէ ուսկի՞ց է իր սկզբնաւորութիւնը , իսկոյն կիմանաք նաև ինչ վստահութեան արժանաւոր ըլլալը : Վասնզի զգացեր էք դուք որ անշուշտ կարօտ էք անոր որպէս զի Վստուծոյ արդար դատաստանէն երկիրդ մը չունենաք : Վարքէն մէկ կողմանէ ստիպուած էիք ընդունիլ , ըստ որում շատ յայտնի բան մըն է , որ դատաստանին մէջ ապահովութեամբ երևնալու համար՝ պէտք է որ ձեր վարմունքը Վստուծոյ օրէնքին համեմատ ըլլայ . բայց միանգամայն չէիք կրնար կեղծել կամ սուտ խուլ ըլլալ , ձեր խղճմտանքին ազդեցութենէն գիտնալով (ինչպէս որ իմ բերած ապացոյցներովս ըսի ձեզի , բայց դուք փուճ տեղը կը ջանայիք ձեր ըսածներովը ծածկել) որ ձեր ընթացքը օրէնքին համեմատ չէ : Ուստի ալ ի՞նչ կըմնար ձեզի . ի՞նչպէս կրնայիք ստոյգ դատապարտութեանը երկիրդէն խոյս տալ , միայն թէ օրէնքը ձեր վարմունքին նման ըլլար , քի թեթևար : Վստուծոյ համար ընդունեցիք , առանց ուրիշ ապացոյց մը փնտաւելու , թէ անշուշտ օրէնքը պիտի թեթևայ . քանզի պէտք էր որ կամ այսպէս ըլլար՝ և կամ դուք դատապարտէիք . բայց սա ետքինն ալ բնաւ չէիք ուզեր ընդունիլ :

Բայց զգոյշ եղիք . վասն զի ատ խարեբայ յուսովը ոչ միայն անօգուտ բան մը կընէք ձեզի , այլև Վստուծոյ դէմ մեծ մեղք մը կը գործէք : Վասնզի որո՞ւ կը վստահիք կարծելով որ անիկայ պիտի մեղմէ օրէնքը , եթէ ոչ բուն օրէնսդրին : Վսել է որ մտքերնիդ դրեր էք թէ Վստուած՝ տկար հօր մը կընմանի , չըսեմ որ ուժէ ընկած ծերունիի մը կը նմանցնէք զանիկայ , ուսկից հնար է քիչ մը արցունքով ամէն բան ձեռք բերել , և անանկ մէկն է որ այնպիսի պարագաներ՝ որոնց ինքը անտարակոյս նախատես եղած չէ , կրնան իր միտքը փոխել . որ իր սպաննալիքները ետ կառնէ , որ կը զիջանի մարդկային ապականեալ բարուցը , և որ չկրնար ուրիշ կերպով դատել՝ բայց միայն իր ստեղծած մարդուն մեղացը յարմար օրէնքով մը : Միտնմտութեանս .



“Որո՞ւ կընմանցունէք Հոօր Մտուածը” : Ասայ . Խ . 18 :  
 Մայց դուք կուտաք անոր մարդկան խորհուրդները , տկարու-  
 թիւնները , և մեղաց թոյլտուութիւն ընել . վասն որոյ ար-  
 ժանի էք աս սաստիկ յանդիմանութիւնը լսելու . “Արծեցիր  
 թէ՛ ես ստոյգ քեզի կընմանիմ” . (Սաղմ . Ծ . 21 .) որովհետեւ  
 իր սրբութենէն կողոպտուած Մտուածոյն նայելով , և ան  
 մեղմացած օրէնքին՝ որ անոր ձեռքը կը յանձնէք , կըսէք  
 թէ “Արնաք Հանգարտութեամբ մեռնիլ . վասն զի աս  
 օրէնքը կատարած էք” : Եւ ատ աղէկ , թող այսպէս ըլլայ ,  
 դիցուք թէ դուն օրէնքը կատարեր ես : Մայց զգոյշ եղիր ,  
 մոլորեալ եղբայր . ան օրէնքը որ դուն Ատարեցի կըսես ,  
 Մտուածոյ օրէնքը չէ . ան օրէնքը չէ որով պիտի դատուիս  
 դուն վերջին օրը : Մըլ անանկ մէկ օրէնք մը որ քու ապա-  
 կանեալ սիրտդ՝ տառապեալ խղճմտանքիդ հետ մէկտեղ  
 յառաջ բերած են . անանկ մէկ օրէնք մը՝ որ դուն քու դա-  
 տաւորիդ կուտաս . մէկ օրէնք մը՝ որ անիկայ ջնդունիր ,  
 որ բարկութեամբ անոր հեղինակներուն վրայ կը ձգէ , իր  
 ամենասուրբ Ահհափառութեանը դէմ անոնց ըրած նախա-  
 տիւքներուն խիստ մեծը համարելով զանիկայ : Ուրեմն  
 մէկ դի ձգէ ատ յոյսը՝ որ միայն զՄտուած անարգելով ա-  
 պահովութիւն կուտայ մարդուն : Մս օրէնքը երբէք պիտի  
 չմեղմանայ : Մտուածոյ օրէնքը երբէք պիտի չմեղմանայ :  
 Մտուածոյ օրէնքը մի է , անփոփոխ , բացարձակ և յաւիտե-  
 նական : Մտուածոյ օրէնքը պողպատի կընմանի , կըխոր-  
 տակուի բայց չծռուիր : Մըդ՝ թէ որ քու Հանգարտու-  
 թեանդ ուրիշ հիմն չունիս , բայց միայն մեղմացեալ օրի-  
 նօք դատուելու յոյսը , դուն ինքզինքդ կը մոլորցնես . քան-  
 զի ատ ըսած օրէնքդ մտացածին բան մըն է . ատ հիմը խա-  
 բէական է . և հետեւաբար չես կրնար Հանգարտ մեռնիլ :

Ո՛հ , թէ որ մինչև հիմա ըսածներէս Համոզուեցաք ,  
 գոնէ մտքովիդ դրէք զձեզ մահուան անկողինին մէջ որ  
 տեսնէք ան ճշմարտութիւնը որ ես կը քարոզեմ ձեզի : Ար-  
 րեակայեցէք որ ան մեծ վայրկեանը հասեր է , և դուք ու-

րիչ միջոց մը չունիք դատաստանին երկիւղէն ազատ մնալու, բայց միայն աս հետևեալ հարցմունքներուն պատասխանը տալով : «Ունի՞մ արդեօք ան աստիճան առաքինութիւնը որ հարկաւոր է օրէկքին ներողութեանը արժանի ըլլալու, և արդեօք միայն ան աստիճան մեղքը ունեցա՞յ՝ որուն կրղիջանի ան, և թէ որ ան աղէտալի սահմանէն անցած եմ, մեղացս փոխարէն բաւական բարեգործութիւններ ըրե՞ր եմ, թէ որ ալ աւելի հարկաւոր ըլլայ՝ նէ, ի՞նչ գիտնամ. ո՞հ, զի պիտի ստոյգը իմացընէ ինծի ի՞նչ որ Աստուած կրպահանջէ, և ինչ որ եմ ես ինքն . . . » : Ո՛վ ողորմելի մարդ, դուն որ քեզ հանդարտեցնելու համար պնպիտի բաներ կշռելու ստիպուած ես, որոնց կշիռը չունիս, ի՞նչպէս կարող պիտի ըլլաս ըսել երբէք, թէ «Աս ապահով եմ, հանդարտութեամբ կրմեոնիմ» : Ի՛նչ, ի՞նչ հանդարտութիւն կրնայիր արդեօք գտնել տարակուսելի հարցմունքներուն պատասխան տալուն մէջը, եթէ ոչ՝ նոյնպէս տարակուսելի հանդարտութիւն մը. անանկ հանդարտութիւն մը որ կերթայ և կուգայ քու խղճալի սիրտդ : հանդարտութիւն մը որ ներս կրմտնէ և դուրս կելլէ փոփոխակի. վերջապէս հանդարտութիւն մը՝ որ հանդարտութիւն չէ : Ո՛չ ոչ, երկրայելի մտօք հանդարտութիւն չէք կրնար ունենալ մահուան անկողինին վրայ, չէք կրնար հանդարտ մեռնիլ :

Ապա ուրեմն եղբարք, սիրելի եղբարք, ի՞նչ կրնէք. թէ որ հանդարտութեամբ կարող չէք մեռնիլ, զի պիտի հնարքով կամ գաղտնիքով սորվեցաք դուք անդորր սրտի ապրելու : Ո՛հ, ամէն մէկ վայրկեանին կրնաք մեռնիլ, չէք գիտեր՝ թէ ինչ յաւիտենական վճիռ պիտի տրուի ձեզի, և շատ պատճառներ ունիք հաւատալու որ անշուշտ պիտի դատապարտիք. բայց չեմ գիտեր ի՞նչ սնտոյ յուսոյ, ի՞նչ անհիմն յաջողութեան կտպաւինիք որ ասանկ պիտի չլլայ. և ի՞նչպէս հանդարտ կրտեսնեմ ձեր դէմքը, ի՞նչպէս հանդարտ կրննջէք, և հանդարտութեամբ ձեր գործ-

քերը կրկատարէք : Մայց ի՞նչ կըսեմ ես , շուարձու-  
թեամբ կանցընէք ձեր կեանքը , թատրոնը կը յաճախէք ,  
և խաղալով խնդալով դէպի գերագոյն Վատաւորին ա-  
տեանը կերթաք . և նոյն ատենը միշտ կը վիճաբանիք թէ  
ան եկեղեցին ուղղափառ է թէ ան եկեղեցին . ան արա-  
րողութիւնը պէտք է ունենալ թէ ան արարողութիւնը .  
Սուրբ Վրոց մէջ անորոշ մնացած և ձեր փրկութեանը  
անհարկաւոր եղած այս ինչ վարդապետութիւնը պէտք է  
ընդունիլ Վթէ ան մէկալը : Մ.Մ.Տ. , թէ որ աշխարհիս մէջ  
դատաստանի երկիւղէն առաւել ողբալի բան մը կայ նէ ,  
անշուշտ ան ապահովութիւնն է որով դուք դատաստանի  
կրկատարէք : Մայց ոչ , ձեզի անիրաւութիւն ընել չեմ ու-  
ղեր . որովհետեւ հաստատ գիտեմ որ աս մտածութիւնները ,  
աս խօսքերը , ձեր սրտերուն մէջ կեցուցիչ շիտթութիւն մը  
հանեցին . քանզի աս նիւթիս մէջ այնպիսի զօրութիւն մը  
կայ , որ քարերը անգամ կը զոզացընէ : Մ.Տ.Վ. վարագոյրը կը  
բացուի , ձեր ապահովութիւնը աներևոյթ կը լլայ . նոր  
ցորեկ մը կը լուսաւորէ ձեզ , մահը կաղմըկէ ձեզ , դատաս-  
տանը կը զարհուրեցընէ , և վերջապէս կը զգաք թէ ալ  
պէտք չէ կենալ ան վիճակին մէջ որ հիմա կը գտնուիք , ոչ  
մէկ օր և ոչ մէկ ժամ : Այլ կը հարցունէք թէ ի՞նչպէս դուրս  
պիտի ելլեմք աս խղճալի վիճակէն . ի՞նչ միջոց կրնամք  
ունենալ , որ առաջուց ապահով ընէ մեզ թէ դատաս-  
տանին օրը բարեյաջող վճիռ մը պիտի ունենամք . կայ  
արդեօք աշխարհիս մէջ միայն մէկ մարդ մը որ կարող ըլ-  
լայ Մատուծոյ ահեղ ատեանին առջևը երևնալու , և հաս-  
տատ գիտնայ որ պիտի չդատապարտի : Վրոն ալ որ մեր  
հանդարտութեան բոլոր նեցուկները մէկդմէկույեալէ կը  
կործանես , ունին արդեօք այնպիսի հաստատուն նեցուկ-  
ներ որ անոնց ապաւինիս : Ո՞վ մեր շիտթութեան քարո-  
ղիչը , դուն ալ պատրաստ ես հանդարտ սրտով մեռնելու :

Մ.Յ. , կրնամ հանդարտութեամբ մեռնիլ : Մ.Յ. , թէ և  
հարկ ըլլար որ այսօր մեռնէի , երջանիկ ապահովութիւն մը

կունենայի ես որ բնաւ պիտի չպատասխարտիմ : Եւ այց սա-  
կայն , գոհութիւն Մատուծոյ , ձեր հարցմունքին՝ այսպէս  
պատասխան տուողը լմինակ ես չեմ : Մս նոյն պատասխանը  
այսօրուան օրս աշխարհիս ամէն կողմը բնակող շատ մար-  
դիկ կրնան տալ : Մնանկ պատասխան մըն է որ համարձակ  
ըրին ուրիշ բաղմամբիւ անձինք , որոնց վստահութիւնը  
փորձուեցաւ ու երբէք թուլցած չգտնուեցաւ մահուան ան-  
կողինին վրայ : Մ, յո՛, մենք կրնամք հանդարտ սրտով մեռնիլ :

Մ, դ՛ գուցէ կըբողոքէք ըսելով . « Դնչ՞ու համար կա-  
րող պիտի ըլլաք մեզմէ աւելի հանդարտութեամբ մեռնիլ .  
ինչ մեծամտութիւն է ստ , և ինչ յիմարութիւն » : Եւ այց  
մենք ձեր իրաւունքը ըսելէն առաջ չհերքեցինք ունեցած  
ապահովութիւններդ՝ վասն որոյ ականջ դրէք , և դուք ալ  
մեր ըսելիքը չհասկըցած դատաստան մի՛ ընէք : Մինչև  
հիմա մենք հարցուփորձ ըրինք ձեր վրայովը . ալ այսու-  
հետեւ պէտք է որ դուք մեր տեղը անցնիք և սկսիք քննել  
մեր ապահովութեան նեցուկները , և տեսնել թէ արդեօք  
ձերիններուն պէս աւազի՞ վրայ հիմնեալ են անոնք , թէ  
հինաւուրց յայտի վրայ : Եւ նախ կըհարցընէք մեզի , թէ  
մեր վարմունքը՝ Մատուծոյ օրէնքին հետ ան յարմարու-  
թիւնը ունի՞ , որն որ յայտնի ցուցուցինք ձեզի թէ ձեր վար-  
մունքին մէջը չկայ ամենևին : Մ, է . մենք ալ ձեզ նման օրինա-  
ղանց եմք , և գուցէ ձեզմէ աւելի , և իւրաքանչիւր ոք մեզմէ  
« գլուխ մեղաւորաց » ( Թ՛Յ՛՛՛ Թ՛՛ 15 . ) կըհամարի զինքը :

Արեմն՝ կը յուսամք արդեօք որ մեզի համար թեթեանայ  
պիտի օրէնքը , որն որ ապացոյցներով հաստատեցինք թէ  
տնհնար է ձեզի ստ բանիս ակնկալութիւն ունենալ : Մ, է .  
թէ որ ասանկ յոյս մըն ալ ունենայինք նէ , երբէք հան-  
դարտ պիտի չըլլայինք , բայց սա ակնկալութիւնը գարշելի  
կըհամարիմք և կըհաւտամք թէ անհնար է որ Մատուծոյ  
օրէնքը մէկու մը համար մեղմանայ :

« Աւստի , պիտի հարցընէք , ի՞նչ բանով ապահովութիւն  
ունիք , և ձեր՞ու մեր վիճակին՝ մէջը ի՞նչ տարբերութիւն

կայ” : Ստբերնիդ բերէք քարոզիս սկզբնաւորութեանը ըսածներս . քանզի նախ անոնց ուղղեցինք մեր խօսքը , որ հանդարտութիւնը իրենց վարմունքին վրայ կը հաստատէին և կըսէին . “Մենք կրնամք հանդարտ մեռնիլ . վասն զի անանկ վարմունք մը չունիմք որ Մատուծոյ դատապարտութեանը արժանի ըլլամք” : Ըս սկզբնաւորութեանը հետ յարմարցուցինք բովանդակ քարոզը , և միշտ աս կողմին հարուած տալով բնաջինջ ըրինք ձեր հանդարտութիւնը : Ո՛հ , ձեր վարմունքը՝ ձեր վարմունքն է միշտ ձեր հանդարտութեան խարխուլ կողմը : Լաւ աս աս տեղս է ձեր և մեր վիճակին մէջը եղած տարբերութիւնը . քանզի մենք չեմք վստահիր մեր վարմունքին , և վասն այսորիկ ձեր հանդարտութեանը տրուած հարուածներուն և ոչ մէկը մեր հանդարտութեանը կը դպչի , որուն հիմը բոլորովին տարբեր է : Ըս հիմը մեր վրայ չեմք փնտռեր բայց ուրիշ տեղ , ինչպէս որ գրուած է . “Մէկ միջնորդ մը կայ Մատուծոյ ու մարդոց մէջը՝ Հիսուս Վրիստոս մարդը” : *ա՛ Տ՛Է . ք . 5 :* “Մեր յոյսը Հիսուս Վրիստոսի վրայ հաստատուած է . քանզի անոր մարդեղութեան սքանչելի խորհրդովն է որ կրնամք հանդարտ սրտով մեռնիլ : Բացատրեմք ըսածնիս :

Սուրբ Գրքէն սորված եմք , (որ Մատուծոյ խօսքը կը պարունակէ , և որուն վկայութիւնը այնքան գերազոյն է մարդկային ապացոյցներէն , որչափ որ Մատուածային հեղինակութիւնը գերազոյն է մարդկային հեղինակութենէն) որ Մատուած տեսնելով թէ բոլոր մարդիկ դատապարտութեան տակ ինկեր էին իրենց գործքերովը , և ոչ որ անոնցմէ “և ոչ մէկը” կարող էր անոր առջին երևնալու , և իր սուրբ օրէնքին սոսկալի պատիժէն ազատ մնալու , արդարացնելու համար զմարդ իր ատեանին առջևը՝ անանկ միջոց մը բանեցուց , որուն մէջը չեմ գիտեր թէ որ բանին առաւել հիանալու եմք , անձառելի ողորմութեանը վրայ թէ խորին իմաստութեանը՝ որ ասով կը գուցընէ մեզի : Լաւ Միջնորդ մը հաստատեց մարդուն և

իր մէջը. «Իտրկեց իր Արդին՝ որ կնիկէ մը եղաւ, ու օրէնքին տակը մտաւ»: Վատ. 7. 4: Ե՛հա ասիկայ է ան Արդին Մատուծոյ, որ անիմանալի խորհրդով մը նաև Արդի մարդոյ է, որուն յանձնեց Մատուած մեղաւոր և դատապարտեալ մարդը իր հետը հաշտեցընելու պաշտօնը. ուստի աստուածային բնութեան միաւորելով և մնորդկային բնութիւնը, ունենալով միանգամայն առաջինին կատարելութիւնները և երկրորդին անմեղ տկարութիւնները, յաւիտենական՝ ըստ որում Մատուած էր, ծնանելով և մեռանելով՝ որովհետև մարդ էր. ամենակարօղ՝ իբրև Մատուած, ենթակայ յոգնելու և չարչարուելու՝ իբրև մարդ, սուրբ՝ իբրև Մատուած՝ փորձութիւն կրող՝ իբրև մարդ, վերջապէս «Դամանուէլ» այսինքն է «Մատուած մեր հետը», Մատուծոյ և մեր մէջը մտաւ, որ մեր տեղը դատապարտուի և մեր աշատութիւնը ծախու առնէ: Իբրև մարդ ապրեցաւ աշխարհի մէջ, բայց առանց մեղաց, կատարեց օրէնքը ինչպէս որ կը վայելէր որ մենք կատարէինք մեր գործքերովը յաւիտենական կենաց արժանի ըլլալու համար: Ե՛պա խաչը ելաւ, Մատուծոյ և մեր մէջը. հոն՝ մեր մեղքերուն ծանրութիւնը իր վրան առաւ. և օրէնքը տուաւ անոր ան մեծ հարուածը, ուսկից անհնար էր որ մեր մեղքերովը աղատ մնայինք. ուստի մեր վարմունքը դատապարտեցաւ, օրէնքին հատուցումը եղաւ, և մենք ալ՝ ո՛վ սքանչելեացս, պարտաւորութենէ աղատեցանք: Վանդի մեր Միջնորդը գերեզմանը չկեցաւ, այլ երրորդ օրը յարութիւն առաւ, և այսպէս յայտնեց Մատուած որ անիկայ իր Արդին էր, և որ կընդունի անոր պատարագը մեր մեղքերուն քաւութեանը համար: Ե՛պա երկինքը ելելով՝ նստաւ Մատուծոյ աջ կողմը և իր բարեխօսութեամբը կը պահպանէ զանոնք որ իր մահուամբը ծախու առաւ: Ե՛հա ասիկայ է ան գործը որ Հիսուս Վրիստոս մարդը կատարեց, իբրև միջնորդ Մատուծոյ և մարդոց մէջ տեղը ինչպէս որ գրուած է. «Մատուած էր որ Վրիստոսի ձեռքովը աշխարհս իրեն հետ հաշտեցուց

և անոնց մեղքերը իրենց չսեպեց : Այսան զի Մատթեոս՝ անիկայ՝ որ մեղք չէր գիտեր , մեղի համար մեղաւոր սեպեց՝ որ մենք անոր ձեռքովը Մատուծոյ արդարները եղած ըլլանք : Ի Կորնթ. Ե. 21 :

Սակայն աս միջնորդութիւնը ամէն մարդ չարդարացրներ : Ուրեմն որոնք կարդարանան ասով . անոնք որ ինչպէս Սորբ Վիքթր կըսէ , հաւատքով մասնակից կըլլան անոր . անոնք որ կը հաւատան Հիսուս Վրիստոսի , (Կորնթ. ԺԳ . 31) այսինքն թէ՛ զգալով որ մեղաւոր են և յաւիտեան կարող չեն ինքզինքնին փրկելու , վասն որոյ միայն Հիսուս Վրիստոսի կապաւինին իրենց փրկութեանը համար , և անիկայ է իրենց ունեցած մի միայն յոյսը Մատուծոյ և իրենց մէջ : Մտ հաւատքովը՝ Հիսուս Վրիստոս հաւատացեալին հետ մտերիմ և անճառելի միաւորութիւն մը կուունենայ : Մն որ կը հաւատայ՝ կը միաւորի Հիսուս Վրիստոսի հետ . Ճիւղ մը կը լսայ ճշմարիտ որթոյն Հիսուսի . (Հօհ. ԺԵ . 5) անգամ ան մարմնոյն , որուն ինքը զլուխ է , ոսկր անոր՝ ոսկորներէն , և մարմին անոր մարմինէն . (Կով. Ե . 30 .) մէկ կը լսայ անոր հետ՝ ինչպէս որ ան մէկ է շօրը հետ . (Հօհ. ԺԷ . 21, 22) աս խօսքերուն համեմատ . “Հաւատալ Հիսուս Վրիստոսի” և թէ , “Հիսուս Վրիստոսի մէջն ըլլալ . բնակիլ ՚ի Հիսուս Վրիստոս , ունենալ Հիսուս Վրիստոսը իր մէջը բնակած , Հիսուս Վրիստոսինը ըլլալ” . որոնց ամէնն ալ մի և նոյն նշանակութիւնը ունին առաքելական խօսքերուն մէջը : Այլ ըստ որում չըլլար որ բան մը պատահի գլխուն և բոլոր մարմինը չզգայ , և որ հնար չէ թէ գլուխը մէկ տեղ մը ըլլայ և բոլոր անդամները հոն չըլլան , աստնկ ալ հաւատացեալը հազորդ կը լսայ Հիսուս Վրիստոսի գործոյն , և ինչ որ բնէ Հիսուս Վրիստոս , հաւատացեալը ևս անոր հետ կընէ : Թէ որ ան կը մեռնի , մենք ալ կը մեռնիմք . թէ որ ան յարութիւն կառնէ , մենք ալ յարութիւն կառնեմք . թէ որ ան երկինքը կելէ , մենք ալ կելեմք . թէ որ ան յաւիտենական կեանք

կրվայելէ, մենք ալ անոր հետ կրվայելեմք: Այսպէս կը կատարուի ան խորհրդաւոր փոխանակութիւնը, որով մեր մեղքերը Հիսուս Վրիստոսի կըհամարուին, և իր արդարութիւնը մեր վրայ կուգայ: Հաւատքով իր միջնորդութիւնը մեզի սեպհական կըլլայ, և Հիսուս Վրիստոս մեզի Վրիժէ կըլլայ. ինչպէս որ գրուած է. «Ան որ կըհաւատայ անոր՝ չատապարտուիր. ան որ Որդիին կըհաւատայ՝ յաւիտենական կեանքը կընդունի. ան որ կըհաւատայ՝ դատապարտութեան տակ չիյնար, հապա մահէն դէպի կեանքը անցաւ. (Հով: Գ. 18, 36. Ե. 24.) նաև, «Թէ որ անանկ է նէ՝ դատապարտութիւն չկայ Վրիստոս Հիսուսով եղողներուն»: Հով: Գ. 31:

Այս մեկնութիւններէն կրնաք հասկընալ մեր սրտի հանդարտութեան գաղտնիքը. կըհաւատամք Հիսուս Վրիստոսի: Արեմն մտածեցէք թէ մենք այնպիսի պաշտպան մը ունենալէն ետև, հանդարտութեամբ մեռնելու իրաւունք ունիմք թէ չէ:

Բայց պիտի ըսէք թէ ինչպէս կրնամք հանդարտութեամբ մեռնիլ որ օրէնքը չեմք կատարեր: Այո՛, օրէնքը կատարած չեմք, և ասիկայ միայն բաւական էր յուսահատութեան մէջ ձգելու մեզ, թէ որ մեր առանձին արդարութիւնը գէ՛մ դնելու ըլլայինք օրէնքին հարուածներուն: Բայց մենք Միջնորդ մը ունիմք, և անոր արդարութիւնը գէ՛մ կըգնեմք օրինաց հարուածներուն. ասիկայ է որ «մեզի Աստուծակ արդարութիւն եղաւ» (Խ Սրն: Խ. 30) ասիկայ է որ՝ «մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղանք» (Խ Սրն: Ե. 21.) ասիկայ է, «որուն հնազանդութիւնովը շատերը արդար եղան» (Հով: Ե. 19:) Հարկ չէ որ մենք հանդարտ մեռնելու համար կարող ըլլանք օրէնքին կատարեալ լրումը մեր վրայ տեսնել. բաւական է որ տեսնեմք զանիկայ մեր Միջնորդին վրայ: Հիսուս կատարեց արդեօք օրէնքը անթերի. ասիկայ է մեր խնդիրը: Թէ որ կրնաք ապացուցանել թէ Հիսուս



Վրիստոսի նազանդութեանը մէջ պակասութիւն մը կայ, թէ որ կրնաք հաստատել թէ իր բովանդակ կենացը ընթացքին մէջ անանկ գործ մը ըրաւ, կամ խօսք մը ըրաւ, կամ խորհուրդ մը ունեցաւ որ նոյն իսկ սրբութիւնը չըլլայ, անատենը մեր բոլոր յոյսը կը փճանայ: Բայց ասիկայ երբէք պիտի չկրնաք ապացուցանել. վասն զի գրուած է թէ «Սուրբ և Մարգար» էր ան. (Գ.սքժ. 7. 14) թէ ասիկայ մեր «քահանայապետն էր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած». (Լքբ. է. 26). որ «ինքը մեղք մը չգործեց ու անոր բերանը խաբեբայութիւն մը չգտնուեցաւ», (ԿՊԼ. ք. 22) որ կըրցաւ ըսել իր բոլոր ժողովուրդին, «Ես միշտ շօրս ուղածը կրնեմ». (էճ. ք. 29) նաև, «Չեղմէ ո՞վ կրնայ իս յանդիմանել մեղքի համար». (էճ. ք. 46) որ է «Մատուծոյ փառքին լոյսը, ու անոր էութեանը բուն պատկերը. (Լքբ. Կ. 3) և վերջապէս՝ «ան որ իս տեսաւ՝ շայրը տեսաւ». (էճ. Ժ. 9) Մակից ետև «դատապարտութիւն չկայ Վրիստոս էջիսուսով եղածներուն: շ. ք. 1: Ուստի կրնամք հանդարտութեամբ մեռնիլ, որպէս թէ բոլոր օրէնքը կատարած ըլլայինք:

Պիտի հարցընէք մեզի նաև, թէ ի՞նչպէս կրնամք հանդարտութեամբ մեռնիլ, մենք որ մեր գործքերովը օրէնքին դատապարտութեանը արժանի եղանք: Երաւ դատապարտութեան արժանաւոր եղանք, և ասիկայ միայն բաւական էր յուսահատութեան մէջ ձգելու մեզ. բայց մենք Միջնորդ մը ունիմք: Միակայ «մեր մեղքերը վերցուց», անիկայ «մեր մեղքերուն համար չարչարեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար պատժեցաւ»: Երայ. ծ. 4, 5: Որպէս զի կարօշ ըլլամք հանդարտութեամբ մեռնելու, հարկաւոր չէ որ մենք անձամբ անձին կրած ըլլամք մեր մեղքերուն արժանաւոր պատիժը. հերիք է որ Միջնորդը կրած ըլլայ զանոնք: Ուստի կը հարցընեմ ձեզի, թէ էջիսուս կրնց մեր մեղքերուն պատիժը, կատարելապէս կրնց: Ի՞նչ որ կրնաք ապացուցանել որ էջիսուս Վրիստոս մեր մեղ-

քերուն պատիժը չկրեց, կամ թէ իր շարժարանքը ըստ բաւականին երեւելի բան մը չէր, և իր արիւնը ըստ բաւականին պատուական չէր Մտուածոյ առջևը որ բոլոր մեղքերը քաւէ, անատենը մեր բովանդակ յոյսը բնաջինջ կըլլայ: Բայց անհնար է որ աս բանը երբէք կարենաք ապացուցանել. վասն զի գրուած է, թէ «Յիսուսի արիւնը մեղամէն մեղքերէն կըսրբէ» (ՍՅՃ. Թ. 7) և որ՝ «մեր մեղքերուն քաւութիւն է, և չէ թէ մինակ մեր մեղքերուն, հապա բոլոր աշխարհի» (ՍՅՃ. Թ. 2) ու «թէ որ մեր մեղքերը ձանձախարիթի նման սև ըլլան, ձեան պէս սպիտակ պիտի ընէ, ու թէ որ կարմիր ալ ըլլան, իրրև ասր սպիտակ պիտի ընէ» (ԼԿՄ. Թ. 18) «մեր ամէն անօրէնութիւնները անոր վրայ կուտեց, և անոր պատիժովը մենք բժշկուեցանք»: ԼԿՄ. ծի. 5, 6: Այս ան որոյ պատահեալ գատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղածներուն: Աւստի կրնամք հանդարտութեամբ մեռնիլ որպէս թէ արդէն կրած ըլլայինք մեր մեղքերուն արժանաւոր պատիժը:

Ի վերջոյ պիտի հարցընէք, թէ ի՞նչպէս կրնամք հանդարտ մեռնիլ կամ հանգիստ ապրիլ, մենք որ տկար՝ անձեռնհաս և անհաւատարիմ եմք, և որ պսօր կըհաւատամք, բայց վաղիւ կրնամք մտքերնիս փոխել և հաւատքէն հեռանալ: ՇՆմարիտ է ըսածնիդ, քանզի մենք տկար եմք, անձեռնհաս և անհաւատարիմ, աւելի քան որչափ դուք կըկարծէք, և ասիկայ բնական էր շարունակ տազնապի մէջ պահելու մեզ՝ թէ որ մենք միայն մեզմէ օգնութիւն յուսայինք: Բայց մենք Միջնորդ մը ունիմք, անիկայ «ամէն բան մեզի համար կըկատարէ»: Մող. ծէ. 2: Երդ՝ որպէս զի կարող ըլլամք ապրիլ և մեռնիլ հանդարտ սրտով, հարկաւոր չէ որ մենք կարենամք ինքզինքնիս հաւատոյ մէջ պահպանելու. բաւական է որ աս Միջնորդը կարող ըլլայ և կամենայ հաւատոյ մէջ հաստատուն պահելու մեզ: Աւստի կըհարցընեմք թէ, Յիսուս կրնայ և կուզէ՞ արդեօք որ

հաւատոյ մէջ պահէ մեզ : Թէ որ կրնաք ապացուցանել թէ Հիսուս Վրիստոս տկար է, անկատար և անհաւատարիմ մեզի պէս, կամ թէ մեր փրկագործութիւնը ընկէն ետև ալ կըթողու որ ինքիրգիւննու մնամք, անատենը բոլոր մեր յոյսը 'ի հիմանց կըկործանի : Բայց անհնար է որ կարող ըլլաք սոս քանը ապացուցանել վասն զի գրուած է, որ Հիսուս 'ի մեռելոց յարութիւն առնելէն ետև, "երկինքը համբարձաւ, նստաւ Մատուծոյ աջ կողմը" (Սաղմ. 19) թէ հոն "մեզի համար բարեխօս է ինքը", (Հռոմ. 1. 2. 34) "վասն զի՝ թէ որ թշնամի եղած ատեննիս Մատուծոյ հետը հաշտուեցանք իր Որդոյն մահուամբը, հապա ո՞րքան աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը" (Հռոմ. 1. 10) "բայց Մատուած հաւատարիմ է, որ մեզ փորձութեան մէջ չձգեր մեր կարողութեանէն աւելի" (Թ. 1. 13) և թէ "ան որ մեր մէջը բարեգործութիւն սկսեց նէ, մինչև Հիսուս Վրիստոսի օրը կըկատարէ" : Փիլ. 1. 6 : Ուստի ալ այսուհետև "դատապարտութիւն չկայ Վրիստոս Հիսուսով եղածներուն", ու մենք կարող եմք այնպիսի հանդարտութեամբ մեռնիլ, որպէս թէ բոլոր զօրութիւնը և կարողութիւնը մեր մէջը ունեցած ըլլայինք :

Մշակ, սիրելի եղբարք, ծանուցինք և միանգամայն արդարացուցինք ձեր առջին մեր ապահովութեան հաստատուն հիմը. կրնաք ուրեմն յիմարութիւն կոչել սոս վստահութիւնը, և զանիկոյ ունեցողներն ալ մեղադրել թէ իսրուած են : Բայց որպէս և իցէ, թէ և յիմարութեան տեղ դնէք սոս անօտոման վստահութիւնը որ ունիմք ամենապատուական Վրքին վկայութեանը վրայ, թէ որ մեր յոյսը սնոտի բան մը կըհամարիք, թէ, գոնէ 'իմիս առէք (թողութիւն կընէք համարձակութեանս), գոնէ դիտեք թէ ան զթողութիւնը որ ունիք մեր յիմարութեանը վրայ, զուգակշիռ չէ անոր՝ որ մենք ձեր իմաստութեանը վրայ կը զգամք, և աղօթքը՝ որ կընէք Մատուծոյ, որպէս զի մենք

ալ ձեր ուզածին պէս իմաստուն ըլլամք, երբէք չկրնար ջերմեռանդ ըլլալ մեր ազօթքին նման որ կրնեմք միշտ, բաղձալով որ դուք ալ մեզի պէս յիմար ըլլաք: Այո՛, ամենամեծդ Աստուած, տուր ասոնց ան սուրբ և երջանիկ յիմարութիւնը. յիմարութիւն՝ քեզի հաւատալու, յիմարութիւն՝ քեզի հնազանդելու, յիմարութիւն՝ քեզ սիրելու, յիմարութիւն՝ փրկուելու, յիմարութիւն՝ երջանիկ ըլլալու, յիմարութիւն՝ իմաստուն ըլլալու:

Բայց ի՞նչ կրեսմ ես՝ մե՞նք միայն ձեզի համար աս ազօթքը պիտի ընեմք Աստուծոյ: Վուք ինքնին չէ՞ք ըներ արդեօք ձեզի համար: Ա՛հ, անտարակոյս գիտեմ որ դուք աշխարհի սովորութեանը պէս չէք նախատեր աս մեր յոյսերը. դուք ուրիշ տեսակ զգացողութիւններ ունիք. հաւաքանօք կրինդրէք ան սուրբ և երջանիկ ապահովութիւնը, ու այսպէս կրեսք սրտերնուզ մէջը. «Աս ալ կուզեմ հաւատալ Հիսուս Վրիստոսի»: Հա՛տ աղէկ. հաւատացէք, եղբարք, հիմա հաւատացէք: Ա՛յլ քայլ մըն ալ առնելու որ ըլլաք, անշուշտ հաւատոյ դուռը պիտի հասնիք: Ա՛յ սպասէք որ մեղաց մոլորութիւնները, անհաւատութեան փորձութիւնները և ամբարիշտ աշխարհի ծաղրը ձեր նորածին յոյսը հովացընեն: Ա՛յ աղուան մի՛ ձգէք աս բանը, գուցէ վաղը չէք կամենար. գուցէ վաղը չէք կրնար, գուցէ վաղը մեռած կը ըլլաք: Ա՛յ թէ վաղը՝ այլ այսօր: «Ա՛հա ընդունելի ժամանակ. ահա որ փրկութեան»: Թ՛ Կորնթ. Դ. 2: Ա՛յլ դի՛ ձգեցէք բոլոր ձեր տարակոյսները, ամենքդ ալ Հիսուսի ոտքը ընկէք, ձեր սիրտը անոր տուէք. և աս տաճարը որ ձեր ներս մտնելը տեսաւ, գուցէ «առանց յուսոյ և անաստուած՝ աշխարհի մէջ», (Աղ. 12) թող տեսնէ ձեզ որ դուրս կելլէք երգելով ձերունի Սիմեօնին հետ անոնց երգը՝ որ կրնան հանդարտութեամբ Քանիլ. «Ա՛լ հիմայ Տէր կարձակես քու ծառայ խաղաղութիւնով քու խօսքիդ պէս. ինչու որ ի՛նչ աչուրներս քու փրկութիւնդ տեսան»: Ա՛յ Կոր. 1. 29, 30:

Ք Ա Ր Ա Ձ Թ

Ք Ր Ի Ս Տ Ա Ս Ի Մ Ի Ժ Ն Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ե Ն Ը Վ Ե Ե Յ

Անկ' Ըստուած մը կայ, և մէկ Արջնորդ մը Ըստուածոյ ու մարդոց մէջը՝  
Յիսուս Քրիստոս մարդը: ան Տիմ' . ք . 5 :

ԸՍՏԱՍԵՃԵՅԻՆ՝ Ատիստանամուծիլը այնպէս կամեցեր է որ աշխարհս միջնորդական ընթացք մը ունենայ: Թէ մասնաւոր անձանց և թէ ամբողջ ազգերուն մէջ եղած գործառնութիւնները ըստ մեծի մասին միջնորդներու ձեռք կրկատարուին . և անոնց գործունէութեամբը միշտ մեծամեծ չարիքներ կրկատարուին, ու խիստ օգտակար բարութիւններ յառաջ կուգան: Այ կառավարութիւն՝ ոչ վաճառականութիւն՝ ոչ ալ արդարեւ մարդկային կենաց ո՛ր և իցէ շահատիրութիւնները կրնային հաստատուիլ և ծաղկիլ առանց միջնորդներու շարունակ գործառնութեանը գիմելու:

Ըստուածոյ կառավարութիւնն ալ աս աշխարհիս վրայ միջնորդական կառավարութիւն մըն է: Սուրբ Գիրքը կիմացունէ թէ Հայրն Ըստուած՝ Յիսուս Քրիստոսի ձեռքը ստեղծեց աշխարհս, և անով կրկատարէ, կրգա-  
24 Թ

տէ և կրփրկէ զանիկայ : Հով. 3 : 16, 17 : Ե. 22, 27 :

Ճշմարիտ է որ Մատուած՝ իրանհամար խորհուրդները և նպատակները կատարելու համար, անհամար պաշտօնեաներ կը գործածէ : Բարի մարդիկ ու չարերը, հրեշտակները ու դևերը, և բնութեան բոլոր զօրութիւնները իր կամքը կատարելու կը ծառայեն :

Բայց նախ պէտք է գիտնալ որ Մատուած միշտ անանկ պաշտօնեաները կրնորէ, որոնք իրենց կատարելու գործին յարմար են. ինչպէս՝ երկիրը ջրելու և պաղարներ ընելու համար՝ բնութեան զօրութիւնները և տարերքները կը գործածէ : Իր ճշմարտութիւնը փառաւորելու, տգիտութեան խաւարին մէջ եղողները լուսաւորելու, հեթանոսներուն աւետարանը քարոզելու պաշտօնը՝ մարդոց յանձնած է, և ուրիշ զանազան ողորմութեան գործերը հրեշտակներու սպասաւորութեամբը կը կատարէ, և այսպէս միշտ ան պաշտօնեաները կամ միջնորդները կը գործածէ որ անվրէպ իրենց յանձնուած գործին յարմար են :

Երկրորդ պէտք է յիշել որ միջնորդութիւնը յատկապէս կրնչանակէ մէկ եղանակով մը երկու հակառակ կողմերուն մէկը մէկու հետ հաշտուիլը, և յանցաւորին պատիժէն ազատիլը, առանց փնասելու օրինաց պատիւը կամ օրինադրին արդարութիւնը :

Մհա աս կերպ միջնորդութիւնն է՝ որ մեղաւորներուն ու իրենց բարկացուցած Մատուածոյն մէջը կը ըլլայ, և որուն վրայով մեր բնաբանը կը հաստատէ թէ միայն մէկ Միջնորդ մը կայ Հիսուս Քրիստոս մարդը : Թէ աս գործիս մէջ մէկէն աւելի միջնորդ մը ըլլալը այնչափ անհնարին է, որչափ որ մէկէն աւելի Մարտիչ մը կամ Մատուած մը ըլլալը անհնարին է : Միայն մէկը կայ որ կրնայ ճիշտ յարմար ըլլալ աս միջնորդութեանս գործին : Բնաբանին մէջ Հոգւոյն Արքայ յայտարարութեանը նսյելով՝ մէկէն զատ ու-

թիշ միջնորդ մը ունենալը կուսպաշտութիւն է . քանզի մէկէն զատ ուրիշ աստուածներ ունենալու պէս բան մըն է :

Մտդ՝ աս քարոզիս մէջ իմ նպատակս բնաբանին աս վարդապետութիւնը հաստատել և բացայայտել է, ցուցընելով՝ թէ միայն Հիսուս Վրիստոս կատարեալ և անվրէպ յարմարութիւն ունի ան մի միայն միջնորդը ըլլալու, Մատուծոյ և մարդոց մէջը : Վրանզի մինակ ինքը ունի ան ստորագելիքները՝ որոնցմով կրնայ իրաւամբ մեղաւոր և դատապարտեալ մարդոց փրկութեանը գործին մէջ խառնուելու :

Աստի սյսպիսի միջնորդի մը ինչ հանգամանքներ հարկաւոր ըլլալը ցուցընելու համար, մէկ օրինակ մը յառաջ կրբերեմ՝ աշխարհային կառավարութիւններէն, որ աւելի բացայայտ և աւելի պարզ կերպով իմանամք աս բանը :

Վիցուք թէ մէկ ամբողջ գաւառ մը ապստամբեցաւ իր թագաւորին դէմ, երկրին օրէնքները անարգեց և թագաւորին հաւատարիմ պաշտօնատարները սպաննելէն ետեւ, իր անդրանիկ որդին՝ իր թագին և աթոռին ժառանգն ալ սպաննեց : Թագաւորը՝ երկրին օրինացը համեմատ, ան պըստամբները մահուամբ պատժելու վճիռ տուաւ, և հրամայեց որ ան վճիռը՝ ի գործ դրուի : Մէն մարդ կըզգայ որ աս վճռոյն հաւատարմութեամբ կատարուելէն կախեալ է ոչ միայն կառավարութեան պատիւը և ապահովութիւնը, այլ նաև ան երկրին բարեկարգութիւնը և խաղաղութիւնը : Թէ որ ասանկ ապստամբութեան մը առաջը չառնուի և յանցաւորները արժանաւոր պատժով չպատժուին, գուցէ ուրիշ գաւառներ ալ ան վնասակար օրինակին հետեին և հետեաբար ընդհանուր անկարգութիւններ և ապստամբութիւններ ծագին :

Վիցուք ևս թէ կարելի է գանուի անանկ միջնորդ մը որ կարենայ թագաւորին և իր դատապարտած հպատակներուն մէջ տեղը մտնելու, և անանկ եղանակով մը հաշտութիւն ընելու՝ որ յանցաւորը պատժուելէն ազատի և նոյն ատենը

օրէնքը պահուի ու թագաւորին իրաւունքներն ալ հաստատ  
մնան : Ըրդ՝ ուշադրութեամբ քննեմք նայեմք թէ ասանկ  
միջնորդ մը գտնուի նէ, ի՛նչ հանգամանք կամ ստորոգելիք  
և ի՛նչ անձնական վարք և վերաբերութիւններ ունենալու  
է ան :

Ը. Տայտնի է որ անիկայ Աերագոյն Լստիճանի տէր  
անձ մը պիտի ըլլայ :

Ենքնակալին մեծութեանը ու փառքին՝ և ապստամբներուն  
բազմութեանը նայելով՝ անշուշտ անհնարին և անվայելուչ  
բան է, որ մէկ հասարակ մարդ մը միջնորդութիւն ընելու  
ելէ : Լսանկ միջնորդ մը ընդունելը՝ յայտնի հրատարակել  
է թէ կառավարութիւնը թեթև յանցանք մը կը համարի  
ապստամբութիւնը, և իր հրատարակած դատապարտու-  
թեան վճիռն ալ անանկ չնչին բան մը, որ անհամար միջ-  
նորդներ զիրաւ կրնան գտնուիլ յանցաւորին և դատա-  
պարտեալին համար բարեխօսութիւն ընելու :

Ը. Տանցաւորներուն համար միջնորդութիւն ընողը այն-  
պիսի մէկն ըլլալու է, որ ինքը անձամբ կատարեալ և Լն-  
թերի շնազանգութիւն ըրած ըլլայ ան երկրին օրէնքնե-  
րուն :

Թէ որ ան միջնորդը երկրին օրինացը կատարեալ հնա-  
զանգութիւն ըրած չէ, փոխանակ դատապարտեալին ա-  
զատութիւնը ընդունելու՝ ինքը արժանի կըլլայ դատա-  
պարտութեան : Վանզի անիկայ միայն փոքրիկ անհնա-  
զանգութիւն մը որ ունենայ, կամ թէ որ քիչ մը կասկած  
ըլլայ զրան՝ թէ անհաւատարիմ է իր թագաւորին կամ  
թէ ինքն ալ ատենով նոյն յանցանքը ունեցեր է, անտա-  
րակոյս խաղք խայտառակ պիտի ըլլայ, թէ որ համարձա-  
կի իբրև միջնորդ՝ յանցաւորներուն ազատութիւնը խնդրե-  
լու : Թագաւորը իրաւամբ պիտի ըսէ անօր, Վուն ինքնդ  
յանցաւոր ես. և մէկ միջնորդ մըն ալ քեզի համար պէտք  
է որ անով կարող ըլլաս իմ առջև գալու :

Գ. Լն միջնորդն որ արժանի պիտի ըլլայ ասանկ դժ-



ուարին գործի մը միջամուխ ըլլալու, Սեծամեծ Չառայութիւններ ըրած պիտի ըլլայ ան երկրին կառավարութեանը :

Անիկայ անշուշտ աս խնդիրքը պիտի ընէ. Աս մարդասպաններուն և ապստամբներուն ներքէ Ինճի-ՆԱԿԻ : Արդ թէ որ ատ միջնորդը ըրած չէ այնպիսի մեծ և երևելի ծառայութիւններ, որով տէրութեան երկիրը ընդարձակուած ըլլայ և թագաւորին անունը փառաւորուած, անտարակոյս անիկայ իրաւունք պիտի չունենայ անանկ մէկ մեծ շնորհք մը խնդրելու : Աս ընելովը միայն անարգանաց և արհամարհանքի ենթակայ պիտի ընէ իր անձը, իր հպարտութեանը և յիմարութեանը համար : Ասոյց թէ որ ճշմարտապէս մեծ և երևելի ծառայութիւններ ըրած է թագաւորին, անատենը իրաւապէս կրնայ պահանջել որ իր միջնորդութիւնը պատուով ընդունուի :

Գ. Միջնորդը թագաւորին հետ Շահախնդրութեան Միութիւն մը ունենալու է երկրին փառացը և բարերատութեանը համար :

Անատենը բնաւ կասկած մը չըլլար ժողովուրդը իր կողմը շահիլ ուզելուն վրայօք : Աննաւանդ թէ որ անիկայ արքայական ամբողջ ժառանգն ըլլայ, և ամենեկին ազգակցութիւն չունենալով օտար տէրութեանց հետ իր բոլոր զօրութիւնը և փառքը կախեալ ըլլայ տէրութեանը հաստատ մնալէն և հպատակաց հնազանդութենէն և հաւատարմութենէն, յայտնի պիտի ըլլայ թէ անիկայ բնաւ բան մը չընէ որ կառավարութեան ճշմարիտ շահուցը դէմ ըլլայ : Բնաւ բան մը չընէ որ հլու հպատակաց հանգարտութիւնը վերցովէ, և բնաւ ապստամբները չարշապաններ մինչև որ զանոնք համոզէ զոչալու և վերստին տէրութեանը ամէն օրէնքին հնազանդելու :

Ե. Թէ որ միջնորդը յանցաւորները աղաատելու համար անոնց տրուելու պատիժը յօժարակամ իր վրան առնէ, կամ անանկ չարչարանքներ կրէ որ թագաւորը և բոլոր

ժողովուրդը կատարելապէս հաւասար համարին ան պատ-  
ժոյն, անատենը իր միջնորդութեան անզուգական գերա-  
զանցութիւնը կամ կատարելութիւնը յայտնի կը լայ :

Վ. յսպէս հիանալի եղանակաւ պիտի ցուցնէր իր սաստիկ  
օրինապահութիւնը, իր հաւանութիւնը թագաւորին տուած  
վճռոյն և միանգամայն իր ողորմութիւնը և կարեկցութիւ-  
նը յանցաւորներուն վրայ : Վ. յսպէս օրէնքնալ հաստատ  
պիտի մնար և վկայուէր թէ ան իմաստուն՝ արգար և ան-  
ընկճելի է, որուն պահանջմունքները անանկ սուրբ և  
հաստատ կը համարէր ( ) օրինադիրը, որ եթէ իր ամենասի-  
րելի բարեկամը՝ իր տէրութեանը խիստ երեւելի պաշտօնա-  
տարը և մինչև անգամ իր ամբողջ ժառանգը կամենար  
դատապարտեալը իր կրելու պատիժէն ազատելու, կրնար  
աս բանը ընել միայն պատիժը բուն ինքը կրելով : Վ. անկ  
պարագաներու՝ օրէնքը փոխանակ իր հաստատութիւնը կոր-  
սընցունելու՝ աւելի կը հաստատուէր քան որչափ որ դատա-  
պարտեալին պատժուելովը պիտի հաստատուէր : Թագաւո-  
րին ողորմութիւնը միջնորդին ունեցած ողորմութեանը պէս  
փառաւոր կը հանդիսանար, այսպիսի եղանակով մը անոնց  
ազատութիւն շնորհելուն համար : Վ. ս եղանակով “ողոր-  
մութիւն ու ճշմարտութիւն իրարու պիտի պատահէին, ար-  
դարութիւն ու խաղաղութիւն իրար պիտի համըուրէին” :  
II ադլ. ձե. 10 :

Օ. Սիջնորդին և թագաւորին մէջը հայտնի պաշնա-  
դրութիւն մը ըլլալու է. մէկ կողմէն՝ թէ միջնորդը պարտի  
զղջման և հնազանդութեան բերել ապստամբները, իբրև  
պայմաններ իրենց ընդունելու թողութեանը, և մէկալ  
կողմէն՝ թէ թագաւորը պարտի կատարեալ և ճրի թողու-  
թիւն մը շնորհել, միայն Սիջնորդին համար, և չէ թէ օրէն-  
քին սաստիկութեանը կամ վճռոյն անիրաւ ըլլալուն համար :

Բարդյական կառավարութեան մը մէջ ասանկ նախա-  
զգուշութիւններուն հարկաւոր ըլլալը շատ յայտնի է :

Քանզի ան. անզեղջ և անհնազանդ յանցաւորներուն

Թողութիւն տալը, ապստամբութիւնը արդարացունել է, և ապստամբ հպատակները անպատիժ մնալով տէրութեան մէջը՝ բոլոր հաւատարիմ հպատակներուն խաղաղութիւնը պիտի վրդովեն: Միջնորդը բնաւ պէտք չէ որ կոյր զկուրայն կարեկցութեամբ շարժուի յանցաւորներուն ամէնն ալ փրկելու, այլ պարտի միայն անոնք փրկել որ իրենց յանցանքը զղջալով հնազանդութեան կրդտունան: Ընդհանրապէս կուր կողմերուն մէջ տեղը կրկենայ, որոնց մէկը բոլորովին իրաւունք ունի և մէկալը բոլորովին անիրաւ է. և պարտաւոր է որ արդարացունէ և պաշտպանէ օրէնքին պատիւը և թագաւորին իշխանութիւնը, երբէք ականջ չկատելով անոնց որ իրմէն օգնութիւն կրին դրեն, բայց զղջալ և հպատակիլ չեն ուզեր: Ըն միջնորդը՝ որ յանցաւորին ու դատապարտեալին փաստը կը պաշտպանէ, բայց կատարեալ փութով մը չպաշտպաներ թագաւորին օրէնքը ու պատիւը և միանգամայն բոլոր հնազանդ հպատակներուն խաղաղութիւնը և հանգստութիւնը, պէտք է որ բուն ինքը իրաւապէս իբրև ապստամբ մը համարուի:

Թ. Վմանապէս զղջացողին և հնազանդութեան դարձողին թողութիւն տրուելու է իբրև արիտուր միայն միջնորդին արժանաւորութեանը, այսինքն՝ պէտք է որ օրէնքը կատարեալ և վճիռը արդարացի ըլլալը հաստատուի, և ան վճռոյն գործադրութիւնը խափանուիլը, պարզապէս միջնորդին միջամուխ ըլլալուն արդիւնքը սեպուի:

Մ. Հա ա ս քանի մը յարաբերութիւնները և հանգամանքները ունենալու է միջնորդը, որ կարող ըլլայ անվտանգ և ընդունելի ըլլալու կառավարութեան առջև: Բայց անիկայ ասոնց հաւասար ուրիշ հարկաւոր կապակցութիւններ ալ ունենալու է ան յանցաւորներուն հետ՝ որոնց համար բարեխօսութիւն կրնէ:

Ը. Ըզգային կապակցութիւն մը ըլլալու է ապստամբներուն և միջնորդին մէջ տեղը:

( ) տար տէրութիւն մը կարող չէ միջամուխ ըլլալ ան-

կախ կառավարու թեան մը ներքին վեճերը կարգադրելու ,  
 և օտար տերու թեան մը միջնորդութիւնը որքան բարեկա-  
 մօրէն ըլլայ ալ նէ՛ ասանկ պարագայի մը մէջ ընդունելի  
 չըլլար , առանց իրօք յայտնի ըլլալու թէ ան կառավարու-  
 թիւնը ինքնիրեն բուսական միջոցներ չունի տերութեան  
 գործերը կառավարելու : Հիրաւի երրորդ երկու անկախ կա-  
 ռավարութեանց մէջ վեճ մը ծագի , անոնց մէջ մտնողը պար-  
 տի մէկ ուրիշ անկախ տերութիւն մը ըլլալ որ յաջողու-  
 թեամբ կատարէ իր գործը : Բայց աս օրինակիս մէջն ալ  
 յայտնի է թէ միջնորդը երկու կողմին հետ հաւասար հա-  
 մեմատ կապակցութիւն ունենալու է : Ասկայն մեր վերը  
 առած օրինակին մէջ օտար տերութիւն մը չկրնար երկու  
 կողմին հետ հաւասար կապակցութիւն ունենալ : Իսկ թէ  
 որ միջնորդը թագաւորին հետ ունեցած բոլոր վերոյիշեալ  
 կապակցութիւնները ունենալով՝ Նոյն ատենը ապստամբնե-  
 րուն հետ ալ աղգակցութիւն ունենար , թէ որ իր ընտանի-  
 քը՝ իր եղբայրները ու քոյրերը՝ և ուրիշ ազգականները ու  
 բարեկամները ան ապստամբներուն մէջն ըլլային , որչափ  
 առաւել ևս ընդունելի պիտի ըլլար իր միջնորդութիւնը  
 ապստամբներուն : Բանզի անատենը անոնք յայտնի պիտի  
 գիտնային որ իրենց մեծ բարելաւութեանը կրփափաքի ան :  
 Միջնորդին անձնական կապակցութիւնները ապստամբնե-  
 րուն հետ , և անոնց համար իր կրած կամաւոր չարչարանք-  
 ները պիտի զգացունէին անոնց՝ իր յօժարակամութիւնը իր  
 մեծ փափաքը զիրենք փրկելու . վստահ պիտի ըլլային իր  
 վրայ թէ անիկայ չէ՛ թէ անձնական փառասիրութեամբ  
 մը կը շարժի , չէ թէ զանոնք իրեն գերի ընելու կամ ա-  
 նոնց ու թագաւորին մէջը ուրիշ նոր թշնամութիւններ  
 յարուցանելու համար կաշխատի , հապա բուն իրենց ամե-  
 նալու օգուտները կը փնտռէ : Կարձեալ կատարեալ վստահ  
 պիտի ըլլային իր վրայ թէ կարող է զիրենք դատապար-  
 տութենէն ազատելու , տեսնելով անոր երկու կողմին հետ  
 ունեցած սերտ ազգակցութիւնները , իր բարձր աստիճանը

և իր մեծ ու փառանոր գործքերը : Ա կըջտայէս աս իրենց ունեցած վտատահուժիւնը՝ անոր աղտակելու կամեցողութեանը և կարողութեանը վրայով , յանցանաւորաց սիրտերը պիտի պատրաստէ և յսփարեցունէ ընդունել զինքը և հնազանդիլ իր պատուիրանքներուն :

Ի. Միջնորդը մեծ սէր՝ քաղցրութիւն և ևրկայնմտութիւն ունենալու է ապստամբներուն վրայ :

Հանցաւորութեան զգացումը դատապարտութեան անմեղութիւն հետ միաւորեալ անհնարին ծանր կուգայ մարդու սրտին : Բնական իրեն հետ կըբերէ ընդհանրապէս սաստիկ հպարտութիւն և ատելութիւն , որոնք կըկուրացընեն միտքը որ շատ անգամ յանցաւորը աւելի կընարէ դասն պատժոց վտանգը քան թէ իր յանցանքը խոնարհութեամբ խոստովանիլը , և ուրիշ մէկու մը արդեամբը ողորմութիւն խընդրելը : Ի՞նչա յայանի է որ սասանկ զգայութիւնները ուրիշ բանով չեն յաղթուիր , այլ միայն քաղցրութեամբ՝ համբերութեամբ՝ հեղութեամբ և ճշմարիտ սիրով : Միջնորդին սիրտը այնպիսի կարեկցութեամբ մը լցուած ըլլալու է որ ոչ անհոգութիւնը , ոչ ապեքախտութիւնը , ոչ ալ ատելութիւնը կընայ յաղթել զանիկայ : Միայն աս կերպովս վերջապէս կընայ յաջողութիւն ունենալ անդեղջ սիրտը նուաճելու և զանիկայ վերստին կամաւոր հնազանդութեան և հաստատ հաւատարմութեան դարձունելու :

Արեւմե միջնորդը միայն սասանկ հանդամանքներ ունենալով կընայ ապստամբ և դատապարտուած դատաւի մը պաշտպան կայնիլ և ջանալ որ զանիկայ հնազանդութեան դարձունէ և թագաւորին հետ հաշտեցունէ , և ան նոյն ատենը երկրին օգտիցը վնաս մը չհասցընելէն զաս՝ թագաւորին անուանը փառքը աւելցընէ , իր բռնած ճամբաները անոր իմաստուն՝ սրգար և ողորմած թագաւոր ըլլալը յայանելով :

Բրդ կընամբ ըսել թէ կարելի է որ սասանկ միջնորդ մը գտնուի մարդկային իրաց մէջ , բայց ի՞նչ կըսէք՝ հը-

նարաւոր է անանկ միջնորդի մը գտնուիլը երբոր ապստամբած գաւառը աշխարհք մը ըլլայ, իր թագաւորը անվախճան Մստուածը, իր դատապարտութեան վճիռը յախտնական մահը: Հիրաւի մարդկային երեւակայութենէն դուրս բան է խորհիլ թէ անանկ միջնորդ մը կրնայ գտնուիլ որ Մստուծոյ և մարդոց մէջը միջնորդութիւն ընելու համար հարկաւոր եղած հանգամանքները ունենայ:

Վանդի նախ՝ ո՞վ կայ անանկ բարձրաստիճան մէկը որ ապստամբ աշխարհիս համար երկնային պալատին մէջ ելլէ բարեխօսութիւն ընելու: «Արկինք անբարտ չեն իր առջևը, և իր հրեշտակները յիմար կըհամարի»: Հօ-Վ. Ժ. 15: 7. 18, Իմաստուն՝ զօրաւոր և սուրբ հրեշտակները անգամ իրենց Մարտին առջևը անարժան՝ տգէտ և անկարող են: Իրենց հնազանդութիւնը միայն իրենց համար է, և արժանաւորութիւն չունին ուրիշներուն համար միջնորդութիւն ընելու:

Վարձեալ՝ արարածներուն մէջը մէկը չգտնուիր որ Մստուածային կառավարութեանը այնպիսի մեծամեծ ծառայութիւններ ըրած ըլլայ, որոնք արժանաւորեն զինքը գատապարտեալ աշխարհին միջնորդ ըլլալու: Մենամեծ հրեշտակագետը իր պարտաւորութենէն աւելի ուրիշ բան մը չընէր, անիկայ միայն Մստուծոյ բացարձակ հրամանին կըհնազանդի և անոր ուզածը կընէ: Աւ որովհետև ամէն ստեղծուած բոլորովին իր Ստեղծչին ձրի կամօքը գոյութիւն ունի, և իր ամէն զօրութիւնները և կարողութիւնները անկէց կառնէ, վասնորոյ յայտնի է որ ինքը ամենեւին չկրնար շնորհք մը ընել իր Մարտին: Մարածը շարունակ ընդունող է և ոչ տուող բարութեանց: Վոյութիւն՝ բարութիւն՝ սրբութիւն և զօրութիւն՝ Մարտին պարզեններն իր արարածին, և ասոր համար զանոնք ընդունողը պարտաւոր է ջերմեռանդ սէր և կատարեալ ծառայութիւն մատուցանել անոր: Մ,ս ընելովը կրնայ իր անձը ընդունելի ընել իր Մարտին, բայց ուրիշներուն համար բան մը չկրնար խնդրել, իբրև փոխարէն իր ծառայութեանցը:

Գարձնալ՝ մէկ արարած մը՝ որչափ սուրբ և փառաւոր ըլլայ, հայհոյութիւն ըրած կըլլայ թէ որ յանդգնի ըսել՝ թէ հաւասար շահախնդրութիւն և հաղորդակցութիւն ունի Մատուցոյ հետ՝ Մատուածային կառավարութեանը մէջ : Հոնաւոր էակ մը չկրնար Մատուցոյ հետ հաւասարիլ ո՛չ փառօք՝ ո՛չ պատուով ո՛չ ալ զօրութիւնով, վասնորոյ բնաւ մէկը կարող չէ՝ Մատուածային կառավարութեան մէջ Մատուցոյ հետ հաւասար շահախնդրութիւն ունենալ : Այլ կրնա՞ր արդեօք հոնաւոր էակ մը մարդուն եղծած յօրէնքին պատիժը կրել : Ան սոսկալի բայց իրաւացի պատիժը յաւիտեանական մահն է : Մատուցոյ բարկութիւնը առանց մեղմելու թափուելու է ամէն մեղաւորին գլխուն վրայ : Մատուած ամէն մէկ պատուիրանազանցին մաշող կրակ մըն է : Այլ ո՞վ կրնար համարձակիլ Աէհօվային հրեղէն աթոռին առջևը կայնիլ և խնդրել որ յանցաւորէն դառնայ իր վրան թափի ո՛չ միայն մէկ մեղաւորին պատիժը, այլ նաև անհամար միլիոններուն կրելու պատիժը : Սիայն մէկ հատիկ օրինազանցին արժանի եղած պատիժը բաւական կըլլար անյատակ անդունդին մէջ ընկզմել հրեշտակապետաց առաջինը : Ուստի միայն անհուն էակ մը կարող է անհուն օրէնքին պատուհասը կրելու՝ և մեր դատապարտեալ ու կործանեալ սերունդը վերստին կենդանացնելու :

Իսոյց դիցօք թէ գտնուէր անանկ միջնորդ մը որ անվախձան կարողութիւն՝ արժանաւորութիւն և սրբութիւն ունենար, և միայն Մատուցոյ կողմին նայելով միջնորդութեան արժանաւոր ամէն հանգամանքներուն տէրը ըլլար, որչափ անյարմար պիտի երևնար մարդոց կողմին նայելով : Իր անվախձան սրբութիւնը և արդարութիւնը, հաւասարելով զինքը Մատուցոյն հետ՝ ապստամբները աւելի իրենց դատաւորը պիտի համարէին զանիկայ քան թէ իրենց բարեկամը : Անչափ հեռաւորութիւն մը պիտի ըլլար իրենց մէջ տեղը, և հաղորդակցութեան միջոց մը ըլլալու չէր : Իսոյց ասոր հակառակ, թէ որ միայն մարդուն հաւասար՝ և

մերձաւորութիւն ունեցող միջնորդ մը գանուէր, Մատու-  
 ծոյ առջին երկնալու յարմարութիւն մը պիտի չունենար :  
 Մատուծոյ և մարդոց մէջ տեղի հեռաւորութիւնը տարա-  
 պայման ըլլալով մէկ կողմին համար յարմարեղող միջնորդը  
 բոլորովին անյարմար պիտի ըլլար մէկալ կողմին : Անձու-  
 թեամբ և բնութեամբ որչափ մօտենար Մատուծոյ, նոյն-  
 չափ աւելի պիտի հեռանար մարդէն, և որչափ աւելի մո-  
 տենար մարդկային բնութեանը և հանգամանացը, նոյնչափ  
 աւելի պիտի հեռանար Մատուծմէ : Ուստի Մատուծոյ և  
 մարդոց մէջը միջնորդ մը գանուիլը մարդու խելքէ դուրս  
 բան էր : Այս արդարեւ մարդկային միտքը բնու պիտի չձեւա-  
 ցընէր աս գաղտփարը թէ կրնայ գանուիլ մէկը որ անհու-  
 նին և հունաւորին չի Մատուածութեան և մարդկութեան  
 հետ միտորեւոյ՝ Մատուծոյ ու մարդոց մէջը կայնի երկու  
 կողմին հաւասար նման ըլլայ, և երկու կողմին մէջը միջնոր-  
 դութիւն բնելու ամէն հանգամանքները կատարեալ ունե-  
 նայ :

Յովհաննու Յայտնութեանց հինգերորդ գլխոյն մէջ՝ բո-  
 լոր Մատուածային խորհուրդները մարդուս վրայով՝ մանա-  
 ւանդ մարդկային փրկութեանը համար Մատուծոյ սահմա-  
 նած եղանակը, եօթը կնիքով զմտած գրքի մը նմանցուցած է :  
 Մտ խորհրդաւոր գիրքը բանալը, այսինքն՝ փրկութեւ եղա-  
 նակը հասկընալը ու յայտնելը՝ արարածներուն խելքէն դուրս  
 բան էր : “Աէկը չէր կրնար ան գիրքը բանալ՝ ոչ երկինքին  
 մէջ՝ ոչ երկրիս վրայ՝ ու ոչ երկրիս տակը, ոչ ալ անոր նայե-  
 լու կրնար” : Յայտ. ե. 3 : “ Ոչ երկինքին մէջ” , ըսել է ոչ  
 Մատուծոյ զօրաւոր և փառաւոր պաշտօնեաններէն չի սուրբ  
 հրեշտակներէն մէկը . “ ոչ երկրիս վրայ” , ոչ նահապետ-  
 ներէն և մարգարէներէն մէկը . “ ոչ երկրիս տակը” , ոչ ին-  
 կած հրեշտակներէն մէկը . ոչ ալ Սատանան իր ամէն ճար-  
 տարութեամբը կրցան իմանալ ան գաղտնիքը կամ մէկ գա-  
 ղտփար մը կազմել թէ ինչ եղանակաւ ամենագէտն Մատուած  
 կրնայ արդար ըլլալ և արդարացունել զյանցաւորը , կամ



Թէ ինչ միջնորդ պիտի սահմանէր որ ան խորհուրդին կնի-  
քը քակելու կարող ըլլայ :

Իսոյց “ահա ան առիւծը որ Հիւզայի ցեղէն՝ Ղաւթի  
արմատէն է, յաղթեց ան գիրքը բանալու ու անոր եօթը  
կնիքները քակելու” : Համար 5 : Հիսուս Վրիստոս աշխարհ  
եկաւ ու ան գաղտնիքը բացուեցաւ : Մնիկայ յայտնուեցաւ  
իրրեւ Մտոուած և մարդ, հունարեւ անհուն, եղբայր՝ մահ-  
ուան զատապարտուած ապստամբներուն, անոնց բնու-  
թեամբը և տկարութիւններովը, միայն թէ առանց մեղքի,  
ու տակաւին Որդի Մտուծոյ՝ անոր հետ հաւասար, և իր  
մէջը ունենալով Մտուածութեան բոլոր լեցունութիւնը՝  
մարմնապէս : (Եբր. 7. 15 : Փիլիպ. յ. 6 : Կող. ի. 9 :

Մահու հոս տեղ կրթեսնեմք մեր փրկութեանը ան մեծ ճշ-  
մարտութիւնը . հոս է Վրիստոնէական հաւատոյ հիմը :  
Եւ որովհետեւ առ ճշմարտութեանս օղջամիտ իմացուելուն  
և սրտով ընդունուելուն վրայ կրկայանայ Վրիստոսի եկե-  
ղեցիին ուղղափառութիւնը՝ զօրութիւնը և վերջին յաղ-  
թութիւնը, նաեւ բուն մեր անձերուն մասնաւոր փրկութիւ-  
նը, կրկայի՛ն որ հիմնայ յառաջ երթամք, պատկառանօք և  
սրբազան հիացմամբ բնեմք ան տառուածային և սքան-  
չելի յարմարութիւնը որ Հիսուս Վրիստոս ունէր, մի միայն  
միջնորդ ըլլալու Մտուծոյ ու մարդոց մէջը : Հողին Արբը  
Մտուած լուսաւորէ մեր միտքերը որ տեսնեմք Վրիստո-  
սի փառաւոր արժանատորութիւնը, մեր միջնորդը և մեր հո-  
գիններուն մինակ յոյսը ըլլալու :

Ղաթ՝ մի թէ փրկիչն մեր Հիսուս ան հարկաւոր պաշտօ-  
նատարութիւնը չունի՞ մեծ և փառաւոր Աէհօլայ ինքնա-  
կալին ու իրեն ապստամբ հպատակներուն մէջը միջնորդ ըլ-  
լալու : Չէ՞ որ անիկայ Հօրը միածին որդին է, (Հով. 1. 18.)  
Մտուածոյ որդին, (Հով. 7. 18.) ամէն բանի ժառան-  
գը, (Եբր. 2. 2.) բոլոր իշխանութեան և պետութեան  
զլուխը, (Կող. ի. 10.) անուն մը ունենալով որ ամէն անուն-  
ներէն վեր է, (Փիլիպ. յ. 9, 10.) թագաւոր թագաւորաց

և Տէր տէրանց : Հայր . ԺԺ . 16 : Բոլոր արարածոց արժանաւորութիւնը , փառքը և պատիւը՝ թէև մէկու մը վրայ հաւարէին , բայց սակայն իրեն հետ համեմատելով ոչինչ են : Անիկայ միայն անհուն Աշտուկային հետ կրնայ բաղդատուիլ : Աստի իր գերագոյն պաշտօնատարութեանը նայելով՝ ով կայ ստոր պէս արժանաւոր մէկը որ միջնորդութեան մեծ գործը իր վրայ առնէ . արդարև չկայ ուրիշ մէկը , բաց 'ի սակէց որ ինքն է "Ժառանգ ամէն բաներուն , և բոլոր իշխանութեանց և պետութեանց գլուխը" : Իր միջնորդութիւնը ու միայն իրենը , և՛ յարգի է Աստուծոյ առջևը և՛ ամենայն վստահութեան ու ընդունելութեան արժանի՝ ապաստամբներուն մէջ :

Արկորոգ՝ Անիկայ ամենակատարեալ Հնազանդութիւն չորա՞ւ մի Աստուածային օրէնքին :

Արդարև անիկայ՝ շօրը հետ իր միաւորութեամբը կը համարուի օրէնքին տէրը . և աս պատճառով օրինաց պարտաւորութիւններէն և սպառնալիքներէն ազատ էր , այսու ամենայնիւ յօժարակամ "օրէնքին տակը մտաւ , որ անոնք որ օրէնքին տակն էին նէ՛ ինքը ծախու առնէ" : Վաղ . 7 . 4 : " Ինքզինքը խոնարհեցուց՝ մինչև մահուան նազանդ եղաւ " : Փիլ . 2 . 8 : " թէպէտ ինքը Որդի է (վասնորոյ ոչ ծառայ) Բայց ան շարչարանքներովը Հնազանդութիւն սորվեցաւ . և երբոր կատարուեցաւ՝ բոլոր իրեն նազանդողներուն յաւիտեան փրկութեանը պատճառ եղաւ " : Աբղ . 5 . 8 , 9 :

Արդ Վրիստոսի Հնազանդութիւնը կը տարբերի բոլոր ատեղծուած էակներուն Հնազանդութենէն , երկու նշանաւոր յատկութիւններով : 1 . Անոնք պարտաւոր են Աստուծոյ օրէնքին , և բոլոր օրինաց պահանջմունքները կատարելով միայն պատուական և սուրբ կը լլան : Աստի անոնք օրէնքին հպատակները ըլլալով՝ միայն իրենց համար կը հնազանդին անոր և ոչ ուրիշներուն համար ալ : Բայց որովհետև Վրիստոս ան օրէնքին տուողը և իշխանն էր , ամենևին իրմէն գերագոյն մէկու մը պատասխան տալու պարտաւորութեան

տակը չէր․ բնաւ պատժոյ ենթակայ չէր, և վասնորոյ իր հընազանդութիւնը չէ թէ իրեն համար էր այլ ուրիշներուն համար: ք. Մոլոր ստեղծուած էակներուն հնազանդութիւնը չէ թէ ինքնազօր է, այլ Մատուծոյ զօրութենէն կախեալ: Իրենց մտաց և գործողութեան բոլոր կարողութիւնները Մատուծմէ՝ իրենց Մարիչէն կրնդունին. և անիկայ է իրենց սրբութեան և ամէն բարոյական ու իմացական կատարելութեանց աղբիւրը. վասնորոյ իրենց հնազանդութիւնը անկէց յառաջ եկած ըլլալով՝ չկրնար ուրիշներուն համար սեպուիլ: Մայց Մարիտոսի հնազանդութիւնը անկախ և անակիզքն էր. իր կատարելութեան աղբիւրը ինքն է, և “իր մէջը ունենալով Մատուածութեան բոլոր լեցունութիւնը” իր հնազանդութիւնը և միայն իրենը անչափ արժանաւորութիւն ունի: Մնիկայ փառաւորեց օրէնքը և անոր պատիւը հաստատեց: Իր հնազանդութեամբը ցուցուց թէ Մատուծոյ օրէնքը արդար և բարի է. և թէ ինքը յաւիտեան պիտի պահպանէ զանիկայ: Լու մեզ օրինաց դատապարտութենէն ազատելով, իր կամքը ան չէր որ մեզ օրէնքին բոլոր պարտաւորութենէն ազատ թողու, այլ ան էր որ մեզ կատարելապէս հնազանդեցրնէ օրէնքին. և աս կատարեալ հնազանդութեանը առաջին օրինակը ինքը եղաւ մեզի՝ իր երկրիս վրայ եղած տոննը: Թէ որ ամենաշնչին բանի մը մէջ կատարեալ հնազանդութիւն ըրած չըլլար, օրէնքին պատիւը պիտի եղձանէր և փրկութեան գործը գլխովին կործանէր: “Ս ասն զի մեզի ճիշտ ասանկ քահանայապետ մը կրվայլէր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած ու երկինքէն ալ բարձրացած. որ ամէն իժիր հարկ չէ՝ ինչպէս ուրիշ քահանաներուն՝ առաջ իրենց մեղքին համար պատարագ մատուցանել, ու ետքը ժողովուրդին համար”: Լ, Էր. է. 26, 27: Սատանան աղէկ իմացաւ աս բանը և աս պատճառով կրփորձէր զանիկայ մեղանչել տալու: Սատանան կարող եղաւ մեղաց և դատապարտութեան մէջ ձգելու բովանդակ մարդկային աղղը, և

դիտէր որ բնաւ մէկ միջնորդ մը չէր կրնար ելլել յանցաւոր  
 և դատապարտուած մարդոց մէջէն : Վիտէր նաև թէ Տը-  
 բեշաակներէն ալ մէկը բաւական չէր աս գոյժին . իր պատ-  
 ու իրազանցութենէն և անկումէն դիտէր որ հրեշտակներն  
 ալ բնութեամբ անսխալ չէին . և թէ բոլոր աշխարհիս  
 յոյսերը մի միայն աս Մանին վրայ հաստատուած էին՝ որուն  
 ամենաթեթև և սխալները բովանդակ մարդկային սեռին յա-  
 խտնեական փրկութեան միակ յոյսը պիտի կարէր, և իրեն  
 ժշտնջևնաւոր բնաւ որութեանը գերի պիտի ընէր զանոնք :  
 ( )Տ՛նեալ է Մատուած որ անանկ փրկիչ մը ունիմք որ  
 յաղթեց Սատանային և աշխարհի, և այսպէս վերջին յաղ-  
 թութիւն մը պատրաստեց բոլոր անոնց որ իրեն կը յուսան  
 և զինքը իրենց փրկիչ կընդունին :

Երբ որ շէ՛ որ մեր Սիջնորդը մեծամեծ և փառաւոր ծա-  
 ուցյութիւններ ըրաւ Մատուածսցին կառավարութեանը :

Սուրբ Վիրքերը կըցուցնեն զանիկայ թէ անչափ ար-  
 ժանաւորութիւնը ունի իր սքանչելի գործքերուն համար :

Ե. Միկայ նոր լուսով և փառքով յայտնեց Մատու-  
 ծային հանգամանքը մարդոց և հրեշտակներուն : «Մէկը  
 բնաւ չաւառ զՄատուած, բայց միածին Սրբին որ շօրը ծո-  
 ցնէ է, անիկայ պատմեց» : Հ՛մէ. ւ. 18 : Ինքը շօրը փառ-  
 քին ըյսն էր, ու անոր էութեան բուն պատկերը : Ե՛բ. ւ. 3 :  
 «Մենք երբ Մատուածոյ պատկերը» : Կ՛ռ. ւ. 15 : Իր  
 մէջը կը բնակէր Մատուածութեան բոլոր լեցունութիւնը՝  
 մարմնապէս, բոլոր իմաստութիւնը՝ սէրը՝ կարողութիւնը՝  
 արդարութիւնը և ողորմութիւնը, և թէ ասոնք՝ թէ Մատու-  
 ծոյ ուրիշ յատկութիւնները փառաւոր եղանակաւ յայտնի  
 ըրաւ բոլոր բանական էակներուն : Ա՛յն զի աս Մատու-  
 ծային Փրկիչն ձեռքը կուտարած փրկապարծութեամբն է որ  
 « երկինքը եզոյղ զօրութիւնները և պետութիւնները » քի հր-  
 քեշտակները կըստանան իրենց խորին գիտութիւնը Մա-  
 տուածոյ իմաստութեանը վրայով : Ե՛ր. ւ. 10 :

Բ. Միկայ փառաւորեց զՄատուած՝ իր օտեղծագործու-

Թեան գործքերովը : “Վանդի անով ամէն բան հաստատուեցաւ, ինչ որ երկինքը՝ ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կերևան՝ և անոնք որ չեն երևնար, թէ ասթոռները՝ թէ տէրու թիւնները՝ թէ պետութիւնները՝ թէ իշխանութիւնները, բոլոր բաները անով՝ ու անոր համար ստեղծուեցաւ” : Կռ. Կ. 16 : “Եւ ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ նէ” : (Է)՝ 12. Կ. 3 : Եւր. Կ. 2 : Եւ խօսքերէն պարտիմք իմանալ որ ան ոչ միայն նիւթական աշխարհի արարիչն էր, այլ նաև բոլոր բանաւոր էակներուն : Երկինքը եղող բոլոր փառաւոր հրեշտակները, նմանապէս բոլոր լուսաւոր արեգակները և աստղերը որ տիեզերքին անհուն տարածութեանը մէջ կը դառնան, իր ամենակարող ձեռքին գործքերն են : Ուստի աս իր կառարած գործքերուն համար ինքը՝ և միայն ինքը արժանի է ապստամբ աշխարհիս միջնորդ ըլլալու : Ո՛վ մեղսակից եղայր, ինտո՞ր կը համարձակիս աս Եւստուածային միջնորդը թողուլ ու երթալ ապաւինիլ անոնց որ իրենց Տէրոջը կամքը կատարելն ետև՝ “անպիտան ծառաներ եմք” ըսել կը պարտաւորին : Գ՝ 1. Ժէ. 10 :

Չորրորդ՝ Չէ՞ որ աս միջնորդը Եւստուածային կատարեալ Որդութիւն մը ունի չորը հետ՝ երկնային Թագաւորութեան մշտատուութեանը և փառացը մէջ :

Եւ հա աս մասին մէջն ալ Սուրբ Վիտքը կը ցուցնէ մեր Եւստուածային միջնորդին գերագոյն պատուականութիւնը : Վանդի կըսէ թէ՛ Վրիստոս չորը հետ մէկ է. և չայրը բնաւ չմերժեր իր միջնորդութիւնը, վասն զի անիկայ է իր սիրելի որդին՝ որով իր անձը կը բերկրի : չայրը և Որդին զիտաւորութեան անբաժանելի միաւորութիւն ունին իրենց մէջը և իրենց կամքը մէկ է : Եւ աշխարհի ըլլալէն առաջ մի և նոյն փառքը ունէին, և մի և նոյն փառքը պիտի ունենան յաւիտեան. (Է)՝ 12. Ժէ. 5.) ինչպէս որ Որդին կը փառաւորէ չայրը, անանկ ալ չայրը կը փառաւորէ չորդին՝ (Է)՝ 12. Ժգ. 31, 32; Ժբ. 28; Ուրեմն չորը հետ աս միաւոր

բաթիւնը մէկ գլխաւոր պատճառ մըն է մեզի, մշտնջենաւոր  
 և անդրդուելի վստահութիւն ունենալու մեր միջնորդին վը-  
 բայ: Վիտեմք թէ ինչ որ կը յանձնեմք իր ձեռքը՝ անվտանգ  
 կըմնայ, և թէ ինչ որ ան կընէ շայր կընդունի: Եւ միա-  
 ւորութիւնն է նաև մէկ պատճառ մը որ հրեշտակները կու-  
 րախանան փրկագործութեանը վրայ, և սրբոց հետ միաբե-  
 րան փրկարար սիրոյն երգը կերպեն: Վիտեն անոնք որ Վը-  
 րիստոսի միջնորդութեամբը ամենեին վնաս մը չըլար Ես-  
 տուծոյ սուրբ և երջանիկ թագաւորութեան խաղաղութեա-  
 նը և օգտիցը դէմ: Վանզի աս միջնորդը երբէք անզեղջ և  
 սրբութիւն չունեցող մեղաւորները իր շօրը թագաւորու-  
 թեանը մէջ մտցունելու չէ. ինքը յայտնեց մեզի որ պիղծ  
 և անհաւատ մէկը պիտի չմտնէ հոն: Յայտ. իա. 27: Երդ  
 մտածէ՛ անգամ՝ մը թէ Յիսուս Վրիստոս մեր միակ միջ-  
 նորդը ըլլալու ո՛րչափ մեծ յարմարութիւն ունի, Եստուծոյ  
 հետ իր հաւասար ըլլալովը՝ շօրը հետ իր մէկ ըլլալովը, և  
 ըսէ դուն քեզի, կրնա՞ս աս միջնորդը ձգել և ուրիշ մե-  
 կու մը յուսալ: Օջրմանալի՛ և մանաւանդ զարհուրե-  
 լի՛ խորհուրդ՝ որ բուն աս բանիս համար հազարաւոր  
 մարդիկ կը թողուն Վրիստոսի միջնորդութիւնը, և կը  
 փնտռեն անանկ միջնորդներ որ աւելի ներողամիտ ըլ-  
 լան իրենց մեղքերուն, և որ ազատեն զիրենք պատիժէն՝  
 Եստուծոյ կառավարութեանը փառքին համար բնաւ հոգ  
 մը չընելով: Եսանկ կամք ունեցողները կըցուցնեն թէ  
 իրենք Եստուծոյ հետ տակաւին հաշտուած չեն, և աս  
 պատճառովս դեռ օրէնքին դատապարտութեանը տակն են:  
 ու Եստուծոյ բարկութիւնը իրենց վրայ կըմնայ:

Հինգերորդ՝ Զէ՞ որ մեր միջնորդը իր յօժար կամօքը  
 յանցաւորներուն տրուելու պատիժը ինքը կրեց:

Ուրբ Վիրքը լեցուն է ան վկայութիւններովը՝ թէ  
 Վրիստոս ազատեց զմեզ օրէնքին դատապարտութենէն,  
 յօժարակամ իր վրայ առնելով մեր պատիժները, բայց  
 հոս տեղ միայն աս հետևեալ վկայութիւններուն նայիմք

ուշադրութեամբ : “ Իսայց ան մեր մեղքերուն համար վերաւորեցաւ , և մեր անօրէնութիւններուն համար պատժեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ , ու իր վերքերովը մենք բժշկուեցանք : Լւսայ . ծ. 5 : “ Եւ ան զի Եստուած՝ անիկայ որ մեղք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպեց . որ մենք անոր ձեռքովը Եստուծոյ արդարները եղած ըլլամք ” . ( Խ Կորնթ . Ե . 21 ) ըսել է թէ՛ անիկայ թէպէտև կատարելապէս սուրբ է , մեղաւոր սեպուեցաւ , որ մենք թէպէտ կատարելապէս մեղաւոր եմք արդար սեպուիմք : “ Եւ անիկայ մեր մեղքերուն քաւութիւն է , և չէ թէ միայն մերիններունը , հապա բոլոր աշխարհի ” : Թ Գլ . 2 : “ Իր մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց . որ մենք ան մեղքերէն ազատինք . որ իր խոցերովը մենք բժշկուեցանք ” : Թ Գլ . 24 : “ Երիտաստ մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ մեզի համար անէծք ըլլալով ” : Գլ . 13 :

Եւսպէս մեր Սիջնորդը օրէնքին պատիժը կրելով մեր տեղը , փառաւորեց և հաստատեց օրէնքը : Եւսպէս ինքը ցուցուց թէ օրինաց պահանջմունքները անանկ հաստատ և անխախտելի են , որ երբ ինքը՝ միածին և ամենասիրելի Որդին Եստուծոյ , ուղեց որ օրէնքին պատիժէն ազատէ մեղաւորները , ուրիշ միջոց մը չկար այլ պէտք էր որ ինքը ան պատիժը իր վրան առնէ և մեր տեղը իր անձը պատարագէ մեղաց համար : Եւ թէ որ օրէնքը ասանկ է՝ ո՞վ չզարհուրի որ անոր դատապարտութեանը վճիռէն : Ի՞նչ կրնայ ուրիշ միջոցով մը փրկուելու յուսալ և թէ ոչ՝ Երիտաստով՝ “ որ օրինաց վախճանն է արդարութեան համար բոլոր հաւատացեալներուն ” : Եւսպ . Գլ . 4 : Եւ թէ Եստուած աւելի՞ զթած և ողորմած պիտի ըլլայ մէկ անգնեղ մեղաւորի մը , քան թէ անոր որ իր փառացը պայծառութիւնն է և իր անձին բուն պատկերը : Ի՞նչ որ ուղղապէս գիտէ օրէնքին սրբութիւնը և Եստուծոյ անաչառ արդարութիւնը , անիկայ կըզգայ թէ միայն Եմենակաբող միջնորդ մը կրնայ փրկել զինքը գալու բարկութենէն :

Վրիստոս՝ մեր Մենակարող Սիջնորդը, իր կամաւոր չարչարանօքը փառաւորեց Մատուոյ ողորմութիւնը . և յայտնի ցուցուց որ ինքը անանկ գթած և ողորման է որ մարդու միտք կարող չէ իմանալ ան բանը: Վեթեմանեան պարտեզին մէջ ու Վոզգոթա լեռանը վրայ յայտնի ցուցուց որ “Մտուած սէր է” . որ “Մտուած անանկ սիրեց աշխարհս, մինչև որ իր միածին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ չկորսուի”: (Յով. 16: “Մտուածն մէջն է սէրը, որ չէ թէ մենք Մտուած սիրեցինք, հապա որ անիկայ մեզ սիրեց ու իր Որդին խրկեց մեր մեղացը քառութեան համար”: Ինչով. 10: “Մտուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ մենք մեղաւոր էինք՝ Վրիստոս մեզի համար մեռաւ”: Եւրո. 15: 8: Մտուած մեր բնութիւնը իր վրայ առաւ որ իր սէրը յայտնէ, քառութեան պատարագ ըլլալով մեր մեղացը համար: Իբրև Մտուած՝ անկարելի էր իրեն չարչարուիլ, քանզի անհնարին է որ Մտուածային բնութիւնը չարչարանաց ենթակայ ըլլայ. բայց իբրև լոկ մարդ՝ բնաւ կարող չէր որինաց պատժոյն դիմանալու: Սակայն Վրիստոսի մէջ երկու բնութիւն միաւորած ըլլալով՝ մարդկային բնութեամբը չարչարանաց ընդունակ եղաւ, և Մտուածային բնութեամբը կարողութիւն ունեցաւ ան չարչարանքները կրելու, որոնց մէկ բոպէ մը չէր կրնար համբերել հունաւոր էակ մը: Վարձեալ Մտուածութեան միաւորութիւնը մարդկութեանը հետ՝ ամենապատուական և անգին ըրաւ իր անձին պատարագը որ մատոյց մեղաւորաց փրկութեանը համար: Մտով մեղսակից եղբայր նայէ՛ քու Վրիստոս արդարութեանը և սիրոյն նայէ՛: Նիսուսի՝ որ քու տեղդ կը չարչարի, և ան քու վրագ թափելու սոսկալի պատիժներուն տակը ընկղմած այնպէս սատիկ կը տագնապի, որպէս զի իր Մտուածային մարդկութեամբը անգամ ստիպուած է աղաղակելու “Մտուած իմ՝ Մտուած իմ, զիս ինչով թողուցիր” . և բոլոր սա պարագայիս վրայ աղէկ մտածե-



լէզ ետև կը հարցունեմ՝ ըսէ ինձի, կրնա՞ս ուրիշ մէկ միջ-  
նորդի մը ապաւինիլ : Արնա՞յ արդեօք մէկ հրեշտակ մը  
կամ մէկ մարդ մը ձեռնտու ըլլալ քեզի, որ ատեն Մատ-  
ուածորդին քու մեղացդ ծանրութեամբը այսպէս կը ճնշուի :

Ա կցերորդ՝ Սեր փրկիչը մեղաւորներուն մի միայն միջ-  
նորդը կը լայ փրկանաւորութեան գործին համար շօրը  
հետ յայանի ուխտ մը ընելով :

Մտ ուխտ բառովը ըսել կուզեմք՝ թէ Մատուոյ յաւի-  
տենական խորհրդովը փրկութեան գործը Արդիին յանձ-  
նուեցաւ, և թէ Արդին յօժարակամ ընդունեց զանիկայ  
քանի մը պայմաններով : (ա)՝ Ար իր վարձքը ըլլայ մարդ-  
կային սեռին մէկ մասին փրկութիւնը : (բ)՝ Ար մեղաց թո-  
ղութիւնը ձրիապէս շնորհուի միջնորդին արժանաւորու-  
թեամբը միայն, և (գ)՝ Մպաշխարութիւն՝ հաւատք և հնա-  
զանդութիւն անհրաժեշտ պայմանները ըլլան մեղաւորնե-  
րուն թողութիւնը ընդունուելուն :

Շօրը և Միջնորդին մէջ ուխտ մը կամ դաշինք մը ըլլա-  
լը յայանի կերևնայ Սուրբ Գրոց մէջ եղած բոլոր ան  
վկայութիւններէն որ կը ցուցնեն միջնորդին մէկ յատուկ  
գործ մը կատարելու խրկուած ըլլալը, իրեն տրուած մէկ  
գործ մը ունենալը և Շօրը կամացը կամ սահմանադրու-  
թեանը համեմատ ան գործը կատարելը : «Ինչու որ ես ինք-  
իրմէս չխօսեցայ, հապա շայրը որ զիս խրկեց, անիկայ ին-  
ձի ապրսպրեց ինչ որ պիտի ըսեմ՝ և ինչ որ պիտի խօսիմ» :  
Յովն. ԺԷ. 49 : «Ես քեզ երկրիս վրայ փառաւորեցի, ան  
գործը որ ինձի տուիր ընելու՝ լինցուցի» : Յովն. ԺԷ. 4 :  
«Ինչպէս որ դուն զիս աշխարհ խրկեցիր, ես ալ անոնք աշ-  
խարհ խրկեցի» : Յովն. ԺԷ. 18 : «Մտ պատուէրը իմ Շօրմէս  
առի» : Յովն. Ժ. 18 : «Ես ինչպէս որ շայրը ինձի պատուի-  
րեց անանկ կրնեմ» : Յովն. ԺԴ. 31 : Ը. 18, 29, 42 :

Վարձեալ Սուրբ Գրոց մէջ շատ տեղ կը տեսնեմք՝ ուր  
Արդին կը ցուցնէ իր ցնծալից յօժարութիւնը աս իրեն  
յանձնուած գործը կատարելու և ուխտին բոլոր թէութիւն-

ները՝ ի գործ դնելու : Ինչպէս՝ « Են ժամանակը ըսի թէ՛ Լ՝  
 Հա կուգամ ես , ո՛վ իմ Լ՝ստուածս քու կամֆդ կատարե-  
 լու կամեցայ » : Առդ. խ. 7, 8 : « Ենոր համար իմ Հայրս կը  
 սիրէ զիս , որ ես իմ կեանքս կըդնեմ որ նորէն առնեմ  
 անիկայ : Ա՛նկը ՀՏաներ անիկայ իղմէն , հապա ես կըդնեմ  
 անիկայ ինքիրմէս : Յ՝ձ. 7, 17, 18 : « Լս միշտ անոր ու-  
 զածը կընեմ » : Յ՝ձ. ք. 29 : Վեթսեմանիին մէջ երբոր  
 չարչարանաց և մահուան տագնապները կըկրէր , երբոր իր  
 անձը խորին տրտմութեամբ լեցուած և մեր մեղօքը ծան-  
 րաբեռնեալ աղօթք կընէր առ իւր Հայրը որ եթէ Հնար  
 է նէ ան բաժակը անցնի իրմէն , ան նոյն ատենը անգամ  
 ուխտին վերջին պահանջմունքները կատարելու համար իր  
 յօժար կամֆը ցուցուց ըսելով՝ « Էնէ թէ իմ ուզածիս  
 պէս՝ հապա քուկինդ թող ըլլայ » : Հիմայ հոգիս տակն-  
 ուվըայ եղած է . և ես ի՛նչ ըսեմ . Հայր՝ զիս խալըս  
 աս ժամէն . բայց ես անոր համար եկայ աս ժամին : Հայր՝  
 փառաւորէ քու անունդ » : Յ՝ձ. Ժք. 27, 28 : Լ՝յսպէս  
 Արջնորդը թէ իր չարչարանքները առաջուց տեսած ա-  
 տենը և թէ իրօք ան չարչարանքները կրած ատենը կա-  
 մաւոր պատարագ մը մնաց սեղանին վըայ մինչև կարող ե-  
 ղաւ ըսելու թէ՛ « Ե՛մէն բան լըմնցաւ » :

Հօրը և Որդիին մէջ ասանկ ուխտ մը ըլլալը աւելի բա-  
 ցայցայտ է Լ՝ւետարանին ան վկայութիւններէն որ կըխօ-  
 սին Հօրը և Որդւոյն միաբանութեանը վըայ փրկութեան  
 գործին մէջ : « Ինչու որ ես մինակ չեմ , հապա ես՝ և իմ հետս  
 Հայրը որ զիս խրկեց » : Յ՝ձ. ք. 16 : Վուզէ ըսել՝ թէ  
 փրկագործութեան պաշտօնին մէջ առանց իմ Հօրս բան  
 մը չեմ ըներ , հապա մեր մէջը ուխտ մը կայ որ ես ինչ  
 ընեմ նէ բոլորովին հաճելի է իրեն : Եսոր պէս Վրիստո-  
 սի ուրիշ շատ խօսքերը կըգտնեմք , որոնք իրեն՝ և իր Հօրը  
 մէջ հաստատ ուխտ մը ըլլալուն յայտնի վկայութիւններն  
 են : « Լս ան որ զիս խրկեց , ինծի հետ է . զիս մինակ չթ-  
 զուց » : Յ՝ձ. ք. 29 : « Որ ամէնքն ալ մէկ ըլլան , ինտոր որ

դուն ո՛վ Հայր՝ իմ մէջս , ու ես ալ քու մէջդ , որ անոնք  
ալ մեր մէջն ըլլան” : { } ո՛վ . ԺԷ . 21 :

Գլխաւք Հիմայ ուխտին պայմաններուն : ( Թ ) Ուխտին ե-  
րաշխաւորութիւնը կամ Սիջնորդին խոստացեալ վարձ-  
քը , ( Լքր . Է . 22 : ը . 6 . ) մարդոց մէկ մասին փրկութիւնն  
էր : Լս պիտի ըլլար իր ժառանգութիւնը , ինչպէս որ  
ըսուած է . “ Դննդրէ ինձմէ՛ ու հեթանոսները քեզի ժառան-  
գութիւն պիտի տամ , ու երկրին ծայրերը քեզի ստաց-  
ուածք ” : Սաղ . ը . 8 : Լ՛հա սս “ ուրախութեանը համար  
որ իր առջևը կեցած էր՝ խաչը յանձն առաւ , ամօթը բանի  
չսեպեց՝ ու Լստուծոյ ատուին աջ կողմը նստաւ ” : Լքր .  
Ժք . 2 : Խոստացուած էր որ երբ իր անձը մեղաց համար  
պատարագ մատուցանէ , իր սերունդը տեսնէ , իր անձին  
աշխատութիւնը տեսնէ և կը շտանայ : Լքայ . ծք . 10 , 11 :  
Հոս տեղ սս խոստացեալ “ սերունդը ” բոլոր փրկուածներն  
են որ Հօրմէն իրեն տրուեցան , և սահմանուած են իր թա-  
գաւորութեանը հպատակներն ըլլալու : “ Լքայք որհնեալք  
Հօր իմոյ՝ աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած  
թագաւորութիւնը ժառանգեցէք ” : Սաղ . ին . 35 : “ Ինչ-  
պէս որ իրեն իշխանութիւն տուիր բոլոր մարմիններուն  
վրայ , որպէս զի ան ամենուն որ իրեն տուիր՝ ինքը յաւի-  
տենական կեանք տայ անոնց ” : “ Քու անունդ , յայտնի ըրի  
ան մարդիկներուն որոնք որ աշխարհէս ինձի տուիր . քու կդ  
էին՝ ու ինձի տուիր անոնք . և քու խօսքդ պահեցին ” : “ Հի-  
մայ ես անոնց համար կաղաչեմ , ու չէ՛ թէ աշխարհի հա-  
մար կաղաչեմ , հապա անոնց համար՝ որ դուն ինձի տուիր ,  
ինչու որ քու կդ են անոնք ” : “ Լայց չէ թէ մինակ անոնց հա-  
մար կաղաչեմ , հապա իրենց խօսքովը բոլոր ինձի հաւ-  
տացողներուն համար ալ , որ ամէնքը մէկ ըլլան ” : “ Լ Հայր՝  
անոնք որ դուն ինձի տուիր , կուզեմ որ ուր որ ես եմ , ա-  
նոնք ալ իմ հետս ըլլան . որ իմ փառքս տեսնեն որ ան ին-  
ձի տուիր . ինչու որ դուն զիս սիրեցիր աշխարհը ըլլալէն  
առաջ ” : { } ո՛վ . ԺԷ . 2 , 6 , 9 , 20 , 24 : Հոս տեղ Քրիս-

տոսի բոլոր աշակերանները իբրև Զէլ ցուցուած են , ամէնը  
 շօրմէն իրեն տրուած : Ընդդէմ են իր «ժառանգութիւնը» .  
 ան «սերունդը» որ պիտի ծառայէին իրեն , երբոր իր անձը  
 պատարագէր մեղաց համար :

Ըմէն աս փրկուածները թողութիւն կառնեն միայն Միջ-  
 նորդին արժանաւորութեամբը : Ըմենեին մէկ ծանօթու-  
 թիւն մը տրուած չէ , թէ Ըստուածային օրէնքը արդար չըլ-  
 լալուն համար պատիժը զանց անուեցաւ . ոչ ալ կիմա-  
 ցուի թէ պատիժը օրէնքին պահանջածէն աւելի սաստիկ  
 էր : Ըսլ ընդհակառակն ըսուած է թէ « ( ) օրէնքը սուրբ  
 արդար ու բարի է » : Ըսլ . 12 : Վրիստոս չեկաւ  
 օրէնքը աւելու , հասպա կատարելու : Ստմ . Ե . 17 :  
 Վրիստոս օրէնքին տակը մտաւ որ մեզ օրէնքին անէծքէն  
 փրկէ և այնպէս մեզի համար թողութիւն ընդունի միայն  
 իր արժանաւորութեամբը : « Ը ալ ուրիշ մէկով մը  
 փրկութիւն կայ , քանզի անկէ իզատուրիշ անուն մը չկայ  
 երկինքին տակը մարդուս տրուած որ անով կարող ըլլամք  
 փրկուիլ » : Վր . 12 : « Տէր Հիսուս Վրիստոսի շնորհ-  
 քովը կը հաւատամք որ կը փրկուիմք » : Վր . 11 :  
 « Իրմով թէ որ մէկը ներս մտնէ պիտի ապրի » : Ըսլ . 9 :  
 « Ըստուած իր ողորմութիւնովը մեզ փրկեց . . . Հիսուս  
 Վրիստոսի մեր փրկչին ձեռքովը » : Տմ . 5 : « Ինչպէս  
 որ Ըստուած Վրիստոսով մեզի ներեց » : Ըսլ . 32 :  
 Ըհա հոս տեղ յառաջ բերինք միայն քանի մը հատը Սուրբ  
 Վրոց ան բազմութիւ վկայութիւններէն որոնք կը հաս-  
 տատեն թէ փրկութիւնը միայն Վրիստոսով է : Ուրիշ  
 շատ եղանակներով ալ ցուցուած է թէ Վրիստոս է մեր  
 փրկութեան մի միայն հեղինակը : Օրորինակ՝ « Իրմով կը  
 հաշտուիմք Ըստուծոյ հետ » . ( Ըսլ . 10 : ի Վրն . Ե .  
 18 , 19 : Ըսլ . ի . 16 . ) « Իրմով խաղաղութիւն օնիմք  
 Ըստուծոյ հետ » . ( Ըսլ . 1 : Ըսլ . ի . 14 : Վրն .  
 7 . ) « Իրմով կարգարանամք » : Ըսլ . 11 : Վրն .  
 39 : Ըսլ . 24 : Ե . 1 , 9 : ը . 1 : օ Վրն .

իլ . 11 : Վրիստոս մեր “ազատչէքք” կըսուի , իմ մեր փրկութեանը համար վճարուած գինը : Սաղմ . ի . 28 : Սաղմ . ի . 45 : ան Տէ՛՛ . թ . 6 : ան Կորնթ . ի . 20 : Վրիստոս մեր փրկիչն է . (Վաղ . ի . 18 : ան Տէ՛՛ . թ . 26 : Վաղ . ի . 4.) Սեր միջնորդը . (ան Տէ՛՛ . թ . 5.) Լեւի աղէկ գաշինքի մը միջնորդը . (Լեւ . թ . 6.) Եր գաշինքին միջնորդը . (Լեւ . թ . 15.) Սեր բարեխօսը : Լաւ . թ . 12 : ան Տէ՛՛ . թ . 34 : ան Տէ՛՛ . թ . 1 : Լեւ . թ . 24 : Ինքը յաւիտենական կեանք կուտայ մեզի . (Տէ՛՛ . թ . 28.) Ինքն է մեր մեղքերուն քաւութիւնը . (ան Տէ՛՛ . թ . 2 : ի . 10) մեր մարգարէն՝ քահանան և թագաւորը : Լեւ . թ . 18 : Լեւ . ի . 15 : Սաղմ . թ . 6 : Լեւ . թ . 1 : Եր աւ Վրիստոս մեր կըսուի թէ Վրիստոս ո՛չ միայն փրկութեան գաշինքին մէջ միջնորդ մըն է , այլ թէ ինքն է մի միայն միջնորդը . մեր փրկութեան մի միայն հեղինակը : Լա միայն իր արժանաւորութեամբը մեր մեղքերուն թողութիւնը կըստանամք :

(Դ) Եւ այց աս գաշինքին մէկ ուրիշ ամենամեծ և հարկաւոր պայմանն ալ աս է՝ թէ մարդիկ աս միջնորդին ձեռքն ալ թողութիւն ընդունելու չեն , մինչև չապաշխարեն և ինքզինքնին բողոքին չյանձնեն անոր՝ որուն գէժ ապստամբեցան : Եթէ աս ամենահարկաւոր պայմանը զանց ըլլուէր , անկարգութիւն և շփոթութիւն պիտի մանէր Եւստուծոյ կառավարութեանը մէջ : Եւ այց անանկ յայտնի խօսուած է աս նիւթիս վրայ՝ որ Եւստուծաշունչ կարգացողը ընաւ չկրնար անանկ իմանալ թէ ապաշխարութիւնը հարկաւոր չէ . քանզի Վրիստոսի քարոզութեան սկզբնաւորութիւնը աս էր , “Եւստուծաշունչէք , ինչու որ երկնից թագաւորութիւնը մօտ է” : Սաղմ . ի . 17 : Վարձեալ կրկարգամք՝ “Եթէ որ չապաշխարէք՝ ամենքդ ալ անանկ պիտի կորսուիք” : Վաղ . ի . 5 : “Օղջացէք և գարձի եկէք որ մեղքերնիդ ջնջուի” : Վաղ . ի . 19 : “Եւստուծաշունչ իր աջ ձեռքովը Եւստուծոյ և փրկիչ Եւստուծոյ բարձրացուց , Եւստուծոյն ապաշխարութիւն և մեղաց թողութիւն տա-

լու” : Գ. Գ. Թ. 31 : Լսոյալէս ապաշխարութիւնը միշտ մեղաց թողութենէն առաջ ըլլալ պէտք է, առանց անոր մէկը չկրնար փախչիլ գալու բարկութենէն :

Վսմանապէս ան հաւատքը որ հոգին Վրբիստոսի հետ կը միատրե՛, և այսպէս անով Լստուծոյ հետ կը հաշտեցունէ զանիկայ , միջնորդին ձեռքը մատուցուած թողութիւնը ընդունելու համար անհրաժեշտ պայմաններէն մէկըն է :

Հաւատքը ըստ ինքեան մեզ փրկութեան արժանացունող արդիւնք մը չունի, այլ միայն մէկ միջոց մըն է որով կընդունիմք զանիկայ : Հաւատքը ան ձեռքն է՝ որով կը բռնեմք ինչ որ Վրբիստոս պատրաստած է մեզի համար : “ Լայց անոնք որ զինքը ընդունեցին՝ անոնց իշխանութիւն տուաւ Լստուծոյ որդիներ ըլլալու, որոնք որ կը հաւատան իր անունին” : Հ. Գ. Թ. 12 : Հաւատալ Վրբիստոսի կամ ընդունիլ ՂՎրբիստոս միւսնոյն բաներ են , և միայն հաւատալով իրեն՝ կամ ընդունելով զինքը՝ Լստուծոյ որդիներ կը ըլլամք : “ ՂՂմարիտ ճՂմարիտ կըսեմ ձեզի թէ՛ Լն որ իմ խօսքիս մտիկ կընէ և կը հաւատայ անոր որ զիս խրկեց , յախտնական կեանք կընդունի , ու դատապարտութեան տակ չի յնար , հապա մահէն դէպի կեանքը անցաւ” : Հ. Գ. Թ. 24 : “ Լն ամէնը որ կը տեսնէ որդին՝ և կը հաւատայ անոր , յախտնական կեանք կընդունի” : Հ. Գ. Թ. 40 : “ Լն որ հաւատայ , և մկրտուի պիտի փրկուի՛ , և ան որ չհաւատար պիտի դատապարտուի” : Ս. Գ. Թ. 16 : Լ, և ինտոր որ փրկիչն մեր Հիսուս ամենապարզ և զօրաւոր եղանակաբարոզեց թէ փրկութեան համար հաւատք հարկաւոր է , նմանապէս իր առաքեալներն ալ հաստատեցին ան նոյն քարոզութիւնը : “ Հիսուս Վրբիստոսով ոչ թլփատութիւնը բան մը կրնայ , ոչ ալ անթլփատութիւնը , հապա հաւատքը որ սիրով կը յաջողի” : Գ. Գ. Թ. 6 : “ Սասն զի անոր (Հիսուս Վրբիստոսի) շնորհքովը փրկուած էք դուք հաւատքով” : Լ. Գ. Թ. 8 : “ Ըէ թէ օրէնքէ եղած իմ

արդարութիւնս ունենամ, հասցա Վրիստոսի հաւատքովը  
ան արդարութիւնը՝ որ Մատուժմէն է՝: Վիլլի. 7. 9: «Մասնց  
հաւատքի անհնարին է Մատուժոյ հաճոյ ըլլալ»: Լէր. 6:  
Տէս նաև աւ Հերուլու Հանարնէրը: Վարձ. 47.  
39: Հարմ. 7. 21, 22, 25, 26, 30: 7. 5: Ե. 1: Ժ. 4:  
Վարդ. ք. 16: 7. 8, 9: ք Տէմ. 7. 15: ան Պլու. ան. 5, 9:

Եայց աւ հաւատքին հետ Հնազանդութիւն ալ  
պէտք է:

Վրիստոս՝ «բոլոր իրեն հնազանդողներուն յախտենա-  
կան փրկութեան պատճառ եղաւ»: Լէր. Ե. 9: Մակեց  
յայտնի կերևնայ որ Վրիստոս բացի հնազանդողներէն  
ուրիշ մէկու մը յախտենական փրկութեան պատճառ չէ:  
Վրիստոնէութեան ինչ ըլլալը ողջմտութեամբ հասկըցած  
չէ ան մարդը՝ որ շղթար թէ անոր մեծ նպատակը չէ  
թէ միայն մեղ պատիժէն ազատել է այլ նաև մեղ մեղքէն  
մտքրել է: «Որ ինքզինքը մեղի համար տուաւ, որ մեղ  
բոլոր անօրէնութիւններէն ազատէ, ու մտքէ իրեն յա-  
տուկ ժողովուրդ ընէ՝ բարի գործքերու նախանձաւոր»: Տէր. ք. 14:  
Վրիստոսի հեաւողը պարտի իր հաւատքը  
ցուցնել իր գործքերէն: Վանդի «հաւատքը՝ թէ որ իր  
հետը գործ չունենայ, ինքը մինակ մեռած է»: Հիմ. ք.  
17: «Ոչ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէր Տէր կրսէ, պիտի  
մտնէ երկինքին թագաւորութիւնը, հասցա ան որ իմ երկ-  
նաւոր հօրս կամքը կրկատարէ: Եւ աւերը ան օրը ինծի պի-  
տի ըսնն, ո՛վ Տէր Տէր՝ չէ՞ որ քու անունովդ մարդարե-  
ութիւն ըրինք, ու քու անունովդ դէեր հանեցինք, ու քու  
անունովդ շատ հրաշքներ ըրինք: Աւ անատներ անոնց  
պիտի ըսնմ. Աս բնաւ ձեզ չէի ճանչնար, մէկդի՛ գացէք  
քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կրգործէիք»: Մարտ.  
է. 21—23: «Աւ հոն չմտներ ան ամէնը՝ որ կամքերնին  
չար է, ու պիղծ և սուտըրուց են. հասցա միայն անոնք  
որ Վասին կենաց գրքին մէջը գրուած են»: Հիյր. իւ. 27:

Երդ՝ կըհարցուննմ՝ քեզի մեղսակից եղբայր, արդեօք բա-

ւական խորհած եւ աւամենահարկաւոր ճշմարտութեանց վրայ : Վրու միջնորդդ քու վերջին դատաւորդ պիտի ըլլայ , և ինքը ահեղ խօսքերով կիմացունէ թէ բոլոր անօրէնութիւն գործողները պիտի հեռու մնան իրմէն : Թէ եկեղեցական ըլլած թէ աշխարհական՝ թէ մարդարէ՛ թէ քարոզիչ , վերջին օրը Վրիստոս պիտի յախտենական կորուստը մատեն զքեզ , թէ որ հիմայ ապաշխարութեամբ՝ հաւատքով և սուրբ վարքով մը քեզի մի միայն Վրկիչ չես ընդունիր զինքը : Եթէ չարալիղու հայհոյիչ մեղաւոր մըն ես , գործաւնութեան մէջ կամ որ և իցէ ուրիշ պարագայի մէջ անիրաւութիւն՝ խարեբայութիւն՝ կերպ կերպ խորամանկութիւններ և սուտ խօսքեր կը բանեցունես , ուրեմն ան բանը կընես որ պիղծ է Մատուծոյ առջևը , և չես կրնար՝ բնաւ չես կրնար յուսալ որ քու անունդ գրուած ըլլայ Վասին կենաց գրքին մէջ : Վրիստոսի մահը քեզի օգուտ մը չընէր թէ որ քու մեղքերուդ մէջ կը մնաս : Թէ որ ապաշխարես՝ հաւատաս՝ հնազանդիս Հիսուս Վրիստոսի և սիրես զանիկայ , հաստատ դիտցիր որ պիտի փրկուիս յախտեան , ապա թէ ոչ՝ պիտի դատապարտուիս յախտեան : Հողով Սրբով ներշնչեալ սրբազան առաքեալին մէկը ըսաւ , թէ որ մէկը չսիրեր Տէր Հիսուս Վրիստոս , թող նշովեալ ըլլայ երբոր Տէրը գայ . (տ՝ Կորն[ւ. ԺԳ. 21) և հիմա ես ալ մեծ փափաքով մը քու փրկութեանդ ցանկացող իրբև մէկ բարեկամդ՝ կիմացունեմ՝ քեզի վտանգը որ դուցէ փախչիս աղատիս անկէ :

Մինչև հոս քննեցինք Միջնորդին ան հանգամանքները՝ որոնցմով այնպիսի հիանալի յարմարութիւն մը ունի հաւատարիմ միջնորդ մը ըլլալու Մատուծոյ կողմէն : Հաւատարագէս կատարեալ և հիանալի է իր յարմարութիւնը երբոր իր մարդկութիւնը կը բննեմք :

Ս ան զի՛՛ Վասն , իրբև մարդ մօտ ազգակցութիւն և կապակցութիւն ունի ան ապստամբներուն հետ՝ զորոնք փրկելու համար աշխարհ եկաւ : Մնիկայ օտարական մը չէ որ մեզ



իրենն հնազանդեցունելով, մեր արդարասէր ինքնակալին զէմ մեզ ապստամբեցունելու կամք ունենայ : Բայց ան մեղմէ մէկն է . մարդոց փրկութիւնը իր վրայ առնելով պէտք էր որ ինքն ալ մարդ ըլլայ : «Վանգի բնաւ հրեշտակներուն ձեռք չբռնել, հապա Մբրահամի զաւկին ձեռք կը բռնէ : Ընոր համար ալ պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որ ինքը ողորմած ըլլայ՝ ու հաւատարիմ քահանայապետ Մատուծոյ կողմէն, ժողովուրդին մեղքերը քաւելու համար : Ինչու որ ինչ բանով ինքը շարժարուեցաւ նէ՛ փորձը առնելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ » : Լ, Էր . ք . 16—18 :

Ըհա հոս տեղ շատ գեղեցիկ և զորաւոր կերպով մը նկարագրուած է ան վարդապետութիւնը՝ որն որ կը ջանամ բացատրել և հաստատել : Արովհետեւ Վրիստոս յանձն առաւ փրկել զմարդիկ և ոչ հրեշտակները, վասնորոյ պէտք էր իրենն եղբայր ըլլալ մարդոց և ոչ հրեշտակներուն : Պէտք էր որ անիկայ փորձով գիտնար մարդկային բոլոր փորձութիւնները և տկարութիւնները, ու ամէն բանի մէջ մեզի պէս ըլլար, բաց ՚ի մեղքէն : Լ, Ե ասոր համար ինքը «կնիկէ մը եղաւ, ու օրէնքին տակը մտաւ» : Վ, աղ . Դ . 4 : Իր անձը կը ներկայացունէ մեզի իրրև կարեկից եղբայր մը՝ որուն մենք ամէնքս կրնամք մօտենալ կատարեալ վատահ ըլլալով՝ թէ ան իր ողորմութեամբը մեզ կընդունէ :

Լ, Կրորդ՝ Մնիկայ մեր կատարեալ և մի միայն միջնորդը ըլլալու համար հարկաւոր եղած բոլոր խոնարհամտութիւնը՝ մարդասիրութիւնը և երկայնամտութիւնը ունի :

Թէպէտեւ «ինքը յափշտակելու բան մը չսեպեց Մատուծոյ հաւատար ըլլալը, բայց իր անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով» : Փ, Էլ . ք . 6, 7 : «Ինքը հեղ է ու սրտով խոնարհ» : Ա, աղ . Ժ . 29 : Արդարեւները իմացուցին իր հեղութիւնը և խոնարհութիւնը իր մարդկային մարմնով երևնալէն շատ դարեր առաջ : «Այ պիտի ազաղակէ և ոչ մէկը պիտի լսէ անոր

ձոյնը փողոցներուն մէջ : Չ ախջախած եղէգը պիտի չփառ-  
բէ , ու պլպլած պատրոյգը պիտի չմարէ . մինչև որ դա-  
տաստանը յաղթութեան հանէ” : Եւայ . խթ . 2,3 : ՍՊՊԷ .  
Ժբ . 19, 20 : ԲՆԵԼ Է , թէ Վ. քիստոս՝ իր ամենամեծ խո-  
նարհութեամբը և հեղութեամբը յաղթութիւն պիտի ընել  
տայ ջախջախած եղէգին պէս տկար եղողներուն : Կարծեալ  
կրկարգամք՝ “ Աւրախ եղիր յոյժ Սիօնին աղջիկը , կանչէ՛  
Արուսաղէմին աղջիկը , ահա քու թագաւորդ կուգայ քե-  
ղի , արգար և փրկիչ , հեզ և իշուն վրայ հեծած՝ ու իշուն  
աւանակին վրայ” : Օւտ . թ . 9 : ՍՊՊԷ . իա . 5 : Ընդհայ  
իր բոլոր փառքէն մերկացուց իր անձը որ ամենէն երկնոս  
և տկար անձը անդամ կարող ըլլայ վստահութեամբ և սի-  
րով մտանալ իրեն : Սինչև անգամ աղաքներն ալ կըր-  
նան դալ իրեն հաստատ վստահութեամբ որ անիկայ կըն-  
դունէ զիրենք , որովհետև երկրիս վրայ եղած տոներ իր  
գիրկը առաւ զանոնք և օրհնեց ըսելով՝ “ առանկնե-  
րուն է Եստուծոյ թագաւորութիւնը” : ՍՊՊԷ . Ժ . 14—16 :

Իր խոնարհութեանը և հեղութեանը հետ հաւատար է  
նաև իր համբերութիւնը , հանգարտութեամբ համբերեց  
իր աշակերտներուն անհաւատութեանը և անոնց հաւատ-  
քին տկարութեանը : Ընդ չկրցան մէկ ժամ մը արթուն  
մնալ իր հետը՝ երբոր իր խորհրդաւոր տաղնապները կը  
կրէր՝ սաստիկ նեղութեամբ կըտանջուէր պարտէղին մէջ .  
(ՍՊՊԷ . իղ . 40) անոնցմէ մէկը մասնեց զինքը , մէկ ուրի-  
շը ուրացաւ , և ամէնն ալ թողուցին զինքը և փախան եր-  
բոր իր թշնամիներուն ձեռքը ահսան զանիկայ : Եւայ ի՞նչ  
հեղութեամբ ընդունեց զանոնք իր յարութիւն առնելէն  
ետքը , երբոր ինքզինքը զանազան կերպերով յայտնեց :  
Կարծեալ իր թշնամիները նախատեսցին , ճեճեցին և խա-  
շը հանեցին զանիկայ . բայց նոյն տոներ ինքը աղօթք կը-  
նէր իր Հօրը ըսելով՝ Հայր՝ թողութիւն տուր առանց , ին-  
չու որ չեն գիտեր ինչ կընեն : “ Արքամբասուէր և փոխարե-  
նը չէր բամբասեր , կը շարշարուէր՝ ու սպաննալիք չէր ը-  
նէր” : ԿՊԷ . ք . 23 :

Սենք՝ ողորմելի մեղաւորքս, յանցանաց ծանրութեամբը բեռնաւորած, զգալով թէ մեղօք և պղծութեամբ լցուած եմք, թէ մեր բնութիւնները ապականեալ և չար են, թէ հանապաղ Մտուծմէ կրհեռանամք և իր Սուրբ Հօգին կրտսրամեցունեմք, և ամէն կերպ տկարութիւններով շրջապատած եմք, կրկարօտիմք ասանկ մէկ միջնորդ մը ունենալու: Արչափ ամենաստասիկ ըլլայ յանցանաց զգացումը, պէտք չէ որ իրեն զիմէէն ետ մնանք: Վանզի «Մտուծմէ ճշմարիտ է՝ կրսէ Պօղոս առաքեալ, «և բոլորովին ընդունելութեան արժանի որ Հիսուս Վրիստոս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց զլուխը ետ եմ»: ԹՄՆ. Թ. 15: Վրիստոս անանկ միջնորդ մըն է՝ որուն կրնայ գալ «մեղաւորներուն զլուխը», ողորմութիւն գանեւ և Մտուծոյ հետ հաշտուիլ: Մտու. Թ. 18:

Վարձիւր ո՛վ ողորմելի մեղաւոր, դարձիւր նայէ՛ աս միջնորդին՝ որն որ Մտուածային իմաստութիւնը և սէրը պատրաստեց քեզի համար: Թէ և մեղաւորաց մինակ միջնորդը ըլլալու համար իր ունեցած անձառելի կատարելութիւնները ստորագրելու բաւական չեղայ ես, բայց գոնէ այսչափ կրցայ ընել՝ որ դուն հիմա կիմանաս թէ Վրիստոս կարող է և կամեցող բոլորովին փրկելու ան ամէնը որ իրմով Մտուծոյ կուգան: Վանզի տեսար որ ինքը իշխանութիւն ունի երկինքին մէջ ու երկրի վրայ: Բոլոր դատաստանը իրեն յանձնուած է, և իր զօրութեան խօսքովը կրբռնէ ամէն բան: Մնոր կրհանի Հայրը և ինչ որ ինզրէ նէ կրարուի իրեն: Մյո՛, տեսար իր դերպոյնէ արժանաւորութիւնը իրրե միածին և ամենասիրելի Սրբին, ամէն բաներուն ժառանգը. իր կամաւոր հապատակութիւնը և նազանդութիւնը օրէնքին. Մարիէ տիեզերաց և յայտնող Մտուածային հանգամանաց ըլլալով՝ Մտուածային կառավարութեանը մատուցած իր մեծամեծ ծառայութիւնները. իր միաւորութիւնը Հօրը հետ երկնային թագաւորութեան ապահովութիւնը և փառքը պաշտպանելու հա-

մար . իր կամուր շարչարանքները օրինաց սոսկայի պատիժը կրելով մեր տեղը . Զօրը հետ ըրած իր յայտնի ուխտը՝ որով մեղաւորները փրկուին անանկ պայմաններով որ մեծ փառք և պատիւ կրճատուցանեն Մատուծոյ սրբազան զաւառին . մեր բնութիւնը իր վրան առնելը և մեզի հետ իր անանկ մերձաօրութիւն մը ունենալը որ մեզ եղբայրներ կրկոչէ , և որ ոչ միայն Մատուծոյ հետ՝ այլ նաև մարդոց հետ հաւասար կրնէ իր անձը . իր երկայնամատութիւնը՝ հեղութիւնը և քաղցրութիւնը , ամէն աս հանգամանքները ստատածային և հիանալի եղանակաւ մէկ տեղ գալով՝ Վրկչին մերոյ Հիսուսի Վրիստոսի փառաւոր յարմարութիւն մը կուտան մեր մի միայն միջնորդը ըլլալու , և յայտնի կրցուցընեն թէ ո՛րչափ կարող և կամեցող է ան մեզ փրկելու :

Սիրելի ունկնդիրք՝ աս մեծ և երեւելի նիւթիս վրայօք կուղեմ հիմա քանի մը հարցմունք ընել ձեզի :

Մ. Մրդեօք կըլտատահիք ուրիշ միջնորդի մը կամ բարեխօսի մը Հիսուս Վրիստոսէն զատ : Ըսել կուղեմ , բացի Վրիստոսէն՝ կըլուսա՞ք ուրիշ մէկու մը՝ որուն ձեռօքը թէ փրկութեան բարութիւնները և թէ աս կենացս բարութիւնները ստանաք : Ստանգի ասեն ուրիշ մէկու մը կըլտաղէք . աղօթք կընէք ուրիշ մէկու մը և յօգնութիւն կըկանչէք ուրիշ մէկը որ գայ ձեզ պահպանէ շարեն , կամ ձեզի որ և իցէ բարիք մը տայ : Աթէ ասանկ է , ի՞նչ տեսակ միջնորդ մըն է ան , և ի՞նչ աստիճան ունի ան երկնից պալատին մէջը : Թէ որ անիկայ հունաւոր և ստեղծուած էակ մըն է՝ թէ որ միայն ծառայական պաշտօն մը ունի ան պալատին մէջը՝ ամենեկին կարող չէ հոն ելլել ձեզի միջնորդութիւն ընելու համար : Վանգի Մատուած սուրբերուն հաւատարմութիւն չըներ , և երկինք անարատ չեն իր առջևը , ու իր հրեշտակները սխալական կըլտանէ : Հով. 18 : Ժն . 15 :

Բ. Թէ որ բացի Վրիստոսէն մէկ ուրիշը միջնորդ կրբունէք, ի՞նչ բրած է ձեզի համար առ միջնորդը : Չեր տեղը հնազանդեցա՞ւ Բստուծոյ օրէնքին : Բայնպիսի մեծամեծ ծառայութիւններ բրա՞ւ արդեօք Բստուծոյ, որ արժանի ըլլայ իր առջևը կայնելու իբրև միջնորդ մեղաւորաց : Հիշեցէ՛ք որ ամենամեծ հրեշտակագետը անգամ միայն ինքը ինքին համար կը հնազանդի օրինաց . միայն իրեն պարտք եղածը կը կատարէ, և վասնորոյ ամենեւին արժանաւորութիւն մը չկրնար ունենալ ուրիշներուն համար բարեխօսութիւն ընելու : Բայց թէ որ ձեր միջնորդը սուրբերէն մէկն է, ուրեմն անշուշտ անիկայ ալ տտենօք մեղաւոր մըն էր . քանզի շողին Սուրբ յայտնի կիմացունէ թէ անոնք ալ երկրիս վրայ մեղաւոր էին . «Վրդար մը չկայ, ոչ մէկ հատ մը : Սէկը չկայ որ բարի բան ընէ, ընաւ մէկ հատ մըն ալ չկայ» : Լուկ. Գ. 10, 12 : Շոտ տեղ ընդհանուր մարդկային աղօթին համար խօսուած է, առանց դուրս առնելու ոչ նահապետները՝ ոչ մարգարէները՝ ոչ ալ առաքեալները՝ ոչ մարտիրոսները՝ ոչ ալ նոյն ինքն Ստյա Սարիամը : Այսին զի անոնք թէպէտ Բստուծոյ ընտրած սուրբերն էին, բայց ամէնն ալ մեղաւորներ էին շնորհքով փրկուած, մեղաւորաց մի միայն միջնորդին և փրկչին ձեռօքը փրկուած\* . և վասնորոյ ամենեւին կարող չեն ուրիշներուն համար բարեխօսութիւն ընելու : Վանդի ան անձինքն ալ որ հնազանդութեամբ իրենց հրամայուած բաները բրին, անպիտան ծառաներ կըսուին . (տես Ղ. Ժ. 10) որչտի ևս առաւել անք որ շատ անգամ անհն ազանդ գտնուեցան :

Գ. Բացի Վրիստոսէ ան ձեր յուսացած միջնորդներէն մէկը ձեր մեղքերուն արժանի եղած պատիժը կրնո՞ց մի . որ արդարև անանկ պատիժ մըն էր որ յաւիտենական կորբստեան մէջ պիտի ընկղմէր հունաւոր էակներուն բովան-

\* Սմանք նախնի հայրերուն կարծիքներուն մեծ յարգ մատուցանելուն համար, քարոզիս վերջը մէկ յաւելուածով մը իրենց զործքերէն բանի մը վկայութիւններ կըզնեմք առ նիւթիս վերաբերեալ :

գակ տիեզերքը : Հիրաւի մարտիրոսները չարչարեցան և մեռան , բայց չէ թէ ձեր մեղքերուն համար . անոնք Վրբիստոսի համար և իր ճշմարտութեանը վկայ ըլլալու համար նահատակեցան : Այս և իրենց մահը ակամայ էր և մէկ կերպով մը Վրբիստոսի՝ ան մէկ պատարագին տեղը չբռնել , որով ինքը մշտնջենաւորապէս կատարեց բոլոր սրբուածները : ԼճԵ . Ժ . 14 :

Վ . Լացի Վրբիստոսէ ուրիշ մէկը պնդիսի ուխտ մը ըրաւ՝ Լստուծոյ հետ մեղաւորներուն ներելու և նոյն ատենը Լստուծոյ արդարութիւնը փառաւորելու : Լթէ ոչ՝ ինտոր կըթողուք Վրբիստոսը ու կերթաք օգնութիւն կը խնդրէք ուրիշներէն : Լրդեօք կըկարծէք թէ երկինքը գտնուող սուրբերէն մէկը կարող է դադարիլ փրկութիւնը զինեալ Վառին մատուցանելէն , և չոր Լստուծոյ աջ կողմը կայնիլ ձեզի համար բարեխօսութիւն ընելու : Արնայ մէկ սուրբ մը չողին Սուրբը խրկել ձեզի՝ ձեր մեղսալից սրտերը մաքրելու և ձեզ Հիսուս Վրբիստոսի մէջ նոր արարած ընելու ան վերստին ծննդեամբը՝ առանց որոյ անհնարին է ձեզի երկնից թագաւորութիւնը տեսնելու :

Լս դարձեալ՝ թէ որ բարեխօս կըբռնէք ուրիշ մէկը բացի Վրբիստոսէ , ո՞ր է ան : Վրբիստոս ամէն տեղ է և խոստացած է իրեն անունովը մատուցուած ամէն աղօթքները լսելու : “Լամ անունովս ինչ որ խնդրէք նէ կըկատարեմ անիկայ . ինչ որ ինձմէ խնդրէք՝ անիկայ պիտի կատարեմ” : ՀճԼ . ԺԴ . 13 , 14 : Իսկ ուրիշ որեւիցէ միջնորդի մը համար կրնաք մէկ կերպով մը հաստատել թէ ամէն տեղ ներկայ է ձեր աղօթքը լսելու . ո՛չ ամենևին . քանզի չէք՝ գիտեր ալ թէ ո՞ր է երկինքը՝ անտեղը ուր սուրբերը և մարտիրոսները կըբնակին : Սե՛ծ յիմարութիւն մը չէ՞ աղօթք ընել անոնց՝ որ մէկ պատճառ մը չունիք գիտնալու թէ անոնք կըլսեն մի : Լսկէց զատ աղօթքը լսողը պէտք չէ՞ որ աղօթք ընողին բոլոր կարօտութիւնները՝ պարագաները և հանգամանքները գիտնայ , ան ա-

ղօթքը ուր տեղ որ մատուցուի և ինչ ատեն որ ըլլայ՝ թէ գիշեր թէ ցորեկ : Ըրդ բսեմք թէ միլիոնաւոր անձինք , արք և կանոյք ու տղայք որ երկրիս վրայ մէկզմէկէ հետու զանազան քաղաքներու մէջ կը բնակին , մի և նոյն ատեն մը մի և նոյն սուրբի մը աղօթք կընեն , արդեօք ան սուրբը կրնան ամէն տեղ ներկայ դանուիլ , և մի և նոյն վայրկեանի մէջ ոչ միայն ան միլիոնաւոր ժողովրդոց աղօթքները խնդրուածքները մտիկ ընել , այլ նաև ան ամէն մէկ աղօթք ընողին անհամար և բազմակնճիւն պարագաները ու կարօտութիւնները մէկէն իմանալ գիտնալ , անանկ որ անոնց ամէն մէկուն յարմար կերպով մը պատասխան տայ : Գեռ աղօթքի չկայնած հարցուր դուն քեզի . Մը տեղ է իմ միջնորդս կամ բարեխօսս . քանզի ասանկ ընելովդ անշուշտ պիտի շնայիս ուրիշ բարեխօսի մը , այլ միայն Մնոր՝ որ խօսք տուաւ մինչև աշխարհիս վերջը իր աշակերտներուն հետն ըլլալու :

Գարձեալ կը հարցունեմ . ի՞նչ է պատճառը , ինչո՞չ համար Վրիստօսէն զատ ուրիշ միջնորդներու կը դիմէք : Ի՞նչ անկատարելութիւն կը գտնէք Վրիստօսի վրայ որ ուրիշներուն կը վազէք : շէք կրնար գտնել Վրիստօսի պէս զօրաւոր ուրիշ մէկը , քանզի ինքը ամենակարող Ըստուած է . անոր պէս ձեզի մօտիմէկը , քանզի ինքը անհուն է և ամէն տեղ կը գտնուի . անոր պէս շօրը ընդունելի մէկը , քանզի ինքը շօրը հանած ամենասիրելի Որդին է . անոր պէս կարեկից մէկը , քանզի ինքը կարող է ձեր ամէն տկարութիւնները զգալու : Թէ որ ընդունիք զինքը՝ ձեր եղբայրն է ան : “Վասըն զի” կըսէ՝ “ո՛վ որ իմ երկնաւոր շօրս կամբը կը կատարէ , անիկայ է իմ եղբայրս ու քոյրս , և մայրս” : Մարտ . ԺԲ . 50 : Մայրական սէրը և դուժը անգամ չկրնար Վրիստօսի կարեկցութեանը և սիրոյն հետ հաւասարիլ : Վանզի անիկայ իր Սիօնին համար կըսէ , ց՛ր բոլոր իրեն հաւատացողներուն , “Սի թէ կինը իր մանուկը կը մոռնայ , կամ իր փոքի զաւկին գթութիւն չընե՞ր . ա-

նոնք մոռնան ալ նէ ես քեզ պիտի չմոռնամ կրտէ Տէրը .  
 Ընչա ես ձեռքիս մէջը նկարեցի դքեղ” : Առայ . Թ . 15 ,  
 16 : Թէ որ Հիսուս Վրիստոսէն աւելի կարեկցութիւն  
 ունեցող և աւելի գթած միջնորդ մը կրփնաուէք , յայտնի  
 կրցուցընէք որ դուք անանկ մէկը կուզէք որ ձեր մեղքե-  
 րուն դէմ իր աչքը դոցէ : Աւ վերջապէս աս չէ՞ պատ-  
 ճառը որ այնքան հաղարաւոր անձինք կրթողուն ան օրհ-  
 նեալ և միակ Սիջնորդը , ու անոր տկար ստեղծուածները  
 իրենց միջնորդ և բարեխօս կրբոնեն : Ըստ , անոնք անանկ  
 միջնորդներ կուղեն որ անոնցմէ թողութիւն գտնեն , և նոյն  
 ատենը առանց խղճի իրենց մեղքերը գործեն :

Իսոյց կարելի է պիտի ըսէք թէ՛ Արկրիս վրայ սուրբե-  
 րը մէկգմէկու համար կաղօթեն , և Ըստուած ալ անոնց  
 աղօթքներուն պատասխան՝ զանազան բարութիւններ կը  
 պարգևէ . ուստի ան իրկուած սուրբերը որ հիմա երկ-  
 նից մէջն են , երկրիս վրայի սուրբերէն աւելի՞ պակաս կա-  
 րեկցութիւն ունին և աւելի՞ քիչ աղօթասէր են :

Ըսոր կը պատասխանեմ թէ՛ ամէն հաւատացեալներուն  
 մէկ պարտաւորութիւնն է աղօթք ընել մէկգմէկու համար ,  
 Վրիստոսի եկեղեցիին համար ու նաև ամէն մարդոց հա-  
 մար , “սուրբ ձեռքերնին վեր վերցունելով առանց բար-  
 կութեան և երկմտութեան” : Ի՞նչ . ք . 8 : Արկարդամք թէ  
 Սոփէս բարեխօսութիւն ըրաւ Ըստուծոյ՝ Խարայէլացոց  
 համար , Ըբրահամ՝ Մողոմացոց համար . բայց հոստեղ  
 չմոռնամք ան մեծ տարբերութիւնը : Վանզի ասիկայ  
 ճշմարտապէս բարեխօսութիւն կամ միջնորդութիւն  
 չէ , այլ միայն պարզապէս Ըղօթք . և աս աղօթքը  
 մատուցանողը կուգայ Ըստուծոյ առջևը չէ թէ արժա-  
 նաւորութիւններ ներկայացունելու , այլ կարօտութիւն-  
 ներ յայտնելու . և չէ թէ իբրև իրաւունք՝ բան մը  
 պահանջելու , այլ իբրև շնորհք զանիկայ խնդրելու : Ողոր-  
 մութիւն կրխնդրէ և ոչ արգարութիւն . և չէ թէ իր  
 անձին կը վստահի այլ մէկ ուրիշի մը կապաւինի : Իսոյց



ահա՛ ճշմարիտ բարեխօսը կամ միջնորդը կրներկայանայ արժանաւորութեամբ և ոչ կարօտութեամբ . ինչ որ կը պահանջէ՝ իրաւամբ կըպահանջէ և ոչ իբրև շնորհք . յիրաւի ապստամբներուն նայելով՝ շնորհք է, բայց իրեն նայելով՝ իր գործքերուն արդար հատուցումն է : Արեւմտաս մտօքս ինտոր որ ցուցուցինք , հունաւոր էակ մը կարող չէ մեզի միջնորդ ըլլալու :

Հաւատացեալները աս աշխարհիս մէջ արտօնութիւն ունին աղօթք ընելու ուրիշներուն համար , բայց միայն Վրիստօսի անունովը . իսկ երբոր աշխարհէս ելլեն , աղօթքը՝ օրհնութեան և Նիստարանութեան կրփոխուի , և բնաւ պատճառ մը չունինք խորհելու թէ անոնք երկինքը աղօթք կընեն մեզի համար : Այլ բնդհակառակն գիտեմք՝

1. Ար աղօթքը կարօտութիւն ունենալը կը յայտնէ . բայց երկնից մէջ կարօտութիւն չկայ որ աղօթք ընել պէտք ըլլայ :

2. Աղօթքը հաւատոյ խօսքն է . իսկ երկնից մէջ հաւատքը կրփոխուի տեսութեան , և ուր հաւատքի կարօտութիւն չկայ , հոն աղօթք ընելու ալ կարօտութիւն չկայ :

3. Աղօթքը ուրիշ բանի մը յոյս ունենալէն կը պատճառի . բայց երկնից մէջ փրկուածները յուսացուած բաները ձեռք բերած են , և վասնորոյ ան բաներուն համար չէ թէ աղօթք մատուցանելու են այլ փոռարանութիւն :

4. Այլեզեցիին ապառնի վիճակին վրայօք ալ սուրբերը Վրիստօսի անանկ կատարեալ յայտնութիւնը կը վստիւլեն , և իր յայտնած խորհուրդներուն և խոստումներուն վրայօք անանկ պայծառ գիտութիւն ունին , որ ցնծալից հանդարտութեամբ կը սպասեն բոլոր իր խորհուրդներուն աստիճանաւոր և ստոյգ կատարմանը : "Անէք հիմա կրտեսներէք" , կըսէ Պօղոս , "որպէս թէ հայելիին մէջը՝ օրինակով , բայց անատենը գիմացէ գիմաց . հիմա շատեն քիչ մը տեղեակ եմ , բայց անատենը անանկ պիտի գիտնամ՝ ինչպէս որ անիկոյ ալ զիս ճանչցաւ" : Ին Արեւմ . ԺԳ . 12 :

Բայց սիրելի՛ ունկնդիրք, ըսեմք թէ ձեզի յայսնուած է թէ սուրբերը երկնից մէջ ձեզի համար կաղօթեն : Մտիկայ ձեզի իրաւունք կուտայ անոնց աղօթք ընելու . չէ՛ . մանաւանդ աս բանը քաջալերութիւն մը տալու է ձեզի անոնց օրինակին պէս աւելի աղօթք ընելու Մտուծոյ՝ Վրիստոսի անունովը :

Վուցէ կըպատասխանէք, թէ մենք չէ թէ սուրբերուն աղօթք կընեմք, այլ աղօթք կընեմք Մտուծոյ որ սրբոց արժանաւորութեամբը մեզի լսէ : Բայց արդէն տեսնէք որ անոնք արժանաւորութիւն չունին, անոնք ալ շնորհքով փրկուած մեղաւորներ էին, և իրենց փրկութեան ու կատարելութեան բոլոր փառքը արժանի է Մտոր՝ որ իրենց պարգևեց շնորհքը, և ոչ անոնց՝ որ միայն շնորհքը ընդունողներ են :

Ատրելի է մէկը ըսէ, Աս սուրբերը բարեխօս կըբռնեմ, չէ թէ առ Մտուած՝ հապա առ Վրիստոս :

Թէ որ աս կընես գիտցիր որ Մտի՛ վրկչին մերոյ չիտուս Վրիստոսի բոլոր հրաւերքները կանարգես, որոնք կըպարտաւորեն զքեզ ուղղակի իրեն երթալ : Վանդի ինքը կըսէ, «Աչկէք ինծի բոլոր հոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ կըհանգչեցունեմ» : Սաղմ . Ժա . 28 : «Թէ որ մէկը ծարաւ է՝ ինծի թող գայ՝ ու խմէ» : Ճո՛ղ . է՝ . 37 : «Վուրք չէք ուզեր ինծի գալ, որ կեանքը ունենայք» : Ճո՛ղ . Ե . 40 : Վրիստոս ուղղակի իրեն կըկանչէ զքեզ . բայց դուն փոխանակ ուրախութեամբ հնազանդելու աս իր հրամանին՝ կուզես հեռու կենալ և միայն ուրիշներուն միջնորդութեամբը հաղորդակցիլ իրեն հետ : Արկրորդ՝ ասանկ ընելով Վրիստոսի մարդկութիւնը կըմերժես կամ գոնէ անարգանք կըբերես անոր վրայ : Մնիկայ երբոր մեր բնութիւնը իր վրայ առաւ մինչև ծառայի կերպարանքը խոնարհեցուց իր անձը, և թող տուաւ որ ամէնն ալ կատարեալ ազատութեամբ իրեն մօտենան : Ինք շինքը քեզի եղբայր կանուանէ և՛ տակաւին դուն չես ուզեր ինքը եղբոր

պէս ընդունել : Չես յիշեր ան մերձաորութիւնը որ անպատմելի անարգանք և արտոմութիւն բերաւ իր վրայ , բայց անպատմելի փառք և պատիւ կընծայէ քեզի : Արորդ՝ կանարգես Վրկիւն մերոյ ան Հեղութիւնը՝ երկայնմտութիւնը և համբերութիւնը , որոնք բոլոր մեղաւորաց սիրոյն և վստահութեանը կարժանաւորն զինքը : Անիկայ նկարագրուած է իբրև ան Հեղ հովիւը որ իր բազուկներուն տակը կըժողուէ գառիները՝ և զանոնք իր ծոցին մէջը կըպահէ . ( Ասայ . 11 . ) ան քաջ հովիւը՝ որ իր անձը կըդնէ իր ոչխարներուն համար : Օարմանալի և հիանալի եղանակներ բանեցուց ցուցունելու համար՝ թէ որչափ պատրաստ է իրեն եկող ապաշխարող մեղաւորները ընդունելու , և որչափ կատարելապէս կրնայ զգալ բոլոր տկարութիւններդ , և միանգամայն իր ամենակարող աջովը բնաջինջ ընել քու ամէն թշնամիներդ , և պաշտպանել զքեզ ամէն վտանգներէն : Կաղաչեմ քեզի , ո՛վ մեղսակից ունկնդիր , մի՛ մեղանչեր քու հոգիիդ դէմ , ինքզինքըդ աս Սիջնորդէն բաժնելով , և իր տկար արարածները իրմէն աւելի զօրաւոր և աւելի կատարեալ համարելով :

Վ երջապէս սիրելիք , կը յորդորեմ զձեզ ընդունել աս Սիջնորդը և Վրկիւն , ինտոր որ Լուստարանին մէջ կըմատուցուի ձեզի , իբրև ձեր միակ և ամենակարող Սիջնորդը : Լդէ՛կ միտք առէք բնարանին ան խօսքերը՝ թէ ՄԻՆ ԵՍՈՒԵԾ մը կայ և ՄԻՆ ՄԻՔՆՈՐԴ մը Լստուծոյ ու մարդոց մէջը , Հիսուս Քրիստոս մարդը : Լս երկու ճշմարտութիւնները հաւասարապէս պարզ են և հաւասարապէս հարկաւոր . և ասոնց ոչ մէկը կրնաք մերժել առանց կամ անհաւատ և կամ կռապաշտ ըլլալու Լստուծոյ առջևը : Թէ որ կուզէք խաղաղութիւն ունենալ աս աշխարհիս մէջ՝ և յաւիտենական կեանք հանդերձեալին մէջ , ընդունեցէ՛ք զՔրիստոս իբրև ձեր մէկ հատիկ Վրկիւն . դաւանեցէ՛ք զանիկայ մարդոց առջևը և անիկայ ալ ձեր դաւանութիւնը մէկ միջոց մը պիտի ընէ իր եկեղեցիին սրբութեանը և աճմանը : Գա-

ւանեցէ՛ք զանիկայ աշխարհի առջևը , առէ՛ք ձեր խաչը  
 ու իր ետևէն գացէք , և թէ որ աշխարհ նախատէ ու հա-  
 լածէ զձեզ , բայց դուք ցնծացէք և ուրախ եղիք՝ վասն զի  
 ձեր վարձքը շատ է երկինքը : Այս երբոր Վրիստոս յայտ-  
 նուի՝ դուք ալ իր հետը յայտնի պիտի ըլլաք և յախան-  
 նական փառօք և պատուով պիտի պատկուիք իրեն հետ :  
 Արու՛մ վայելէ փառք յախտեանս Ա՛մէն :

1

Դասն Եստուծոյ անարատ  
 Ռարնոյ մեղաց աշխարհի ,  
 Ըն քեզ անս պաղատիմ ,  
 Գլխն հոգւոյս խղճալի :

2

Քնէ բիւր մեզոք զազրուի  
 Վեզ հակառակ կացի ես ,  
 Ը.Մ. կըզգնամ 'ի սքրուէ  
 Ընտնց վերայ մեծացէս :

3

Ըս հաստատուն հուստով  
 Վեզ բարեխոս կըճանչնամ  
 Մեղաւորաց ամենուն ,  
 Ըն անորոքն քո յարածամ :

4

Տէր Դու ես ինձ ոգնակուն  
 Ըս ոչ այլ ոք բընաւին .  
 Դու միայն յոյս ե քաւիչ  
 Սոյսբեղոս գը լիտվին :

5

Ո՛վ մարդասէր վերկիւ իմ ,  
 Տո՛ւր զօրութիւն տըկարէս ,  
 (Լաղթեւ մարմնոյ ե զիւին ,  
 Ստապատիբ աշխարհիս :

6

Ըս ցուալի սո կեանքեն  
 Ըրբածարիւ ինչազին ,  
 Ըրժանացո՛ւ եղկեկին  
 Վու ընտրչորդ երկնային :

Թ 29

## 1

Յիսուս Իրիստոս տեսայ քուկին  
 Հոգեվարբըդ սոսկաց հոգիս ,  
 Եւ յո՛ մեռար դու կանովին  
 Վասն թշուառ մեղաւորիս :

## 2


Դու տազնապիս և բնութիւն  
 Հեծէ ձայնիս ողբերգական ,  
 Երև ծածկէ զիւր լոյս փայլուն ,  
 Ընտրեալք իրենց փրկիւք լան :

## 3

Քուկին մահըդ՝ Օք՛հ սրբազան ,  
 Միլտ մեր աւաց բլլայ ներկայ ,  
 Քանզի արիւնըդ պատուական  
 Սեղփերըն մեր կըլուանայ :

## 4

Յիսուս Իրիստոս թող անդադար  
 Սրբոիս աղցէ սէրդ գերապանծ .  
 Դու մեր մեղաց համար մեռար ,  
 Դու միայն ես փրկիւք Եստուած :



## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ճ .

Մենք մաստիսն Մտուծոյ անսխալելի խօսքին վկայութիւնը բաւական է մեզի որեւիցէ վարդապետութեան ճշմարիտ ըլլալը հաստատելու : Սենք ոչ կանարգեմք ոչ ալ կրմերժեմք երևելի և բարի մարդոց գրութիւնները և կարծիքները, միայն թէ կը ջանամք Սուրբ Վրաց առաջնորդութեամբը ամէն բան փորձել և աղէկը ընդունել : Թ (Թ) Ե . Ե . 21 : 'Կախնիքներուն կամ Հայրապետներուն վրայով մեր ունեցած կարծիքը կրնայ խնացուիլ՝ մօտերս Իզմիր տպուած "Հայրապետութիւն ( ) Գոռնաւոր Իշխան" ըսուած գիրքէն : Մտ գիրքին մէջ շատ օրինակներով ցուցուած է անոնց գրութիւններուն մէջ գտնուած ընդդիմաբանութիւնները և սխալմունքները : Մտ աւելի գէշն ան է որ իրենց բոլոր գրութիւնները խանգարուած են՝ տեղ տեղ յաւելուածներ և փոփոխութիւններ մտցունելով, և զանազան բաներ դուրս ձգելով, անանկ որ շատ անգամ դժուար է խմանալ թէ հայրապետները ո՞ր և իցէ կարևոր նիւթի մը վրայոք ինչ կարծիք ունէին :

Իայց մէկը պիտի չկասկածի թէ նախնեաց գրքերէն հանուած հետեւեալ պարբերութիւնները խանգարուած ըլլան, անոնց մէջ ետքէն խօսքեր աւելցունելով . որովհետև ասոնք անանկ խմաստներ կը պարունակեն որ ուղղակի հակառակ էին ան մարդոցը գաղափարներուն և օգտին, որոնք անոնցմէ ետքը ան գրքերուն ձեռագիրները իրենց ձեռքը ունէին, և դիւրին էր իրենց՝ ուղածնուն պէս անոնց մէջէն մէկ բան մը հանել՝ փոխել կամ աւելցունել, առանց վախճալու թէ դուրս իմացուի :

Սեր ընթերցողները թող ուշադրութեամբ կարդան և

քննեն Վարեկին հետևեալ զլուխը , որն որ շատ ընտիր է և համեմատ Սուրբ Գրոց խօսքերուն , բացի մէկ կամ երկու տեղերէն , զոր օրինակ աս խօսքը՝ «Վասն զորս ոչ է խորէլ առ արք» , որն որ գուցէ յաւելուած մը ըլլայ : Վանդի գրեթէ անհնարին կերևնայ մեղի թէ հեղինակը գրած ըլլայ ան խօսքը որ նոյն գլխոյն բովանդակ իմաստին պնդան հակասակ է . բայց թէ որ ան խօսքը հեղինակինը ըլլայ ալ նէ՛ ալ աւելի յայտնի կըլլայ թէ որչափ հարկաւոր է Վատուծոյ Վանին անսխալելի կանոնը ունենալը , որ անով կարող ըլլամք ո՛ր և իցէ մարդոյ գրութիւնները քննելու և ուղղելու :

Ե. Ե. Ե. 2 :

ա . Եւ քանզի համարեալ զքննուցս բանիս ՚ի փորձոնց աստի երկբայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղերոց ՚ի մեծագունիցն տեսալս , սասցից զտունելի հանդէս իրաւանց աշակերտն անաւատութեան : Ար զի թէ մերձաւորազոյնք իցեն Վատուծոյ՝ իրբն զնախածանօթ հայրապետութիւնան , և կամ մարտազոյնք՝ որպէս մարտաբուն , կամ անբժազոյնք՝ իրբն զառարեալսն , կամ ընտրելազոյնք՝ որպէս մարտիրոսն , եթէ ոչ զու մարդասիրեացն աննուազ բարիք՝ և անտոտոն ինամակարութիւնդ՝ և անպակաս պղտմութիւնդ , ընդունայն է ինկ փրկութիւնն առ ՚ի նոցանէ :

բ . Եւ եթէ առ նոյն ինքն արբաճամ ձայն արձակիցեմ՝ , իբր ողորմագին առակ ընդեղին ինկ վարդապետ , ՚ի սասցոյ անտի պատակեալ , կամ թի միոյ ջրոյ ոչ բուսականանայ . քանզի և նա փակեալ է ընդ կարեաց հասարակաց անհնարութեան : Իսկ եթէ առ մարտն , և նա դրածեալ է տրկարութեամբ , որ ոչ զօրեաց առնն փրկութեան , որ զՎայթայթանաց կըրկուտն՝ ՚ի պաշտմութեանն աւուր ժողովէր : Իսկ եթէ առ աշարն , և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթոյնի : Իսկ եթէ առ դատիթ , ՚ի մէջ բարեացն՝ առաւելութեան՝ սպասեալ է և նա : Իսկ եթէ առ նոյ՛ և յոր՝ և քանիւլ , զայս եղեկիւլ մարդարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնաա , և զայն ընդ նոսին իբր ՚ի դիմաց Վատուծոյ աղչեալ , կենդանի եմ ես՝ առ տէր , թէ ոչ ապրեցուցնն զուտերս և զգտերս իւրեանց ՚ի բարկութեանն՝ որ հասանիցէ : բայց եթէ ինքեանք միւրն ապրեցնին : Իսկ եթէ առ պետրոս վէնէ հաւատոյ , ՚ի բուժք ինամոց խուն մի խիթացեալ՝ և նա ընդ կրիք ինն գրաւեցաւ : ինչպէս՝ սակ զբաղմացն զուտարութիւն՝ ինտարեալ առ կարիս կարիս , թէ և յաւելաւ երջանիկք իցեն : Ընդ որս և յազատու ոնէ մարդարէի՝ ՚ի մէջ աստուածատարն սպասարկութեան՝ մարդկութենն զայթաղութիւն՝ մնայ յորովից անթարգմանելի , թէ և ՚ի զկես ինն մեկութեան նկատեցուցի :



Գ. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ջուցան նորա սղորմեալք բարեբարից՝ և զօրացեալք ամենակալից. կողմեցեալք պաշտպանողից՝ և քաւեցեալք հնարաւորից. շորհնեալք ազատեցուցից՝ և բժշկեալք անտառականից. կենացործեալք անապականից՝ և լուսաւորեալք նորոգողից, այսուհետեւ զիտացեալ զսակն սրբանութեանց հոգանին բնութեանս, որք մխիթար են օրինական նմանաբար հարազատապէս վհատութեան յուսահատելոց, ահա առ քեզ զիմեցից՝ սրբի Մատուծոյ Վրիտաս օրհնեալ յամենայնի: Սնանանգ զսակն ազգակից այսմ մաղթանաց աստանոր յիշեալ, զվերազրեցողք բան վերստին արգարացուցանէ. բարի է, ըստ իմաստոյ ումնն երջանկի, անկանել ՚ի ձեռս տեանս, և մի ՚ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և սղորմութիւն նորին: Եւ այս բան՝ թէև զգաւթին իմն դժազրէր, որ զերեքմասնեան հարուստն աստուածեան առաջի եղեալ՝ բնօրեաց ինքնին կամաւորաբար զտառակներ մահուն ստատկման՝ իբր զկենդանի Վրիտասի հաւատոցն յաճախութեամբ, քան զերկուսն ես այլ փոքրկուն՝ որք տանջեն և ոչ սղորմին. սակայն և իմ օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անկն՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ. զի ոչ եթէ զփրկեալն նուաստացուցանեմ՝ ՚ի մասննի այսր սղորկութեան, առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին անուն պակեմ, և զնորհնորին՝ առ ամենայն բարեհաշակեմ. և զքնուին բարձունս ՚ի թոխս վարուց՝ խոտովանիմ՝ բանիս պայմանաւ, յաւէտ կտրտեալ սղորմութեանն զեղոյ:

Գ. Մահ զու. կեանք, զու. փրկութիւն, զու. բժշկութիւն, զու. անմահութիւն, զու. երանութիւն, զու. լուսաւորութիւն, արս ինչ անդորր ՚ի մեղացս աշխատութեանց՝ զի և քեզ լիցի հանգիստ ՚ի մշտադատա հեծութեանց՝ և անձրացուցիլս թախանձանաց. որ ոչ այլ իւրք, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, օրհնեալ յախտեանս. ամէն:

Միայն իւր-իւր աշխարհաբոս լարելանանա՞ծ:

Եւ որովհետեւ իմ խօսքիս ընթացքը վերջուցի՝ ստեղծուած էակներուն կարգը շեղուած առ երկրային պզտի բաներէն աւելի մեծերուն, ալ պիտի ըսեմ Մատուծոյ անաշտ իրաւանց զօրծը: Որ թէև աւելի մօտ ըլլան Մատուծոյ նահագնեաներուն պէս, որ ճմարիտ Մատուածը ամենէն առաջ ձանձքան և զուանեցին, և կամ աւելի մարութ՝ մարդարէններուն պէս, կամ աւելի անբիծ՝ առաքեալներուն պէս, կամ աւելի ընտիր՝ մարտիրոսներուն պէս, թէ որ դուն՝ որ աննուազ բարի ես և անփոփոխ ինամակալ, մարդափրկութիւն չցուցընես նէ՝ չեն կրնար անոնք մեզ փրկելու:

Այսն զի՞ թէ որ նոյն ինքն Մարտիրոս աշաղակելու ըլլամ, ինտոր որ մեծատունին առաջը ինծի կրողվեցընէ, տարութիւնէն պատպակելով, կաթիլ մը ջուր տալու կարող չէ. ինչու որ ան ալ ննիթակալ է տկարութեան անանկ բաներու մէջ՝ որ հասարակաց անձնարին է: Ինչ որ Մոսէսի աշաղակեմ, ան ալ տկարութիւնով պաշարուած է, որ չկրցաւ աղատել ան մարդը՝ որ

չարաթ օրը ելեր ապրուստի կամ պիտոյիցը համար փայտի կտորուանք կը հաւարէր : Թ՛Վէ որ Բհարօնի՝ ան ալ բարեխօսութիւն ընողի կարօտ եղաւ : Թ՛Վէ որ Գաւթի՝ ան ալ բարեբնեւորուն շատութեանը մէջ մեղադրուած է . Թ՛Վէ որ Կոյի՝ Հորի՝ և Գանիէի՝ աս բանը Եղեկիէլ մարդարէն միկնեց իրենց անունովը յիշատակելով զանոնք , ու ասիկայ ալ անոնց հետ իբր թէ Բատուծոյ կողմանէ աղջեցութիւն եղած , կենդանի՝ եմ ես՝ կըսէ Տէրը , որ դալու բարեութենէն պիտի շապրեցունեն անոնք իրենց զաւկները , բայց միայն իրենք պիտի ապրին : Թ՛Վէ որ Պետրոսի՝ հաւատոյ վէմին , ան ալ բու ինտանցդ վրայ քիւ մը կասկածելով՝ երկիւղի կըբին ենթակայ եղաւ : Գանց կընեմ՝ յիշատակել ուրիշ շատ արդարները՝ որոնք պէտպէս սկարութիւններ ունեցան : Բրոնց հետ և Հոյսա անունով մարդարէի մը մարդկօրէն զայնտեղութիւնը՝ կամ խարսիլը , իր Բտուածառայ սպասուսութեանը մէջ , շատերուն անխմանալի կըմնայ , թէ և մեկնութեամբ մը կըբնանք աս բանը հասկընալ :

Եւ ըստ որում չարիւթ որոշուեցաւ մարդիկներուն փրկութեան զօրութիւնը , և անոնք բարեբարեղ ողորմութիւն զտած երեցան , ամենակալէդ զօրացած , պաշտպանողէդ կանչուած , հմարաւորէդ քաւուած , ազատեցուցէդ ներուան տաւած , անախտականէդ բժշկուած , անապականէդ կենազօրծուած , նորոգողէդ լուսաւորուած , ասկից ետև ես ալ զիտնալով աս հոգածին բնութեանս կարողութեան չարը , որ իրենց օրինակովը մխիթարելի կըլուան յուսահատեաններուն վհատութեանը , ահա քեզի կըզիմեմ , ո՞վ Վրիտտոս՝ կենդանի Բատուծոյ որդին , օրհնեալ յամենայն ժամ : Մանաւանդ թէ աս մաղթանքին աղջակից վճիռը աս տեղա յիշելով՝ վերըդրուածներուն խօսքը վերստին կարգարացունէ . աղէկ է , երջանիկ իմաստունի մը լրածին պէ՛ Տէրօջը ձեռքը իյնալ , քան թէ մարդոց ձեռքը . վասն զի անոր մեծութեանը պէ՛ս՝ ողորմութիւնն ալ մեծ է : Եւ աս խօսքը՝ թէ և Գաւթի ըրածը կըցուցընէր , որ Բատուածային երեք պատիժները իրեն առաջարկուելուն՝ ինք իր կամբովը մահուան պատիժը ընտրեց , ինչու որ Բատուծոյ կամեցողութեամբը մեռնելով կենդանի կըլլային Վրիտտոսով յարութեան հաւատքին զօրութիւնովը , քան թէ ան երկու պատիժները՝ որոնք կըտանջեն և չեն ուղորմիր . սակայն իմ՝ խօսքս , որ կորսուած անձինս կենաց հնարք խնդրելու համար է , անյարմար չէ . վասն զի չէ թէ փրկուածները կընուստացընեմ աս ողբերգութեան մատեանին մէջը , որ առանց անոնց հնար չէ որ մեկը Տէրօջ մօտենայ , այլ փրկողին անունը կըխտաւորեմ , ու անոր շնորհքը ամենուն կըբարեհաւատեմ , ու խիստ շնորհալի մարդիկները անգամ՝ կըխտաւորանիմ աս ըսածովս , թէ շատ կարօտ եղան ողորմութեան :

Բհո դու ես կեանք , դու փրկութիւն , դու բժշկութիւն , դու անմահութիւն , դու երանութիւն , դու լուսաւորութիւն . անողորմութիւն տուր ինձի մեղացս աշխատութիւններէն , որ քեզի ալ հանգիստ ըլլայ իմ՝ հեծութեանցըս անձրացուցիւ թախանձանքէն , որ չէ թէ ուրիշ բանով՝ քան որչափ մարդիկները փրկելով կըշուարձանաս . որ օրհնեալ ես յաւիտեան . Բ՛Մն :

Սրբոյն ( ) գոստինոսի գրութիւններուն մէջն ալ շատ տեղեր կան որ կրցուցընեն թէ ( ) գոստինոս ուրիշ միջնորդ մը չէր բռներ բացի ան մէկէն՝ որ է Յիսուս Վրիստոս : Ըստ տեղ յառաջ կրբերեմք միայն “ ( ) գոստինոսի յաղագս Վրաղարին Մատուծոյ ” ըսուած գրքէն , որ երկու հասոր թարգմանուած և սպուած է Սենեարի :

ԳՐԵՐԱՌ

ԵՇԻՍԻՉԵՐԱՅՈՒՆ

Իսկ եթէ ըստ առաւել հաւանելի և ուղղատես կարծեաց՝ հարկ է ամենայն մարդոյ ՚ի մահակիրն վիճակի լինել նա և թշուառ , ինչդրեիք է ապա միջնորդ որ՝ որ ոչ մարդ ստիկ : այլ և Մատուած իցէ . որպէս զի ՚ի մահական թշուառութենէ անտի յերջանիկն անմահութիւն վերածիցէ ըրմարդիկ , զիւրն երանեօք մահականացութիւն միջնորդ արկեալ՝ որում ոչ մահականացուն լինել պարտ ինչ էր , և ոչ մեալ մահականացու : Սան զի եղև նա մահականացու՝ ոչ եթէ աստուածութեան թանին տկարանալովն : այլ զմարմնոյ տկարութիւն յիւրն ընդունելով . այլ ոչ և ՚ի մարմնի անդեկաց մահականացու , զոր և յարոյցն ՚ի մեռելոց . քանզի այն իսկ է պտուղնորա միջնորդութեանն . զի որոց ազատութեան վասն եղև միջնորդ , միկայցնն մնայցնն ՚ի յաւերժ մահու մարմնոյն : Սորին աղագաւ պարտ եղև միջնորդին ընդ մեզ և ընդ Մատուած՝ ունել զմահականացութիւն աստմանակեայ , և զերանութիւն մը ըստակայ . որպէս զի անցանելեան նըմանեցի մեռանելեացն , և մնացականան վերակենցաղեոցէ ՚ի մեռելոց : Մպա ուրեմն հրեշտակբ բարիք չկարեն միջասահման դտանիլ ընդ թշուառ մահականացու և ընդ երջանիկ անմահս . զի և ինքեանք երջանիկք են և անմահք : Իսկ հրեշտակբ

Իչ թէ որ աւելի հաւանական և ուղղատես կարծիքներուն նայելով հարկ է որ ամեն մարդ մահականացու վիճակի մէջ ըլլայ ու թշուառ , ուրեմն պէտք է փնտտել անանկ մէկ միջնորդ մը , որ չէ թէ միայն մարդ այլ Մատուած ըլլայ . որպէս զի անմահուան թշուառութենէն՝ երջանիկ անմահութեան հասցընէ մարդիկները , իր երանելի մահականացութիւնը միջնորդ ընելով , որուն ոչ մահականացու ըլլալը պարտք մըն էր և ոչ մահականացու մնալը : Սան զի անիկայ մահականացու եղաւ չէ թէ Մատուծոյ թանին տկարանալովը , այլ մարմնոյ տկարութիւնները իր վրայ ընդունելով . ու ան մարմնոյն մէջն ալ մահականացու չեղաւ , որն որ մեռելներէն ալ յարուց . քանզի բուն ասիկայ է անոր միջնորդութեանը պտուղը . որոնց ազատութեանը համար որ միջնորդ եղաւ Նէ , շինան անոր մարմնոյն յախտնական մահուանը մէջ : Սատի մեր և Մատուծոյ մէջը միջնորդ եղողին հարկ եղաւ աստմանակեայ մահականացութիւն՝ և մշտնջենաւոր երանութիւն ունենալու . որպէս զի անցաւորովը մեռողներուն նմանի , և մնայաւորովը մեռելներէն յարութիւն ատեն : Մպա ուրեմն բարի հրեշտակները չեն կրնար թշուառ մահականացուններուն և երջանիկ անմահներուն մէջ տեղք

շարք կարեն միջին գտանել, իրք զի անմահք են ընդ առաջնոցն, և թըշուառք ընդ մարդկան : Հակառակ սոցա է միջնորդն բարի, որ ընդդէմ թշուառ անմահութեան նոցա՝ կամեցաւ լինել առ ժամանակ մի մահկանացու, կարող դուր կալ մնալ երջանիկ յախտեանս : . . . . .

. . . . . Մտա ուրեմն այլ է միջնորդ շար՝ որ զբարեկամն քակէ, և այլ բարի՝ որ զթշամբն հաշտեցուցանէ . և բազում են միջնորդքն քակտիչք . վասն զի բազմութիւն որ երջանիկն է, հազորդութեամբ միայն Մատուծոյ լինի երջանիկ . և յայնրմ հազորդութենէ պակասեալ թըշուառ բազմութիւն հրեշտակացն շարաց, որ կրճիմն ՚ի ներքս անկանի յաւետ՝ քան թէ նպաստամատոյց առ երանութիւն, իւրովն բազմութեամբ խոռոյս իմն արկանէ առ ՚ի չհասանելոյ յայն ՚ի միակ երանաւետ բարի, յոր ժամանակ ունիմք ոչ բազմք՝ այլ միակ միջնորդաւ . և սա այն իսկ է, որոյ հազորդութեամբն երանելի եմք, որ է Նանն Մատուծոյ, ոչ եղականն, այլ որով ամենայնքն եղեն՝ Սակայն ոչ այնու միջնորդ է՝ որով Նանն . վասն զի ծայրագոյնս անմահն և երանելին այն Նանն՝ անջրպետեալ է գլխովին ՚ի մահկանացուաց թշուառից . այլ այնու է միջնորդ՝ որով է մարդ . դովին իսկ յայտ արարեալ թէ առ այն երանելի՝ միանգամայն և երանեցուցիչ բարի ոչ պիտոյ է ալոց միջնորդաց ՚ի խնդիր չինել, որովք կարծիցեմք ճանապարհ հասանելոյ մեզ գտանել . վասն զի երանելին և երանագործն Մատուած կցորդեալ մերում մարդկութեանս, ձեռն ետ մեզ հազորդիլ իւրում Մատուածութեանն : . . . . .

(Օգոս . յաղագս քաղաքին Մատուծոյ . Գիրք . թ . 44 . Ժէ :

գտնուիլ, ինչու որ իրենք երջանիկ ու անմահ են, իսկ շար հրեշտակները կրնան՝ մէջը գտնուիլ, առջիններուն (այսինքն բարի հրեշտակներուն) անմահութիւնը և մարդոց թշուառութիւնը ունենալուն համար : Մտոց հակառակ է ան բարի միջնորդը, որ անոնց թշուառ անմահութեանը դէմ՝ առեն մը մահկանացու ըլլալ կամեցաւ, յախտեան երջանիկ մնալու կարող ըլլալով : . . . . . Ուրեմն ուրիշ է շար միջնորդը՝ որ բարեկամները մեկզմէկ կը զլատէ, և ուրիշ՝ բարի միջնորդը՝ որ թշամբները կը հաշտեցընէ . և սա բարեկամները մեկըմէկէ զատող միջնորդները շատ են . վասն զի ան բազմութիւնը (հրեշտակաց) որ երջանիկ է, միայն Մատուծոյ հազորդութեամբ կը ըլլայ . և ան հազորդութենէն զրկուած շար հրեշտակներուն թշուառ բազմութիւնը՝ որ աւելի արդելիք կը ըլլայ մեզ տեղը քան թէ երանութեան հասնելու ձեռք տուող, իր շատութեան թեմամբ խոռոյսութիւն մը կը ձգէ, ան մեկ հատիկ երանաւետ փառքին չհասնելու համար, որուն պիտի հասնիմք չէ թէ բազմութեամբ՝ այլ մեկ միջնորդով մը միայն . և բուն անիկայ է աս՝ որուն հազորդ ըլլալով երանելի եմք, և անիկայ է Նանն Մատուծոյ, չէ թէ եղականը՝ այլ ան որով ամէն բան եղաւ : Սակայն չէ թէ Նանն ըլլալովը միջնորդ է ան . ինչու որ ծայրագոյն անմահ և երանելի Նանն՝ բոլորովին զատուած է մահկանացու թշուառներէն . հապա անով միջնորդ է որով որ մարդ է . ասով կիմացընէ թէ ան երանելի և միանգամայն երանացուցիչ բարիին վրայ պէտքը չէ ուրիշ միջնորդներ փնտրուիլ, որ կարծեմք թէ անով հասնելու ճամբան պիտի գտնեմք . որովհետեւ երանելի և երանութիւն

Մ.Ս. արդ կնիք գնեմք գրոցս, զի-  
տեւ թէ անմահքն և երջանիկք՝ զիարդ  
և անուանեցին, բայց եղականք և ա-  
բարածք, ոչ բնաւ միջնորդք են յան-  
մահականն երանութիւն վերարեւե-  
լոյ զմահականացու թշուառքս, երկու-  
քու մէք տարարեւեալս ՚ի նոցանէ :

Նշն Վիբք . զԼուխ . ի Գ .

տուօզն Ատուած , մեր մարդկային  
բնութեանք կցորդելով՝ օգնեց մեզի՝  
իր Ատուածութեանք մասնակից ըլ-  
լալու :

Արդ մենք աս զիրքը կը վերջա-  
ցունեմք՝ զիսնալու համար թէ ան-  
մահները և երջանիկները ՚ի նշ անուն  
որ ունենան անոնք, եղական և արա-  
բած ըլլալով՝ բնաւ միջնորդներ չեն  
անոնք՝ մահականացու թշուառներս  
անմահական երանութեան հասցը-  
նելու , որ երկու բոլն ալ տարբեր  
եմք անանցմէ :

Յետագայ խօսքերը Ապիտիան Ախարացիէն առած եմք .  
Հայոց և կեղեցին կընդունի ասիկայ՝ և անոր ասնախմբու-  
թիւնը Հայերը սովորաբար յունիսի 25 ին կը կատարեն և  
Հայները մայիսի 12 ին :

«Սարիաթին մարմինը սուրբ է բայց ոչ Ատուած : Այսը արգարե կոչս  
էր և պատուելի , սակայն անիկայ մեզի տրուած չէ որ երկրպագութիւն ը-  
նեմք իրեն (էնչ թՐՕՏԱՆՄԻՏԻՎ) , այլ ընդհակառակն ինքը երկրպագութիւն  
ըրաւ անոր՝ որ թէկզեւ մարմնոյ կողմանէ իրմէն ծնաւ , բայց իշաւ երկինքն  
Հօրը ծոցէն : Ասանորոյ սուրբ աւետարանը կը զգուշացընէ մեզ աս բանէն՝  
Տերոջը ըսած աս խօսքովք . «Անիկ՝ զուն իմ՝ հետս ՚ի՝ նշ բան ունիս . իմ  
առնես գեռ հասած չէ» : Տէրն մեր ուզելով որ Սուրբ Այսը կնիկէ մը  
աւելի բան մը չհամարուի , կնիկ ըսելով խօսեցաւ իր հետք , նախագու-  
շակելով երկրիս վրայ զալու հերձուածներուն և հերետիկոսութեանց վրայք ,  
որ ըլլայ թէ մարդիկ չափազանց սքանչացուին ունենալով կոյսին վրայ՝ աս  
հերետիկոսութեանս մեջ մտորին : Ես հերետիկոսութեանս բուն պատմու-  
թիւնը ծագու արժանի է , և կրնամ ըսել՝ թէ պատուական առապել մըն  
է ան : Բանզի որ Սուրբ Վիբքը երբէք ասանկ բան մը ըսած է : Ո՞ր մար-  
գարէն երբէք հրաման տուած է երկրպագութիւն մատուցանել մարդու՝ թող  
թէ կնկան մը : Ենիկայ ընտրուած անօթ մըն էր , բայց տակաւին կնիկ մըն  
էր և ասկեց աւելի բան մը չունէր իր բնութեանք կողմանէ : Սակայն իր մը-  
տացը և զգայութեանցը կողմանէ մեծ պատուոյ արժանի , սուրբերուն մար-  
միններուն պէս և ուրիշ ինչ որ կրնամ ըսել իրեն գոյութեանք համար : Ինչ-  
պէս Աղիս՝ որ իր մօրը փորէն կոչս էր և միշտ այնպէս մտաց , և երկինքը  
աւանդեցաւ ու մահ չտեսաւ , ինչպէս Հովհաննէս՝ որ Տերոջը կուրծքին վրայ  
ինկաւ և որ Հիսուս սիրեց զանիկայ , և ինչպէս սրբուհի Թեկեղին՝ ասանկ

ալ Սարիամ որ աւելի պատուարժան է ան անտեսութեանը պատճառով , որուն ինքը արժանի եղած էր :

Բայց ոչ Լղիային երկրպագութիւն մատուցանել պէտք է (προσκυνητός) թէև կենդանի է , ոչ ալ Հոփճանէսին երկրպագութիւն ընել պէտք է , թէև իր աղօթքովք ստացաւ իր զարմանալի մահը կամ լաւ եւ է ըսել իբրև շնորհք ընդունեց զանիկայ Եստուծմէ : Աւ իմեկդին , ոչ ալ սուրբերէն մեկուն երկրպագութիւն ընելու եմք , քան լիցի որ ան հին սխալմունքին մէջ իյնամք , այսինքն՝ թողուլ կենդանին (Եստուած) և պաշտել իր արարածները : Ինչու որ անոնք հնազանդեցան ու երկրպագութիւն ըրին ըստեղծուածներուն և չէ թէ Խտեղճողին : Հոփճ . ւ . 25 : Սասն զի թէ որ հրեշտակներուն երկրպագութիւն ընել պէտքը չէ , ուր կը մնայ ան որ Եննայէն ծնած է , որ Հոփճիմէն Եննային արուեցաւ , որ խոստմունքին համեմատ աղօթքով և խնդրուածքով հօրը և մօրը շնորհուեցաւ , որ մարդկային բնութենէն ամենեկին տարբերութիւն մը չունենալով՝ ամենուն պէս ծնու մարդու սերունդէն և կոնջ արգանդէն : . . . Բանդի անհնարին է որ երկրիս վրայ մէկը ծնանի մարդկային բնութենէն տարբեր բնութիւն մը ունենալով : Ինուութիւնը միայն անոր (Բրիստոսի) ընծայած է առ արտօնութիւնը : Ենիկայ արարել և ամենուն տերը ըլլալով՝ իր մարմինը առաւ մէկ կոյտէ մը՝ հոգին աննկու պէս , Եստուած երկինքէն իջնալով , Բանք Սուրբ Առյալն մարմին աննկու զգեցաւ չէ թէ անոր համար որ կոյտին երկրպագութիւն մատուցուի , չէ թէ անիկայ Եստուած մը ըլլայ , չէ թէ իր անտեսութեան մը մատուցանեմք : . . . Ինչոք Սարիամ պատիւ ունենայ , բայց Հայրը Արդին և Սուրբ Հոգին երկրպագութիւն ընողունի : (προσκυνεῖσθω) : Մեկը թող երկրպագութիւն չընէ (προσκυνεῖτω) Սարիամն :

Լզպիթան . Ընդգեմ հերետիկոսութեանց . Գիրք . 4 . “ Κατὰ Κόλλυριδιωνων τῶν τῆ Μαρια προσφερόντων ” ,

**Հոս տեղ նշանակելու արժանի կրօնականք նաև Սսկերեանին հետեւեալ մեկնութիւնը :**

Երբոր ինքը ժողովուրդին հետը կը խօսէր , մէյնալ իր մայրը և իր եղբայրները դուրսը կայներ էին՝ ու կուգէին իր հետը խօսել : Աւ մէկը իրեն ըսաւ . Ե՛հա՛ քու մայրդ և եղբայրներդ դուրսը կայներ են , ու կուգին հետդ խօսիլ : Ենիկայ իրեն ըսողին պատասխան արուա՛ւ ու ըսաւ . Ո՞վ է իմ մայրս , կամ ո՞վ են իմ եղբայրներս . Ինչ իր ձեռքը գէպ՝ ի աշակերտներուն երկընցունելով՝ ըսաւ . Ե՛հա իմ մայրս՝ և իմ եղբայրներս : Սասն զի՛ ո՞վ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ , անիկա՛ է իմ եղբայրս ու քոյրս , և մայրս : Սասն . ԺԸ . 46--49 :

“ Ինչպէս որ առաջ ըսի թէ ուր որ առաքինութիւնը կը պահուի ամեն բան անօգուտ կը ըլլայ , հոս տեղ նշանաւոր եղանակաւ մը յայտնի կը տեսնուի առ բանք : Սասն զի առաջ ըսի որ մարդկային հասակին կատարե-



որհնեալ ըլլայ աւելի ևս արկայ որհնեալ պիտի ըլլայ, վասն զի աւելի հարկաւոր է : Եւստ ուրեմն չէ թէ միայն փափարէ, հասցա մեծ փութով ան ճամբուն մէջ քայլ որ ան փափարքին վախճանին կը հասցունէ” :

Սովորեան հասար զ . երես 167 169 սպեալ  
 'ի փաբիզ' յունարէն լեզուով 1727 :

Ինթերցողին մասնաւոր ուշադրութեանը կը յանձնելիք հետեւեալ յօդուածները որ Լշպիփանու և Իրէնէոսի գործքերէն քաղած ենք : Պատմութեանը եղանակէն յայանի կըսեսնուի թէ քրիստոնէական եկեղեցիին սա նախնի Հայրերը զարմանքով և հերքելով կը խօսին ան բաներուն վրայով որ հոս անկ պատմուած են :

Լշպիփան կըսէ, “Ասորպէստեանք կոչուեցան՝ հետեւցները Պարպոկրատես հերետիկոսին որ բարձր սա գարշելի բաները կըսորփեցունէր . . . ասոնցմէ մէկը Մարկեղիմոս էր Հոռովոյ մէջ : Երկայ գաղտակ պատկերներ շինեց Յիսուս Վրիստոսի՝ Պոզոսի՝ Համբոսի և Պիւթագորոսի, և խունկ ծխեց ու երկրպագութիւն ըրաւ անոնց” : Լշպի . ւ . հաս . ւ . երես 53 :

Դարձեալ, “Ընդհետոս ասունները վերջիշեալ Մարկեղիմոս Հոռով՝ եկաւ և Ասորպէստեանի մերսը վարդապետութիւնները գործ մայթքեց, և աչալս հմտեղ շատերը ապականեց և կործանեց : Լշ . ասկեց եղաւկիցը Վնուտիկեան ընտանիքուն . անոնք գոյնզգոյն նկարած պատկերներ ունին, և անոնցմէ անոնք ալ ոսկի՛ արծաթէ և ուրիշ նիւթերէ շինուած են : Լշ . կըսեն թէ ան պատկերները Յիսուսի պատկերներն են և Պնուտայի Պիլատոսը շինել տուած է երբոր Յիսուս մարգոց հետ կըսորտէր : Բայց սա պատկերները ծածուկ կըսա՛ն : Լշ . ասոնցմէ գաս քանի մը փիլիսոփաներու պատկերներ ալ ունին, ինչպէս՝ Պիւթագորի, Պլատոսի, Երիստակէի և ուրիշներուն : Ես փիլիսոփայից պատկերներուն հետ կըզնեն Յիսուսի պատկերը և զանոնք կարգաւ շարելով՝ երկրպագութիւն կընեն անոնց և հեթանոսական խորհուրդները կըկատարեն : Վանդի սա պատկերները կանգնելով հեթանոսական արարողութիւններ կընեն անոնց առջեւ” : Լշպիզ . հաս . ւ . երես 107, 108 :

Իրթիէ սա նոյն խօսքերը կըսեսնելիք Իրէնէոսի Օմիւսնացի Պոզիկարպոսի աշակերտին, հերետիկոսութեանց դէմ գրած գործքերուն մէջը :

“Մարկեղիմոս երբոր Հոռով՝ եկաւ, սա վարդապետութիւնը սորփեցընելով Ընդհետոսին ասունները՝ շատերը կործանեց : Ընտք ինքզնինին Վնուտիկեան անուանեցին : Լշ . պատկերներ ունին անոնք նկարուած և անոնք ուրիշ նիւթերէն շինուած, որոնց համար կըսեն՝ թէ Վրիստոսի նմանութիւններն



են Պրզատուէն շինուած ան անասներ որ Հիսուս մարդոց հետն էր : Լսեալներ կրղնեն անոնց վրայ և բարձր տեղեր կրկախեն աս աշխարհիս փրկատախից պատկերներուն հետ , ինչպէս՝ Պրիթագորի , Պրզատուի , Երիստուակի և ուրիշներուն պատկերներուն հետ : Լս. անոնց բարբառքը արարողութիւններ կրղնեն հեթանոսներուն յրամին պէս” :

Իրեն . բնոյզեմ՝ հերեօրիստութեանց , երես 104 , 105 , Լատիներեն՝ արդեալ ՚ի Սենեարի 1734 :

Լս Տամաուս քաղաւածները կրկերջացունենէք հեաեաալ բացայայտ և ապացուցական զիտողութիւններովք , որ կառնենէք Լպիփանու գրուածներէն , ստեղծուածներուն երկրպագութիւն ընելու յիմարութեանը վրայ : Լպիփան կրհամարի որ Վրիստոսի երկրպագութիւն մատուցանելու իրաւունքը միայն բաւական վկայութիւն է անոր Լստուած ըլլալուն , սակից կերեայ թէ ինչպէս յայանի կրմանար աս ճշմարտութիւնը թէ միայն Լստուած կրնայ մարդոց երկրպագութիւնը ընդունել :

“Արեմն ի՞նչ շահ կուննայ արարածը . ի՞նչ սգուտ կրնայ ըլլալ անիկայ մեր աններուն փրկութեանը կամ Դանին Եստուծոյ մարդեղութեանը և կատարեալ Եստուածութեանը փառացր համար : Ի՞նչ սգուտ է զանիկայ ստեղծուած անուանելը . ստեղծուածը ի՞նչ սգուտ կրնայ ընել ստեղծուածներուն . և ինչպէս Եստուած կրնայ ստեղծել զանիկայ (Եստուած) , և երկրպագութիւն մատուցանելու համար տալ մեզի , որ ստեն կրակ : Դուն քեզի պիտի ըլինես ամեն ան բաներուն նմանութիւնը՝ որ վերը կրկրկերք կամ երկրի վրայ է , ու երկրպագութիւն պիտի ընես անոնց : Արեմն ի՞նչպէս կրնար իրեն մէկ որդի մը ստեղծել և տալ մեզի որ երկրպագութիւն ընենք անոր : Մանասնոց թէ Եստուածը կրակ , “Եստուած երկրպագութիւն ըրին արարածներուն ու չէ թէ արարչին , և ընդունայն եղան” : Հուով՝ , ան . 21 . 25 : Դանցի յիմարութիւն է ստատուածացուցանել ստեղծուածը և ան մեծ պատուիրանքին դէմ՝ մեզք է որ կրակ : Դու Տէր Եստուածոյց երկրպագութիւն ընես ու միայն անիկայ պաշտես : Վսանորոյ Եստուծոյ ստոր կեկեղեցին բնու մէկ արարածի մը երկրպագութիւն ընենք , այլ միայն ծնեալ (ու ստեղծեալ) Արդիին՝ Հորը Արդիին մէջ՝ Արդիին Հորը մէջ Հուով Արբալ՝ :

Լպիփ . ան հատար . երես 750 . սպեալ ՚ի Փարիզ 1622 :

Լս մեր քաղած վկայութիւններուն պէս ուրիշ շատեր ալ կան , բայց մենք զանանք յատաջ չքերինք հասակը՝ պաշտան բաւական սեպելով մեր նպատակին . քանզի յայանի կրցուցրնեն որ Արբոց բարեխօսութիւնը ընդունողները ու

անոնց երկրպագութիւն շնորհները ոչ միայն Վրիստոսի  
և իր աշակերտներուն սորվեցուցածներուն հետևող են ,  
այլ նաև Արևելեցոյ նախնի հայրերուն սորվեցուցածին կը  
համաձայնին , քանզի զորօրինակ՝ Ապոլիան շորթորդ գա-  
րուն գրեց իր գործերը : Ըսկէց աւելի հին գրութիւնները  
չառ քիչ են և համառօտ :

Գարձեալ նշանակելու արժանի է սրբոց և մարտիրոսաց  
Ըստուածային պատիւ մատուցանելու մոլորութեան նու-  
թիւնը : Արտեսնեմք որ շորթորդ գարուն մէջ ալ Ապոլիան  
սաստիկ կրօնիճարանի առ մոլորութեանը դէմ , որ ասկէց  
կերևայ թէ ան ատենէն առաջ մասնաւորօրէն ըլլայ եկեղեցոյ  
մէջ : Սինչև անգամ առաքելոց օրերը միակ միջնորդը  
ձգելու և անոր անզը մարդոց յուսալու առ հակամիտու-  
թիւնը զանազան եղանակներով յայտնի եղաւ : Այլ կը կը-  
սէր եւ Պաղտեսան եմ , ու մէկայր՝ թէ ես Ըպոլոսեան , և  
ուրիշը՝ թէ ես Աեփասեան , ու միւսը թէ ես Վրիստոսեան :  
Իսկ ինչ . Ի . 12 և Գ . 4 : Աեղծարարեալ խոնարհութիւ-  
նով մը հրեշտակներն ալ կրպաշտէին և կրպատուէին մէկդի  
ձգելով զՎրիստոս : Ըսոր համար էր որ Ըսաքեալը կը-  
սէ , “ հրեշտակներու կրօնքով . . . և շրանէ ան զլուսիւր  
այտնիքն Վրիստոսը ” : Ի . 18 , 19 : Ըրդ որուն հե-  
տևելու եմք , առաքեալին՝ թէ անոնց որ իր ատենը հրեշ-  
տակները կրպաշտէին , և զանոնք իրենց՝ ու Վրիստոսի մե-  
ջը միջնորդ կրթանէին : Սոլորութիւնը որքան հին ըլլայ ,  
առկալին մոլորութիւն է :

Ըս համառօտ քաղուածքները կըցուցընեն նաև թէ բո-  
լորովին անհիմն է ան խօսքերը՝ որով սրբոց և պատկերաց  
երկրպագութիւն մատուցանողները ինքզինքնին կարգարա-  
ցընեն ըսելով՝ թէ յունարէն , Փրօսպիլիսիս քաղը կրնչանակէ  
ան պատիւը և երկրպագութիւնը որ կրնայ արարածներուն  
մատուցուիլ , և Ըստրիս քաղը ան երկրպագութիւնը կը  
նշանակէ որ միայն Ըստուծոյ մատուցանելու է : Արկրորդ  
պատու իրանքը կարգիլէ առ երկու տեսակ պատիւները ըս-

տեղձուածներուն մատուցանելու , կարգիլէ Վրոսֆինիւնը ճիշդ ան նոյն եղանակովը որ կարգիլէ Աւարիան , և Ապիփան աւելի շատ տաաջին բար կը գործածէ քան թէ երկրորդը՝ երբոր նշանակել կուզէ ան պատիւը որ՝ միայն Մատուծոյ արժանի է և չէ թէ արարածներուն : Հիշեալ հուշակաւոր շօրը հետ մենք ալ կը համաձայնիմք Այս Սարիամը համարելու արժանի պատուոյ , իրբև օրհնեալ կանանց մէջ , և իրբև սուրբ մը երկինքին մէջ . նմանապէս կը միարանիմք իր հետը , թէ՛ կրօնական երկրպագութիւնը՝ թէ՛ Վրոսֆինիւն անուանենք զանիկայ թէ՛ Աւարիան , միայն Մատուծոյ մատուցուելու է , իմ շօրը՝ Արդիին ու Սուրբ շողիին , և ոչ թէ ուրիշ մէկու մը ոչ երկինքին մէջ ոչ ալ երկրի վրայ :

Վիտեմք որ շատերը աս մեր յառաջ բերած նախնի հարց գրութիւններուն դէմ պատասխանել պիտի խորհին ետքի շայրերէն և մանաւանդ մօտ ժամանակի հայրապետներէն վկայութիւններ բերելով , որպէս զի հաստատեն սրբոց միջնորդութիւնը և բարեխօսութիւնը և անոնց հետ պատկերներուն և քանդակներուն երկրպագութիւնընենը : Եւ շատ հաճելի է մեզի թէ որ աս պատասխանը տան : Ս ասն զի աս ընելովին պիտի յայտնի ցուցնեն թէ ան շայրերը կամ շայրապետները իրենց մէջ՝ և մէկը մէկու դէմ կը հակառակին : Այս վերջապէս աս անզը պիտի կայացընեն բանը թէ եկեղեցւոյ շայրերը բնաւ հեղինակութիւն մը չունին վարդապետութեան նիւթերուն վրայ , և թէ Մատուծային հեղինակութեանը անխալելի խօսքը պէտք է ձեռք առնել որ անով կարող ըլլամք որոշել հայրապետաց հակառակ կարծիքները և իմանալ թէ ո՞ր բանը ընդունելի է և ո՞րը անընդունելի :

Պ Ը Ի Պ Ե Կ

Նրբև .	տող .	Սխալ .	ուղիղ
172 .	24 .	յօժարակամու թիւնք ճամբաներք Եւն	յօժարակամու թիւնք ճամբաներովք (Ի) Եւն
173 .	29 .		
188 .	5 .		

ՔԱՐՈՁ յ

Ի՞նչ է ՎՊՐԻՍՏՈՍԻ ՄԷՉԷ, ԸՆԴԵՆԷ

Ի՞նչ որ մէկը ՎՊՐԻՍՏՈՍԻ մէջ է, անիկայ նոր ստեղծուած  
մըն է : ի Պորնթ . Ե . 17 :

ՄԵՐԴԻԿ անմեղութեան վիճակէն ինկած ու Լստուծ-  
մէ ապստամբած ըլլալով, աս բարոյական միժուծեան  
մէջը սովորաբար կերևակայեն թէ արգարներուն ու մե-  
ղաւորներուն մէջը մեծ տարբերութիւն չկայ . թէ որով-  
հետև Հիսուս ՎՊՐԻՍՏՈՍ մեռաւ՝ ու Սուրբ Հոգին եր-  
կինքէն խրկուեցաւ, մարդիկ փրկութեան շնորհքը կրնան  
վայելել առանց մէկ մեծ բարոյական փոփոխութիւն մը  
ունենալու : Իսայ Սուրբ Վիբքըր ասանկ կը վկայէ՝ «Ի՞նչ  
որ մէկը ՎՊՐԻՍՏՈՍԻ մէջ է, անիկայ նոր ստեղծուած  
մըն է . Հինը անցաւ, ու Հիմայ ամէն բան նոր եղաւ» :

Ի՞նչ կրնչանակէ աս խօսքը : Ըհտ իմ քարոզիս նպա-  
տակը ան է՝ որ աս հարցումին պատասխանը ձեզի տամ՝  
պարզ կերպով ու Սուրբ Վրոց վարդապետութեանը հա-  
մեմատ :

‘Ասի’ թէ որ մէկը Վրիստոսի մէջ է , անիկայ ‘Նոր  
Լուստում’ մը ունի :

Մարդկային հոգին անանկ ընուծիւն մը ունի՝ որ  
պարտի ունենալ Լստուած մը , ծայրագոյն սիրոյ առար-  
կայ մը : Հոգին իր բոլոր կարողութիւններուն ըսնա-  
ւոր շարժմանցը մէջ չկրնար գոյութիւն ունենալ՝ առանց  
սիրելու մէկ էակ մը ծայրագոյն սիրով : Լսիկայ Սուրբ  
Վրբին խօսքովը իր Լստուածն է . ու հոգին որպիսու-  
ծիւնը կորոշուի իր սիրած Լստուծոյն որպիսութենէն :

Մարդս Լստուծմէ չապստամբած՝ ծայրագոյն սիրով  
կըսիրէր Լէհօվան . բայց Սատանան՝ սուտերուն հայրը ,  
Լգեմական դրախտը եկաւ , ու մեր նախածնողացը ստու-  
ծեամբ ըսաւ որ եթէ Լստուծոյ արգիլած պտուղը ու-  
տեննե՛ք՝ աստուածներու պէս պիտի ըլլան : Չըսաւ թէ պը-  
տուղը ուտելով Լէհօվան պիտի փառաւորեն կամ իրենց  
սերունդին օգուտ մը ընեն . հասպա պէ՛րէն , պիտի ըս-  
ծարացունեն : Լս կերպով իրենց անձնասիրութիւնը գըր-  
գուց , որով անհնազանդ եղան Լստուծոյ . ունի ող-  
որդը ու Լիւրան : ‘Նոյնպէս Վրիստոսի մէջ չէր մար-  
դիկ ալ միշտ ինքզինքնին ծայրագոյն սիրով կըսիրեն :  
Բայց թէ որ մէկը Վրիստոսի մէջ է , անիկայ աս մասին  
‘Նոր սոբիլիտում’ մըն է : Լէ անիկայ ծայրագոյն սէր չունի  
իր անձին վրայ , հասպա Լէհօվային վրայ : Լէ ինքը ան  
նոյն Լստուածը ունի՝ որն որ Լգամ իր ապստամբութե-  
նէն առաջ ունէր : ‘Ակատէ’ թէ ինչպէս փոխուեցաւ  
մարդը՝ երբոր ապստամբեցաւ : Լաջ Լէհօվան կըսի-  
րէր ծայրագոյն սիրով , բայց ետքը՝ իր անձը սիրեց :  
‘Ակատէ’ թէ ինչպէս կրտխտուի մարդ՝ երբոր նոր ստեղ-  
ծուած կըլլայ : Լաջ իր անձը կըսիրէ ծայրագոյն սի-  
րով , բայց ետքը՝ Լէհօվան : Նիրաւի՛ մեծ փոփոխու-  
ծիւն մըն է աս . ծայրագոյն սիրով արարածը սիրելէն՝  
ծայրագոյն սիրով Լգարիչը սիրելու կրփոխուի . նոր Լս-  
ւած մը կունենայ :

Երբորդ . Եւր առարկայն ին հետամուտ իւրաց :

Սարգիսյին գործողութեան առաջին սկզբանքը ան է որ ամեն մարդ իր Մատուածը հաճեցունել կուզէ : Ըն մարդը՝ որ Վրիստոսի մէջ է , իր Մատուածը փոխած ըլլալով , ՚ի հարկէ իր հետամուտ ըլլալու առարկան ալ կրիօխէ : Ըսաջ իր նպատակը իր անձը բարձրացունել ու հաճեցունել էր , բայց հիմայ իր նպատակը Եւհօփան փառաւորել ու հաճեցունել է : Արնայ ան մարդը նոյն աշխարհային գործողութեանը մէջ մնալ ուր որ առաջ էր , թէ որ օրինաւոր գործողութիւն մըն է ան . ու կրնայ նոյն բաներուն շատերը իր ձեռքովը կատարել՝ որոնք որ առաջ կրնէր : Բայց իր մտայը մէջ բոլորովին տարբեր առարկայ մը ունի . ո՛չ իրեն փառաւորութիւնը՝ այլ Մատուածոյ փառաւորութիւնը , ու ընկերին հոգևոր և յաւաննական երջանկութիւնը : Մատուած որ հրամայեց խաւարէն լոյս ծագել , անոր սրտին մէջը ծագեց , ու Մատուածոյ փառքին գիտութեան լոյսը անոր տուաւ Յիսուս Վրիստոսի գիմացը : Ի Արնի . 7 . 6 : Ըլ անիկայ իրը չէ , հասցա ըծախու անուած է . ու իր զգացումները իր պարտաւորութեանը համեմատ են , կուզէ փառաւորել զՄատուած մարմինով ու հոգիով որ իրենն են : Թէ որ ուտէ՝ և թէ որ խմէ , և թէ ինչ որ ընէ , իր մեծ և զխաւոր առարկան է ամեն բան ՚ի փառս Մատուածոյ ընել :

Ս անորոյ՝

Վարձեալ՝ միայն Մատուածային անձն մը և ոչ ուրիշ մէկը բաւական էր չարչարանաց ան հիանալի ծանրութիւնը կրել որ հարկաւոր էր մեր քաւութեանը համար : Ըն բարկութիւնը որ Մատուծոյ հաւաստրին վրայ թափեցաւ՝ անոր վրայ որ իր ընկերն էր, (Օւռ. ԺԳ. 7.) թէ որ ստեղծուածներուն ամենէն զօրաւորին վրայ գալու ըլլար, անյատակ անդունը պիտի ընկղմէր զանիկայ : Հիսուս Վրիստոսի անձին մէջ Մատուածութիւնը մարդկութեան հետ միաւորուած ըլլալովը կարող եղաւ Տէրն մեր ան չարչարանքը՝ կրելու, եթէ ո՛չ տիեզերքին մէջ մէկ ստեղծուած մը չէր կրնար մեզի համար ան նեղութիւնները կրելու : Ըսկէց զատ՝ զիցուք թէ մէկ ստեղծուած էակ մը կարող ըլլար մեր չարչարանքը կրելու, բայց ինքը հունաւոր ըլլալով՝ իր չարչարանաց արժողութիւնն ալ չափ մը պիտի ունենար . քանզի չարչարուողին աստիճանին համեմատ արժանաւորութիւն պիտի ունենային անոնք, և աս պատճառով հունաւոր պիտի ըլլային, բաւական գերազանցութիւն մը չունենալով ընդհանուր տիեզերքի անվախճան Առաւվարին մեծվայելչութեանը և օրինացը դէմ գործուած մեղքին համար քաւութիւն ընելու : Անշուք անհնարին վատթարութիւնը պիտի չյայտնէին : Մատուածային Վրդարութեանը հաւասար փոխարէն մը պիտի չըլլային . վասն զի անոնք նոյնը պիտի չհամարուէին իբր թէ յանցաւոր անձինք իրօք կրած ըլլային ան չարչարանքները . որ աս բանս միշտ կատարեալ քաւութեան՝ հարկաւոր է : Արեմն որո՞ն վրայ դնելու եմք մեր յոյսը : Աչինչ տեղը կըղարձուենմք մեր աչքերը աս ընդարձակ տիեզերքիս մէջ . միայն՝ պարտիմք նայիլ Մատուածորդին, ան մի միայն միջնորդին՝ որ է Հիսուս Վրիստոս «Մեր Արդիւն Հիսուսի արիւնը մեզ ամէն մեղքե-

րէն կը սրբէ” : Ի՞նչ, Ի՞նչ, Ի՞նչ : Ի՞նչ չարչարանքները անհուն արժանաւորութիւն ունեցան իր անձին անիմանալի մեծութեամբը : Ի՞նչ, եթէ ինքը Մտուածորդին չըլար, ի՞նչ անյոյս պիտի ըլլար մեր վիճակը : Եւ այդ գոհութիւն Մտուածոյ, մեր փրկութիւնը կատարուած է . լսեցէ՛ք դուք ո՛վ երկինք, և դուք ո՛վ կորըստական որդիք մարդկան . “Ենոր Որդիին Հիսուսի արիւնը մեզ ամէն մեղքերէն կը սրբէ” :

Ղարձեալ՝ միջնորդութեան գործին կատարեալ ըլլալուն համար հարկաւոր էր որ մեր քահանայապետը բուն աստուածային ըլլայ : Եւ անզի իր ժողովուրդին աղօթքները՝ իր միջնորդութեան խնկով ծխելով իր Զօրը ներկայացունելու համար, պէտք էր իրեն երկրիս ամէն կողմէն միւսնոյն ատեն իրեն մատուցուած հաղարարութիւնները լսել : Եւ մանապէս անոնց բոլոր կարօտութիւնները լեցունելու համար՝ կատարելապէս պէտք էր իրեն գիտնալ անոնց ամէն մէկուն զանազան տեսակ պիտոյքները, և կարող ըլլալ միւսնոյն վայրկեանին իւրաքանչիւր անձին հասնելու և պէտք եղածը տալու : Եւ շուշտ բնաւ մէկը կարող չէ ընել աս բանը, այլ միայն ան Մենագէտը որ միւսնոյն վայրկեանի կարող է ամբողջ և անշփոթ մտօք նկատել ամէն էակները և բաները, իր աթոռին քով խիստ մօտ եղող հրեշտակէն մինչև ան ամենափոքրիկ միջատները որ խոշորացոյցով չեն նշմարուիր, և ամէն պատահմունքներէ՝ աշխարհի մը ստեղծուելէն կամ կործանուելէն մինչև մեր իւրաքանչիւրին գլխու մազերուն մէկին իյնալը : Ո՞վ որ ստեղծուած մը երկինքին մէջ իրեն բարեխօս կը համարի, գիտցած ըլլայ որ աս ընելով՝ կը յանդգնի Մտուածութեան անհաղորդական կատարելութիւններուն մէկը ստեղծուածի մը տալու : Ո՞վ որ ստեղծուածի մը բարեխօսութեանը կը վստահի՝ գիտցած ըլլայ որ հոգեկորուստ մոլորութեան մէջ է :

Չորրորդ՝ Պէտք էր մեզի անանկ մէկ քահանայապետ

մը որ յաւիտեան կենդանի մնար և անանցանելի քահանայութիւն ունենար : Լքր. է. 24, 25 : Ըսիկայ հարկաւոր է իր քահանայութեան կատարելութեանը և մեր կարօտութեանցը հաւասարութեանը : Վրիստոս քահանայ է Սելքիսեզեկի կարգին պէս, որուն համար ըսուած է թէ ոչ հայր ունէր՝ ոչ մայր և ոչ աղգահամար, և թէ ոչ օրերու սկիզբ՝ ոչ ալ կեանքի վերջ ունենալով կայ ու կըմնայ միշտ քահանայ : Տե՛ս. Լքր. է. 3 : Ըրդարև Սելքիսեզեկ ուրիշ մարդոց պէս ծնունդ՝ կեանք և մահ ունեցաւ, և աղգահամար ալ ունէր, որ անտարակոյս իր ժամանակակիցները գիտէին, բայց պատմութեան մէջ չպահուեցաւ : Խակ իր պաշտօնին նայելով՝ ինքը առանց հօր առանց մօր էր, և իր կենացը բոլոր ընթացքին մէջ շարունակ կատարեց ան պաշտօնը : Ըյսպէս կրտարբերէր անիկայ Ըհարօնեան քահանաներէն որ յաջորդութեամբ կընդունէին իրենց պաշտօնը, որ ան յաջորդը մինչև երեսուն տարու Վրլար՝ պաշտօնին մէջ չէր կրնար մտնել, և մեռնելուն պէս ուրիշին կը յանձնուէր անիկայ : Վրիստոս նախորդ չունենալով Սելքիսեզեկին պէս եղաւ : Ըհարօն և իր զաւկըները Վրիստոսի նախորդները չէին, այլ միայն անոր օրինակներն էին. քանզի Վրիստոս Ըստուծոյ յատուկ հրամանովը քահանայութեան որոշուած ընտանիքէն չէր. «որովհետև յայտնի է որ Հուդային ցեղէն առաջ եկաւ մեր Տէրը, որ ան ցեղին վրայով Սովսէս բան մը չըրուեց քահանայից համար» : Լքր. է. 14 : Ըրդ Վրիստոս ինտոր որ նախորդ չունէր, անանկ ալ յաջորդ չունի իր պաշտօնին մէջ. դեռ կը վարէ զանիկայ : Հին ( )րէնքին ատենը «քահանաները շատ էին, իրենց միշտ մնալուն՝ մահը արգելք ըլլալուն համար, բայց ասիկայ յաւիտեան կենալուն համար անանցանելի ունի քահանայութիւնը» : Լքր. է. 23, 24 : Եւ ինչպէս որ արդէն տեսանք՝ Վրիստոս չէ թէ պատարագը միշտ կը կրկնուի, քանզի ասիկայ միայն մէկ անգամ մը մատուց, այլ



պաշտօնին մէկալ մասը յի՛ միջնորդութիւնը՝ շարունակ կրկատարէ : Վրիստոս ոչ մէկու մը կուտայ իր պաշտօնը , և ոչ մէկու մը հետ կրբաժնէ զանիկայ . ինքն է իր եկեղեցիին մի միայն քահանան . յատկապէս խօսելով հիմա քահանաներ չկան երկրիս վրայ . աւետարանի պաշտօնեաները քահանայ չեն . անոնք քահանայական պաշտօնը կատարելու բան մը չունին . ոչ զո՛հ ունին մատուցանելու՝ ոչ ալ կրնան բարեխօսութիւն ընել՝ բռնի յատուկ և ճիշտ նշանակութեամբը : Վոր կտակարանին մէջ շատ անուններ ունին աւետարանի պաշտօնեաները , իրենց պաշտօնին զանազան մասերուն համեմատ . բայց բնաւ մէկ տեղ մը քահանայ անունը տրուած չէ իրենց , և պատճառը յայտնի է . քանզի անոնք քահանայական պաշտօնի վերաբերեալ գործ մը չունին : Վրդարե Պետրոս առաքեալ բոլոր քրիստոնեաները «անարատ քահանայութիւն» մը կանուանէ , բայց ասիկայ անոնց աղօթքի և գոհութեան հոգևոր պատարագներուն համար է , որ Մատուծոյ կրմատուցանեն Հիսուս Վրիստոսի ձեռօքը : Տ՛ւ . ւ ՊԷ . ք . 5 , 9 : Ուստի Վրիստոնէական տնտեսութեանը մէջ , Վրիստոսէն զատ ուրիշ քահանայ չկայ . իր կատարեալ և մէկ անգամ մը մատուցած պատարագէն զատ ուրիշ պատարագ չկայ . իր միշտ ընդունելի բարեխօսութենէն զատ ուրիշ բարեխօսութիւն չկայ : Վրիստոս յաւիտեան «կենդանի» է և «անանցանելի քահանայութիւն ունի» : «Ուստի ( ինքը և միայն ինքը ) բոլորովին կենդանի ալ ընելու կարող է անոնք որ իրմով Մատուծոյ կուգան» : ՆԷր . Է . 25 : Ինքը պատրաստ է միշտ ողորմելու անոնց որ կուզեն միայն իրմով Մատուծոյ մօտենալու . անոնց համար պէտք եղած օրհնութիւնները կըստանայ ու բոլոր իրեն յուսացողներուն փրկիչը կըլլայ : Մնպատմելի կարեկցութեամբ և հաւատարմութեամբ կըսէ . «Ո՛վ երկրի բոլոր ծայրերը , ինձի դարձէք և փրկուեցէք» : ( Նսոյ . խն . 22 , ) և խոստմունք կընէ մեզի . «Վա իմ անունովս ինչ որ խնդրէք նէ» ( Ը-

սեւ է որ ձեր խնդրածը թէ Մատուծոյ փառացը և թէ ձեր բարութեանը համար ըլլայ) “անիկայ պիտի կատարեմ” : Զով. Ժ. 3 :

Եւ զիտք էր մեզի անանկ քահանայապետ մը որ կարող ըլլայինք իրեն զիմելու , հաստատ գիտնալով թէ մեր ամէն փորձութիւններուն՝ ցաւերուն և նեղութիւններուն մէջ մեզի հետ կարեկից է : Հարկ էր Վրիստոսի մարդ ըլլալ որ կարող ըլլայ քառութիւն ընել ան նոյն մարդկային բնութեամբը՝ որն որ մեղքի ենթակայ եղաւ : Վաւ հարկ էր իրեն մարդ ըլլալ որ կարող ըլլայ մեզի հետ եղբայրական կարեկցութիւն ունենալ : Հրէից քահանայապետը եղբայր էր անոնց՝ որոնց համար որ ինքը ան պաշտօնը կը կատարէր : Վանդի ինքն ալ անոնց պէս “տկարութիւնով պաշարուած” ըլլալով , կրնար “չարչարուիլ անոնց հետ , որ տգէտ ու մոլորեալ են” : Եբր. Ե. 2 : Սննք մեղաւորներս կարօտ եմք կարեկցութեան , և մէկ մեծ հակամիտութիւն մը կայ մեր մէջը պէտք չեղած տեղէն աս կարեկցութիւնը փնտռելու : Ուստի ասկէց կը ծագի մեր՝ քահանայապետին կարեկցութեանը վրայ աներկբայ վստահութիւն մը ունենալնուս ան մեծ հարկաւորութիւնը : Երբոր միայն իր Մատուածային բնութեանը և փառքերուն վրայ կրմտածեմք , բնականաբար սյնպէս գերագոյն և այնպէս հեռու կերեւայ մեզմէ , որ յանդգնութիւն կը թուի մեզի մօտենալու իրեն ան յուսովը՝ թէ մեր սրտին պահանջած ամէն կարեկցութիւնները պիտի ընդունինք իրմէն : Եւ այց շնորհուած է մեզի մէկ ուրիշ և առաւել հաճելի երևոյթով մը իրեն նայելու : Ինքը որ ճշմարիտ Մատուած է , ճշմարիտ մարդ ալ է . ինքը ամօթ չսեպեր իրեն եղբայր կանչել զմեզ : Եբր. Ժ. 11 : Ինքը մեր եղբայրն է , “ոսկր մեր ոսկրներէն , և մարմին մեր մարմինէն” : Ինքը կարող է մեր բոլոր զգայութեանցը կարեկից ըլլալ , և բոլոր նեղութեանցը բաժանորդ ըլլալ . բուն իր անձին փորձառութեամբը գիտէ թէ ինչ է փորձուիլը ,

տառապիլը և չարչարիլը : Իր իրայ առաւ մեր բնութիւնը բոլոր մեր տկարութիւններովը մէկտեղ՝ քաղի մեղքէն, և յանձնառու եղաւ ցաւալի կենսք մը վարելու, ծաղր ըլլալու, ապտակուելու և նախատուելու, և չար մարդոցմէ հալածուելու, մեր հոգիներուն ան մեծ թշնամիին յարձակմունքները կրելու, Հօրը երեսէն ծածկուած մեռնելու, մէկ խօսքով՝ մարդկային կենաց պատահելու բոլոր թշուառութիւնները կրելու, որ կատարելագէտ կարողանայ մեզի կարեկից քահանայապետ ըլլալու ամէն կերպով և ամէն իժիբ : «Ստի որովհետեւ», կրէ առաքեալը, «ըսակները արիւնին ու մարմինին հաղորդեղան, ինքն ալ մերձաւորութիւնովը անոնց հետ կցուեցաւ. որ իր մահովը փձացունէ անիկայ՝ որ մահուան իշխանութիւնը ունէր, քիչ՝ Ստանան, և խալըսէ անոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան մէջ ինկած էին . . . Վանզի բնաւ հրեշտակներուն ձեռք չըսնէր, հապա Մըրահամի զակին ձեռք կըրունէ : Ընոր համար ալ պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որ ինքը ոչորմած ըլլայ՝ ու հաւատարիմ քահանայապետ Մտուծոյ կողմէն, ժողովուրդին մեղքերը քաւելու համար : Ինչու որ ինչ բանով ինքը չարչարուեցաւ նէ՛ փորձը առնելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ» : ԱԷր. Ի. 14—18 : «Ստի ան մեծ քահանայապետը որ ունիմք մենք՝ երկինքը անցած, Նիսուօր՝ Մտուծոյ Սրբին, ամուր բունենք մեր զաւանութիւնը : Ինչու որ չէ թէ քահանայապետ մը ունիմք որ կարող չըլլայ մեր տկարութեանը հետ մէկտեղ չարչարուիլ, հապա ինքը ամէն կերպով փորձը առած է Բոլէ նման Բոյց առանց մեղքի : Ստի ալ համարձակութիւնով մտանանք անոր շնորհացը ակտոսին առջևը. որ ոչորմութիւն ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատենը օգնելու» : ԱԷր. Դ. 14—16 : Ըսանկ մէկ քահանայապետի մը ձեռք կրնամք երթալ հոն՝ շնորհաց ակտոսին առջևը :

Սէջ տեղէն բաժանող վարագոյրը երկուք ճշքուած ըլլալով Սրբութեանց ճանապարհը յայտնի եղաւ, և հիմա բաց է ամէնուն : Ստեփ. իէ. 51 : Աբր. թ. 8 : «Սուտի եղբայրներ՝ համարձակութիւն ունիմք սուրբ տեղը մտնելու Հիսուսի արիւնովը . ան նոր ու կենդանի ճամբովը՝ որն որ բացաւ մեզի վարագուրին ձեռքովը՝ սյսինքն իր մարմինովը . և մեծ քահանայ մը «նէշուովը՝ Աստուծոյ տանը վրայ, մօտենանք ճշմարիտ սրտով՝ լեցուն հաւատքով, սիրտերնիս չար խիղճերէն լուանալով, ու մարմիննիս սուրբ ջրով լուանալով» : Աբր. Ժ. 19—22 :

Ա երջապէս՝ սիրելի՛ եղբարք, նայեցէք մեր դաւանութեանը Վաքեալին ու Վահանայապետին՝ Հիսուս Վերիստոսի ( Աբր. Ժ. 1. ), և ջանացէք Սուրբ Գրոց խօսքերուն համեմատ՝ գողափար ունենալ իր վրայ : Ազնիւ Ռերիացուոց պէս՝ ( Գաղ. Ժ. 11 ) քննեցէք զիրքերը որ տեսնէք թէ իր վրայովը մեր ըսած բաները ասանկ են : Տանացէք որ իրեն կարօտ ըլլանիդ զգաք, ձեր մեղքերը միտքերնիդ բերէք . Գողգոթայի պատարագովը սորվեցէք ձեր մեղքին սաստիկ վատթարութիւնը և Աստուծոյ ահեղ սրբութիւնը և արդարութիւնը : Սի՛ անարգէք աս պատարագը, վասն զի ան որ ասիկայ կանարգէ, «ալ անկէ ետեւ մեղքերու համար պատարագ չկայ . հապա մէկ զարհուրելի սպասել մը դատաստանին ու բարկութեան կըրակին, որ պիտի լափէ հակառակորդները» : «Գիտտ վախնալու բան է կենդանի Աստուծոյ ձեռքը կ'յնալը» . ան Աստուծոյ՝ որ առանց Վերիստոսի, «մաշող կրակ է» : Աբր. Ժ. 26, 27, 31 : Ժբ. 29 : Սնտի յուսով մի՛ խաբէք անձերնիդ, թէ ան Վերիստոսի կատարած պատարագը ձեզ պիտի փրկէ, որ ատեն դուք սյնպէս հաւատքով ընդունած էք անիկայ որ «մարբէ ձեզ մեղքէն և սրբէ ձեր խղճմըտանքը ան մեռած գործքերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու» : Աբր. թ. 14 : Վերիստոս մեղքի պաշտօնեայ է, բայց իր ժողովուրդին իրենց մեղքերէն փրկողն է : Գաղ.

ք. 17 : Սաղմ. 17 : Եւթէ ասանկ կընդունիք զինքը ,  
 ձեզի ասանկ փրկիչ մը ըլլալուն իր բաւականութեանը վը-  
 բայ մի՛ երկբայիք : Սի՛ տարակուսիք իր կարող և պատ-  
 րաստ ըլլալուն “բոլորովին կենդանի ընելու ամէն անոնք  
 որ իրմով Լստուծոյ կուգան” : Իր արիւնը անսպառելի զօ-  
 րութիւն ունի . բաւական է բոլոր աշխարհի փրկութեանը  
 համար : Արչափ մեծ և դատապարտութեան արժանի ըլ-  
 լայ ձեր մեղքը , ան արիւնովը կրնաք թողութիւն ստանալ ,  
 և խաղաղութիւն ունենալ Լստուծոյ հետ՝ որ Վրիստո-  
 սի ձեռքովը մեղաւորները իրեն հետ կըհաշտեցունէ : ք Սա-  
 ղմ. 17 : Լստուծոյ հետ ուրեմն՝ հաւատքով ամ՞որ բունեցէք  
 ան յոյսը որ ձեր առջևը կըկենայ . ապաւինեցէք ան քա-  
 ւութեանը որ Լստուած ընդունած է , և որ անով թողու-  
 թիւն և յաւիտենական կեանք ձրիապէս կըմատուցուի  
 մեղաւորաց գլուխին : Ինչ պակասութիւն կայ Վրիստո-  
 սի բարեխօսութեանը մէջ որ դուք ուրիշ բարեխօսներու  
 կըդիմէք : Ինչո՞ւ ուղղակի անոր չէք երթար : Տակաւին  
 կուզէ՞ք պատճառել թէ դուք այնպէս նուաստ և անարգ  
 էք , և անիկայ այնպէս մեծ է և փառաւոր , որ չէք համար-  
 ձակիր անմիջապէս և ուղղակի անոր երթալու : Ահ , աս ը-  
 նելովնիդ անարգանք մի՛ բերէք իր փառացը վրայ : Չէ՞ որ  
 ինքը կըսէ , “Ինձի եկէք” ( Սաղմ. 17 : 28 . ) և “ան որ ին-  
 ձի կուգայ դուրս չեմ հաներ” : Յով. 17 : 37 : Իր երկրիս  
 վըայ եղած ատենը , ո՞ր խեղճ և ողորմելի արարածը գը-  
 նաց իրեն , և ընդունուեցաւ : Ինչ կըսէք , արդեօք հարկ  
 էր ան ատենի մեղաւորներուն միջնորդ ունենալ , որ անով  
 մօտենան Վրիստոսի և ընդունելի ըլլան : Ըրդ ինչպէս  
 որ անատենը անանկալ հիմա ան նոյն ողորմած փրկիչն է  
 Լս կրնամք ապահով ըլլալ թէ ինքը անանկ մեզ պիտի  
 ընդունի հիմա , ճիշտ ինտոր որ յանցանաց և արտմու-  
 թեան որդիքը ընդունեց՝ իր երկրիս վրայ եղած ատենը :  
 Ար՞ուն կարեկցութեան աղիքները ՚ի գութ պիտի շարժի  
 մեր վրայ , եթէ ոչ իրենը : Ավ կըսիրէ մեզ , եթէ ոչ ին-

քը , որուն ինքնաշարժ սէրը երկինքէն վար իջեցուց զինքը իր սրտին արիւնը թափելու մեղի համար : ՄՏ , թէ որ ընդհանուր տիեզերքին մէջը պարունակուած բոլոր ըստեղծուած էակներուն գութը և կարեկցութիւնը մէկու մը ծոցին մէջը հաւաքուէին , անգթութիւն և շարութիւն պիտի ըլլար ան կարեկցութեանը և սիրոյն անհուն խորութեանը հետ բաղդատուելով՝ որն որ մեր Վահանայապետին կուրծքին մէջն է : Տեսէք ան Փրկիչը որ ձեզի համար կը տագնապի պարտէզին մէջ և խաչին վրայ : Վսեցէ՛ք իրեն որ քաւութեանը կը հրաւիրէ զձեզ , ըսելով «Նկէ՛ք ինձի , որ իզմով երանելի ըլլաք յաւիտեան» : Մի՛ վորհնեալ Փրկիչ , պիտի լսեմք քու ձայնդ և դուն պիտի ըլլաս մեր բոլոր վստահութիւնը և բոլոր մեր ուղածը սա աշխարհիս մէջ և յաւիտեանս . Մէն :

1

Որչափ արիւն որ թափուեցաւ  
 Հրեական հին զոհերէն,  
 Մեզքը մաքրել կարող չեղաւ  
 Կամ ազատել ըզմարդ խիղճէն:

2

Սխայն Վրիտառս Վառն Ըստուծոյ  
 Որ յանձն առաւ ըզմահ անպարտ,  
 Մեզ կըսորէ մեղաց յաշտոյ  
 Պատարագաւն անհամեմատ:

3

Տէր, հաւատքով թող նայիմ ես  
 Ե՛մ քաւչական պատարագին,  
 Ե՛րբ հեռացած իմ մեղքերէս  
 Երջջանամ յոյժ լալագին:

4

Ո՛վ իմ հոգիս դարձիր ու տե՛ս  
 Ըստուածորդին խաչէն կախուած,  
 Վեղի համար չարի մը պէս,  
 Վու մեղքերովըդ տանջուած:

5

Ճկէ՛ք փառք տանք ուրախ ձայնով  
 Ե՛ն Վառնուկին որ մեզ սիրեց,  
 Իր փրկարար սէրն երգելով  
 Որ անէծքէն մեզ ազատեց:

## 1

Մզէկ հասկըցիր առ խորին խօսքը,  
 Թնէ քու փրկիչը և զէրբիդ բժշկիչը.  
 «Ե՛կ բնձ տուր սիրտըդ» կըսէ Հիսուսը,  
 Են մեղաւորաց մեծ բարեկամը :

## 2

Խու՛ն գերի էիր շղթադ կտարեցի,  
 Դու հիւանդ էիր քեզ բժշկեցի.  
 Դու մոլորեցար ճամբայ ցըցուցի,  
 Անբնայակս կուրցար աչքիդ լոյս տուի :

## 3

Որդեսեր գթած մօրմէ աւելի,  
 Օքքեզ կընայիմ դու թ ունիմ քեզի.  
 Ո՛վ որ իր յոյսը կըդնէ բնձի,  
 Ե, մէն բան կուտամ, շեմ մտունար զանի :

## 4

Որդե՛ակիմ՝ առ քեզ սերս անմահն է,  
 Ենգեղ ջ և աննենգ հաւատարիմ է.  
 Խիստ բարձրագագաթ լեռներէն բարձր է,  
 Խորին անդունդէն խիստ շատ խորունկ է :

## 5

Թող որ սրտիդ մէջ աղցէ շնորհքը,  
 Դէմ առ դէմ տեսնես բարի Եստուածը.  
 Ու թ ազաւորես Տիրոջդ քովը,  
 Ո՛վ խեղճ չե՛ս սիրեր բնձի պէս Տէրը՞ :

## 6

Ո՛վ բարի Հիսուս՝ այո՛ կըսիրեմ,  
 Ու դուն ալ գիտես որ շփրող չեմ.  
 Եսլ շատ կըցաւիմ որ սերս տկար է,  
 Հօօր օգնութեամբդ ե՛կ բնձի օգնէ :





## ՔԵՐՈՉ, ԺԻ

### ՍՐՏՈՍ, ԵՐԿՐՊԵՊՈՒԹԻԻՆ

Սեղծաւորներ՝ ազէկ մարդարեւութիւն ըբաւ ձեր վրայ Եսային՝ ու ըսաւ .  
Ըս ժողովուրդս՝ միայն պոկունքներովը զիս կըզատուէ . և իրենց սրտերը  
հեռացած զատուած են իզմէ : Ստոթ . ԺԵ . 7 , 8 :

ՄԵՐԿՆԵՅՅԻՆ սրտին չարութիւնը՝ յայտնի ընող ամենէն  
մեծ ապացոյցը՝ ան ընդհանուր յօժարութիւնն է որ մարդիկ  
ունին կրօնքը փոխելու և ապականելու , քի՛ն ամենալաւ բա-  
նը ամենագէշի դարձունելու : Աշխարհիս սկիզբը՝ մարդիկ  
միայն մէկ Աստուած մը կըզաւանէին և կըպաշտէին , և ան  
պաշտօնը կըմատուցանէին ան մէկ ընդունելի եղանակովը՝  
որն որնոյն ինքն Աստուած սահմաններ էր : Ի՛նչ մեծ յան-  
դրգնութիւն էր որ մարդ Աստուծոյ սահմանագրած եր-  
կրրպագութեան եղանակը փոխէ կամ անոր մէջ նորաձե-  
ւութիւն մտցունէ : Մարդս՝ որ իր Արարչին ձեռքը՝ բը-  
րուտի ձեռքին մէջը եղած ցեխին պէս է , որ իր անհնա-  
զանդութեամբը՝ Վրախտէն արտաքսուած և յաւիտենա-  
կան թշուառութեան վիճակեալ է , որ իր գանուած ան  
վիճակէն ազատուիլը գլխովին Աստուծոյ ձրի ողորմութե-  
նէն կախեալ է , կըյանդգնի իր Արարչին ցուցնելու ոչ  
միայն ան ազատութեանը միջոցները , այլ նաև ան ե-

ղանակը՝ որով պիտի խոստովանի իր Արարչին իշխանութիւնը . այսինքն՝ կուզէ որ ինքը հնարէ իր փրկութեան ճամբան և ինքը կազմէ Աստուծոյ՝ իր երկրպագութիւնը մատուցանելուն ձևերը և արարողութիւնները :

Աստուածային պաշտօնին մէջ առաջին նորաձևութիւն մտցունողը Ասյէն էր : Ինքը համարձակեցաւ Ամենաբարձրեալին առջևը գալու անանկ մէկ ընծայով մը՝ որն որ ինքը աւելի յարմար կարծեց կամ որն որ դուցէ աւելի դիւրին եկաւ իրեն քան թէ ան որ Աստուած սահմաններ էր և կընդունէր : Ուստի իր մատուցած պատարագը կամ ընծան ընդունելի չեղաւ , և իր հպարտութիւնը յանդիմանուեցաւ : Այսպէս ընդհանուր տիեզերաց Տէրը՝ աշխարհի սկիզբէն բողոքել սկսաւ աս բանին դէմ , և անարգել ան ամէն հնարքները՝ որ մարդիկ ՚ի գործ կրդնեն սկիզբէն իրենց արուած կրօնական պաշտամունքի եղանակին մէջ փոփոխութիւններ մտցունելու կամ ուղած բաներնին աւելցունելու : Բայց մարդիկ Ասյէնի եղածին վրայ բոլորովին անհոգ ըլլալով՝ օրըստօրէ յառաջ գացին աւելի նորութիւններ և կերպ կերպ ձևեր մտցուցին կրօնքի մէջ , մինչև որ Աստուծոյ պատուիրանքները բանի տեղ չդրնելով , անոնց տեղը բուն իրենց հնարած վարդապետութիւնները և դաւանութիւնները բռնեցին , և ոչ միայն այսչափ այլ նաև շատերը նոյն ինքն ճշմարիտ Աստուածը մէկդի թողուցին , և իր տեղը մարդոց երևակոյութենէն հնարուած աստուածները պաշտեցին : Ընդհանրապէս «Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին , հնաղանդեցան ու երկրպագութիւն ըրին աստղածներուն և չէ թէ Ստեղծողն . ան որ յախտեան օրհնեալ է՝ : Լուսնի . ան . 25 : Մարդկային սրտին աս հաստատուն հակամիտութիւնը՝ ճշմարիտ կրօնքը եղծանելու և մոլորութեան մէջ իյնալու , կըծագի մարդոց Աստուածային կամացը հետ միարանութիւն չունենալէն : Վանդի թէ որ մարդիկ սիրէին Աստուծոյ պատուէրները և յայտնած վարդապետու-

թիւնները , ամենեին չէին ուզեր անոնց տեղը բուն իրենց հնարածները փոխարկելու . նմանապէս թէ որ իրենց հաճելի ըլլար ճշմարտին Մատուցոյ բնութիւնը՝ բընաւ երբէք ուրիշ աստուածներ փնտռելու չէին հետեւեր :

Աստի մարդիկ աս ապականեալ վիճակին մէջն ըլլալով թէ որ Մատուած իր շնորհօքը չպահպանէ մէկ ազգ մը , անոնք միշտ աս հետեւեալ չորս ճամբաներուն մէկը պիտի բռնեն . կամ յայտնի կռապաշտութեան մէջ պիտի իյնան . կամ ճշմարիտ կրօնքի ձևը և դաւանութիւնը ունենալով՝ անոր հոգին և զօրութիւնը պիտի կորսնցունեն , որ այսպէս ձևը և դաւանութիւնը ոչինչ կը լնան . կամ Մատուածային և մարդկային վարդապետութիւնները մէկտեղ խառնելով , իրենց մէկ զբոթիւն մը պիտի հաստատեն . և կամ վերջապէս մէկդի ձգելով երկիւղը և աղօթքը ( Հովբ . Ժն . 4 . ) անհաւատութեան պիտի հետեւին և բոլորովին անաստուած ապրին աշխարհիս մէջ : Մս մեր ստորագրած եղանակներուն երկրորդին շատ հակամիտեալ էին Հրէայք . քանզի՝ անկարելի էր իրենց որ յայտնի կռապաշտ ազգ մը ըլլան , որովհետեւ Մատուած յատուկ խնամքով մը իրեն ժողովուրդ ընտրեց Մբրահամի սերունդը , և ընտիր որթի մը պէս տնկեց և մշակեց զանիկայ Վանանի լեռներուն վրայ , ( Սաղ . 7 . 8—11 . ) որ ատեն մարդկային գերդաստանին մէկալ ճիւղերը վայրենութեան մէջ կը զարգանային : Վմանապէս անոնք չկրցան գլխովին անհաւատ ազգ մը ըլլալու . քանզի Մատուցոյ գործքերը և կարողութիւնը շատ անգամ և տեսանելի եղանակաւ անոնց աչքին առջևը յայտնի երևնալով , թող չէր տար անոնց ըսելու թէ՛ « Մատուած չկայ » : Բայց սակայն ճշմարիտ Մատուցոյ գիտութիւնը ունենալին և իր բանին ու կարգադրութեանցը տեղեակ ըլլալին՝ չկրցան խափանելու իրենց ապստամբ և ապականեալ սրտին չարութիւնը : Անոնք Մատուածապաշտութեան երեղթը ունեին , բայց անոր զօրութիւնը ուրացեր էին : Մհա աս անհաւատարիմ

և կեղծաւորեալ կրօնքին դէմ էր որ հին տակնի մարգարէները իրենց սգալի ձայնը կը վերցունէին . ինչպէս որ Ասայիայ մարգարէութեանը մէջ կը կարգամքի. «Մտով հետևե ժողովուրդս բերանով կը մօտենան ինձի , և իրենց պահունքներովը զիս կը պատուեն , և իրենց սիրտերը հեռացած զատուած են իղմէ . և իղմէն վախնալնին մարդոց պատուիրած վարդապետութիւնն է : Ենոր համար ահա սս ժողովուրդիս մէջ զարմանալի գործ մը պիտի գործեմ , զարմանալի գործ մը և զարմանք մը , և իրենց խմատուններուն խմատութիւնը պիտի կորսուի , և իրենց խոհեմներուն խորհուրդները պիտի անարգուին » : Ասայ . իթ . 14 : Եւ մանապէս Ազնկիէլ կըսէ . « Աւարդ անոնք կուգան քեզի ինչպէս որ ժողովուրդը կուգայ . և քու առջևդ իմ ժողովուրդիս պէս կը նստին , և քու կին խօսքերդ կը լսեն բայց չեն կատարեր . վասն զի իրենց բերանովը քեզի սէր կը ցուցնեն բայց իրենց սիրտերովը իրենց պղծութեանց ետեւն կերթան » : Ապ . 1 . Լի . 31 : Սարգարէից անարգած սս մեղքը շատ զօրացած էր նաև Քրիստոսի ժամանակը . և սս բանիս համար էր որ մեր Փրկիչը սաստիկ յանդիմանեց շրէից ազգը :

Ես ամէն յանդիմանութիւնները՝ որ կեղծաւորութեամբ Մատուծոյ երկրպագութիւն մատուցանելու դէմ կը գրտնեմք Սուրբ Գրոց մէջ , յայտնի կը հաստատեն ան հիմնական վարդապետութիւնը թէ Մատուծոյ պահանջած պաշտօնը՝ սրտին հնազանդութիւնը և ակնածութիւնն է , և թէ անոր տեղը ուրիշ ինչեիցէ բան մը ընդունելի չէ : Ես կրկին և կրկին յանդիմանութիւնները կը յայտնեն ան մեծ վարդապետութիւնը թէ Ճշմարիտ Մատուածպաշտութիւն կատարուած չըլար , ո՛չ աղօթքներ կարգալով կամ ըսելով միայն , ո՛չ ալ կրօնական արարողութիւններ կատարելով՝ ո՛րչափ սուրբ և օրինաւոր երևանան անոնք մարդոց աչքին . ո՛չ ամենապատուական ընծաներ մատուցանելով , ո՛չ ալ ուրիշ որեիցէ արտաքին ձևերով , քանզի անոր

բուն էութիւնը սրտին մէջ առ Մատուած վայելուչ զգայութիւն ունենայն է և իրօք աս բանին մէջը կրկայանայ ան, այսինքն՝ Ճշմարիտ Մատուածպաշտութիւնը սրտով Մատուծոյ մօտենայն է :

Սմանք կրկարծեն թէ հաւատքը շատ խորին և զաղանի նիւթ մըն է : Լ, որովհետեւ այնքան շատ գրքեր գրուած են անոր վրայ, այնքան շատ քարոզներ տրուած և ճառեր տպուած են, և բուն Մատուածաշունչն ալ մէկ մեծ գիրք մըն է, կամ լաւ ևս է ըսել շատ գիրքեր մէկտեղ հաւատուած, վասն որոյ բոլոր սոս պատճառներէն կը հետեւցունեն թէ հաւատքը շատ մութ և անիմանալի բան մըն է, և շատ ժամանակ ու երկար քննութիւն պէտք է զանիկայ իմանալու համար : Բայց սակայն մեր ամենօր՛նեալ Փրկիչը կը ճանուցանէ մեզի թէ առաջին ու մեծ պատուիրանքը օրէնքին մէջը՝ զՄատուած սիրելն է բոլոր սրտով՝ զօրութիւնով և միտքով, և երկրորդն ալ ասոր նման է, քի թէ մեր ընկերը պիտի սիրեմք մեր անձին պէս, և «Մս երկու պատուիրանքէն կախուած են, կրսէ, բոլոր օրէնքը և մարգարէները» : Սուրբ. իբ. 36, 37, 38 : Կարելի է ումանք զարմանան թէ ինչո՞ւ անանկ մեծ գիրք մը գրուած է ասանկ մէկ պարզ վարդապետութիւն մը սորվեցունելու համար : Սակայն պէտք է գիտնամք որ Մատուածաշունչին նպատակը միայն ան չէ որ մեր առ Մատուած ունեցած պարտաւորութիւննիս մեզի սորվեցունէ, այլ նաև մեզ Մատուծոյ մօտեցունէ, իր բնութեանը կատարելութիւնները մեզի տեղեկացունէ, և այսպէս զինքը սիրելու համար պատճառներ և շարժառիթներ տայ մեզի : Լ, ա նոյն խօսքը կրնայ ըսուիլ նաև Մատուածային Բանին սուրբ և բարեպաշտ մեկնիչներուն գրած բաղմահատոր գրքերուն համար : Լն ամենուն նպատակը գլխաւորապէս ան է որ, Մատուծոյ վրայով գիտնալու և հաւատալու բաները ան կերպովը ներկայացունեն մարդոց առջևը, որ շուտով մարդիկ դառնան Մատուծոյ և սիրեն ու հնազանդին ա-

նոր : Երգարե զարմանալի կերևնայ որ այնքան բան ըսուի և դրուի և ի գործ դրուի , սա ըստ երևութին շատ պարզ և դիւրին վախճանին համար : Ի այց սա բանը արդէն բացատրեցինք : «Սիրտը ամէն բանէն աւելի խաբերայ և խորին չար է» : Եւրէ՛՛ , ԺԷ . 9 : «Սարմնաւոր խորհուրդը Եւստուծոյ դէմ թշնամութիւն է . որ Եւստուծոյ օրէնքին չըհնաղանդիր , մանաւանդ չկրնար ալ» : Լուկ . Ը . 7 : Օարմանալին ան է որ ամէն սա ջանքերը և միջոցները շատ քիչ անգամ սա դիւրին և փոքր երեցած վախճանին կը հասնին , և որ ատեն որ կը հասնին ալ , ան բոլոր կատարումը ոչ քարոզիչին պերճախօսութեանը ընծայելու է ոչ ալ լսողին կամացը , բայց Եւստուծոյ ձրի շնորհքին և զօրութեանը :

«Սրտով Եւստուծոյ մօտենալ» խօսքը մեզի կը արմատացունէ թէ Եւստուած՝ իրեն երկրպագութիւն մատուցանողներէն՝ կը պահանջէ որ անոնք ոչ միայն յարգութիւն և ակնածութիւն ցուցնեն իրեն , որն որ ամէն արարած պարտաւոր է իր Երարչին , այլ նմանապէս կատարեալ վստահութիւն ունենան իր վրայ , անկեղծ ու կենդանի սիրով իրեն յարին և միշտ փափաքին մտերմութիւն և հաղորդութիւն ունենալու իր հետը : Լամամիտ և համակամ եղող անձինքը՝ միշտ մէկզմէկու հետ մտերիմ՝ ըլլալ կը բաղձան , իրենց մէջը զօրաւոր կապակցութիւն մը կայ . մէկզմէկու հետ շատ սէր կուսնենան և մէկզմէկէ կատուիը շատ վշտալի է : Եւսանկ ալ Եւստուած իրեն հետ հաղորդութիւն ունենալու կը հրաւիրէ զմեզ . յիբաւի ինքը անհուն մեծութիւն և փառք ունի , և մենք անօգնական՝ յանցաւոր և անարժան արարածներ եմք , սակայն սա աստիճանի անհաւասարութիւնը հաղորդակցութիւն ընելը չխափաներ . վասն զի Եւստուած զիջանող և ողորմած է : «Տէրը բոլոր ինքը կանչողներուն՝ բոլոր ինքը ճշմարտութիւնով կանչողներուն մօտ է» : Սուր . ԺԻն . 18 : «Եւստուծոյ մօտեցէք , ու ան ձեզի

կրմօտենայ” : Հով. 7 . 8 : “(Թե որ մէկը զլս կրտիրէ” կր-  
տէ Փրկիչն մեր , “իմ պատուէրներս կը պահէ . ու իմ  
չայրս անիկայ կրտիրէ . և անոր կուգանք , ու մեր կենա-  
լու տեղը անոր քովը կը ննեք” : Հով. 23 : “Լ-  
սանկ կը տէ՛ Քարծրեալը որ յաւիտենականութեան մէջ կը  
բնակի , որուն անունը Սուրբ է . Լսս բարձր և սուրբ  
տեղը կը բնակիմ , բայց կտարած և խոնարհ հոգիին հետ  
եմ” , որ խոնարհ հոգին կեդանացունեմ և կտարած սիրտը  
ապրեցունեմ” : Լսայ . ճէ . 15 :

Բայց երբոր Լստուծոյ կրմօտենամք երկրպագութիւն  
ընելու , խոստովանելով որ իր առջևը մենք բոլորովին ոչինչ  
եմք , պարտինք նաև անանկ զգալ և իմանալ Լստ-  
ուծոյ սրբութիւնը և արգարութիւնը , սէրը և ողորմու-  
թիւնը , մեծութիւնը և զթութիւնը և բոլոր իր փառա-  
ւոր և պատուական բարութիւնները , որպէս զի ոչ մի-  
այն հիանալով պաշտենք զինքը , այլ նաև առաջնոր-  
դութիւնք խոնարհութեամբ և սիրով իր պատուիրաններուն  
հնազանդելու և կատարելու : Լմեն կերպով ճիշտ մեր  
ամենասիրելին և մեր բազմալին՝ ընելու եմք զԼստուած .  
քանզի “սրտով իրեն մօտենալը” ասկէց ուրիշ նշա-  
նակութիւն մը չկրնար ունենալ : (Թե որ իր հանգա-  
մանքին օրէնքին և կառավարութեանը մէջ մեր չսիրած  
մէկ բանը ըլլայ , անատենը անկարելի է որ մենք բոլոր  
սրտով իրեն մօտենանք , այլ մեր մատուցած պաշտօննե-  
րը պիտի ըլլան ծանր սրտով , բռնի կատարուած և լոկ  
արտաքին երևոյթով : (Թե որ իր ճամբաներուն ուղիղ  
ըլլալուն վրայ մէկ կասկած մը ունենամք , մեր սրտե-  
րը ետ կը քաշուին կը հեռանան՝ երբոր մեր շրթունքովը խիստ  
կրմօտենամք իրեն : Բայց ասով զԼստուած կը բարկա-  
ցունեմք . քանզի ինքը կուզէ որ ճշմարտութիւնը մեր  
սրտին մէջը ըլլայ : “ Լստուծոյ զոհը կտարած հոգին է .  
կտարած ու խոնարհ սիրտը՝ ո՛վ Լստուած՝ չես անարգեր” :  
Սող. ճն . 17 :

Կան շատերը որ կըզարմանան կըՏիանան Մատուծոյ վրայ կամ յաւէտ իր գործերուն և իր քանի մը յատկութիւններուն վրայ, բայց նոյն ատենը բնաւ չունին ան սէրը որ Իրեն կըմօտեցունէ զանոնք: Արբոր վեր երկինքը կը նային և կըզիտեն իր ձեռքին գործերը, արեգակը՝ լուսինը և աստղերը որ ինքը ստեղծեց, բնականաբար իրենց միտքերը կըզառնան Մարաշին ահեղ փառացը և կարողութեանը վրայ մտածելու: ԿըՏիանան Մատուծոյ գործերուն նայելով, և կերեակայեն թէ ճշմարիտ Մատուածսիրութեան զգացումները ունին, բայց սակայն գոհ կըլլան միայն հեռուէն նայելով և հիանալով: Աւ ան զգացումներն ալ միայն ան ատենները կունենան, երբոր իրենց միտքը դիպումով կըզառնայ Մատուծոյ կարողութեանը ան փառաւոր առարկաներուն վրայ մտածելու: Բայց առ Մատուած ուղիղ զգայութիւն սրտի ունեցողները կըփափագին Մատուծոյ մօտ ըլլալ, և ասիկայ չէ թէ երբեմն հապաամէն ատեն: Մասնկ մէկը չէ թէ միայն աղօթք և փառարանութիւն մատուցած ատենները Մատուծոյ ներկայութիւնը կըլինողէ, այլ իր աղօթքը ընելէն ետքն ալ չուզեր Մատուծոյ ներկայութենէն հեռու մնալ: Կը բաղձայ որ բոլոր օրը՝ Մատուծոյ երկիւղը իր սրտին մէջը ունենայ: Մատուծոյ հետը կըքայէ և իր ամենամեծ երջանկութիւնը կըհամարի Մատուծոյ հաճոյ ըլլալը իր ամէն գործերուն մէջ: Արկրիս վրայ չկայ մէկ տեղ մը որուն յիշատակը այնքան քաղցր և ցանկալի ըլլայ իրեն, քան որչափ ան տեղը ուր որ մեծ ջերմեռանդութեամբ Մատուծոյ շնորհացը աթոռին մօտեցած է և մտերիմ հաղորդակցութիւն ըրած է իր երկնաւոր Զօրը հետ. թէ փառաւոր եկեղեցի մը ըլլայ ան տեղը, թէ ամայի լեռ մը: Իր ջերմեռանդ սրտին խօսքը աս է. «Ո՞ր ունիմ ես երկինքը, երկրի վրա ալ քեզմէ ուրիշը չեմ ուզեր: Իմ մարմինս ու սիրտս կը մաշին. բայց Մատուած իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինս է յաւիտեան. . . .» Մատուծոյ մօտենալու բարի է



ինձի” : Սուրբ . հի . 25—28 : “ Ինչպէս եղջերուն կը փտփագի ջուրերու վտակներուն ,սնանկ կըրփափագի իմ անձս քեզի՝ ո՛վ Մատուած : Հոգիս ծարաւի է Մատուածոյ , կենդանի Մատուածոյ , երբ պիտի գամ ու երևամ Մատուածոյ առջին” : Սուրբ . խի . 1 , 2 : “ Վ՛ի Մատուած՝ դուն ես իմ Մատուածս , ես առտուանց քեզ կըրփնտում . հոգիս կըծարուի քեզի , ու մարմինս քեզի կըրփափագի չոր ու ծարաւ տեղը , ուր տեղ որ ջուր չկայ” : Սուրբ . կի . 1 : “ Ինչպէս սիրելի են քու բնակարաններդ , ո՛վ զորաց Տէրը : Իմ անձս կըրփափագի ու կըմարի Տէրոջը սրահներուն համար , իմ սիրտս ու մարմինս կըցնձան կենդանի Մատուածոյն” : Սուրբ . ձի . 1 , 2 :

Աւտի կըտեսնեմք թէ կարելի բան է որ մարդ իր սրտին մէջը ունենայ անանկ մէկ ճշմարիտ սէր մը դէպի իր Արարիչը , որ զինքը Մատուածոյ բերէ միաւորէ իբրև բարեկամ առ բարեկամ : Արտեսնեմք նաև թէ ան պաշտօնը որ Մատուած կըպահանջէ մեզմէ ուրիշ բան մը չէ բայց եթէ ան ճշմարիտ սիրոյն յօժար և անկեղծ յայտնելը . և թէ հետևաբար մեծապէս ատելի է Իրեն ան ամէն աղօթքները և պաշտօնները՝ որ միայն արտաբին երևոյթ մը ունին բայց սրտով չեն , թէև անոնք շատ պատուական՝ և խիստ վսեմ ոճերով ըլլան : Մատուած կուզէ որ իրեն երկրպագողները հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն : Սեր մատուցած երկրպագութիւնները՝ ոչ միայն յօժարամիտ և կամաւոր ըլլալու են , այլ և զգալու եմք թէ մենք պարտաւոր եմք մատուցանել իրեն ան պաշտօնները , և թէ ինքն ալ անչափ արժանի է մեր մատուցած պաշտօններուն : Ինքը կուզէ որ մենք կատարելապէս համոզուած ըլլամք իր բոլոր պահանջմունքներուն իրաւացի և արդար ըլլալուն , և անկեղծ սիրով հաստատուն վտահոթութեամբ շարժիմք իր հետը ունեցած մեր բոլոր հաղորդակցութեանը մէջ :

Արդ՝ վերը ստորագրուած յատկութիւններուն ամէնն ալ ճշմարիտ կրօնքին յատուկ և սեփհական են : Սուտ կրօնք-

ներուն ամենն ալ լոկ ծէսերու և արարողութեանց վրայ կրկայանան : Անոնք մարդոց վրայ հարկ կրդնեն տեսակ տեսակ գործողութիւններ կատարելու . ինչպէս՝ օրը այսքան աղօթքներ կարգալը , զանազան լուացումներ ընելը , զոհեր մատուցանելը և քահանայից տուրք տալը , տօնախմբութիւններ կատարելը , պաք պահելը , ուխտի երթալը , օղորմութիւն տալը ևն , որ ատեն բնաւ հոգ չտարուիր թէ արդեօք սիրալը ինչ վիճակի մէջ է :

Իսկ շատ յայտնի է թէ ճշմարիտ կրօնքին աս յատկութիւնները իր մեծ փառքն է , քանզի ան նոյն բանը թէ Աստուած սրտին ակնածութիւնը կրպահանջէ , ըստ ինքեան մէկ պատճառ մըն է մեղի ան ակնածութիւնը իրեն մատուցանելու , վասն զի ան կրօնքը որ սրտի սէր և փափաք չպահանջեր , արժանի չէ՝ ոչ Աստուծոյ ոչ ալ մարդուն : Արբոր պաշտուած առարկան մէկ անզգայ կուռք մըն է որ իրեն մատուցուած բոլոր պատիւները չիմանար , անատենը անոր երկրպագութիւնը կրնայ ըլլալ առանց սրտի : Այլ երբոր ան կուռքը մարդոց հնարած սուտ աստուածներուն մէկը կրներկայացունէ , թէ որ անոր տրուած հանգամանքին մէջ սրտով պատուելու և սիրելու արժանի բան մը ըլլալ չկարծուի , թէ որ նաև անանկ համարուի թէ անիկայ մարդոց սրտին խորհուրդները չգիտեր , անատենը շատ վայելուչ է որ անանկ աստուծոյ պաշտօնը առանց սրտի կատարուի : Ընթանոսները իրենց պաշտած կուռքին չեն ընծայեր ան ճշմարիտ աստուածային հանգամանքները որ սրտին ակնածութեանը արժանի են : Այլ իրենց մատուցած բոլոր զոհերուն և ընծաներուն նպատակը ան է որ միայն կուռքերուն բարկութիւնը դադրեցունեն և անոնց բարութիւնը ծախու առնեն : Այլ անանկ կրկարծեն թէ իրենց զոհերուն և ընծաներուն լոկ թուոյն համեմատ , իրենց շատուածներէն շնորհք կրնդունին : Այսպէս ուրեմն անոնք որ կը համարին՝ թէ Աստուած պիտի ընդունի իրենց աղօթքները՝ գոհութիւնները կամ ընծաները և զոհերը կամ որեւիցէ

կրօնական արարողութիւնները առանց ճշմարիտ երկրպագութեան, և սրտանց սէր և նազանդութիւն ունենալու, անանկները կըցուցընեն թէ Մատուած անզգայ կուռքի մը տեղ զրած են կամ թէ տգիտութեան խաւարին մէջ մնացած՝ չեն գիտեր Մատուծոյ անհանգամանքները՝ որոնցմով իրաւունք ունի Մատուած երկրպագութիւն պահանջելու մարդոցմէ : Այլ թէ որ յայտնի կապաշտութիւնը սոսկալի մեղք է, Մատուծոյ փառքը մէկ ուրիշին և իր պատիւը փորուած պատկերի մը տրուելուն համար, արդեօք անկէց պակաս մեղք պիտի համարի՞ Մատուած երբոր իր ահեղ փառացը կըմատուցուի ան տեսակ պաշտօնը որ միայն անզգայ կուռքի մը արժան է : Այլ թէ որ ինքը ան տեսակ պաշտօնը ընդունէր և գոհ ըլլար ալ նէ, չէ՞ որ նոյնը մեզի մէկ պատճառ մը պիտի ըլլար իրմէն զժգոհ ըլլալով ետ քաշուելու : Արնամբ երկրպագութեան արժանի համարիլ մէկ էակ մը որ ո՛չ երկրպագութիւն ընդունելու հարկաւոր հանգամանքները ունի և ո՛չ ալ մեր սրտերուն հնազանդութիւնը և պատիւը ընդունելու համար իր իրաւունքը հաստատկըպահէ : Աշխարհային իշխաններն ալ կուզեն որ իրենց հպատակները սիրեն և պատուեն զիրենք, բայց որովհետեւ անոնք կարող չեն մարդոց սիրտերը քննելու, վասնորոյ չեն կրնար յօժարակամ ծառայողներուն և ահամայ հնազանդողներուն մէջ տարբերութիւն ընել : Էտեւապէս՝ կառավարութիւնները միայն արտաքին գործերուն նայելով կըդատեն ամէն բան : Արեւիլ է որ մէկ մարդ մը իր սրտին մէջ ապստամբութեան ոգի ունենայ, բայց որչափ ատեն որ ծածուկ պահէ զանիկայ և իր արտաքին ընթացքովը շայտնէ, ճիշդ ան նոյն պատիւը կուրենայ որ տէրութեանը ամենէն հաւատարիմ և համեստ հպատակները ունին : Անանկ ալ թագաւորները շատ անգամ շողքորթողներէն կըխաբօին, և սյսպէս իրենց սէրը կուտան անանկ մարդոց, որ առ երեսս հաւատարիմ կըձևանան

բայց իրենց ներսը ոչ սէր ունին անոնց վրայ ոչ ալ կը պատուեն, իրենց մի միայն նպատակը անձերնուն օգուտը քաղել է: Իսկ Մատուած չէ թէ միայն դուրսի գործին կընայի, հապանակ սրտին յօժարութեանը, և այսպէս ամէն մէկուն արդար հատուցում կընէ:

Վասնապէս՝ երբեմն մարդոց վրայ անանկ կառավարներ կը դրուին, որ անձնասէր և հպարտ մարդիկ ըլլալով՝ բնաւ հոգ չեն տանիր իրենց հպատակներուն հանգստութեանը, ոչ ալ անոնց սրտանց հնազանդութեանը: Սակայն Մատուած, թէպէտ երկինքը իր աթոռն է և առ երկիրս իր պատուանդանը, թէպէտ ինքը թաղաւորաց թագաւորն է և տէրանց Տէրը, անանկ որ երկիրը կը գողայ իր առջևը և ազգերը կարող չեն իր բարկութեանը դէմ դնելու, այսու ամենայնիւ չուզեր բռնի կառավարել զմեզ: Ընդհակառակը չպահանջեր մեզմէ հեռուէն երկրպագութիւն ընել իրեն և վախնալ, բայց կուզէ որ իր առջևը գամք, զինքը սիրեմք և իրմէն սիրուիմք: Իր կամքը արարածներուն երջանկութիւնը աւելցունել է, չէ թէ զանոնք զարհուրեցունել և հարստահարել: Մատուած սէր է և կուզէ որ մեզ սիրով կառավարէ: Իր մարդասիրութեամբը և քաղցրութեամբը կուզէ մեզ իրեն միաւորել: Ինքը իբրև գորովագութ հայր կրմօտենայ մեզի, և կուզէ որ մենք ալ փոխադարձ հնազանդութիւն ցուցնենք երախտագէտ զակրներու պէս:

Աւստի՝ Մատուած որ կրպահանջէ մեզմէ սրտանց իրեն մօտենալու, չէ թէ մեր վրայ ծանր բեռ մը կը դնէ, հապա մէկ մեծ շնորհք մը կընէ մեզի: Վանդի այսպէս կը հրաւիրէ մեզ մտերմութիւն և բարեկամութիւն ունենալու իր հետը: Իսկ թէ որ մեր սիրտերը հեռու պահենք իրմէն, և միայն ակամայ ու առ երեսս պաշտօն մատուցանեմք իրեն, անատենը զինքը բռնաւորի մը տեղ դրած կը ըլլամք, և անարժան սեպած մեր սիրոյն: Իսկ թէ որ Մատուած մեր ազգութեանը՝ փառարանութիւններուն և դաւանութիւններուն

րուն լոկ արտաքին արարողութիւնովը գո՛հ ըլլար , և բնաւ շնայէր սրտի վիճակին , ասիկայ մեղի պատճառ մը ըլլալուն չէր հաստատելու՝ թէ ինքը իրաւունք ունեցած չէ մեր սէրը պահանջել , և կամ՝ թէ ինքը կամք ըրած չէ այնքան խոնարհիլ որ մեր իրեն մօտիկեալը ճանաչէ և մեր բարեկամութիւնը ընդունի : Ընտանիք արգարե իր կառավարութիւնը բնաւ որական՝ պիտի երևնար . որովհետեւ համակրութիւն մը պիտի չըլլար իր՝ և իր արարածներուն մէջը : Ընտանիք իր պաշտօնը՝ ծանր աշխատութիւն մը պիտի ըլլար . իր հրամանները անիրաւ պիտի համարուէին . և մարդիկ որչափ կանոնադրապէս պահէին իր հրամանները , տակաւին պիտի զգային թէ ան իրենց կատարած կրօնքը մեծ պակասութիւն ունի , որովհետեւ առանց սրտի է :

Այսն որոյ ուրախ ըլլամք որ Ըստուած մեր սրտերուն ակնածութիւնը և յարգութիւնը կը պահանջէ , վասն զի ասանկ ընելովը իրրև բանաւոր էակներ կը պատուէ զմեզ , կը ցուցնէ թէ մեծ հոգ կը տանի մեր երջանկութեանը ու նաև ճիշդ ան բանը կրնէ , որով իրաւացի կը ըլլայ իր պահանջմունքը իրրև Ըստուած երկրպագութիւն ընդունելու : Իրեն յատուկ է մարդոց սիրտերուն վրայ տիրելու , չէ թէ միայն անոնց մարմինները կառավարելու . և սոս յատկութեամբը իր կառավարութիւնը բոլոր մարդկային կառավարութիւնները կը գերազանցէ : Ինքը իր իշխանութիւնը կը հաստատէ իր բանաւոր արարածներուն իմացականութեանը և խանդակաթ սիրոյն մէջ : Ինքը կուզէ մեզմէ ճիշդ ան տեսակ հաղորդակցութիւնը ունենալ՝ իր հետը , որուն մէջ մարդուս սիրտը կը բերկրի , և որով միայն իր հոգին գո՛հ կը ըլլայ : Վրանզի մարդկային ազգին մէջ եղած հաղորդակցութիւններն ալ թէ որ փոխադարձ պատուոյ՝ սիրոյ և միաբանութեան վրայ հաստատուած չըլլան , տաղտկալի և անհաճոյ են : Ընականաբար մարդուս սիրտը կը փափաքի ան բանին որ կրնայ սիրել և սքանչանալ : Մարդուս երջանկութիւնը որ և իցէ վիճակի մէջ կախեալ է ան անձանց վարմունքէն որ միշտ իր հետը կը

կենակցին և իր հետը գործակից են: Ըհա անանկ ալ ամէն մարդ ըստ մեծի մասին աւելի մօտ է Մատուծոյ և աւելի հաղորդակցութիւն ունի անոր հետը քան որչափ բոլոր ուրիշներուն հետ: Մատուած ան ամենամեծ Ասկն է՝ որուն ներկայութիւնը ընդհանուր արեղբայր կրէնցունէ, որուն էութիւնը անակիզքն է և անվարձան, «որ ամէն բաները անկէց՝ անով և անորն են»: Աէկը չկրնար իր ներկայութենէն փախչիլ. այլ յաւիտեանս յաւիտենից՝ կամայ կամ սկամայ աս ամենամեծ Մատուծոյ առջևը պիտի ըլլանք: Արեմն որչափ հարկաւոր է մեզի որ ջանանք անանկ սիրտ և զգացումներ ունենալու առ Մատուած՝ որոնցմով միայն Մատուծոյ ներկայութիւնը կրնայ մեզի հաճելի ըլլալ: Եւ ահա ճիշդ իր մեզմէ պահանջած զգացումները ասունք են: Իր բոլոր պատուիրանքներուն բովանդակութիւնը ան է որ կատարեալ և լման սիրտով սիրենք զինքը, քի թէ սրտանց մօտենանք իրեն: Եւ ասիկայ պահանջելովը ուրիշ բան մը չուզեր մեզմէ բայց միայն ան որ իրաւացի է: Հիրարի խիստ անաանելի պիտի ըլլար, թէ որ մեզի պատուիրէր անանկ մէկը սիրելու որ մեր սիրոյն և յարգութեանը արժանի չէր: Բայց երբոր կրպահանջէ մեզմէ որ սիրենք զինքը, կրպահանջէ սիրել անանկ մէկը՝ որ տուաւ մեզի ինչ որ մենք ունիմք և եմք, որ համբերեց մեր յամառութիւններուն բոլոր մեր կեանքին մէջ, որ իր մեծ սէրը ցուցուց մեզի իր մէկ հատիկ Արդիին չենայելով և ձրի տալով զանիկայ մեռնելու, «Ըրգարը անարգարին համար որ մեզ Մատուծոյ մօտեցունէ», կրպահանջէ մեզմէ սիրել անանկ մէկը՝ որուն մէջ ամենևին մէկ պակասութիւն մը չկայ բայց ամէն տեսակ փառաւորութիւն և գեղեցկութիւն, մէկ խօսքով՝ անանկ մէկը որ ամէն բարի հանգամանաց կատարելութիւնը իր վրայ միաւորած ունի:

Ան ան որոյ ամէն կերպով կը տեսնենք թէ իրաւացի՝ վայելուչ և հարկաւոր է որ Մատուած սրտին ակնածութիւնը անհրաժեշտ պայման մը ընէ իրեն մատուցուելու

պաշտօնին մէջ : Ըստիկայ կը վայլէ իրեն , որովհետեւ ինքն է « կենդանի Մատուածը » , կենդանիներուն և չէ թէ մեռեալներուն Մատուածը . որովհետեւ ինքը հոգի է և մեր հոգիներուն հայրը , որովհետեւ ինքը մեր Տէր Հիսուսի Վրիստոսի Հայրն է , գթութեանց Հայրը և ամէն շնորհաց Հայրը :

Ըստիկայ կը վայլէ նաև մեշի , վասն զի մենք չեմք կրնար երջանիկ ըլլալ մեր մատուցած պաշտօններուն մէջ , երբոր սրտով չեմք մատուցաներ զանոնք , ոչ ալ կրնամք երկրպագութեան արժանի համարիլ անանկ մէկը , որ և՛ մեր հոգիներուն և՛ մեր մարմիններուն վրայ շտիրեր : Լսե թէ որ իրաւացի է որ Մատուած մեր սրտերուն սէրը պահանջէ , պէտք է որ մենք ալ մատուցանեմք զանիկայ : Արնայ ըլլալ որ մէկ մարդ մը աս ներկայ կեանքիս մէջ ինքզինքը բոլորովին աշխարհային գործերու տալով և իր մեղսակիցներուն ընկերութեամբը ուրախանալով անղայ ըլլայ Մատուծոյ ներկայութեանը , և չիմանայ թէ որչափ հարկաւոր է որ Մատուած իրեն հետը համակից ունենայ : Բայց որչափ երկար մոռնանք զՄատուած , կամ թէ որ իր պատուիրանքները միտքերնիս բերնք ալ նէ ջանանք զանոնք կատարելու ակամայ աղօթքներով և կեղծաւոր դաւանութիւններով , մեր ամէն մէկընէս հեռու չէ ան օրը որ ատեն պիտի իմանամք թէ անհնար է մեզի երջանիկ ըլլալ առանց Մատուծոյ սէրը ունենալու մեր սրտերուն մէջը : Եւ առով աս մեր մարմինները գերեզմանին մէջ պիտի դրուին , և մեր հոգիները Մատուծոյ առջևը պիտի ելլեն : Լսե արդեօք ինչ կրնամք երեակայել աւելի սոսկալի և ողորմելի քան որչափ ան հոգիին վիճակը , որ ամենամեծ Մատուծոյ առջևը ելած կատարելագէս կրղգայ ան սոսկալի ճշմարտութիւնը թէ իր և Մատուծոյ մէջը ո՛չ սէր և ո՛չ բարեկամութիւն կայ : Տիեզերքին բոլոր տարածութեանը մէջ ուրիշ բան մը չտեսներ բայց միայն աս անհուն Մատուածը , և միանգամայն ուրիշ բան մը չզգար անոր վրայովը բայց միայն ատելութիւն և թշնամութիւն : Լսե

ստեղծութիւն ան է որ անոր ներկայութենէն փախուստ մը չկրնար գտնել : Ըստ անհուն և ահաւոր Աշակին յաւիտենական ներկայութենէն զատ ուրիշ ինչ բան կը հարկաւորի ան յուսահատեալ հոգիին թշուառութիւնը կատարեալ ընելու : Թէ որ աղէտալի բան է մեզի երբոր մենք ամէն տանն մեզի ատելի եղող անձին գէմը ելլեմք, ո՞րչափ անհնարին աղէտալի պիտի ըլլայ մեր վիճակը՝ երբոր շարունակ գանուիմք անանկ մէկ թշնամիի մը առջևը, որ անոր և մեր մէջը խիստ չափազանց անհասարարութիւն մը կայ, անանկ որ մեր բոլոր թշնամութիւնովը պիտի զգամք որ իր աչքին առջևը զլիսովին ոչինչ եմք : Այս քանիս հեան ալ պիտի ունենամք ան ստեղծի երկիւղը թէ ան ահեղ Աշակը հասարարապէս կատէ զմեզ, և թէ ինքը աղէկ գիտէ ան ծածուկ թշնամութիւնը որ մենք միշտ մեր սրտին մէջ ունիմք իրեն գէմ, և անոր փոխարէն իր անհուն ահաճութիւնը կը ցուցնէ մեզի : Այս ան տանը պիտի լսեմք ՚աս վճիռը : “Բայց ան իմ թշնամիներս որ զիս չէին ուզեր իրենց վրայ թաղաւոր ըլլալ, հոս բերէք և իմ առջև սպաննեցէք” : Ղ 1-1, ԺԹ. 27 : Ս 17 ան մարգուն, որ իր սիրտը Մատուծոյ շմտեցուններ. ո՞ր պիտի փախչի սյցելութեան օրը :

Բայց ինչպէս որ Մատուծոյ ներկայութիւնը ստեղծիցաւ պիտի բերէ անհաշտ թշնամի մնացող հոգիին վրայ, ճիշտ անանկ ալ երջանկութիւն և ուրախութիւն պիտի ընծայէ անոր որ իր սիրտը մեծ փափագով Մատուծոյ դարձուցած է : Արբոր մէկը զՄատուած իր բաժինը ընարած է և բոլորովին կը բերկրի անով, ո՞րչափ կատարեալ և յորգաւստ պիտի ըլլայ իր ցնծութիւնը, որ ատեն զիմաց զիմաց ականէ զանիկայ : Թէ որ կրփափա գիտք ան ցնծութիւնովը տեսնելու զՄատուած, պարտիմք սրտով մտանալ իրեն : “Արանի՛ անոնց որ սրտովն սուրբ են, ինչու որ անոնք պիտի տեսնեն զՄատուած” : Ս 17, Ե. 8 :



1

Ես կրինդրէի բարի Բտուածն ,  
 Ար ճորհքս հաւատքս սերս անցընէ .  
 Իմ փրկութիւնս ինչ ըսու ինչ անցընէ ,  
 Աւ զինք փնտտելու մեծ իղձ պարզեւէ :  
 Ըն արժեքաց որ այսպէս ազօժեմ ,  
 Եղջեմքս ընց՝ անկեղծայ գիտեմ .  
 Բայց անանկ կերպով որ շնորհք եմ ,  
 Ենչուսութեան մէջ ընկածի պէս եմ :

Ար յուսայի որ յանկարծ զիս որձնէ ,  
 Հաջող ժամու մէջ ինդիրքս կատարէ .  
 Ենչազեմ սիրով մեղքերքս աննէ ,  
 Աւ հանգստութիւն հողոյս շնորհէ :  
 Ենիկայ բոլըր ներհակը ըբուս ,  
 Արտիս զուսայի խոցերը բացուս .  
 Դեմոսիքին կատարած զքրքին թոյլ տուս .  
 Ար ամէն կողմանց յիս յարկակեցուս :

5

Ե, յաշտիս հերիք չէ՝ . նա ինք զիս նեղեց ,  
 Չեքարժը վերաս զիշտ բեռնասրեց .  
 Բոլըր խորհուրդներս առ սուն կոխեց ,  
 Դաճմեմիս յորցուց՝ ու զիս կործանեց :  
 Դողզորուն անյոտձ աղաղակեցի ,  
 Ինչու առ բանը՝ Տէ՛ր , կրնես ինձի .  
 Կու որդդ զմա՛հ հալածե՛ս պիտի ,  
 Աւ ինչ յազմես նէ ինչ փառք է քեզի :

4

Պատասխան տուաւ Բտուածըն բարի ,  
 Ինչ որ Կու ազօժեքդ այսպէս կընդունուի .  
 Ես զանոնք կընեմ որպէս զի ամբ ,  
 Կուկին հաւատարդ ու սէրդ ինձի :  
 Կերքին փորձերով ըզրեզ կըփոքանեմ ,  
 Հպարտ անձնասէր կիրքեզ կազատեմ  
 Աւնայն հաճոյից հողըդ կըցրուեմ  
 Օ՛խ ամէն բարիքդ տուողը ես եմ՞ :

\* (Յաջում . գ . 7 .

Սուղնոս ք :

1

Ինչո՞ւ անհաւաստք՝ վէճեր կը հանեն ,  
 Ու փո՛ճ բաներու՝ միշտ խելք տուեր են ,  
 Ինչո՞ւ թագաւորք՝ քնքնահաւան են  
 Ու իրենց կամբը՝ կատարել կուղեն :

2

Եւ Իշխանները ժողովներ կընեն ,  
 Հօր և Որդւոյն՝ զեմ՝ ու նաև կըսեն .  
 «Ոտարներ ջախջախենք՝ անոնց կապերը ,  
 ու մեզմէ նզենք՝ անոնց լուծերը» :

3

Բայց Հայրն երկնաւոր՝ զանոնք կանարգ՝ ,  
 Ու բարկանալով՝ անոնց կը զրուցէ .  
 «Իմ թագաւորքս՝ որ նեղ սնեցի ,  
 «Իմն սուրբ լեռքս՝ Սիան կընասի :

4

«Ինչքէ՛ զու ինծմէ՛ Որդի՛ սիրական ,  
 «Եղջերը քեզէ՛ ծառանգութիւն տամ .  
 «Երկրին ծայրերը՝ ստացուածքդ ըլլան ,  
 «Մինակ զուն իշխես՝ ամենուն վրան» :

5

Երգ՝ լու համբոյցէք՝ ո՞վ թագաւորներ ,  
 ու խրատ տուէք՝ ո՞վ գառաւորներ .  
 Տէրոջը վախով միշտ ծառայեցէ՛ք ,  
 «Եկեա՛ղ զածութեամբ զան մեծարեցէ՛ք :

6

Որդւոյն Բատու՛ծոյ՝ հընազանդ եղիք ,  
 որ առ Կամբուն մէջ՝ զուր չկորսովիք :  
 «Օ, զոյ՛լ եղիք՝ որ՝ չբարկացնէք զան ,  
 Երճե՛կ անոնց՝ որ՝ անոր կը յուսան :

Սողան ինչ :

1

Տէ՛ր դուն ինձ եղեր՝ Լոսիւ կառավար ,  
 Ար ես բանի մը՝ կարօտ չեմ ըլլար .  
 Ընտրեալ հօտիդ հետ՝ կանաչ գաշտերը ,  
 Ինչ որ ճարակիմ՝ կենացս, օրերը :

2

Լանդարտ կենսասու՛ ջուրերուդ քովս ,  
 Տա՛ր զիս՝ յազեցուր՝ հոգւոյս ծարուք .  
 Սուրբ Խօսքովդ գարնուր՝ հոգիս նորոգէ ,  
 Ազիդ ճամբուդ մէջ՝ ինձ առաջնորդէ :

3

Ինձ՛ ե ես մահուան՝ շուքին մէջ բալեմ՝ ,  
 Չարեն չեմ վախնար՝ ու վախնալու չեմ .  
 Արտհետեւ դուն՝ իմին հետս ես ,  
 Ա՛յ Հիսուս Խաչով՝ իս միտի՛թարես :

4

Բա բարեւեր կամքդ՝ իմ հետս կուգոյ ,  
 Բոլոր կեանքիս մէջ՝ ինձի սիրտ կուսոյ .  
 Աւ բարեկյաջող՝ ժամանակ երկար ,  
 Պիտի բնակիմ՝ Մատուծոյ Տաճար՝ :

## Սուղնա . ծնն :

1

Ոչորմած Եստուած՝ ինձի ողորմէ՛ ,  
 Ենչուն զթութեամբդ՝ իմ մեղքըս քաւէ՛ :  
 Եմէն յանցանքէս՝ զիս լուս՝ մաքրէ ,  
 Իմին մեղքերէս՝ ս՛ղ Տէր զիս սրբէ՛ :

2

Քանզի՛ յանցանքըս՝ յայտնի է ինձի ,  
 Մեղքըս միշտ աչքիս առջին կըկայնի .  
 Մինակ քեզի դէմ՝ ես մեղք գործեցի ,  
 Ա զու առջեւդ՝ շարութիւն ըրի :

3

Ենէ որ զիս պատժես՝ դուն կարդարանաս ,  
 ու դատաստանողս ամբիձ կըմնաս .  
 Քանզի ես մեղքով՝ ծորմն յգացայ ,  
 Ա ծնած ատենս՝ յանցանքով ծնայ :

4

Մշտիկով մաքրէ՛ որ մաքուր ըլլամ ,  
 Չիւնէն աւելի ճերմակ ես կըլլամ .  
 Եմէն մեղքերէս՝ ես ազատ ըլլամ ,  
 Միթիթարութեամբդ միշտ ուրախ մնամ :

5

Ո՛վ Եստուած՝ ի յիս՝ սուրբ սիրտ ստեղծէ՛ ,  
 Եւ ուղիւ հոգի՛ դու յիս նորոգէ՛ .  
 Օխ զու երեսէդ՝ բնաւ մի՛ նդեր ,  
 Ա զու Սուրբ Հոգիդ՝ ինձմէ մի՛ հաներ :

6

Որովհետեւ դուն՝ գո՛հ լես կամիր ,  
 Եւ ողջակէզն ալ՝ բնաւ լես հաւնիր  
 Հոգւոյս զգնումը՝ քեզի գո՛հ ըլլայ ,  
 Իսնաբո՛ց արախ սէրն՝ քեզ հաճոյ ընծայ :







